# ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ

## ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՒԱՔՈՒՄՆԵՐՈՒ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

1950

# ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ
# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ
## Եւրոպայի Մասնաւոր Հաւաքումներու

*ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ*

ԿԱԶՄԵՑ

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՐՄԷԵԱՆ

**Կաթողիկոսական Լիազօր Պատուիրակ Եւրոպայի Հայոց Թեմին**

# GRAND CATALOGUE
DES
# MANUSCRITS ARMÉNIENS
## des Collections Particulières d'Europe

COMPILÉ PAR

MGR. ARTAVAZD SURMÉYAN

**Délégué Apostolique Arménien d'Europe**

Գեղ. Տպ. Ն. Մաթիկեան – Փարիզ

Imp. ARTISTIQUE, 42, rue de la Jonquière - Paris

1950

PRINTED IN FRANCE

# ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1.— Էրզրում՝ *Նորավէպեր*, *Կ. Պոլիս*, 1913 (*սպառած*):

2–7.— Տարեւ. *Տարեգիրք*, 1925–1930, *Կ. Պոլիս – Հալէպ*:

8.— Նկարագիր Օշին թագաւորի Ձեռագիր ժամագրքին. *Անթիլիաս*, 1933 (*սպառած*):

10.— Պատմութիւն Հալէպի Ազգ. Գերեզմանատանց եւ Արձանագիր Հայերէն Տապանագրերու. *Հալէպ*, 1935:

11.— Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցւոյ. Ա. հատոր. *Երուսաղէմ*, 1935:

12.— Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի. *Բ. հատոր*, *Հալէպ*, 1936:

13.— Հողագործութիւնը Հին Եբրայեցւոց մէջ. *Հալէպ*, 1937 (*սպառած*):

14.— Մեծ Դաստիարակ մը՝ Աբբա տը Լակարտ (*Թրգ.*) *Անթիլիաս*, 1937:

15.— Ընտանեկան Դաստիարակութիւնը Մեր Տուներէն Ներս. *Հալէպ*, 1937:

16.— Պաղրասի Բերդը, *Հալէպ*, 1937:

17.— Դամասկոս. *Հալէպ*, 1938:

18.— Բարմիր. *Հալէպ*, 1939:

19.— Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի եւ Բարգէն Աթոռակից Կիլիկեցի 1939:

20.— Պատմութիւն Հալէպի Հայոց՝ *Ա. հատոր*, Սուրիա. *Հալէպ*, 1940:

21.— Սամարիա. *Երուսաղէմ*, 1941:

22.— Հոգեւոր Գանձը. *Պէյրութ*, 1942:

23.— Պատմութիւն Հալէպի Հայոց՝ *Բ. հատոր*, Հալէպ 1946. *Պէյրութ* (*սպառած*):

24.— Դէպի Հայաստան. *Պէյրութ*, 1946:

25.— Թշուառի Զգայութիւններ, *Ա. Զօպանեանի Յառաջաբանով*, *Փարիզ*, 1947:

26.— Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի, *Ա. հատոր*, *Վենետիկ*, 1948:

27.— Արամեանի եւ Կեդրոնականի Ուսուցիչներս. *Մարսէյլ*, 1950:

---

ԱՒԱՐՏԵԼՈՒ ՄՕՏ ԵՆ

## ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

երկու նոր աշխատութիւնները՝

## 1.— ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒ

## 2.— ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՐՈՑՆԵՐՈՒ

423

# ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ
# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ
## Եւրոպայի Մասնաւոր Հաւաքումներու

*ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ*

ԿԱԶՄԵՑ

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՐՄԷԵԱՆ

**Կաթողիկոսական Լիազօր Պատուիրակ Եւրոպայի Հայոց Թեմին**

*Գեղ. Տպ. Խ. Մաթիկեան – Փարիզ*

Imp. ARTISTIQUE, 42, rue de la Jonquiere - Paris

1950

PRINTED IN FRANCE

A $\frac{\overline{III}}{285}$

ՊՍԱԿ

**ԱՆԹԱՌԱՄ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ**

Ի ՇԻՐԻՄ

ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ՝

# Վսեմաշուք

# Տիար ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻ

***Հօրն՝ ազգասէր առն ՍԱՐԳՍԻ***

***Մօրն՝ բարեպաշտուհի ՏԻՐՈՒՀԻՈՅ***

---

*Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։*

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

> *«Այսպէս ուրեմն մեր Նախնեաց գործերը վայրավատին ինկած են ամբողջ Եւրոպայի մէջ. այնպէս որ ամենուրեք պիտի հանդիպինք անոնց...»:*
>
> «Բազմավէպ»
> 1933

Արդարեւ, Եւրոպայի մէջ, գրեթէ ամէն տեղ, մենք հանդիպեցանք մեր Նախնեաց գործերուն, առաւել կամ նուազ արժէքով հայերէն ձեռագիրներու՝ զորս խնամով ցուցակագրելէ յետոյ, վերադարձուցինք իրենց հայ կամ օտար տէրերուն: 1915ի ազգային Աղէտը ամայացնելէ յետոյ մեր հազարաւոր Եկեղեցիներն ու վանքերը, կողոպուտի ենթարկուեր էին անոնց թանգարաններն ու գանձատուները, հարուստ՝ այլազան զարդ ու սպասներով ու թանկարժէք ձեռագիրներով, որոնց շատ քիչ թիւով մնացորդները միայն 1918ին ու 1922ին սկսան դուրս գալ Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Եւրոպայի ու մասնաւորապէս Մ. Նահանգներու հրապարակներուն վրայ, իբր հնագիտական առարկաներ, *ծախուելու* համար պետական–ազգային Մատենադարաններու եւ անհատ հաւաքողներու: Մեր Նախնեաց մտքի եւ ձեռքի վաստակները, ցեղին վերապրողներուն պէս, վայրավատին կը թափառէին գրեթէ ամէն տեղ:

1946 Օգոստոսէն մինչեւ 1949 Նոյեմբեր, աւելի քան երեք տարի, պաշտօնիս բերումով ո՛ւր որ այցելեցինք, հետամուտ եղանք, նոյնիսկ լրագրական յայտարարութեամբ, փնտռելու Հայերէն Ձեռագիրներ ու ցուցակագրելով փրկելու անոնց մատենագրական ու գեղարուեստական բովանդակութիւնն ու արժէքը յօգուտ հայ եւ օտար բանասիրութեան: Այս շրջանին յաջողեցանք քառասունէ աւելի ձեռագիրներ ցուցակագրել՝ երբ միաժամանակ վենետիկի մէջ մամուլի տակ էր արդէն մեր «Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի»ն, իբր Առաջին հատոր:

Երբ քննած եղանք բաւական թիւով ձեռագիրներ, դիմեցինք Լիզպոն, Վեհ. Տիար *Գալուստ Կիւլպէնկեանի*՝ խընդրելով որ բարեհաճէր մեր տրամադրութեան տակ դնելու Փարիզի իր բնակարանին մէջ ունեցած հայերէն ձեռագիրները։ Մեր ազգային վաստակներուն ջերմապէս հիացող մեծանուն հայրենասէրը հաղորդեց որ իր մասնաւոր հաւաքման ձեռագիրները, տպագիր բազմաթիւ հատորներու հետ, նուիրած էր Երուսաղէմի Հայոց Կիւլպէնկեան Մատենադարանին ու տեղեկանալէ յետոյ՝ որ մտադիր էինք Եւրոպայի մէջ մեր տեսած ու ցուցակագրած հայերէն ձեռագիրները Ա. հատորով մը հրատարակելու, բարեհաճեցաւ, իր ծանօթ գրասիրութեամբը, հոգալու Հատորիս տպագրական ծախսերը, ի յիշատակ իր ազգասէր եւ բարեպաշտ հանգուցեալ ծնողաց, *Սարգսի* եւ *Տիրուհւոյ*։

Բարեդէպ ծանօթութեամբ մը՝ զոր կը պարտիմ տաղանդաւոր բանասէր Օր. Սիրարփի Տէր Ներսէսեանի, անցեալ 1949ի Օգոստոսին, Փարիզի դիւանագիտական շրջանակներու ծանօթ ու Կ. Պոլսոյ, Թեհրանի եւ Գահիրէի ֆրանսական փոխ դեսպան ու դեսպան Պարոն Jean Pozzi, մեր տրամադրութեան տակ դրաւ իր անձնական հաւաքման (գնուած 1934ին ի Կ. Պոլիս, վերջերս հոն վախճանած Երուանդ Ալեանաքեանէ) բովանդակութեամբ եւ մասնաւորապէս հայկական արուեստով թանկարժէք հայերէն իր հինգ ձեռագիրները՝ զորս մեծ բախտաւորութեամբ ցուցակագրեցինք իր տանը նոյն թանգարանին մէջ (51, Avenue Montaigne)։ Պր. Pozzi առիթ տուաւ հայերէն ձեռագրաց մեր ներկայ *Հինգերորդ* Մայր Ցուցակը զգալապէս ճոխացնելու։ Իրեն կը յայտնենք մեր սրտագին շնորհակալութիւնը։ Անկէ յառաջ, նոյնպէս Փարիզաբնակ Պր. Jean Lévy մեր տրամադրութեան տակ դրաւ մեր Լեւոն Բ. թագաւորի մագաղաթեայ, թանկարժէք նկարներով զարդարուած *Ժամագիրքը*, որ ներկայիս սեփականութիւնն է Նիւ Եորքաբնակ Պր. Յակոբ Գէորգեանի։

Օգտուելով քանի մը ամիսներ առաջ յԱնգլիա մեր այցելութենէն. Մանչեսթրի Ryland's Libraryի մէջ գտնուած եւ վերջին տարիներուն գնուած երեք ձեռագիրներու նկարագիրը եւս անցուցինք մեր ներկայ Մայր Ցուցակին մէջ։ Շնորհակալութիւն նոյնպէս Մանչեսթրաբնակ

Պր. Գրիգոր Շախպէնտէրեանի՝ որ իր արժէքաւոր մէկ ձեռագիրը դրաւ մեր տրամադրութեան տակ: Սրտագին շնորհակալութիւններ Տեարք Գառնիկ Գէորգեանի, Յակոբ Գալըպճեանի, Գառնիկ Պախթիարեանի, Նուբհան Ճրէնկեանի, Յակոբ Խնճունեանի. Վահան Լամէրեանի. Ալպէր Աշնեանի. Վարդ Կիւլպէնկեանի. Յարութիւն Հազարեանի, Յովհաննէս Կոստանեանի եւ այլոց որոնք սիրայօժար կերպով տրամադրեցին իրենց անձնական Ձեռագիրները:

Մեծագոյն շնորհակալութիւն *Վսեմաշուք Տիար Գալուստ Կիւլպէնկեանի*՝ որ սատար եւ մեկենաս հանդիսացաւ ներկայ Մայր Ցուցակին հրատարակութեան, գնահատելով նման աշխատութեան մը բերելիք նպաստը յօգուտ հայ եւ օտար բանասիրութեան:

Կ'աղօթենք որ Բարձրեալն Աստուած լուսաւորէ Նորին Վսեմութեան բարեյիշատակ ծնողաց՝ *Սարգսի* եւ *Տիրուհւոյ* հոգիները, իր աստուածային տեսոյն արժանի ընէ եւ Նորին Վսեմութեան, Տիկին Ն. Կիւլպէնկեանի եւ իրենց բոլոր զարմին պարգեւէ առողջ ու բարօր երկար տարիներ:

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Փարիզ

1 Մարտ 1950





# I

# ՍԱՂՄՈՍԱՐԱՆ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

---

Հին թիւ՝ չունի

Ձէ = 1458

*ԹՈՒՂԹՔ՝ Լ×24 (=720 էջ)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10×8×6 սնտմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՏՈՂՔ՝ 19։ — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած մագաղաթի նման թուղթ։ — ԿԱԶՄ՝ սեւ կաշեպատ փայտեայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահպանուած, հակառակ խոր հնութեան։ Ձեռագրիս երեք մասերն ալ նոյն գրչին ու ծաղկողինն են եւ մէկ տուփի մէջ առնուած, դիւրաւ գործածուելու եւ կրելու համար։ Վերջին քանի մը պրակները կարէն ինկած։ Մատեանս հարուստ է բազմաթիւ նկարներով, խորան ու կիսախորաններով եւ կը ներկայացնէ ծաղկազարդ պարտէզ մը լուսանցազարդ եւ սկզբնատառերու. — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու թերթիկ սկիզբը և թերթ մըն ալ ի վերջ, Աւետարանի մասերով, շատ մնասուած. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս խորաններու տակ, երեք տող. առաջին բոլոր տողերը թռչնագիր եւ ճոխ զարդագրեր են, նուրբ ծաղկումով, իսկ յաջորդ տողերը ոսկեզեղ եւ կարմիր երկաթագիր. — ԳԻՐ՝ սկիզբէն մինչեւ վերջը նոյն յաջող ու մանտրտիկ դասական բոլորագիրն է որ կը տիրէ. — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ բազմաթիւ, նուրբ ծաղկումներով, մարդագիր, կենդանագիր, թռչնագիր ու զարդագիր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ նոյնպէս բազմաթիւ, մեծ ու փոքրիկ, գունազեղ յաջող ծաղկումներով. — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, սկիզբինը իր նկարին հետ ինկած ու կորսուած, չորսն ալ ուշագիր եւ ճաշակաւոր վրձինի յաջող ծաղկումներ. — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ նոյնպէս եւ թերեւս աւելի յաջող ծաղկումով, 15 հատ. — ՆԿԱՐՆԵՐով հարուստ է մատեանս, ունենալով ինը հատ շատ յաջող նկարներ։ 1 - Սկիզբը՝* Զաքարիա վարդապետ *և իւր* Մկրտիչ *եղբօրորդին, աշխատութեան ճոխ սենեակի մը մէջ, երկուքն ալ նստած վիճակով։ Զաքարիա հագած է ծաղկուն եւ լայն ծալքերով տօնիկա, վրան մանուշակագոյն ճոխ փիլոն, ոսկեայ ճարմանդով։ Գլխին ունի սեւ վեղար։ Ունի ալեխառն կարճ մօրուս եւ իր առջեւ նստած երիտասարդ* Մկրտիչին *հետ՝ որ կապոյտ ներքնակ եւ կարմիր վերարկու է հագած, խօսակցութեան մէջ է։ Նկարի վերի աջ անկիւնէն կապտորակ լոյս մը կ'երկարի դէպի* Զաքարիայի *սիրտը։ Նկարս յաջող է եւ անեղծ։ 2. —* Յովհանէս վրդ. Գառնեցի, *ոտքի կանգնած դալար գետնի վրայ, փոթորկոտ երկնքով։ Հագած է մանուշակագոյն տօնիկա, վրան ծիրանագոյն ճոխ շուրջառ, ոսկի ճարմանդով։ Գլխին ունի սեւ ամփոփ վեղար ու աջ ձեռքով բռնած է երկար գաւազան, իսկ ձախ ձեռքը առաջ է երկարած եւ հեռուն բան մը ցոյց կու տայ։ Յովհաննէս վրդ. ունի սպիտակ կարճ մօրուս։ Նկարս կիսով մնասուած է խոնաւութենէ։ 3. —* Ընկղմումն Փարաւոնի ի Ծով Կարմիր*։ Փարաւոն, արքայական ճոխ զգեստով ու թագով, սպիտակ ձիու վրայ հեծած, իր հետեւորդներով կ'անցնի կարմիր ծովէն՝ ուր ընկղմած կը տեսնուին հետե-*

ուրդներուն մեծ մասը, արածայր ըղակով զինուորներ եւ ձիաւորներ։ Ծովային հրէշ մը կը յարձակի Փարաւոնի վրայ։ Երկնային գունդ մը կը դիտէ ողբերգական տեսարանը։ Այս մէկն ալ խոնաւութենէ փճացուած է։ 4. — Մովսէս մարգարէ, Ահարոն, Մարիամ, եւն։ *Մովսէս ձեռքի գաւազանով կը դարձնէ Կարմիր ծովու ընթացքը, մինչ իւրայինները կը դիտեն կատարուած հրաշքը։ Հիացիկ Մարիամ համակ ծիրանեգոյն զգեստ կը կրէ կապոյտ ներքնակով եւ ձեռքերուն մէջ բռնած է ոսկեայ մեծադիր սկաւառակը։ Շուրջը պալատական երկու կիներ, իսկ Մովսէսի քով՝ որ շատ երիտասարդ է, Ահարոն եւ ուրիշ մը։ Նկարս յաջողներէն մէկն է եւ անեղծ։* 5. — Անկումն ծովու։ *Փոթորիկէ հողմավար երեք գոյգ թիերով յայնախոր նաւը, ճամբորդ ու ապրանքով բեռնաւոր։ Յովնան մարգարէ, բոլորովին մերկ, ծով կը նետուի ու կարմրագոյն կէտ ձուկ մը կը կլլէ զինքը ու նոյն կէտը դուրս կ'արձակէ զայն, ողջ։ Յաջող եւ անեղծ նկար։* 6. — Ի մէջ մահու եւ դժոխոց։ *Յիսուս խաչին վրայ, լուսապսակ գլուխը դէպի աջ հակած, վերեւը մահուան գիրը։ Արեւ եւ լուսին կիսախաւար։ Յիսուսի երկու քովերը երկու աւազակներ, ձեռքերնին կապուած խաչի երկու թեւերուն, մէկուեր յետ, միւսը առաջ վիճակով։ Նուազ յաջող եւ անեղծ։* 7. — Աստուած էջ առ Երիս Մանկունս։ *Հայր Աստուած իր երկու ձեռքերը քաղդէացի երեք երիտասարդներու վրայ երկարած կը պաշտպանէ զանոնք՝ որ ձեռնամած կ'օրհնեն Բարերարը։ Մասամբ եղծուած բայց յաջող նկար, դէմքերու բնական արտայայտութեամբ։* — 8. Մանասէ թագաւոր ի խոր գբին։ *Երիտասարդ ու գեղանի արքան ծունկ նստած է ու կարմիր չուանով մը կապուած երկու ձեռքերը դէպի վեր, աղօթքի մէջ։ Յաջող եւ անեղծ նկար։* 9. — Աստղալից երկինք է։ *Լուսեղէն կապոյտ սիւնի մը վրայ կը տեսնուի ոսկի աղաւնին, վայրահակ։ Յաջող եւ անեղծ նկար՝ Պատարագամատոյցի մէջ։*

*ԳՐԻՉ՝ Իգնատիոս կրօնաւոր։ — ՆԿԱՐՈՂ՝ Մինաս։ — ՍՏԱՑՈՂ՝ Զաքարիա վարդապետ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՋԷ* (=1458). — *ՏԵՂԻ՝ Քաջբերունեաց երկրի Խառաբաստայ վանք։ Ձեռագրիս այժմու տէրն է Նիւ Եորքաբնակ Պր. Յարութիւն Հազարեան, գնած ի Փարիզ։*

*Մատեանս է* Սաղմոսարան, Պատարագամատոյց *եւ* Աղօթամատեան՝ *բոլորը մէկ կազմի տակ, թղթեայ, փոքրադիր եւ նկար ու այլ ծաղկումներով ճոխ, որ կը բովանդակէ՝*

1. — Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսին Կիպրոսի։ Արարեալ պատճառ երգոցն Դաւթի Սաղմոսարանին. — *Զամենայն զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա ի հոգեկիր ծերոյն, բաւական համարեցայ պատմել փոքր ի շատէ…։*

2. — Բանի Յովհաննէս Գառնեցւոյ հոգելից վարդապետի՝ վասն Դաւթեան Սաղմոսի՝ որ ոմանց… թուի. — *Զսաղմոսարանս Դաւթի՝ մանաւանդ թէ… (էջին կէսը աւերուած) հոգւոյն սրբոյ։ Զոր այլ… կամ աւելի եւ պակաս…։*

3. — *Գեղագիր խորանի մը տակ՝ Երանելի է այր որ ոչ գնաց ի…։*

4. — Պատարագամատոյց. — *Եւ մատուցեալ կիսասարկաւագունք զգեցուցանեն նմա զհանդերձս սաղմոսելով։ Եւ դնէ յառաջ զխոյրն ի գլուխն եւ ասէ զաղօթս։ Դի՛ր տէր* [illegible]

5. — Կարգաւորութիւն հասարակաց աղօթից. — *Տէր եթէ շրթունս իմ բանաս…, մինչեւ* Խաղաղական՝ *բառ առձեռն ժամագրոց։*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա.* — (Գլխաւոր յիշատակարան). — *« Փա՛ռք համայն, համապատիւ, համաբուն, համապաւր ամենասուրբ Երրորդութեան եւ միասնական աստուածութեան, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Որ ետ կարողութիւն եւ զաւրութիւն տկար եւ տարտամ անձանց մերոց,* Իգնատիոսի *գրչի եւ* Մինասի *նկարողի սուրբ գրոցս Սաղմոսարանի եւ Աղաւթամատոցի։ Ի թուականութեանս մերում ի ՋԷ* (1458) *ամի, ի խանութեան* Ջհանշայի *եւ ի հայրապետութեան տեառն* Գրիգորի *Ա. Էջմիածնի, ի յերկիրս* Քաջբերունի *ի ս. ուխտս Խառաբաստայ, ընդ հովանեաւ* սուրբ Աստուածածնի, *խնդակաց եւ հոչակաւոր գեղեցկաշէն տաճարի. վասն յիշատակի* Զաքարէ վարդապետի *եւ իւրոցն ամենայնի։*

*Արդ ես նուաստ եւ ներգեւեալ ոգի պիտականուն* Զաքարէ վարդապետ *ետու գրել եւ ոսկեզաւբ ծաղկազարդ նկարել զՍաղմոսարանս, զՊատարագամատոյցս եւ զԱղաւթամատոյցս։ Ի վայելումն անձին իմոյ եւ եղբաւրորդւոյն իմոյ* Մկրտիչ սարկաւագի

և մօրն Դաւնիշի. և յիշատակ բարի հօգոյ իմոյ և ծնողաց իմոց՝ Յովանիսին և Մարեմին և հարեղբարցն իմոց Գրիգոր եպիսկոպոսի և Կիրակոսի և որդոյն Մելքիսեթի հանգուցելոյն ի Քրիստոս: Եւ եղբարցն իմոց Աւետիսի և որդոյն Յովանիսի և մօրն իւրոյ Դաւնիշի: Եւ միւս եղբօրն իմոյ Կարապետին և կողակցին իւրոյ Խումար խաթունին և զաւակին իւրոյ Սիրունըշէկին: Եւ միւս եղբօրն իմոյ Մարգարին, հանգուցելոյն ի Քրիստոս և զաւակաց իւրոց: Եւ քուերց իմոց Մարթային և որդոյն Մարտիրոսի և զաւեքն խալիմ խաթունին և Հոխփաիմի հանգուցելոյն ի Քրիստոս և ամենայն արեան մերձաւորաց իմոց կենդանեաց և հանգուցելոց: Արդ՝ հանդիպողք սմա և վայելողք. ստամբ կամ աւրինակելով, արժանաւոր բերանով Աստուած ողորմի ասացէք ստացողացս, գրողացս և ծաղկողաց և ամենայն աշխատաւորաց սորա:

Եւ որ ատասն է ի տուրս բարեաց Քրիստոս Աստուած, ողորմեսցի սա հասարակ յիշողացդ և յիշեցելոցս և. նմա փա՛ռք յաւիտեանս յաւիտենից ամէն »:

Բ. — Ի վերջ Սաղմոսարանին (Իթը կրկին Գլխաւոր յիշատակարան). — « Փա՛ռք համագո, համապատի, համարուն և համագոյ ամենասուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն և զօրութիւն ակար և տարատամ անձին իմոյ, գրել և կատարել զգիրս Սաղմոսաց՝ աստուածահաւրն Դաւթի, և զՊատարագամատոյց մարմնոյ և արեանն Քրիստոսի: Եւ այլ հասարակ ազաւթից ժամակարգութեան եկեղեցւոյ: Ի վշտաշատ և ի դառնաշունչ ժամանակիս յում կամք ի ծառայութիւն այլազգեաց: Ի Թուականութեանս մերում ի ՋԷ (=1458): Ի խանութեան Ջհանշայ Միրզին՝ որ եկեալ դաշխարհս հայոց՝ և զառին Խորասանայ մեծաւ յաղթութեամբ: Ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի Վաղարշապատու Ս. Էջմիածնի: Արդ գրեցաւ սա յերկիրս Քաջբերունի, ի վանքս Հառաբաստայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի: Խոյակաց և գեղեցկաշէն տաճարի: Յառաջնորդութեան տեղոյս Կարապետ վարդապետի: Զեամբ յոգնամեղ և ապիկար գրչի Իգնատիոսի կրաւնաւորի: Յիշատակ բարի և անջնջելի: Ստացողի սորա Զաքարէ սիրականուն վարդապետի և ծնողաց իւրոց, Յովանիսի և Մարեմի և հարեղբարցն Գրիգոր եպիսկոպոսի և Կիրակոսի և որդոյն Մելքիսեթի հանգուցելոցն ի Քրիստոս. Եւ եղբարց իւրոց Աւետիսի և: որդոյն Յովանէսի և Մկրտիչ սարկաւագի վայելողին սորա և միւս եղբաւրն Կարապետի և որդւոյ իւրոյ Սիրունըշէկի: Եւ միւս եղբաւրն Մարգարուն հանգուցելոյն ի Քրիստոս և զաւակաց իւրոց: Եւ քուերց իւրոց Մարթային և որդոյն Մարտիրոսի և զաւեքն խալիմ խաթունի և Հոխփաիմի հանգուցելոյն ի Քրիստոս: Արդ՝ որք հանդիպիք սմա կարդալով, կամ ստանալով, կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ գրոցս զվերոգրեալսն, որ ատասն է ի տուրս բարեաց, ողորմեսցի սա հասարակ յիշողացդ և յիշեցելոցս ամէն: »

Զանազան էջերու վերին կամ ստորին լուսանցքներուն վրայ կան նաև հետևեալ միատող յիշատակագրութիւնները.

Գ. — Զաւկաւ գծողս զԱզարեայ դպրիկս յիշեցէք ի Քրիստոս:

Ո՜հ գեղկելի Կարապետս աղաչեմ յիշել ի Տէր:

ԶՄինաս ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս:

Դ. — Գլխաւոր յիշատակարանին ի վերջ, նօտրագիր. — Վերստին նորոգեցաւ Սաղմոսարանս ու Աղաւթմատոյս՝ ձեռամբ Հեբապետ եպիսկոպոսին, ի վայելումն տէր Խաչատուրին, իւր որդոյն տէր Աբրահամին, թվին ՌՁԴ (=1635). աւգոստոսի ից. նորոգեցաւ: Յիշատակ է Սաղմոսարանս տէր Խաչատուրին, իւր կողակցին Ուղիտին, որդոյն տէր Աբրահամին, իւր կողակցին Նազատին, մաւրին Մարգրտին, Թոռին Ակեքսանին, Հոխփիմին, Նազլուին, Զաքարին, ամէն:

Ե. — Ներքին պատարկ գոյգ էջերու վրայ. — Յիշատակ է զՍաղմոսարանս խոջայ Սանոսին և իւր կողակցուն Գոհարին և իւր որդուն Պետրոսին և Պօղոսին, սարկաւագ Գասպարին, Յովհաննէսին, հարսին՝ Ար-

*զուին, Գոհարին, Վարդխաթունին, Եղբայր Պաղտասարին, Հօրն Խաչատուրին եւ մօրն Հաւաւին եւ ամենայն արեան առու մերձաւորաց իւրոց։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասէք ամէն Հայր մեր։ Թվ. ՌՃԺԸ* (=1669)։

*Զ. — Սկզբի պատարկ էջերէն մէկուն վրայ, անխնամ գրով. — ...ստամանուն Հայ եւ փոչի* ասազ սարկաւագ Գէորգին*, ի քաղաքն* Համան Մանսուր···։

Փարիզ. 15 Յունիս 1949

---

# 2.— ՍԱՂՄՈՍ

Հին թիւ՝ չունի

ԺԷ՞րդ դա՞ր

*ԹՈՒՂԹՔ՝ ԻԲ*×24 (=528 *էջք*)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 8×5½×4 *սնդմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. — ՏՈՂՔ՝* 21. — *ՆԻՒԹ՝ լաւ յղկուած դեղնորակ թուղթ։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակեայ, յանջրով եւ քամակով. կողերուն վրայ ծաղկեայ տպաւորութիւններով։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չորս թերթ սկիզբը եւ ութը թերթ ի վերջ։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած. թեթեւօրէն ցեցակեր ու յանջրին կաշին մասամբ մաշած։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ երկու տող, երկաթագիր, ոսկեզեղով ու լազուարդով։ — ԳԻՐ՝ սեւ մելանով մանր բոլորագիր, շատ յաջող ու միօրինակ. Համարներու գլուխները ոսկեզեղ ու լազուարդ գլխագրեր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ գեղեցիկ ծաղկումով թռչնագիր ու զարդագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ գրեթէ ամէն էջի վրայ, գունազարդ յաջող ծաղկումներով։ — ԽՈՐԱՆՔ՝ Հատ մը սկիզբը, ոսկիի ու կապոյտ-կարմիրի յաջող ծաղկումներով ու նոյն ոճով՝ բայց աւելի փոքր խորան ու կիսախորաններ՝ իւրաքանչիւր գլխակարգութեան սկիզբը։*

*ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ, յիշատակարան չունենալուն. դիտելի է որ բնկած ու կորսուած չէ, վասն զի պատարկ վերջին թերթերը մաս կը կազմեն գրուած վերջին պրակին։*

*Մատեանս է՝* Սաղմոս, *փոքրագիր, թղթեայ, ամբողջ, գեղեցկօրէն ծաղկուած, դժբախտաբար առանց յիշատակարանի։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Ալպեր Աշճեան, Փարիզ։*

Փարիզ. 14 Օգոստոս 1947

---

# 3.— ՍԱՂՄՈՍ · ԺԱՄԱԳԻՐՔ

Հին թիւ՝ չունի

ՌԿ եւ ՌԿԶ = 1611 եւ 1617

*ԹՈՒՂԹՔ՝ ԻԲ*×24 (=528 *էջք*)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 14×10×4 *սնդմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին։ — ՏՈՂՔ՝* 24 *եւ* 20։ — *ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստարակ թուղթ։ — ԿԱԶՄ՝ մութ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, կողերուն վրայ ծաղկեայ տպաւորութիւններով եւ կաշիէ ճարմանդներուն երկու բեւեռներով։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ գէշ պահպանուած. կազմին քամակը քայքայուած։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ միայն երկու թերթ՝ սկիզբը, երկաթագիր Աւետարանի մը մասերով։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ պարզ զարդագրեր։ — ԳԻՐ՝ Սաղմոսները սեւ մելանով պարզ բոլորագիր, իսկ Ժամագիրքինը տարբեր գրչէ աւելի յաջող բոլորագրով։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ ծաղկումով զարդագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ եւ ԽՈՐԱՆՔ՝ անյաջող ծաղկումներ։ — ԿՆԻՔ՝ սեւ կարմիր մելանով ու անյաջող փորագրութեամբ երեք հատ, նոյնը, սկիզբի էջերուն վրայ՝* Թորոս։

*ԳՐԻՉ՝ Թորոս աբեղայ։ — ՍՏԱՑՈՂ՝ գրիչը։ — ԿԱԶՄՈՂ՝ Ստեփաննոս աբեղայ։ — ԺԱՄԱՆԱԿ՝* 1611 *եւ* 1617։ — *ՏԵՂԻ՝ Երուսաղէմ։*

*Մատեանս է՝ մէկ կողքի տակ՝* Սաղմոս *եւ* Ժամագիրք՝ *փոքրագիր, թղթեայ, լման եւ կանոնական օրինակներէ գաղափարուած։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Ալպեր Աշճեան, Փարիզ։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա. — Էջ* 527, *ի վերջ Ժամագրքի* (Գլխաւոր յիշատակարան). — *« Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ Որդւոյ եւ*

Հօգւոյն Սրբոյ ամէն։ Եւ արդ ես անարգս եւ անպիտանս եւ ամենայն մեղաւք գաղաձեալս, անիմաստ եւ անարհեստ ի [illegible] գրչութեան Թորոս մեղաւոր խաբեբայ ո՛չ հարեցայ, շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին գրեցի զսա ի յԵրուսաղէմ քաղաքն, ի դուռն սուրբ Յակոբայ Առաքելոյն եւ սուրբ Յարութեան եւ այլ ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ ի թվին ՌԿԶ (=1617) ի փետրուարի ամսոյ իա։ Սղալանացս եւ խոշորանացս մի՛ մեղադրէք զի կար մեր այս է։ Եւ դարձեալ յերես անկեալ աղաչեմ որք հանդիպիք ի սմա Հայր մերով։ Եւ Աստուած զձեզ յիշէ ի միւս անգամ գալստեան. ամէն։

Բ. — էջ 528. — Արդ գրեցաւ երգս Դաւիթ եւ ընտիր օրինակէ ձեռամբ Կոստանդնուպոլիս (այսպէս) ի թվի ՌԿ (=1611)։ Ի թվ ՌՃԴ (=1655) ս. Սարգսին պահոց թագաւորն սաֆար եկաւ։

Գ. — էջ 1՝ սկիզբի պատարկ էջին վրայ. — Ընդ առաջին աշխատողացն եւ ընդ վերջին աշխատողացն՝ զկազմողս զՍտեփաննոս սուտ անուն աբեղայս յիշեցէք առ մարդասէրն Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ՝ ամէն։

Փարիզ. 14 Օգոստոս 1947

## 4.— ՍԱՂՄՈՍ

Հին թիւ՝ չունի

ԺԶրդ դա՞ր

ԹՈՒՂԹՔ՝ ԻԱ×40 (=440 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×8×5 սնդմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ 17։ — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած սպիտակ մագաղաթ։ — ԿԱԶՄ՝ ինկած։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ գէշ պահպանուած. կազմը ամբողջովին ինկած, քանի մը թերթ պատռած ու սկիզբի եւ վերջի քանի մը թերթերը ինկած ու կորսուած վերջի յիշատակարանի հետ։ Սաղմոսի վերջին համարն է՝ « Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ... »։ — ԳԻՐ՝ մաքուր բոլորգիր. համարներու սկիզբը կարմրագեղ։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ յաջող ծաղկումով թռչնագիր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ նոյն ծաղկումով.

ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ԾԱՂԿՈՂ՝ անծանօթ, նոյնպէս ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ, ինկած ու անհետացած ըլլալով գլխաւոր յիշատակարանը։ Հաւանաբար գրուած է ԺԶրդ դարուն։

Մատեանս է Սաղմոս, մագաղաթեայ, փոքրադիր եւ լաւ գրչութիւն։ Ձեռագիրս սեփականութիւնն է Գր. Վարդ. Կիւլպէնկեանի, Փարիզ։

## 5.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ԺԳրդ դա՞ր

ԹՈՒՂԹՔ՝ Ի×24 (=960 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 46×33×13 սնդմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՏՈՂՔ՝ 15։ — ԿԱԶՄ՝ սեւ լաթակազմ փայտեայ, սեւ կաշեայ քամակով եւ անկիւններով։ — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած հաստ թուղթ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած հակառակ պատկառելի հնութեանը եւ շնորհիւ նոր կազմերուն։ Սկիզբի եւ վերջի քանի մը թերթերը մաշած. ներքին թերթերուն մեծ մասը վերի անկիւններուն վրայ խնամով կարկտնուած եւ անհետացած գիրերը սեւ մելանով եւ ուշադրութեամբ գրուած։ Համաբարբառի համարանիշներ՝ ստորին լուսանցքներուն վրայ։ [illegible] կը պակսին համաձայնութեան տախտակներն ու Մատթէոսի նկարը։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹԵՐ գրուած են վերջի կազմի առեն։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ Մատթէոսի Աւետարանին սկիզբը երեք տող փառագիր-զարդագիր, շատ յաջող ծաղկումով։ Մարկոսի Աւետարանը ունի չորս տող զարդագիր, առատ լազուարդով եւ պատուարիչ մոտիւներով ու ծաղկումով։ Ղուկասու եւ Յովհաննու Աւետարանները ունին երեքական [illegible] հնատիպ եւ շատ յաջող։ — ԳԻՐ՝ ծայրէ ծայր մեծկակ յաջող երկաթագիր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս Աւետարաններուն, ինչպէս նաեւ գլխաւոր համարներուն սկիզբը, մեծագիր, զարդագիր, յաջողագոյն հնարոյր ծաղկումով։ Մատթէոսի խորանին սկզբնատառը հոյակապ զարդագիր մըն է 22 սնդմ. երկարութեամբ։ Մե՛ղք որ գործածութեամբ բաւական մը եղծուած է իր խորանին ու լուսանցազարդին հետ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, հին մոտիւներով եւ գեղեցիկ ծաղկումով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններուն ճակատը։ Մատթէոսի խորանը հին գաղափարէ մը առնուած է, բայց շատ

պարզ ծաղկում մը միայն տեսած է, մինչդեռ յաջորդները հայ զարդանկարչութեան շատ յաջող նմոյշներ են: Մարկոսի խորանը սիւրուն եւ ոսկեծիր քառակուսիներու մէջ քանի վարդակներ ունի, վերեւը զոյգ մը սպանիներով ու շատ յաջող ծաղկումով կանաչի եւ կարմիրի, նոյնպէս ոսկի թեթեւ ծիրերով: Ղուկասի եւ Յովհաննու խորաններուն վրայ արուեստագէտը իր տաղանդի ամբողջ կարողութիւնը դրած է, գոյներու ներդաշնակ համադրութեամբը ցինչը շրջապատող լուսանցազարդով, հոյակապ սկզբնատառով եւ ծիրանեփառ վերնագրերով: — ՆԿԱՐՔ՝ սկիզբը, Գաբրիէլ Հրեշտակապետ, մեծադիր, որ կիսամերկ մարդ մը կը կոխոտէ ու աջ ձեռքին մէջ բռնած բոցավառ սուրովը կը մորթէ նոյնպէս մերկ մանուկ մը: Հնադրոշմ՝ բայց արուեստով անյաջող նկար մը: Մատթէոսի Աւետարանին ի վերջ կայ ձեռագրիս ստացող Գրիգորիս Քահանայի մեծադիր նկարը, որուն կանգնած Մարկոս Աւետարանչի դիմացը, աղերսողի դիրքով: Քահանան հագած է կապոյտ ներքնոց, զօտիով, ու վրան կը կրէ մանուշակի կարմիր գծաւոր կարճ փիլոն: Դէմքին կարճ՝ բայց ձեւաւոր մօրուք, աւելի քան յիսնամեայ: Գլուխը դրած է իր ժամանակի յատուկ բրդեղէն թանձր ու կոշտ գլխանոց, ա՛յն՝ զոր Քիւրտեր կը կրեն ցայսօր, Քաղաքներու բրդեղէն գլխանոցի նմանութեամբ: Ոտքերուն վրայ կը կրէ թեթեւ մորթէ շինուած ու հողաթափի նմանութեամբ սեւ, վայելուչ կիսակօշիկ: Աւետարանիչը նստած է թախթի վրայ, դիմացը ունի թղթակալը եւ կը գրէ մեծադիր թուղթի վրայ: Նկարիս վերեւ, զոյգ կապոյտ յատակի վրայ կը տեսնուի Յիսուս, յաջողակ նկարչութեամբ: Ստորեւ կը կարդացուի (կարմիրով).

« Տէր իմ Քրիստոս փրկիչ մարդկան, պետ հովուութեան կարծիս անձման (°, մնացուած), որ զայս մատեանս աւետարան, մեզ հնչեցեր ձայն ցնծութեան, ավաղ (°) քոյս առեալ տամ, ա՛ռ զայս նուէրս բարեխնամ եւ յիս հայեա՛ց Տէր հաշտական »:

Աջ լուսանցքին վրայ՝ կարմիր մանրատառ՝

« Գրիգորէս երէց ստացող մատենիս »:

Ղուկաս աւետարանիչը նոյնն է Մարկոսի նկարին հետ, առանց շրջանակի, գրեթէ թերաւարտ: Յովհաննէս աւետարանիչ նստած է նոյնպէս թախթի վրայ, ձախ ձեռքին մէջ գրիչը, դէմը՝ պարապ թղթակալ: Յովհաննու նկարիս տակ կը կարդանք՝

« Տէր Աստուած ազնական լեր մարմնոյ եւ հոգւոյ Ավետիկի մեղապարտ ծառային եւ ծնողի իմոյ Վարդեր գրչի: »

Նոյնպէս Յովհաննու Աւետարանի խորանաձեւ լուսանցազարդերէն մէկուն մէջ կարմիրով՝ « Տէր Աստուած ողորմեա Վարդեր գրչի: »

ԳՐԻՉ՝ Վարդեր: — ՍՏԱՑՈՂ՝ Գրիգորէս քահանայ: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — ՏԵՂԻ՝ անյայտ: ԾԱՂԿՈՂ՝ Վարդեր, օժանդակութեամբ Ավետիկ որդիին: Աւետարանիս այժմու տէրն է Ֆրանսայի նախկին դեսպան, հնագէտ եւ պատմագիր՝ պարոն Jean POZZI, 31, Avenue Montaigne, Paris - 8e, որ 1930ին Կ. Պոլսոյ մէջ գնած է մատեանս Պր. Ալեքսանդրէ մը, այլ գրչութեանց հետ:

Արդեօք Աւետարանս Թորոսի կամ Գուշիարի նշանաւոր Աւետարա՛նն է:

Մատեանս է Աւետարան, թղթեայ, երկաթագիր, մեծադիր եւ նկարազարդ, որ կը բովանդակէ չորս Աւետարանները ամբողջ, առանց Համաձայնութեան տախտակներու, յառաջաբանի, նախադրութեանց եւ բովանդակութեան ցանկերու: Պատուրւած, թանկագին մատեան, ԺԴրդ դարու:

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանին (Գլխաւոր յիշատակարան). — « Ի վերայ ծովու երբեւ ցամաքի գնալով, զբիւրս բիւրոց ի սակաւ հացէ կերակրելով, զմեռեալս յարուցանելով: Մկրտեալ, խաչեալ, թաղեալ, յարուցեալ յերրորդ աւուր, Նստեալ ընդ աջմէ Հաւր մերով բնութեան մարմնովն զոր առ ի Սրբոյ Կուսէն՝ բայց ի մեղաց:

Զայս ամենայն եւ որ սոյին նման ականատես եղեալ աշակերտք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ եղեալ քարոզեցին ընդ ամենայն երկիր:

Այլ եւ ոմանք յաշակերտացն որ կոչին աւետարանիչք հրամանաւ Հոգւոյն Սրբոյ գրով աւանդեցին մեզ զգլուխ չորս Աւետարանացս՝ զոր սրբոյն Ամոնի (?) Աղեքսանդրացւոյ հրամանաւ Եւսեբիոսի բազում ճգնութեամբ պարապեալ ամբութեամբ, հիւսելով ընդ իրեարս որպէս զհիւսս ոսկեմանս, զի մի ոք ի հերձուածողաց կարասցէ բան ինչ կորուսանել յայսմ պատմութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Արդ առացից թէ յորում ամի գրեցին իւրաքանչիւր ոք ի նոցանէ, կամ յորում լեզուս:

Մատթէոս յետ ութն ամի վերանալոյ Փրկչին, յեբրայեցի լեզու յԵրուսաղէմ: Իսկ Մարկոս հրամանաւ Պետրոսի յԱղեքսանդր ի գաղմատերէն լեզու յետ. ԺԳ. ամի: Եւ Ղուկաս հրամանաւ Պաւղոսի հոռմայերէն լեզուաւ սկսեալ յԱնտիոք եւ կատարեալ ի Հռոմ, յետ. ԻԵ. ամի: Եւ Յովհաննէս յետ. ՄԲ. ամի վերանալոյ Փրկչին ի յոյն լեզուի յԵփեսոս գրեաց:

*Վասն որոյ այսմ հրաշալի տնօրինութեան փրկչին մերոյ ցանկացող եղեւ.* Քահանայ *ոմն՝ որոյ անուն նորա* Գրիգորէս *կոչի, որդի* Յակոբ երիցու, *տէր* Զափողանց եկեղեցւոյ, *ստացաւ եւ գրեալ ետ զսուրբ Աւետարանս ի յիշատակ իւր եւ կենակցին իւրոյ,* Թամար տիկնոյ *եւ ի վայելումն զաւակաց իւրոց* Հայրապետի *եւ* Յակոբայ *եւ Ղազարու: Ընդ նոսին եւ զհարազատ եղբայր իւր զ*Ներսէս Քահանայ *եւ զորդին ամուսինն իւր* Մարիանէ *եւ զմայր իւր զ*Թանկեր, *որ ոչ ժամանեցին յաւարտումն սուրբ Աւետարանիս ակրոնականի:*

*Արդ՝ որ ընթեռնույք եւ աւրինակէք ի սուրբ Աւետարանէս, յիշեսջիք ի Քրիստոս զվերոգրեալս զստացող աշխատողք սորա, զ*Գրիգորէս *եւ զպարկեշտ սրբահոգի ամուսին իւրոյ զ*Թամար տիկին *որ առաւել փափաքումն ունէր կատարման մատենիս: Քանզի եւ ոչ այլ իւր ժամանեաց յաւարտման սուրբ Աւետարանիս: Այլ երանելի կինս այս ի բաց եղեալ զկանացի ակարութիւն... զօրեղաւ զօրութեամբ, բազում... տարութեամբ եւ սրտայաւժար ջանիւ եւ խնդակաթ սիրով հոգւոյն ի չքաւորեալ եւ ի մա (յ) աւեալ ամենայն բարութեանց, որոյ վճառեալ հեծել եկեղեցի Աստուծոյ, ի դառնութեան չար ժամանակիս որ էնն ի վերայ աշխարհիս ի ձեռն* Կարեանց Ամիրապետին *որ* Տարար *վերակոչի. ճարակեալ պատրաստեաց զամենայն ժամ (*) աղախնութեան, եկից եւ կատարեաց ի յիշատակ ոգւոց իւրեանց եւ ծնողաց իւրեանց եւ ամենայն զարմից ի Քրիստոս փոխելոց եւ որք աւդնական եղեն ի սուրբ Աւետարանս. զ*Հայրապետն, *զ*Ազգ տիկին, *զ*Միայն, *զ*Խածուկն, *զ*Կոմէնն, *զ*Արտամն, *զ*Հանէսն, *զ*Յովասափն, *զ*Գինէհատն, *զ*Մարտիրոս, *զ*Համարեւն, *մայրն, զ*Մինայն *եւ զիւր մայրն, զ*Կասանոսն *(այսպէս) յիշեսջիք ի Քրիստոս եւ թողութիւն մեղաց խնդրեսջիք եւ որք յիշատակէքդ յիշեսցէ զձեզ Տէր ի համատեա (*) գալստեանն եւ նմա փառք յաւիտեանս ամէն:*

*Տէր Աստուած ողորմեա* Վարդերի *ծաղկողի: Ամէն:* »

*Բ. — Զվերջին կողմոյ սուրբ Աւետարանիս զ*Բարսեղ *սուտանուն եւ զվաթար եւ զանպիտան* Քահանայս՝ *որ անուամբ եմ եւ գործով ոչ: Յիշեսջիք եւ մեղաց թողութիւն խնդրեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ:*

*Զվերջին նորոգաւղ սուրբ Աւետարանիս զ*Պետրոս եպիսկոպոսն *եւ զեղբայրն իւր զ*Մանուկն *եւ զծնաւղքն իւր զ*Ավանէս Քահանայն *եւ զմայրն իւր՝ զ*Հերիքան *եւ զ*Մարտիրոսն *եւ զ*Գրիգորն *եւ զ*Պարոն *եւ զորդին զ*Բարձեղն *եւ զեղբաւրորդիքն զ*Ավանէսն *եւ զգեղարոյս դպիրն՝ զ*Ղուկասն *եւ զ*Մարտիրոսն *եւ զ*Պօղոսն *եւ զմայրն իւր զ*Հռիփսիմէն *եւ զհարսերն՝ զ*Շահրիստան *եւ զ*Անանուխն *(այսպէս) եւ զ*Խտըրշան *եւ զայլ ամենայն մերձաւորք արեան որ հանգուցեալ են ի Քրիստոս յոյսն ամենեցուն ի թվաբերութեանս հայոց Ռ եւ ԽԵ ամին* (=1596), *ի թագաւորութեան* Սուլթան Մահամատին *եւ ի կաթողիկոսութեան* տէր Ազարիային: *Այս այն տարին այնչափ սով սրածութիւն եղաւ, որ զեղաւրէնք ի քաղաքն լցվան, ի բերդն մտան. այնչափ սով եղաւ Ստամբաւլու քիլան ի.ձծ. դրամ ելաւ, շատ մարդ ի սովու մեռաւ եւ շատ ոք սրով խողխղան վասն մեղաց իւրեանց. այն տարին զազբիւր բերին, .բ. եղ (անգա՞մ) խոստում եկաւ ի յԱստուածային շնորհացն՝ ամէն:* Պետրոս եպիսկոպոսն *պա...* (*այս վերջին տողերը պատռած ու մաշած էջին վրայ են*):

*Գ. — Զվերջի կողմոյ այսմ տառիս եւ զիս անարժան զ*Կիրակոս Քահանայս *եւ զորդին իմ զ*Ղազար դպիրս՝ *որ վերստին նորոգեցաք զսուրբ Աւետարանս ի գեաւղն* Տումարզայ՝ *որ հայր .Է. ամիսն կատարեցաւ, որ շատ աշխատեցաք սուրբ Աւետարանիս եւ յիշատակեն եւ մեղաց թողութիւն խնդրեն եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի ի միասնգամ գալստեանն՝ ամէն: Ի թվին հայոց ՌՃԼ* (=1681):

*Դ. — Մարկոսի Աւետարանին ի վերջ* 1853 *դեկտեմբեր* 1, Ես տիրացու Յովհաննէս Էվէրէկցի Նեվրուզեան, հանդերձ Կարապետ եպիսկոպոսի. առաջնորդ Սեբաստիոյ եւ Եօզղատու, *եղաք այս սուրբ Աւե-*

*տարանս յուխտ եւ երկրպագութիւն մատուցաք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*: 1860 *նոյեմբեր* 1 *զարձեալ* Եվէրէկցի Նեվրուզեան Յովհաննէս վարդապետս *վերստին յուխտ եւ երկրպագութիւն մատոյց*: *Նայամրայի Յիսուս Քրիստոս պահեա՛ զմեզ յայմհեաւ անեղական աջովդ յաւիտեանս ամէն*։

*Յովհաննէս վրդ. Եվէրէկցի*

*Ե.* — *Ղուկասու նկարին տակ՝ մելանով՝* 1924. Նօգկատ՝ *Հայնաւոր* հանր Թ. Փափազեան:

Փարիզ, 5 Օգոստոս 1949

---

# 6.— ԱՒԵՏԱՐԱՆ

Թիւ՝ չունի

ՌՆԾԳ = 1453

*ԹԵՐԹՔ՝ ԻԸ* (=466 *էջք*)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 27×17×7 *սնդմ.* — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն*։ — *ՏՈՂՔ՝* 21: — *ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստ թուղթ*։ *ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտեայ, պարզ դեղնագոյն*։ — *ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ թուղթ մը սկիզբը ու թուղթ մըն ալ ի վերջ, մասամբ պատռած ու սեւցած, երկուքն ալ Կորնթացւոց Բ. թուղթի Զ. գլուխի համարներով ու ընտիր երկաթագիր*: — *ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ պահպանուած, տեղ տեղ էջերը մաշած ու կարկտնուած ու ցեցակեր*։ — *ԴԱՏԱՐԿ ԹԵՐԹՔ՝ չկան*։ — *ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը երկու կամ երեք տող, մեծագիր, երկաթագիր կամ զարդագիր ու թռչնագիր*: — *ԳԻՐ՝ սեւ մելանով յաջող բոլորագիր*: — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, մարդագիր, կենդանագիր, թռչնագիր ու զարդագիր՝ պարզ ծաղկումներով*: — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, գրեթէ ամէն էջի վրայ, սովորական ծաղկումներով*: — *ԽՈՐԱՆՔ՝ նոյնպէս մեծագիր, չորս Աւետարաններու սկիզբը, ընդհանրապէս մութ կապոյտ յատակի վրայ*։ *Առանցմէ զատ կան նաեւ տասը փոքր խորաններ՝ Կարպիանոսի ծանօթագրութեանց տախտակները զարդարող*։ — *ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ գեղեցիկ հաւաքածու մըն է Աւետարանիս սկիզբը, բոլորն ալ, թէեւ ո՛չ այնքան յաջող, գործ Հիզանի համբաւաւոր նկարչական դպրոցին*։ *Առաջին պատկերը կը ներկայացնէ Յիսուսի ազգաբանական ծառը որուն տակ Աստուած երկարած է, իսկ վերեւը՝ Տիրամայրը՝ մանուկ Յիսուսով*։ *Յաջորդ նկարներն են՝ Աբրահամի զոհաբերութիւնը, Գաբրիէլի Աւետումը, Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը, Այլակերպման խորհուրդը, Երուսաղէմ մուտքը, Ոտնլուան, Անդամալոյծը, Տեառնես կինը, Յիսուսի չարչարանքը, Պետրոսի ուրացումը, Պիղատոսի լուացումը, Խաչէն վար առնուիլը, Յարութիւնը, Հոգեգալուստը, Մեռելոց յարութիւնը, Դատաստանը, եւն*։ *Դիտելի է որ Հոգեգալստեան նկարի տակ խորանաձեւ յաւելուածական նկար մը կայ՝ ուր բաց լուսամուտի մը առջեւ երկու անձ դէմ դիմաց ծունգի են նստած ու կ'աղերսեն*։ *Աջ կողմը* սէր Կարապետն *է, գլխարաց, կարմիր պարեգօտով ու կանաչ թիկնոցակով*: *Միւսն է* սէր Թումայ աբեղայն, *կապոյտ թիկնոցով, սեւ փիլոնով եւ սեւ վեղարով, որոնք երկու ստացողներն են Աւետարանիս*։ *Իսկ ասոր հանդիպակաց էջի Տիրամօր նկարի տակ կ'երեւայ Աւետարանս գրող եւ ծաղկող Յովհաննէս կրօնաւորին բաւական յաջող նկարը*։ *Աս ալ ծունգի վրայ աղաչական դիրքով է. հագած է կապոյտ թիկնոց գօտիով եւ վրան ունի ոսկեգոյն չուրջառ*։ *Կանանչ յատակի վրայ սեւ մելանով կը կարդանք՝*

*« Ո՛վ ամենաօրհնելի Աստուածածին մի մոռնար զամենամեղ* ծաղկօղս *յաւուր դատաստանի Միածնի քո զի ողորմութեան քո արժանի լինել կամ։ »*

*ՍՏԱՑՈՂՔ՝ Թումայ կրօնաւոր եւ Կարապետ*։ — *ԳՐԻՉ՝ Յովհաննէս*։ — *ՏԵՂԻ՝ Հիզան*։ — *ԺԱՄԱՆԱԿ՝* 1453: — *ՏԱՂԿՈՂ՝ գրիչը*: — *Ձեռագիրս սեփականութիւնն է Պր. Յակոբ Խնճինեանի, Փարիզ*. — *ԿՆԻՔ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ* Յովհաննէս վարդապետ. *ՌՄԷ* (= 1758)։

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, մեծագիր եւ լիակատար, Կարպիանոսի ծանօթագրութեանց լման տախտակներով եւ իւրաքանչիւր Աւետարանի ցանկով եւ նախադրութեամբ: Գրեթէ բոլոր էջերու տակ կան համաբարբառի համարանիշները։ Յովհաննէս Աւետարանիչի ի վերջ կայ « Իրք կնոջն շնացելոյ » մասը:*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա.* — (Գլխաւոր յիշատակարան)՝ *ի վերջ.* — *« Փա՛ռք անսկզբանն եւ սկզբանն ամենայնի, անեղ էին եւ գոյացուցչին բնաւից. անփոփոխման եւ անսահման էացուցչին. սահմանիչ եւ կատարումն բոլոր էից, երից*

միակին, նշանի եւ միում աստուածութեան։ Որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն։ Էից էակն, եւ կենդանեաց կեանքն։ Որ անփոփոխ գոլով միշտ յէու- թեան, անեղ եւ անվայրահակն, լրումն եւ բովանդակիչ ամենայնի եւ յամենայնս է։ Որպիսի մասունս է ի բոլորս, եւ ինքն ոչ մասն եւ ոչ բոլոր, որպէս թէ զմասն եւ զբոլոր զամենայնն յինքն ունելով։ Եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ։ Գե- րալիր գոլով լնու զամենայն եւ անհաս է յամենայնէ, որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էից։ Ի բոլոր էից հանցուք աւրհնութիւն ի փառս, Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ, բազմաւրինակ իմ ցուցանի։ Զի ոմանք ասեն թէ չորից աւետարանչացն են, չորք ան- կիւնք արարածոց։ Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ։ Պարտ է համաւրիւ քա- րոզել զԱւետարանն։ Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոյն, յան- դրախտական աղբիւրէն յառաջ խաղացեալ, առ ի տիեզերաց ոռոգումն. Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս։ Եւ սոցա գոլով նմանա- պէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն ոռոգանել զպասքեալ միտս մարդ- կային բնութեանս։ Նոյն աւրինակ ըստ տե- սութեան Եզեկիէլի, քառակերպեան աթո- ռոյ, Մարդ, Առիւծ, Եզն, Արծիւ։ Զանմար- մնոյն Տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ, զխնամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածա- պէս եւ տիրաբար, բերմամբ նշանակէ զի- նեւն առ ի հողածինս հրեղինացն անմահից զմահկանացուածս առնել հաղորդ։ Եւս եւ ի զերակատար հանել ի փառս։ Վասն զի փա- ռաց թագաւորն Քրիստոս, փառակիցն Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ, զմերս առնելով... մի որդի դաւանել որ յԱստուծոյ հայրէ, եւ որ ի Մարիամայ սուրբ կուսէ։ Անճառ միու- թեամբ, զոր աւետարանականն ուսուցանեն բանք, մինչ ի կատարած հաւանութեամբ. հաւատալ հաստատ կարգաւք. ի նոյն յարե- լով յառաքելաւանդ քարոզութիւն։ Որ զաս- տուածախաւսն վարդապետութիւն զրոշմ- եալ, զատկաւս ի բազմացն՝ առ ի հաւատալ, եւ զկեանս յաւիտենականս ընդունել յանուն նորա։ Աստի եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ՝ ամն ի լուսա- ծնեալ զարմից Թումայ կրօնաւոր եւ Կարա- պետն՝ զոր ի վաղուց հետէ ցանկային այսմ աստուածախաւս սուրբ Աւետարանիս։ Եւ ետուն գրել զսա յիշատակ հոգւոց իւրեանց եւ ծնողացն իւրոց։ Եւ արդ ես յետինս ի կրօ- նաւորս եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ հրաման առեալ ի պատուիրանադրի առա- քելական բանէն որ ասէ. յոր կոչումն կոչե- ցար՝ ի նմին կացջիր։ Եւ արդ իմ ոչ բերե- լով զայսպիսի վստահութիւնս, այլ ունայն յամենայն բարեվայելչութենէ որ առաքին- եացն համարձակութիւն։ Այլ ի բարեխաւ- սութիւն մաղթելով զամենայն սուրբս, եւ ի մարդասիրութիւն Աստուծոյ յուսա- դրել, զկործանեալ եւ զլքեալ անձն իմ եղ- կելի։ Ով զիւրակործան մարմին երկրածին։ Որովք ձայնարկութեամբ զքեզ աւաղեցից. կամ զխարդ ի գիր յաւեցից։ Կամ զորոց նշանակեցից։ Զմարմնական տանջանց, եթէ զ... սխալանաց։ Զկամայից եթէ զակամա- յից, զոր ոչ բաւէ նամակս վերաբերել, եւ կամ ի գիր շարաբանիլ։ Այլ գիտողին զգաղտն երեւակսն. նմա առաջի արկեալ հե- ղից զանձն իմ մաղթանաւք, որ կարողն է. կեցուցանել եւ վերստին հրաշագործել յիս աղաւթիւք ամենայն սրբոց։ Այլեւ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ յողնամեղ եւ մեղսամածեալ մեղաւք Յովհաննէս վարդա- պետի որ անուամբս եմ, եւ ոչ գործով, ի յԱնապատս որ կոչի Գամաղիէլ, ի դուռն սուրբ առաքելոյս Գամաղիէլի։ Ի յառաջ- նորդութիւն վանացս Յովհաննէս վարդա- պետի եւ միւս Յովհաննէս վարդապետի եւ հայր վանացս Յովհաննիսի եւ այլ միաբան եղբարցս։ Եւ իմ անընդունակ գոլով յար- ուեստ գրչութեան, եւ բազում մեղաց ցնո- րիւք պաշարեալ։ Այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր հոգին, բա- զում աշխատասիրեալ իմ ի սմայ, գրեցի անարժան ձեռօք իմովք յընդիր եւ ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք, եւ բա-

գում պանդխտութեամբ, ի մեծ Թուականիս, յեղանակ չքնաղայութեանս արեգական տօսր բքոց երկնաչու ճանապարհաւ, յերկնից յերկիր հայկեան, ըստ արարչութեանցն չափեալ յելանելոյն Ադամայ ի Դրախտէն: ՁՌ եւ ՉՃ եւ ԴԱ ամ: Ըստ եւթանասնիցն որում մեք վարիմք: Եւ է ի մարդեղութենէ բանին Աստուծոյ անժամանակ էին, և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ՌՆԾԳ (=1453): Իսկ Թուոյ Թորգոմայինն յաբեթեան տումարի, Թուականի Ջ (= 900): Ի կաթուղիկոսութեան հայկազեանս սեռի Տեառն Գրիգորի Էջմիածնի. եւ ի յԱղթամարայ կաթուղիկոսի Տեառն Զաքարեայի: Զոր տէր Աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական եւ զթագաւորական: Զի յիշել զանունս նոցա սասանեալ մաքրեալ. ոչ եւս երեւին թշնամիք ճշմարտութեան: Եւ գրեցաւ աւետարանս գայս՝ ի գաւառիս Հիզանայ, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյս Դամադիէլի, ի վայելումն սրբասնեալ եւ կուսակրօն կրօնաւորի Թումայի եւ պատուական եւ հաւատարիմ տանուտրոջն Կարապետին և կենակցին Մօսրմէլէքին եւ ծնողաց նոցա: Արդ՝ որ ճաշակէք յաստուածային բուրաստանէս եւ յամենայն սեղանոյս, յիշեսջիք զաղաւթս ձեր զստացող Ս. Աւետարանիս զԿարապետ և զկենակիցն զՄօսրմէլէք եւ ծնողս նոցա՝ զԽէրապետ (տայպէս) և զկենակիցն իւր զԱւագխաթունն, զՄինաս եւ զԱւագխաթունն, զՅովհաննէս եւ զՄօսրմէլէք ի Քրիստոս: Եւս առաւել յիշեսջիք ի Քրիստոս կրկին անգամ ստացող սուրբ աւետարանիս Թումա կրօնաւորն եւ զծնողսն զԱստուածատուր եւ զԹանիխաթունն եւ զԿարապետ և զծնողսն իւր, զՄօսրմէլէք եւ զծնողս իւր, զհայր իւր Մինաս և զմայրն իւր զԱւագխաթունն... և Աստուած ողորմի ասացէք ստացողաց սուրբ աւետարանիս՝ որք ստացան զսա ի հալալ եւ յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ հոգւոց իւրոց եւ ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորացն: Արդ որք կարդայք եւ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԹումա կրօնաւորն եւ զԿարապետն եւ զուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի ամէն:

Բայց աղաչեմ զձեզ զհանդիպող սուրբ աւետարանիս զի անմեղադիր լինիք խաչարութեան եւ սխալանացս, զի անձամբ տկար էի, եւ յոյս աչիցս պակասեալ էր. հայր վասն Աստուծոյ, հայր վասն Աստուծոյ անմեղադիր լերուք: Եւ բարի սրտից եւ ի բերանոյ ձերոց յիշեցէք ի Քրիստոս Աստուած զանարժան գրիչս զՅովհաննէս բանախնդիրս և զծնողսն իմ զՂազարն* և զԴիլշատ եւ զհանգուցեալ եղբայրն իմ զքաղցրիկ Յովհաննէսն եւ զԽերապետն եւ Աստուած ողորմի ասացէք նոցա եւ որ ասէ եւ իւրն Աստուած ողորմեսցի ամէն»:

Բ. — Մարկոսի բովանդակութեան ի վերջ — Յիշեցէք ի Քրիստոս զՅունան, զԿասուն եւ զՋանիօն եւ զմայր նոցա զԱսլմէլիք եւ ով բերանով Աստուած ողորմի ասացէք նոցա, ամէն: Նոյնը՝ ի վերջ Ղուկասու բովանդակութեան:

Փարիզ. 25 Յուլիս 1947

## 7. — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին բիւ՝ չունի

ՌԱ = 1552

ԹՈՒՂԹՔ՝ ԻԸ×40 (=1112 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26×17×7 սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ՝ 21: — ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստարակ թուղթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, յանջրով եւ թիկունքով: Կողքին առաջի երեսը ծածկուած ոսկեջուր արծաթեայ թերթով. վերջինը Տիրամայր՝ գիրկը մանուկ Յիսուսով, վերեւը խաչ, չորս կողմը հրեշտակներով, անյաջող ոսկերչութեամբ: Խաչանիշ արծաթապատ է նոյնպէս յանջրի պահարանը: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու անգիր՝ բայց սեւցած ու մաշած թերթեր, սկիզբն ու վերջը, իբր զատարկ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած, հակառակ անխնամ թուղթին: Քանի մը թերթեր կարէն ինկած, չորս Աւետարանիչներու նկարներն ու չորս խորանները գրեթէ ամբողջովին եղծուած ու անճա-

նաչելի։ Էջերու ստորին լուսանցքներուն վրայ Աւետարաններու համաձայնութեան համարանիշերը։ Ունի «Իրք կնոջն շնացելոյ» մասը։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ խորագրեր Աւետարանի ներսը, երկու տող կարմրագեղ երկաթագիր։ — ԳԻՐ՝ թանձր եւ մեծկակ յաջող բոլորգիր։ Համարները ունին կարմրագեղ երկաթագրեր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, մարդագրեր եւ այլ մեծկակ զարդագրերով, հասարակ ծաղկումով։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, գունաւոր, սովորական մոթիվներով եւ յաջող։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններու սկիզբը, օրինակները լաւ ընտրութեամբ՝ բայց ծաղկումը անյաջող եւ անխնամ, գրեթէ բոլորն ալ փճացուած։ — ՆԿԱՐՔ՝ չորս հատ, չորս խմբագիր աւետարանիչներու, եղծուած՝ անյարմար թուղթէն եւ ներկէն։

ԳՐԻՉ՝ Փիլիպպոս (կրօնաւո՞ր)։ — ՍՏԱՑՈՂ՝ Պարոնտէր Մելքիսեթ Արքեպիսկոպոս։ — ՏԵՂԻ՝ անծանօթ, Թավրի՞զ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԱ (=1552)։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Արշէր Աչճեան՝ Փարիզ։

*Սատանայ է Աւետարան, թղթեայ, մեծադիր եւ ամբողջ։ Կը պակսին սկիզբի Համաձայնութեան տախտակները։*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա.— *Ի վերջ Յովհաննու Աւետարանի* (Գլխաւոր յիշատակարան) — «*Փա՛ռք բեզ անսահման եւ զուգական անուն, անսկզբն ե անփաղձան, անեղ եւ անապական էութենէ, անո՛ր, անե՛րր, անուանք եւ անժամանակ. յերիս բաժանեալ...* (*սովորական նախերգանքով՝ իբր եօթը սինակ*)։

«*Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի յեզանութեան* (*այսպէս՝ յիշխանութեան*) Շահ Թահմազին, *ի թուականութեան Հայոց* ՌԱ (=1552) ։*Գրեցաւ ի Դուռն* հայր Ոհանու։ *Ձեռամբ սուտանուն* Փիլիպպոսի՝ *որ զանունս միայն ունիմ եւ ոչ զգործս բարութեան*։ *Ի խնդրոյ* Պարոնտէր Մելիքսէթ արքեպիսկոպոսին. *յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց. հայրն* Պարոն Մելիք Միրզաճանին *ե մայրն՝* Պարոն (*այսպէս*) Գոհարին։ *Եւ եղբայրն իմ* Պարոն Մելիք պէկն *եւ հանգուցեալ որդին՝* Պարոն Շախնազարն (*հմմտ՝* Տաշեան ցուցակ՝ *էջ* 181 ա) *եւ միւս որդին՝* Մելիք Շահնազարն, Պարոն Աւիպէկն, Պարոն Դաւէչէն (*այսպէս*), Պարոն Միրզէն *եւ հարսն՝* Պարոն Խաթունազէն *եւ դուստրն իւր՝* Պարոն Խանումզէն *եւ* Պարոն Գոհարավարդն (*միշտ այսպէս, իգական անուններն ալ* Պարոն (*սի՛ց*) *յիշուած*)։ *Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ՝ յիշել ի Տէր* Պարոնտէրն Մելիքսէթ արքեպիսկոպոսն, *պարոն պարոնաց որդին, պարծանք պարծանաց ամենայն եպիսկոպոսաց, փափաքանօք եւ կատարեալ սիրով գրել ետուր բզատ յիշատակ հոգոյն իւր. եւ մի սրտի Աստուած ողորմի ասէք. ամէն։ Զաւարտամս ի բարեաց եւ փարթամս ի չարեաց* զՓիլիպպոս *գրչակս յիշեցէք եւ մի բերան Աստուած ողորմի ասէք եւ Աստուած ձեզ ողորմեսցի ամէն։ Դա՛րձեալ յիշեցէք զուսուցիչ վարդապետ իմ բզտէր* Խաչատուր արքեպիսկոպոսն՝ *որ բազում աշխատանք ունի ի վերայ մեր. Աստուած իւրան արքայութիւն պարգեւէ. ամէն*»։

Բ. — *Ի վերջ Մարկոսի Աւետարանին՝* — *Համբարձմանն կարգա՛ եւ* Փիլիպպոսին *ողորմի ասա ո՛վ եղբայր*։

Գ. — *Յաջորդ պատարկ թուղթին վրայ՝ վերջի եւ անվարժ նոտր գիրով եւ անխնամ ուղղագրութեամբ. — Յիշատակ է սուրբ Աւետարանս* Խուրջի (*այսպէս, թէեւ առաջին գիրը աւելի* Ի *է՝ քան* Խ) Ըռօհեջանին *եւ իւր կնոջն* Ղիմարին *ե իւր որդոցն* Ներսէսին *եւ* Աւետխին *եւս* Աստուրին *եւ եղիր յիշատակ ի դուռն* Սուրբ Կիրակոսին. *մի՛ ոք իշխեսցէ ո՛չ եպիսկոպոս, ո՛չ վարդապետ, ո՛չ քահանայ, ո՛չ ժողովուրդ, հեռացուցանել զայս Աւետարանս ի դրանէ ս. եկեղեցոյ, այլ կացցէ անջինջ յիշատակ ի դուռն* Սուրբ Կիրակոսին եւ Կարմիրու Սուրբ Նշանին՝ *յիշատակ հոգւոյ իւրոյ,* Ըռօհեջանին *եւ իւր կողակցուն* Ղիմարին *եւ իւր որդոցն* Ներսէսին, Աւետխին *եւ* Աստուրին. *ամէն։ Եւ որ զայս Աւետարանս հեռացուցանէ, զպատիժն Յուդայի առցէ եւ Նզովք Կայէնին ժառանգեսցէ ամէն։*

Դ. — *Վերջին պատարկ եւ չատ աւերուած էջին վրայ. — Արդ Նորոգեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան* Սարգիս վարդապետ ...*ցին* (*լաւ չի կարդացուիր*) *որ զանուն միայն ունիմ եւ ոչ զգործս բարութեան,* առաջնորդ Մաքինեա՞ց Սուրբ Աստ-

ուածածին, *յիշատակ իմոյ եւ իմ ծնողացս, հայրն՝* պարոն Միրզամին *եւ մայրն* պարոն Խաթունին *եւ եղբայր իմ* Բաթուին *եւ* Շահնազարն *եւ տէր* Բաղրամն, Ամինանեց (*) Ասիլպէկն, Արամպէկն: *Դարձեալ յիշեցէք* Մելիք Ասլանպէկն *եւ հայրս իմ* Մելիքպապէն *եւ մայրն իմ* Մարիամն *եւ որդիք իմ* Նատիրխան. Միրզամն *եւ դուստրն իմ* Գուլզատէն *և կողակիցն* Մերասն *որ հանգուցեալն է եւ միւս կողակից* Նազլուն: *Եւ դարձեա՛լ յիշեցէք* Մելիք Ասլանն *եւ իւր հարազատ եղբարքն՝* պարոն Ալխան, պարոն Ալիպէկն *եւ իւրեանց զարմն եւ զաւակն ուրհնեալ լինին. ամենայն ժամ: Դա՛րձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, յիշել ի Տէր անարժանն* Սարգիս վարդապետս, *որ բերում փափաքանօք եւ կատարեալ սիրով... (երկու-երեք բառ աւերուած) յիշատակ իմ հոգւոյն...: Թիւ՝ ՌՃԸ* (=1659) »:

Փարիզ. 22 Դեկտեմբեր 1947

---

## Ց.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՋՀԲ = 1523

*ԹԵՐԹՔ՝ Ա-ՒԹ* (=638 *էջ*). — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 18×13×6 *սմ.* — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկաթ.* — *ՆԻՒԹ՝ բամպակեայ թուղթ.* — *ՏՈՂՔ՝* 18: — *ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, լանջքով եւ թիկունքով.* — *ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան.* — *ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմը խանգարուած եւ քառական դրակներ կարէն ինկած: Բոլոր Աւետարանները ունին իրենց նախադրութիւնն ու բովանդակութեան ցանկը ու համաբարբառի համարանիշները՝ իւրաքանչիւր էջի տակը: Ձեռագրիս սկիզբը կայ Կարպիանոսի ծանօթագրութիւնը բայց գը պակսին Համաձայնական տախտակներու տասը հատը, վաճառուած կամ գողցուած ըլլալով, ձեռքէ ձեռք անցնելուն:* — *ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ ունեցած է եւ յետագային կարուելով հանուած ու ծախուած է, վասն զի վերջին թերթին կը յաջորդէ մաս մը մագաղաթ, ենթադրաբար հնագոյն Աւետարանի մը մասը.* — *ԿԵՐՆԱԳԻՐՔ՝ թռչնագիր ու զարդագիր խառն, իւրաքանչիւր խորանի տակ, հասարակ ծաղկումով.* — *ԳԻՐ՝ սկիզբէն մինչեւ վերջը նոյն յաջող բոլորագիրը.* — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ բաւական յաջող զարդագրերով. բոլոր համարանիշերը՝ կարմրադեղ:* — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, սովորական ծաղկումներով.* — *ԽՈՐԱՆՔ՝ չորս Աւետարաններուն սկիզբը, հնագրոշմ մոթիվներով.* — *ՆԿԱՐՔ՝ բաց ի չորս աւետարանիչներու նկարներէն, ձեռագրիս սկիզբը կան նաեւ* Աւետման, Մկրտութեան, Թափօրական յերան, Քրիստոսի ազգաբանութեան, Եզեկիէլի տեսլեան, Յանյուայի, Խաչելութեան *եւ* Վերջին դատաստանի *նկարները, բաւական յաջող արուեստով.* — *ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ քանի մը հատ միայն, ներքին լուսանցքներուն վրայ:*

*ԳՐԻՉ՝ Զաքարիա քահանայ:* — *ՍՏԱՑՈՂ՝ Խոջայ Աղնաւոր:* — *Վերջին ստացող* (1589)՝ *Ղազիկ:* — *ԺԱՄԱՆԱԿ՝ ՋՀԲ* (=1523): — *ՏԵՂԻ՝ Վան:* — *ՄԱՂԿՈՂ՝ անծանօթ, գրիչը:* — *Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Դանիէլ Գէորգեան, Փարիզ:*

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, միջակ գիրքով եւ նկարազարդ՝ որ կը բովանդակէ չորս Աւետարանները իրենց նախադրութեամբ եւ բովանդակութեան ցանկով.*

### ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա. — էջ* 630, *ի վերջ Յովհաննու Աւետարանին* (Գլխաւոր յիշատակարան). —
*« Փա՛ռք անըսկզբանն՝ եւ սկզբանն ամէն: Անեղին եւ գոյացուցչին բնաւից: Անվախճան՝ եւ անսահման... (վեց էջ սովորական նախաբանութեամբ): Արդ՝ որք ճաշակէք յամենասուրբ սեղանոյս՝ եւ վայելէք յաստուածային բուրաստանէս, եւ հանդիպիք սուրբ Աւետարանիս, կարդալով եւ կամ տեսանելով, յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղօթս ձեր առաջի անարիւն զենմանն՝ ի ժամ սոսկալի սուրբ պատարագին, եւ մի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ բոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք* խոջայ Աղնաւորին *եւ ծնողաց եւ եղբարց նորին եւ ամենայն վերոյ գրելոցս ի ամա. Եւ ողորմածն Աստուած ամենեցուն առ հասարակ ողորմեսցի: Ամէն:*

*Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս եւ անիմաստս ի գիրս գրչութեան եւ յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝* Զաքարիայ *սուտ անուն* քահանայ *որ անուամբ միայն եմ եւ*

ոչ գործով։ Շնորհիւ Տեառն սկսայ և ո-գորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս։ Ի մեծ թուականիս հայոց ի Ջ և ՀԲ (=1523) ի մայրաքաղաքս Վանն։ Ընդ հովանեաւ սրբոցն Աստուածածնին Պետրոսի և Պօղոսի։ Ի հայրապետութեան տեառն Սարգիս Կաթողիկոսի ամենայն հայոց։ Եւ ի յառաջնորդութիւն մերոյ աթոռոյ սուրբ ուխտիս Վարագայ Ներսէս և Կարապետ արհիեպիսկոպոսացս։ Եւ ի դառնութեան Շահ Իսմայիլի կարմիր գլխոյ՝ և ի տեղապահութեան Վանայ քերդիս Մուռուտ (այսպէս) Սօլթանի։ Արդ՝ աղաչեմ զամենեսեան զմանկունս սուրբ եկեղեցոյ. զի որք հանդիպիք տեսութեան սուրբ Աւետարանիս՝ զաւելորդն բառնայք և զպակասն լնուք, և խոշորութեան և սխալանացն անմեղադի՛ր լինել զի կար մեր ա՛յս էր։ Վասն որոյ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի յի սրտի և բերան հաւատով, անարժանիս Աստուած ողորմի ասիցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ և ծնողաց մերոց՝ Յովանիսի և Մուղայ խաթունին և կենակցի իմոյ խանզադի՝ և որդոյ իմոյ Ստեփանոս սարկաւագի որ աշխատեցաւ ի կոկել թղթիս և Աստուած ձեզ ողորմեսցի և զձեր մեղս թողցէ ամէն։

Եւ արդ՝ ես մեղուցեալ ծառայս Աստուծոյ խոջայ Ազնաւուր՝ ստացայ զսուրբ Աւետարանս ի հալալ և արդար վաստակոց իմոց, ի թողութիւն մեղաց և ի փրկութիւն հոգւոյ իմոյ՝ և ետու զսա ընծայ և նուէր ի դուռն Սուրբ Վարդանայ Զօրավարին և մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սորա ո՛չ ծախելով և ոչ գրաւելով, ո՛չ ի մերոց և ոչ յօտարաց, և եթէ ոք յանդգնի և առնէ, նա պատժի յԱստուծոյ, և ի Սուրբ Վարդանայ Զօրավարէն. ամէն եղիցի եղիցի։ »

Բ. — Էջ 636՝ տարբեր գրչէ. — Զվերնին ստացող սուրբ Աւետարանիս Կարապետ աբեղայս որ ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հայրն իմոյ Էլդարին և մայրն իմոյ Խաթունին և եղբարցն իմոց Նահապետին, Դաստապետին (հաւանաբար Նահապետն է եկեղեցւոյ մէջ գտնուող), Թումանին, Մանուկ սարկաւագին և հանգուցեալ եղբօրն իմոյ Սիմէոնին և հօրոյ եղբայրն իմ Թորոսն և քուերցն իմոյ՝ Նուկզարին (այսպէս), Մարքային, Մարիամին։ Արդ՝ որք հանդիպիք յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեան ամէն։ Այլ և յիշեցէք զհարեղբայրս և զվարպետն իմ զտէր Հայրապետ աբեղայն։

Գ. — Ասոր կը յաջորդէ, նոր գրով՝ Ես Իշխանս, տէր Դաւիթս, պարոն Մելքումս, Յաղուպ աղէն, որ տէր Կարապետին դրան քահանայ քաժանեցին (այսպէս)։ Նոր չարակնոցն, մախմատ ! չրջան տէր Ստեփանոսին ավին Աւետարանս, հին չարակնոցն ավինք Ս(ա)հակին, յիշատակ իւր և ծնողացն իւր, հայրն՝ Դաստապետին, մայրն Մարիամին, Աբրահամին, Ակոբին, Հերապետին, Կարապետին, Վարդանէսին։ Էս Աւետարանս Ս(ա)հակին զիստն ! ընկել էր եղբաւր։ Եղբաւր որդոյ։ Այլ ու այլ չկայ։

Դ. — Էջ 638. — Զվերջին ստացօղս սուրբ Աւետարանիս Ղազիկս (այսպէս) և զհայրն իւր Սաաքեյն և եղբայրքն իւր Յովանէսն, Թաաալին, Երամէն և զիւր արեան մերձաւորն։ Դա՛րձեալ յիշեցէք տրուփ Միրանդէն և զորդիքն իւր՝ Փիրվալարն, Պետրոսն և զվարպետն իւրեանց Անանիա էպիսկոպոսն և զիւրեանց արեան մերձաւորքն։ Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք և Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի ամէն։ Թվականն՝ ՌԼԸ (=1589) որ առեցաւ սուրբ Աւետարանս. ամէն Հայր մեր։

Ե. — Վերջին միակ դատարկ թուղթի վերեւ՝

Թվին ՌՃԾԲ (=1703), զամս ·իե· զաս առի։ Քրիստոսի ծառայ։ Ստորագրութիւն կայ բայց չի կարդացուիր։ Սիմոն քահանա՞յ։

Զ. — Յովհաննու Աւետարանի նախագրութեան ի վերջ՝ Ֆանդուն փոխերն կանաչ գրով է նշանած։ « Վասն ձերու ցանկս կապուտագիր է ի ճաղպոյ։ Նո՛յնը Մատթէոսի նախագրութեան ի վերջ։

Փարիզ. 14 Նոյեմբեր 1948

# 9. ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ 6

ԹՈՒԻՆ = 1645

*ԹԵՐԹՔ՝ 375 (= 770 էջք).— ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13 × 10 × 5 սնթմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած բարակ թուղթ.— ԿԱԶՄ՝ տախտակեայ շագանակագոյն կաշեպատ. — ՏՈՂՔ՝ 17. — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չկան.— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ պահպանուած, ներքին քանի մը թերթերը կարէն բաժնուած, Ղուկաս աւետարանչին նկարը ինկած ու կորսուած։ Բոլոր Աւետարաններն ալ ունին իրենց նախադրութիւնն ու բովանդակութեան ցանկը. Յովհաննու Աւետարանին ի վերջ կայ «Իբրեւ կնոջն շնացելոյ».— ԳԻՐ՝ սեւ մելանով միջակ բոլորագիր. համարներուն սկիզբը կարմրագեղ գլխագիր.— ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, սկիզբները, մանուշակի կարմիրով պարզ ծաղկումներ. նոյնպէս սկզբնատառերն ու լուսանցազարդերը։— ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներուն, նուրբ եւ բաւական ճաշակաւոր։ Ձեռագիրս պատկանած է Անտոնեան Միաբանութեան հաւաքման։*

*ԳՐԻՉ՝ Դպիր Մարգար — Առաջին ՍՏԱՑՈՂ՝ Մելիք Աղէի որդի Աղէ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1645.— ՏԵՂԻ Ջուղայ.— ՆԱՂԿՈՂ՝ անծանօթ։*

*Մատեանս է* Աւետարան. *թղթեայ, փոքրագիր, ամբողջական բովանդակութեամբ։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

*Ա. — Էջ* 768 (Գլխաւոր յիշատակարան). *«Փառք ամենասուրբ երրորդութեան, հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն, յաւիտեանս ամէն: Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս Յովհաննու ի թվականիս Հայոց ՌՂԴ (= 1645) ի գրչիս ձեռամբն* Դպիր Մարգարի. *ի գեօղն* Ջուղայ. *ի խնդրոյ հաւատարիմ քրիստոնեայ* Աղէ, *որ է որդի* Մելիք Աղէ՝ *որ ստացաւ զսայ, վասն վայելումն հաւատոյ եւ ուղղափառութեան իւրոյ, ստանիլ ի սմանէ բան ճշմարտութեան: Որով տէր Աստուած անփորձ պահեսցէ զինքն եւ անսասան յաւիտենից ամէն:*

*Դարձեալ յիշատակ է ս. Աւետարանս ըստացող գրոյս* Պարոն Աղալխաշխին *եւ ծնողաց իւրոյ* Մելիք Աղէ Նաշխունին, *եւ եղբարցն իւրոյ՝* Միքայէլին, Սիմոնին, Բաղումին, Մելիքճխազին *եւ քվերն՝* Սոլթանպարին, *ամէն:*

*Դարձեալ յիշատակ է ստացողի սորին* խաչիկ աղա *անորդի եւ կողակցին իւրոյ* Մարիամին *եւ որդւոցն սոցա* Մելիքին, Պետրոսին, Իսրայէլին, Թէւումին *եւ դստեր* Նաշխունին, *սոցա ամէն եւ ի հանդերձելումն. ամէն»:*

*Բ. — Էջ* 770՝ *տարբեր անվարժ գրչէ.— «Այս աւետարանս* Աղէ *կին բարեմիտ եւ աստուածասէր* Սարխանին *է: Աստուած իւրն եւ իւր ծնողաց մեղան թողցէ աստ եւ ի հանդերձեալ դատաստանին Յիսուսի Քրիստոսի. ամէն: Հայր մեր: Գրվեցաւ գիրս թուին ՌՃԼԲ (= 1683): Զայրիկար եւ զանարժա՞ն եսեթ անուն* տէր Յակոբ Քահանայս *յիշեցէք ի Քրիստոս, որ գրեցի այս յիշատակարանս»:*

Փարիզ, 4 Սեպտեմբեր 1946

# 10.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ԺԶ դա՞ր

*ԹԵՐԹՔ՝ 266 (=532 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21×18×7 սնթմ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ՝ 23: — ՆԻՒԹ՝ բամբակեայ թուղթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ. կողքի առաջին երեսին վրայ արծաթէ խաչ, մեծադիր գամերով շրջանակուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած: Սկիզբի 11 նկարներուն կը յաջորդեն Եւսեբիոսի Համաձայնութեան սիւնազարդ տախտակները: Վարի լուսանցքներուն վրայ խնամով նշանակուած են համապարբառի համարանիշները: Գլխաւոր յիշատակարանին վերջին մասը ինկած ու կորսուած ըլլալուն, շարունակութիւնը գրուած է տարբեր գրչէ: Չորս Աւետարաններն ալ ունին իրենց նախադրութիւնները: — ՎԵՐՆԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ մութ կարմիրով ծաղկուած զարդագրեր եւ երկաթագրեր են:— ԳԻՐ յաջող. բոլոր գիր-համարները կը սկսին կարմրագեղ գլխագրով: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ շատ են հասարակ ծաղկումներով: — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններու ճակատը՝ բաւական յաջող: — ՆԿԱՐՔ՝ բացի չորս աւետարանիչներու նկարնե-*

րէն, սկիզբը կան նաեւ Քրիստոսի անօրինական կեանքի կապուած 11 նկարներ, միջակ յաջողութեամբ:

ԳՐԻՉ՝ անծանօթ. — ՆԱՂԿՈՂ՝ Մինաս. — ԿԱԶՄՈՂՆԵՐ՝ Խաչատուր եւ Խանփար. — ՍՏԱՑՈՂ՝ Հոփփոփէ. — ԺԱՄԱՆԱԿ՝ 1685էն շատ առաջ. — ՏԵՂԻ՝ անծանօթ.

Մատենան է Աւետարան, թղթեայ, նկարազարդ, ամբողջական:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ՝

Ա. — էջ 523ա (Գլխաւոր յիշատակարան). — « Փա՛ռք անսկզբանն եւ զսկիզբն ամենայնի: Անեղէն, եւ գոյացուցչին, բնաւից: Անփոփոխ եւ անսահման էացուցչին: Սահմանիչ եւ ... » (սովորական ընդարձակ նախադասութեամբ՝ որ կը շարունակուի մինչեւ 523բդ էջի ի վերջ, որմէ յետոյ կը շարունակուի տարբեր թուղթի վրայ եւ տարբեր գրչէ):

« Արդ բարերարն Աստուած ուրհնեալն ամենայնի որ յաղթեալ ի մարդասիրութենէ ...: Որ եւ սոցին սիրելեացս Աստուծոյ համանմանեալ բարէմիտ եւ աստուածասէր կինն Հոխիսիմէն՝ որ ստացաւ զսա ի հալալ ընչից եւ արդար վաստակոց իւրոց յիշատակ իւր հոգւոյն եւ իւր ծնողացն հոգոյն, հօրն Մարտիրոսին եւ մօրն Ագիգփաշին եւ եղբօրն Դաւութճանին եւ զՏիրատուրին: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք իւրեանց հոգւոյն ամէն:

Դարձեալ աղաչեմ զձեզ ով ընթերցողք սուրբ Աւետարանիս. յորժամ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զբարէմիտ եւ աստուածասէր կինն Հոխիսիմէն եւ իւր կողակիցն Ամիրմուլքն եւ իւրեանց զաւակն Մարգարիտն եւ իւր կենակիցն Յովհաննէսն. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք: Դարձեալ կրկին անգամ յիշեցէք զՀոխիսիմէն եւ իւր կողակիցն Ամիրմուլքն եւ զքուրն Հոխիսիմէն, Մինախաթունն, եւ զՂումաշն եւ ամենայն յասու արեան մերձաւորքն ամէն: Եւ դարձեալ յիշեցէք զԱղապալուղոսն եւ զկենակիցն Ամբարխաթունն եւ զզաւակն Ասլէն եւ յամենայն յարեան մերձաւորքն. Աղապալուղոսին՝ որ Աստուած վարձահատոյց լինի, Աղապալուղոսին՝ որ բազում աշխատանք եւ երախտիք ունի. ամէն եղիցի եւ եղիցի: Հայր մեր. Զսուտանուն խաչատուր կազմողս յիշեցէք եւ զիմ ծնողսն ամէն »:

Բ. — Կողքին ներսի երեսին վրայ վերջէն փակցուած. — Արդ՝ երեսս ի գրոյն եղեալ սրտատրատութեամբ աչօք աղաչեմ զձեզ ով ընթերցող սուրբ Աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին կազմողս աշխատանաց վարձն հատուցանողն զխանփարէն եւ զծնողքն իւր զՊարոնզորն, Գուհարն, Սուլթանն եւ զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, աստ եւ ի հանդերձելումն: Գրեցաւ ի թուին ՌՃԼԴ (— 1685), յամսոյն ապրիլի Ժ օրն ուրբաթի՝ որ է ուրհնեալ յաւիտեանս ամէն:

Գ. — Սկիզբի Աւետման նկարի վարի լուսանցքի վրայ՝ կարմիրով. — ԶՄինաս ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս:

Դ. — Դատարկ մնացած ներքին էջերուն վրայ կը կարդացուին ընտանեկան հետեւեալ յիշատակագրութիւնները՝

— Վարդանոյշ Թադէոսեան (Տէր-Գաբրիէլեան) Յովհանջանեանց: Ալեքսանդրապոլ: 30 դեկտեմբեր 1888 թ.:

— Վարդանոյշ Թադէոսեան Յովհանջանեանց: Կարս՝ 1887 թ.:

— Կարապետ Խաչատրեան Յովհանջանեանց. Ալեքսանդրապօլցի: 1887–1894 Կարս: 1894–1912՝ Քիշնեւ: 1912ից՝ Թիֆլիսում:

— Աւետարանի տէր՝ Գաբրիէլեան տոհմի վերջին շառաւիղ՝ Վարդանոյշ Թադէոսեան բառ առն՝ Յովհանջանեանց: Կարս՝ 1888: թ.: Աւետարանիս այժմու տէրն է Պր. Գառնիկ Գէորգեան, 21, Quai Malaquais, Paris 6e.

Փարիզ. 6 ապրիլ 1948

# 11.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌԼԵ = 1586

*ԹԵՐԹՔ՝* 350 (=700 *էջք*)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 19×14×8 *սնմ.*։ — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն*։ — *ՏՈՂՔ՝* 19։ — *ՆԻՒԹ՝ լաւ յղկուած թուղթ*։ — *ԿԱԶՄ՝ սեւ կաշեպատ փայտեայ, զոյգ կապիչներով*։ — *ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած։ Եւսեբի առ Կարպիանոս գրած նախագրութիւնն ու համաձայնութեան տասը տախտակներէն երկուքը կը գտնուին ի վերջ Աւետարանիս, հաւանաբար կազմի նորոգման ատեն, վասն Քրիստոսի կեանքի եւ այլ հետաքրքրական եւ շատ յաջող ու ինքնատիպ նկարներէն 42ը նոյնպէս կը գտնուին մատեանիս ի վերջ եւ Կարպիանոսի նախագրութենէն առաջ։ Մատթէոս աւետարանչին նկարը կը պակսի, ինկած ու կորսուած ըլլալով։ Վերջին կազմի ատեն թերթերը դէշ կերպով կտրուած են մեքենայի տակ, անհետացնելով լուսանցազարդերուն փոքր մէկ մասն ու խորաններու զարդերը։ Ամբողջ հատորիս մէջ էջերու բոլոր տուները զարդարուած են, շրջանակաձեւ, սիրուն եւ թանձր ծաղկումներով։ Աւետարանիս բոլոր էջերու ստորին լուսանցքներուն վրայ կ'երեւին համարաբաշխի համարանիշները ու չորս Աւետարաններն ալ ունին իրենց համառօտ նախագրութիւնը, առանց բովանդակութեան ցանկի։ Ձեռագիրս, ինչպէս տեսանք, հարուստ է բազմաթիւ ինքնատիպ եւ շատ յաջող նկարներով ու կը ներկայացնէ իր տեսակին մէջ հազուագիւտ պատկերագիրք մը*։ — *ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու թերթ, սկիզբի եւ վերջի կողքերուն մէջ ագուցուած, երկաթագիր Աւետարանի մը մասերով*։ — *ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, միայն մէկ տող, յաջող զարդագիր*։ — *ԳԻՐ՝ ծայրէ ծայր նոյն գրչէն ելած բաւական վարժ բոլորագիր*։ — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս գլխաւոր, չորս Աւետարաններուն սկիզբը։ Մատթէոսինը փառագիր-մարդագիր։ Աջ ձեռքով բռնած եւ կուրծքին վրայ նստած եւ իր տիրոջ դէմքը համբուրելու վիճակով անասուն մը, իսկ ձախ ձեռքին մէջ ունի գոցուած փառակազմ Աւետարան մը։ Գոգին մէջ կը նստի չորքոտանի մը ու ագռաւի մը՝ որոնց գլուխները միայն կ'երեւան։ Մարկոսինը մարդագիրով խառն կենդանագիր մըն է։ Նոյնքան յաջող զարդագիրներ են Ղուկասու եւ Յովհաննու սկզբնատառերը*։ — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐԸ շատ են ամբողջ հատորիս մէջ հին ու ինքնատիպ ձեւերու յաջող ծաղկումներով եւ զանազան մեծութեամբ*։ — *ԽՈՐԱՆՔ՝ չորս Աւետարաններուն ճակատը, չորսն ալ իրարմէ յաջող նուրբ ծաղկումներով եւ շատ ինքնատիպ ու ներդաշնակուած իր շուրջի զարդանկարչութեան*։ — *ՆԿԱՐՔ՝ յիսունի չափ՝ մէկը միւսէն ինքնատիպ ու յաջող, որոնց բոլորին վրայ ծաղկող* Յակոբ *գրած է, արդարեւ, իր արուեստին բոլոր նուրբ գաղտնիքները։ Կ'արժէ պահ մը կանգ առնել բոլորին առջեւ*։ — 1. Յիսուս, *կանաչ ներքնոցով ծիրանի փիլոնով եւ ինքնատիպ դիմագծութեամբ։ Ստորեւ կը կարդացուի՝* Յիսուս Քրիստոսն Է՝ հանգիստ գործոյն։ — 2. Աստուածամայր՝ *նոյնպէս ինքնատիպ. ստորեւ կը կարդացուի՝* Մարիամն Է՝ մայր Յիսուսի, խաւսէ ընդ Յիսուս։ — 3. Մարկոս *աւետարանիչ, նստած ճոխ թիկնաթոռի վրայ եւ ճոխ սենեակի մէջ, գրելէ առաջ խոհուն ու ներշնչուած։ Ունի իր գլխը՝* սուրբն Մարկոս աւետարանիչն է։ — 4. 317*րդ էջի վրայ* Յիսուս է ընդ յերկինս առ Հայրն, *ոսկեզօծ թանձր յատակի վրայ, թիւ* 1 *նկարի դիմագծութեամբ, բայց կարմիր ներքնոցով*։ — 5. *էջ* 318՝ Աստուածածինն է խաւսէ ընդ նմա վասն մերոյ, *թիւ 2ի նմանութեամբ, բայց այլ տարազով*։ — 6. *էջ* 319՝ Սուրբն Ղուկաս աւետարանիչն է, *գրելու զբաղած սպիտակ երկար փիլոնով, նստած թիկնաթոռի վրայ եւ զարդարուն սրահի մէջ*։ — 7. *էջ* 331՝ Տէրն է, անեղակերպ առ Հայրն՝ *միշտ նոյն ինքնատիպ դիմագծութեամբ եւ անարատ ոսկիով ճոխ լուսապսակ գլխին*։ — 8. *էջ* 332՝ Մարիամ Աստուածածին, խաւսէ ընդ Յիսուսի, *նախորդներու դիմագծութեամբ, բայց հոս աւելի խոժոռ*։ — 9. *էջ* 535 (*թերթերը խանգարուած*)՝ Տեառն Յովհաննէս եւ Պրոխորոն՝ *ուր աւետարանիչը իր այրին մէջ ոտքի կանգնած, Աստուծմէ ներշնչուելով տուն կու տայ նստած եւ գրելու գիրքով երիտասարդ Պրոխորոնի*։ — 10. Միաշաբաթի յարսն ի սկիզբն աշխարհի յորմանն՝ *փոքրիկ ծով մը՝ ուր ընկղմիլ կ'երթան մեղաւորներ*։ — 11. *Բ. շաբաթ՝* Հաստատեցաւ զկերպն, *աշխարհի ստեղծագործութեան յատուկ Ս. գրական համարներով*։ — 12. *Գ. շաբաթ՝* Բուսք եւ ծառք, *նոյնպէս իր համարով*։ — 13. *Դ. շաբաթ՝* Լուսաւորք տիեզերաց՝ *արեւ, լուսին եւ աստղերով*։ — 14. *Ե. շաբաթ՝* Ճռունչք եւ կատառք, *ծովին մէջ ձուկեր եւ օդին մէջ թռչուններով*։ — 15. *Զ. շաբաթ՝* Գազանն եւ անասունն՝ *միշտ օրուան յատուկ Ս. գրական համարներով*։ — 16. *Կիրակի՝* Հանգիստ է ի խորոց քարքարաց։ — 17. Քաղցր եւ հայեցարուք յարարածս ամենայն։ — 18. Սերովբէք եւ Քերովբէք ...՝ տեսանել զդուռն երկնից։ — 19. Եզեկիէլն է՝ որ երկնային դուռն ետես։ — 20. Դրախտն է. Ադամ եւ Եւա մերկ էին։ — 21. Քօ Աբրահամու հիւր եկաւ։ — 22. Աբրահամ որդին կամէր մատաղ։ *Աբրահամ երբ ծունկերուն վրայ սեղմած Իսահակի վզին դանակը պիտի հանգչեցնէ, ետեւէն հրեշտակի մը ցուցամատը կը յայտնէ ծառէն կախուած խոյը։ Աբրահամին դիմացը կանգնած է զինուորական գլխանոցով, կարմիր շապիկով, կապոյտ կարճ տափատով եւ կարմիր երկար գուլպաներով մէկը, աջ ձեռքին կորագլուխ գաւազանով*։ — 23. Գաբրիէլի աւետումը՝ Մարիամի։ — 24. Ծնունդ Յիսուս մանկան։ —

A III/285

25. Յիսուս Մանուկ Սիմէոնի գրկին մէջ: — 26. Յիսուս կը քարոզէ. իր առջեւ զարմանալի գլխարկով ու հանդերձով մէկը գետնէն կը վերցնէ դիւահար կին մը, նոյն երկար փեղոյրով ու սեղմ զգեստով ու կարմիր գուլպաներով ու այլանդակ դէմքով 5-6 մարդիկ: — 27. Գնաց Յիսուս ի լեառն Ձիթենեաց՝ ի բժշկութիւն: — 28. Յովհաննէս մկրտեաց Յիսուս՝ Յորդանան: Յովհաննէսի եւ Յիսուսի միջեւ թեփաւոր մեծ ձուկ մը: Նախորդ նկարի տարազով ու գլխարկով մէկը ձեռքի տոփիկով ջուր կը լեցնէ Յորդանանէն: — 29. Թափորական լեառն է՝ այլակերպ. Յիսուսի քովերը Մովսէս եւ Եղիա, վարը թանթաթախ աչքերով երեք աշակերտներ: — 30. Ղազարու յարութիւնն է: — 31. Յիսուս ծովը կը խաղաղեցնէ: — 32. Յիսուս կը բժշկէ տեռատես կիներ: — 33. Մաղկազարդն է՝ Նստեալ Յիսուսի ի վերայ աւանակի: — 34. Ոտնլուան է՝ որ Յիսուս Պետրոսի ոտն լուացաւ: — 35. Յիսուս բացեալ պատառ տայ Յուդային՝ նշա: Նկարս հետաքրքրական է անով որ Յիսուս եւ երկոտասանք ո՛չ թէ բազմած են վերջին ընթրիքի սեղանին շուրջ, այլ ինք եւ աշակերտները ոտքի վրայ են եւ Յիսուս ձախ ձեռքին մէջ բռնած բաժակին մէջ թրջած պատառ կ'երկարէ Յուդայի՝ որ կը ստանայ զայն աջ ձեռքով: — 35. Հարցին Հրեայքն Յիսուսի՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն: կացինով եւ սուրով զինուած Հրեայ աւագներ կը յարձակին կիսամերկ Յիսուսի վրայ. Իրենցմէ մէկը կարմիր ջրամանէ մը ջուր կը խմէ, Արաբներուն սափորէ ջուր խմելու ձեւով: — 36. Պիղատոս ձեռն լուաց՝ թէ քաւեալ եմ ես. սպասաւոր մը մէկ ձեռքով ջուր կը լեցնէ Պիղատոսի ձեռքերուն վրայ եւ ձախ ձեռքով անոր կ'երկարէ սրբիչը: — 37. Ըմբռնումն է՝ որ Յուդան մատնեաց Յիսուս: Նոյն այլադան դէմքերը Յիսուսի շուրջ: — 38. Խաչափայտն է՝ որ բարձին Քրիստոսի տարեալ: Ձիաւոր հարիւրապետ մը կը հետեւի Յիսուսի եւ պահակներուն՝ որոնցմէ մին կարծէք կ'ուզէ վար առնել խաչափայտը Յիսուսի ուսերէն: — 39. Յիսուս խաչեցին. խաւարեցաւ արեգակն: Խաչին վրայ իր հոգին աւանդած Յիսուսի շրթներուն զինուոր մը եղէգ մը կ'երկարէ, մինչ ուրիշ զինուոր մը տէգով կողը կը խոցէ: Քովերը լացող կիներ: — 40. Յանէ ի սուրբ Աստուած ասէ. Քրիստոս խաչէն անկեալ ի գիրկն Արեմաթացիի գրկերուն մէջն է Յիսուսի անշունչ մարմինը: — 41. Դժոխն է քակեց Յիսուս. զԱդամն եհան: Վրան արքայական ծիրանի եւ ձեռքը խաչանիշ մական կրող Յիսուս՝ ձեռքը կ'երկարէ Ադամի, մինչ Եւայ ալ կ'աղերսէ Յիսուսի: Ասդին՝ կարմիր օձ մը կը լիզէ կապուած մեղաւորներուն դէմքերը: — 42. Պատեաց մարմինն Յիսուսի կտաւով: Յիսուսի պատանուած մարմնոյն շուրջ Արեմաթացի եւ իւղաբեր կիներ, մինչ խնկամանի մը մէջ անուշահոտ խունկը կը ծխայ: — 43. Լուսափայլ հրեշտակն է նստեր ի վերայ վիմի: Սպիտակազգեստ հրեշտակ մը Յիսուսի թափուր գերեզմանը ցոյց կու տայ իւղաբեր երեք կիներուն, մինչ վարը, կացինով ու սուրով զինուած երկու պահակներ իրարու զարմացման ակնարկներ կ'ուղղեն. — 44. Համբարձումն է՝ աշակերտքն են, մէջերնին Ս. կոյսը: — 45. Վերնատունն է. պատարագեց Յիսուս: Քրիստոս նստած է բարձրադիր գահի վրայ եւ իր աջ ձեռքին բռնած հացէն կարգաւ կու տայ իր առջեւէն անցնող իր աշակերտներուն: — 46. Գաբրիէլեան չորս փողն է գոչէ. սարբեւ կը կարդացուի՝ « Ով եղբայրք՝ յորժամ նայէք սուս ծաղկիս, մէկ բերան ողորմի տացէք յիբերանով, ըզտստանուն սուտ կենդանի... (յաջորդ բառերը կազմի դանակին տակ անհետացած): — 47. Վերջին դատաստանն է. սատանայի կազմած կէսօրով. — 48. Զարդարութիւն է արարածոց՝ դատաստանի աւուրն: — 49. Արդարի մեղաւորն է. յայնմ աւուր կենդանի է դմարմին: — Մանրանկարի՝ քանի չափ, իրր լուսանցազարդ դրուած ու մեծ մասով կիսովին կտրուած կազմի դանակին տակ: Բոլորն ալ յաջող են ու կը ներկայացնեն Քրիստոսի տնօրինական դէպքերը:

Մատթէոսի Աւետարանին ի վերջ, դատարկ թուղթին վրայ կը կարդանք ոսկեղեն յատակի վրայ հետեւեալ երկու ծաղկազարդ բառերը, ժեծագիր. ծաղկեաց Յակոբ:

Մարկոսի ի վերջ, աջ դատարկ սիւնակին վրայ իրժ երեք տող գեղագիր՝ Թիշեցէք զՅակոբ ծաղկողս: Աւետարանները ունին իրենց համառօտ նախադրութիւնները:

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանի. — « Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Որո(յ) շնորհաւքն աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիապարգ Աւետարանս: Զոր է չափկապեալ աւետարանչացն բստ բազմերանց ցուցոցն՝ ի մի ոստանակելով հանճար: Զոր արուեստակեալ անուշացաց (այսպէս) ծաղկանցիւք նկեցական կազմութեամբ որ բստ հոգւոյն յատկութեան իմանալի դանազան նորակութեամբ զաղափարելով բստ հոգւոց արփիացելոցն... (բառ մը չի կարդացուիր գ...կցութեանց): Ա՛ս ի յարմարումն եկեղեցւոյ յաւիտ խաղաղութեան գլխոցն պատշաճեալ: Զի յայտմանէ կատարելութեան չորից Աւետարանք ի բազում պատճառէ չորեքկերպեան կենդանիք՝ Մարդ, Առիւծ, Եզն, Արծիւն, չորանիւթք աշխարհիս, հով եւ ջուր, աւդք եւ հուր, թշնամիք անհաշտելիք եւ սիրելիք անբակտելիք՝ զորս չորք [...] ամենասուրբ Երրորդութեան, [Հաւր], Որդւոյ, Հոգւոյ, չորս գետք բխեալ ի

գրախտէն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս: Չորս անկիւն եւ չորս եղջիւրք սեղանոյն, չորս գէմք սրբոյ խաչին, չորս առաքինութիւնք, հոգւոյ խոհեմութիւն, արիութիւն եւ ողջախոհութիւն եւ արդարութիւն: Արեւելք, արեւմուտ, հիւսիս եւ հարաւ: Չորս բանք Աւետարանիս՝ պատգամ եւ պատուիրան, ապառնալիս եւ աւետիս: Չորս բանիւ խաւսի Աւետարանս՝ հրամանաւ և խրատով, աւրինակաւ եւ վկայութեամբ եւ այլ բազում պատճառք են՝ յորս գաղափարին չորեք Աւետարանին:

Արդ եւ նմանեցուցիչ պայծա(յ)ռագոյն աստուածահրաշ հոգիագարդ լուսայարմար կենդանայարկ կացուցանող հոգւոյ զարթուցանող մարմնոյ սուրբ Աւետարանս: Որոյ եմք ծառայիցդ ձեր անպիտան սուտ կենդանիս թէ մեռեալս չեն արժան· այլ եւ հող եւ փոշի ոտիցդ ձերոց սուտանուն Յակոբ գրիչս՝ որոյ շնորհին անգ եղեալ կատարեցաւ սուրբ Աւետարանս այս ըստ կարողութեան իմոյ ծանծկաձեւ գրեցաւ ի քաղաքս Խորձոյ որ կոչի Կեղի. ընդ հովանեաւ ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ սրբոյ (Յ)ակոբին եւ սուրբ Սարգսին եւ սուրբ Նշանին եւ այլ բազում սրբոցս որ աստ կան հաւաքեալ, ի թուաբերութեան Հայոց ՌԼԵ (=1586) աւարտեցաւ ի դառն ժամանակիս, որոյ եմք անպիտանացեալ մի ըստ միոյ վասն ձմեռնացեալ ժամանակիս: Այլ բարերարն Աստուած յամենայն ժամ խնդրէ իւր արժանաւորս վասն զի տեսցին զգործս նոցա բարիս և փառաւորեսցեն զՀայրն մեր որ յերկինս է, յանլով զբանս մարգարէին՝ որ ասիցի պաւտի Սիոնի եւ ընդանեակք յԵրուսաղէմ: Որ եւ ցանկացող եղեալ աշխարհս՝ ի տեղիս որ եկեալ էի ընդ նմա վաճառել ի քաղաքն որ կոչի Առզրում՝ մինչդեռ անդ էի: Ցեղոյ բարեսէր, աստուածապաշտ Աստուածատուր էրէց որ է Կեղցի. հանդէպ միմեանց եւ եղաք սիրելի եւ բարեկամք, առաւ զմոխիրս, եկանք ի Կեղի եւ զեղբայրն իւր զտէր Մեսրոբն եւ աշակերտ եւ ուսաւ շնորհին Աստուծոյ: Աստուած զիւրեանց հոգին արժանի առնէ ի տեսլեան Յիսուսի:

Արդ՝ ով աստուածասէր սիրելի ուխտացող ցանկալի եւ քան զականս պատուականս Սուրբ Հոգոյն նուագի, բաղձեալ ի բանից ի ձեռն մարգարէին, որով ամենայն կեանք մեր աւարտի, եթէ խաչ արեան եթէ եկեղեցոյ, այլեւ ամենայն քահանայակարգութիւն կատարի, որ կատարեցոյն է ի կամս Աստուծոյ:

Այլեւ յիշեցէք սուս (այսպէս) կենդանիս Յակոբ սարկաւագս Ջուղեցի եւ զաւազցին իմ քաջ եւ բարունի լուսաշնորհ եւ ծաղկագարդ անուանուք առաջի Աստուծոյ՝ Զաքարիա եպիսկոպոսն՝ որ է Լմեցի (Լիմ)՝ ի բագարն որ կոչի Վան, որ եստր այսչափ շնորհս: Աստուած զիւր հոգին լուսաւորէ ամէն: Ով եղբայրք եթէ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, եթէ յիշէք արժան առնէք զիս՝ Աստուած զձեզ յիշէ, որ եւ սուտ անունս որ գրեալ է փոշի եւ մոխիր Յակոբ գրիչս եւ հայրն իմ Խաչքա Վային եւ մայրն իմ Աւդլանփաշէն եւ եղբայրն իմ Նուրիջանն, Քամալն, Միրզաջանն եւ հանգուցեալ ի Քրիստոս նորարողբոջ Միրզաբէկին՝ որ փափաղ մնաց իւրն: Եւ քոյրքն իմ Գուլաղէն, Ոսկին, Շուշանն, Նազիկն, փոքր մեր Տատիկն: Եւ տնտեսն մեր առ հասարակ ամենեցուն կարդացողաց եւ լսողաց ամէն:

Ո՛վ եղբայր անմեղագիր լերուք զխոշորագիրս եւ ձանձրաքարշ ծաղկիս. զի զարիպութեամբ գրեցի սմայ: »

« Ով եղբայրք զարիպն խիստ դժար է մեզ չգնէք ամենայն կողմանց դառնութիւն է եւ հոգս ոչ կարէ արձակել ի սիրս իւր. հազար թէ խաւսի ընդ սիրելիս իւր եւ ուրախ առնէ. անհնար է որ ի միտքն իմա(ս)տութիւն իւր ընդունայնէ եւ տրտմութիւն քաշէ: Ով աստուածասէր, յիշեցէք զՄահդասի Մաղաքիայն Քահանէն՝ որ է բարեպաշտ եւ պաշտեցող քաջ եւ որդիքն իւրոյ գրեալ է. եւ իւր ձանն աւարտեցաւ սուրբ Աւետարանս: Աստուած զիւր հոգին լուսաւորէ ամէն: Այլեւ կարդացողաց եւ լսողաց առ հասարակ ննջեցելոցն ամէն: Հայր մեր որ »

— Հանդիպակաց դատարկ էջի վրայ՝

Նուէր բաթումարնակ... (Նուիրատուին

անունը սրբուած)իայի կողմէ Յարութիւն Այտընեանի: 1919 յուլիս 15 (Հ. Տ.) Բարում: Դժուար չէ ենթադրել որ Աւետարանս եւ այլ հայերէն ձեռագրեր ռուսական բոլշեւիկեան յեղափոխութենէն յետոյ ձեռքէ ձեռք անցնելով՝ եկած է Կ. Պոլիս եւ Պր. Ալեքսանդր գնելով 1936ին ծախած է Jean Pozzi-ի:

Փարիզ, 5 Օգոստոս 1949

---

# 12.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ԺԷրդ դա՞ր

ԹՈՒՂԹՔ՝ ԺԵ×26 (=390 էջք): — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25×19×7 սնդմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՏՈՂՔ՝ 27: — ՆԻՒԹ՝ հաստ փայլուն մագաղաթ: — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, կողքին վրայ արծաթէ թեթեւ զարդերով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ եօթը թերթ սկիզբը եւ եօթը թերթ ալ՝ի վերջ, երկաթագիր շատ մաքուր մնացած Աւետարանի մը մասերով: Առաջին իսկ ակնարկով նկատելի է որ մագաղաթեայ բոլոր պահպանակները ալ կրկնագիր են, սկզբնականը ջնջուած եւ տեղը նորը գրուած է, աւելի լայն տողերով եւ մաքուր երկաթագրով:— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական խնամով պահպանուած: Չորս Աւետարանները ալ ունին իրենց բովանդակութեան ցանկը ու նախադրութիւնները: Սկիզբը կը պակսին համաձայնական տախտակները: Գլխաւոր յիշատակարանին վերջին բաւ կարեւոր մասը ինկած ու կորսուած է: Ներքին քանի մը թերթերը կորսուած են: — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ մէկ տող թռչնագիր-զարդագիր խորաններ Աւետարանի սկիզբը: — ԳԻՐ՝ սեւ թանձր մելանով յաջող բոլորագիր. համարները ունին կարմրադեղ երկաթագրեր: — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ անյաջող ծաղկումով մեծկակ զարդագրեր: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ հնագոյն օրինակներու պարզ ծաղկումներ: — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններու ճակատը, անյաջող ծաղկումներով: — ՆԿԱՐՔ՝ 12 հատ, սկիզբը, Յիսուսի անօրինական դրուագներու շատ անյաջող գծագրութիւններ, ներկի եւ ժամանակի աւելորդ վաստումով:

ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ, ՍՏԱՑՈՂ եւ ՏԵՂ՝ անծանօթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷրդ դա՞ր:

Մատենանս է Աւետարան, մագաղաթեայ, մեծագիր եւ ամբողջ: Ձեռագրիս այժմու սեփականատէրն է Պր. Գառնիկ Գէորգեան, Փարիզ,

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Էջ 388ր (Գլխաւոր յիշատակարան).

— «Փա՜ռք անպատմանելի Սուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Ս. Հոգւոյն ամէն: Այսպէս Հայոց թուականին, կրկին քառակերկհարիւրերին ձի ամէն. է սուրբ գրանս աստուածային: Աւետարան խորհուրդով լի, չորրորդ գլուխ զոր կարդացին՝ սուրբ առաքեալքն անեղ բանին, գՍուրբ Հոգւոյն քաղցր հրամանին.... » Կը շարունակուին երկու սիւնակ միայն սովորական յառաջաբանութեամբ, եւ շարունակութիւնը չենք գտներ յաջորդ թերթերը ինկած ու կորսուած ըլլալուն:

Բ. — Սկիզբի մագաղաթեայ գրուած էջերէն մէկուն վրայ, վերջէն թողուած քանի մը անկարեւոր յիշատակարաններ.

— Թվին ՌՃԼԱ (1682) ընծայեցաւ Մարկոս:

— Թվին ՌՃԼԳ (1684) ընծայեցաւ Մաթէոս:

— Յիշատակ է. Կոռնցին. պարոնն տէր Մելիտոնին եւ տէր Յովհաննէսին եւ իր հարսին՝ Մարիամին: Ծնեցաւ այրուս Թվին ՌՃԼԲ (1683):

— Առաջի (այսպէս) ուստանին՝ որ հիմ արկին Պօղոս եւ (Յ)արութիւն. յետի ուստանիք որ վարերին (այսպէս) կարմեցին՝ Ռուէհան ու Յուքիա:

Կարելի է ենթադրել որ Աւետարանս ԺԷրդ դարու վերջերուն Կիւրին փոխադրուած է եւ 1915ի տեղահանութեան օրերուն եկած հասած է մինչեւ Փարիզ:

Փարիզ, 6 Ապրիլ 1948

# 13 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌԿԵ = 1616

*ԹՈՒՂԹՔ՝ ԺԶ×24 (=624 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×18×6 սնթմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած թուղթ։ — ՏՈՂՔ՝ 19։ — ԿԱԶՄ՝ կարմրագոյն կաշեպատ փայտեայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած. կողքին կոնակը մասամբ վնասուած։ Աւետարանիս սկիզբը կան Եւսեբի առ Կարպիանոս գրութիւնը, զոյգ էջերու վրայ, համաձայնական խորանազարդ չորս տախտակներու վրայ։ Չորս Աւետարաններն ալ ունին իրենց Նախադրութիւնները, իսկ ստորին լուսանցքներուն վրայ կ'երեւին Համաբարբառի համարանիշերը։ Յիշատակարանին մէջ ակնարկուած տնօրինական պատկերները կը պակսին, հաւանաբար հանուած ու ծախուած ըլլալով։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ մէկմէկ թերթ՝ սկիզբն ու վերջը. — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀԱՊԱՆԱԿՔ՝ երկուական թերթ՝ սկիզբն ու վերջը, երկաթագիր Աւետարանի մը բաւականին մաշուր մնացած մասերով։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ երեքական տող իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը. առաջին տողերը թռչնագիր եւ զարդագիր, իսկ յաջորդ տողերուն առաջինը լագուարդ եւ երկրորդը ոսկեդեղ երկաթագիր։ — ԳԻՐ՝ յաջող բոլորագիր. համարները ունին ոսկեդեղ գլխագրեր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ մեծագիր մարդագիր եւ փառագիր, ոսկիով եւ լագուարդով հարուստ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չորս հատ մեծագիր, չորս խորաններուն քով ոսկեդեղ ծաղկումով. իսկ ներքին էջերուն վրայ՝ բազմաթիւ, բոլորն ալ յաջող ծաղկումով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններուն սկիզբը, լագուարդ ու ոսկիով խառն սիրուն ծաղկումներով։ — ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներուն, սովորական գաղափարներէ առնուած, բայց բաւական յաջող դիմագծութեամբ։*

*ԳՐԻՉ՝ Յովհաննէս, օժանդակութեամբ իր աշակերտին՝ Մելքոնի։ — ԾԱՂԿՈՂ՝ գրիչը, Յովհաննէս։ — ՍՏԱՑՈՂ՝ Խոճայ Նազրպաշա։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԿԵ (=1616)։ — ՏԵՂԻ՝ Տիգրանակերտ։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր.* Jean Pozzi, Ministre Plénipotentiaire, 51, Av. Montaigne - Paris.

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, մեծագիր, նկարազարդ եւ ամբողջական։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանին* (Գլխաւոր յիշատակարան). — *«Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան, եռանձնեայ աստուածութեան, եզակի բնութեան, միասնական տէրութեան... (սովորական շատ ընդարձակ նախադրութեամբ)։*

*«Վասն որոյ տեսին զսուրբ անձառ փրկագործութեան խորհուրդն եւ զանճառասքանչելի վեհագոյն մեծ փարթամութիւն, եւ զանծախելի գանձիս անսպառութիւն, եւ զանանց բարութիւն, որ հանէ ի կեանս անմահականս. անենչացան երանաւէտ բարութեանցս, զի ասացեն զխնդրելին։ Այսը ազգաս ասացող զսուրբ քառաջահեան Աւետարանս.* Երեսփոխան Խոճայ Նազրպաշան *յընչից հասարակաց եւ եդ ի* սուրբ Սարգսի եկեղեցիս. *զի կացցէ անջրելի համաւրէն ամենայն ժողովրդեանն. մեծատանց եւ ռամկաց, փարթամաց եւ աղքատաց, արանց եւ կանանց, ծերոց եւ աղայոց, երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չափու հասակի, կենդանեաց եւ հանգուցելոց. զի միշտ կացցէ սա երկրպագելի ի սուրբ սեղանն տէրունական։ Ահի. եւ զօգութեամբ ընթերցցի ի ժամ սակայի սուրբ պատարագին առաջի անմահ գեղմանն ի յանկն կենդանեաց, հոգւոյ եւ մարմնոյ ի բժշկութիւն, եւ ի սփչաստ ամենայն ննջեցելոց ի Քրիստոս, եւ ի թողութիւն մեղաց նոցա։ Ամէն։*

*«Եւ աւարտ գրութեան սորա եղեւ Թ եւ վաթսներորդի ամի եւ հազարերորդ ամերորդի* (= 1616), *ի մեծ թուականութեանս հայկազեան սումարի, յաշխարհիս Միջագետաց Ասորւոց նահանգիս, ի* Տիգրանակերտ *մայրաքաղաքս* Համիթ, *ընդ հովանեաւ* սրբոյն Սարգսի զաւրավարին *եւ որդոյ նորին* Մարտիրոսի. *եւ այլ շրջակայ սրբոցս, որոց խնամաւքն ամրացեալ պահի քաղաքս յամենայն փորձութեանց։ Եւ ի յրոամկաց միջի, ի թաղն որ կոչի* Զրխայ, *մերձ* Մերանա-յոան *քաղաքիս, ի վերնայարկ փոքր զատկանիս։ Ձեռամբ շնորհազուրկ գրչի* Մելքոն դպրի, *որ հարկեալ ի մէնջ որդիական հնազանդութեամբ գրեաց, շնորհիւ Տեառն սկսեալ, եւ ողորմութեամբ նորին կատարեալ։ Որ եւ ես մեղապարտ* Յովանէս գրիչս ուսուցող Որին, *ձեռնարկեալ ծաղկեցաք ի միասին, եւ զարգարեալ ոսկենկար յանկուա-*

ծով յաւրինեցաք զնա: Նախ՝ զներանուրկնութիւն մարմնացելոյ բանին, կենդանագիր պատկերաւք, սկսեալ ի յաւետեաց հրեշտակապետին Գաբրիէլի, որ առ սուրբ կոյսն Մարիամ, եւ զծնունդն ըստ կարգի զամենայն զխաւորն, մինչ ի հանգերձեալ համօրէն յարութիւն հրաշակերտ յաւրինուածով: Եւ ի նոյն չափս զհամաբարբառաց Ժ. խորանսն բազմազան խորհրդով, պատկերաւք, թռչնօք եւ գազանաւք, եւ այլի այլի չորքոտանեաւք, ծառաւք եւ ծաղկաւք, բազմախուռն տերեւաւք: Աւրինակելով զերկնայնոց խորանացն, զդրախտին եւ զեկեղեցւոյ, զհնոյն եւ զնորոյս, զի երեւելեաւս իմանամք զիմանալիս, որպէս ոսկոյ անապականութիւն, զաստուածութիւն է տեսանելի, եւ լուսաւորն՝ զանհաս խորութիւն, ծիրանին՝ զամենակալ թագաւորութիւն, եւ կանաչն զմշտնջենաւորութիւն: Իսկ կարմիրն՝ որ կարմրացաւ սուրբ եկեղեցի արեամբն Քրիստոսի եւ արեամբ ներկեալ մարտիրոսին: Եւ այլ բազում յաւրինուած զանազան եւ երփներփն որակաւք, ոլորակի թփերով եւ բազմարուեստ փաթերով: Եւ զչորեսեան աւետարանիչս խորհրդաւորեալ խորանաւք, խորհրդածեալ առաջի կենդանագրովն և կենդանաւք ի չորեքկերպեան կենդանիսն աթոռոյ աստուածութեան՝ ըստ Եզեկիէլի: Այսպիսի խորհրդով իլի, զարդափայլեալ ծաղկեցաք զսուրբ Աւետարանս, ի զուարճութիւն սիրով տեսողաց եւ ճանաչողացն եւ ի փառս Աստուծոյ: Ի հայրապետութեան ժամանակի ազգիս Հայոց: Եւ ի վերակացութեան մայրաքաղաքիս Համթայ, վիճակի եւ աթոռոյ, երջանիկ եւ երանաշնորհ արքեպիսկոպոսին, տէր Թորսիղ աստուածաբան վարդապետին, որ իբրեւ զջահ փայլէ ի մէջ սուրբ եկեղեցւոյ լուսաւոր բանիւն, զոր Տէր Աստուած պայծառափայլ պահեսցէ զնա իբրեւ զարեգակն ի կամարս երկնից, ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, եւ ի պարծանս ազգիս Հայոց: Եւ յետ աւուրցս ընդ սուրբ երկոտասան վարդապետացն դասեսցէ եւ պսակեսցէ, ամէն:

« Այլեւ ի բնակալութեան տաճկաց Աւսմանցւոց սուլթան Ահմատին: Ի սորա աւուրս յաշխարհս ի խռովման կայ եւ յերերման, իբրեւ զծով յալեկոծութեան ի զաւրաշարժութեանց՝ ըստ բանի Տեառն՝ թէ յարիցէ ազգ յազգի վերայ եւ թագաւորութիւն՝ ի թագաւորութեան, այսպէս ի վերայ միմեանց յառնելով, բազում արիւնս հեղին յանմեղաց քրիստոնէից եւ զբազումս գերի վարեցին. Այլեւ հարկապահանջութիւնս խստագոյն՝ որ զրեթէ զաշխարհ եւ զերկիր հրձիգ արարին: Եւ յայսմ ամի դարձեալ եւ երկրորդ թագաւորին վաղիր մի... (անունին տեղը բաց ձգուած) անուն բազում զօրօք ի վերայ Պարսից թագաւորին, որ յառաջն սակաւ մի յաւութիւն արար եւ յետոյ յոյժ չարացաւ, այս Շահ Ապաս թագաւորն Պարսից: Եւ այսպէս զհայաստան երկիրս կոխան առնելով աւերեցին, զոր ոչ կարեմ զաւերումն ընդ գրով արկանել: Յորոց փրկեսցէ Քրիստոս Աստուած, զհաւատացեալս անուան իւրոյ. ամէն: Արդ յայս վշտաշատ ժամանակիս բազում աշխատութեամբ աւարտեցաք զսուրբ Աւետարանս, զոր ստացեալ զնա եղին հասարակաց յիշատակ անջնջելի մնալ ի սուրբ Սարգսի եկեղեցիս, մինչ ի կատարած. ի բարեխաւսութիւն ընդհանուր ամենայն ժողովրդեանն, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն չափու հասակի կենդանեաց եւ հանգուցելոց, որ միշտ յիշեսցեն ի ժամ սուրբ պատարագին առաջի անմահ զառինն Աստուծոյ: Կենդանեացն ի փրկութիւն եւ յոգտութիւն յամենայն պատահարաց հոգւոյ եւ մարմնոյ եւ ննջեցելոցն ի հանգիստ, ի թողութիւն եւ ի մաքրութիւն մեղաց եւ յանցանաց. ամէն: Այլեւ զլուսոյ մայրս զսուրբ Սարգսի եկեղեցիս զերկնահանգէտ տաճարս եւ զիմանալի խորանս, հաստատուն եւ անդրդուելի պահեսցէ Քրիստոս Աստուած, ի հերքումն զիւաց, ի վանումն չարաց, ի բժշկութիւն հոգւոյ եւ մարմնոյ յուսով ի սա զիմեցողն: Նաեւ երգ սաղմոսաց ձայնս պաղատանաց, տարածումն բազկաց, հեղումն արտասուաց, ծնրադրութիւն երկրպագ զիմաց, լուցումն լապտերաց ջահից մոմեղինաց, բուրումն անուշահոտ խնկոց,

ընթերցմունք աստուածային սուրբ գրոց. ի ամանէ մի պակասեցի մինչեւ եկեսցէ այն՝ որ իւրն է հանդերձեալն՝ ամէն: Այլ եւ զքահանայք եւ զսպասաւորք, եւ զփակակալք սուրբ եկեղեցւոյս որբութեամբ պահեսցէ Քրիստոս Աստուած, սիրով եւ միաբանութեամբ, արթուն զուարթուն լինելով ի պաշտօն եւ ի սաղմոսերգութիւնս բստ հաճոյից Աստուծոյ: Եւ մաքրութեամբ սպասաւորել սրբիանց սպասուց եւ անաւթոց սրբութեանց, սիրով եւ հոգաբարձութեամբ. եւ վարձս ընդունիք ի Քրիստոսէ, աստ եւ ի հանդերձեալ կեանսն՝ ամէն: Դարձեալ աղաչեմ զամենեսեանդ, յիշել աղաւթիւք ի Քրիստոս զհաւատարիմ եւ զքրիստոսասէր պարոն երեսփոխան խօճայ Եադուպշահն, որ եղեւ պատճառ սորին ստացմանն, և զվզտեսի երեսփոխան խօճայ Մարտիրոսն եւ զչատրչի խօճայ Գասպարն, զի սոքա ընդ սմին կամակից եղեն այս սուրբ յիշատակի ժողովրդեանս: Զոր Տէր Աստուած վարձս բարեաց հատուսցէ նոցա եւ երկնից արքայութեան արժանի արասցէ՝ ամէն: Նաեւ զհոգեւոր որդեակն իմ զՄելքոն գրիչն զգծագրող սուրբ Աւետարանիս. խնդրեմ աւժանդակութեամբ աղաւթից ձերոց, զի մարդասէր Աստուած Սուրբ Հոգին առատապէս ծաւալեսցի ի նա, եւ լցուսցէ զնա իւրական շնորհաւքն, եւ պահեսցէ սիրովն Քրիստոսի, անփորձ մնալ ի վերայ երկրի, մինչեւ ի խորին ծերութիւն, եւ յետ աստեացս ընդ սրբելիս անուան իւրոյ դասեսցէ. ընդ նմին եւ զծնաւղսն իւր՝ զԱմիրճանն, եւ զՄարիամն և զեղբարսն՝ զՖարաճն եւ զՊաղտասարն եւ զզայեակ մայրն՝ զերախտաւորն իւր՝ զՍանայ՝ խօւմարն, աղաչեմ յիշել եւ Աստուած ողորմի ասել՝ ամէն: Զոր եւ ես անարժանս, յերես անկեալ աղաչեմ զհանդիպողքդ այսմ լուսազարդ սուրբ բուրաստանիս եւ կենսատու քրիստոսեան տառիս, ընթերցմամբ կամ աւրինակելով. յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զմեղապարտ Յովանէս գրիչս, եւ հայցել թողութիւն բազում յանցանաց իմոց. զի թերեւս վասն ձեր սիրալիր մաղթանացդ, գտայց ողորմութիւն յամենողորմ Փրկչէն մերմէ: Այլեւ ողորմեսցի Քրիստոս Աստուած ամենայն երախտաւորացն մերոց, եւ ծնողաց իմոց. հաւրս՝ Ճանրպէկին և մաւրս՝ Խթարին, եւ եղբարցս՝ Կարապետին եւ Աստուածատուրին եւ կուսան քուերս Մարգարտին: Եւ կնքահաւրս տէր Աբրահամ ծերունի կրաւնաւորին, որ սա եղեւ պատճառ տառակրթութեանս մերոյ՝ որ զամս հնգետասան զնիւր անդամարյծ եւ զոհութեամբ համբերէր կենդանի նահատակն, որ եւ ընդ սուրբ հարցն միանձանց ճգնաւորացն դասեսցէ զնա եւ պսակեսցէ Քրիստոս Աստուածն մեր, ամէն: Նաեւ զկենաց կցորդն իմ զՃոմայն եւ զզաւակս իմ զՄարիամն եւ զՄարանան, զասսի կենաց խնդութիւնքն իմ զոր Տէր Աստուած աղօթիւք ձեր գթասցի ի նոսա և ողորմութեամբն իւրով պահեսցէ զնոսա ըստ կամաց իւրոց ի բարին եւ ի հանդերձեալն արքայութեան արժանի արասցէ՝ ամէն: Միանգամայն ուսուցող վարժապետին իմոյ՝ տէր Աստուածատուր քահանային՝ որ աշխատեցաւ ընդ անարժանիս. ի յուսումն հոգեկաւոր արհեստիս մելանագործութեան. որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած եւ ընդ սուրբ գրչապետացն դասեսցէ ամէն: Եւ արդ աղաչեմ զմանկունսն լուսածնեալք սուրբ աւազանին [illegible] Նոր Սիոնի, որ ամենայն պատրաստութեամբ հոգ տանիք, եւ յաւ պահէք զսուրբ Աւետարանս, ի ջրոյ եւ ի հրոյ եւ ի տղխտաց ձեռս չտայք, որ ապականեն զլուսանցսն եւ զծաղիկսն կամ զպատկերսն եւ կամ թուփ եւ պատկեր կարեն եւ կամ խաչ քեւեռելով զթուղթսն ծակծակեն. այլ յամենայն կողմանց պատրաստութեամբ յաւ պահեցէք, որ վարձս ի Քրիստոսէ առնուք, եւ թէ ոչ՝ նա դատապարտիք ի բանէ սուրբ Աւետարանիս որ ասէ: Ի բաց կացէք յինէն ամենայն մշակք անիրաւութեան: Եւ յաւ պահողացն եւ խնամ տանողացն ողորմեսցի Քրիստոս Աստուած, աստ վարձս բարեաց շնորհեսցէ, եւ ի հանդերձեալն զանսպառ բարիսն պարգեւեսցէ ասելով. Ե՛կ ծառայ բարի եւ հաւատարիմ, մո՛տ յուրախութիւն Տեառն քո. ամէն: Արդ զպատուէրս որ գրեմ ի սմա, ոչ թէ զձեռնս զործըս գովայ. զի ձեռս փոխ եւ հողանայ, եւ գիրս սա յիս երթայ մնայ,

*այլ զսուրբ գիրս եւ զբան սորա, պատուիրելով պատուեմ ի սմա. Թէ ըստ հաճոյից ձեր է ի սմա, Տեառնէ շնորհ փառս նմա, եւ թէ խոշոր եւ աղաւէ սա իմէն մնան ես ենթակայ, մի մեղադրէք իս ձեզ ծառայ. Թէ մեղադրէք ձեր կամքն է նա, զի ես արժան եմ յարակայ, Թողէք զմեղս՝ զի ես մեղայ, դուք հանդիպողքդ յազագայ, ասէք սրտիւ Տէր ողորմեա, զի ողորմած Տէրն որ գայ, զողորմութեան գուռն բանայ, ի ձեզ ւ ի մեզ ինքն զթայ, ամենեցուն ինքն ողորմայ։*

*« Դարձեալ կրկնակի աղաչեմ զգասս քահանայիցդ եւ զժողովրդականացդ, զի որքան գլխաւորակս ընթեռնուք ի վերայ սուրբ բեմիս, ամենեքեան բոլորով սրտիւ եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք ընդհանուր ամենայն հաւատացեալ ժողովրդեանս մերոյ, հայցելով ի Քրիստոսէ, կենդանեացն առողջութիւն, խաղաղութիւն, կեանք եւ բարութիւն։ Ննջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն եւ զերկնային արքայութիւն։ Ընդ նոսին եւ աշխատողացս ի սմա, եւ այնոցիկ որ պատճառ եղեն գրութեան սորա եւ կամակից սոցայման. եւ ինձ անմխիթար վշտացելոյս Նուաստ գրչի* Յովանիսի*։ Զոր մեք եւ դուք միարան խնդրեմք եւ մաղթանաւք հայցեմք ասելով՝ Տէր Աստուած ողորմեա ամենայն հաւատացեալ քրիստոնէից։ Եւ ջընջեա զձեռագիր յանցանաց նոցա եւ գրեա ի գիրն կենաց, եւ յերկնից արքայութեանդ արժանի արա։ Որ եւ ձեզ յիշողացդ, եւ մեզ յուսողացն, առ հասարակ ամենայն հաւատացելոցն ողորմեսցի բարերարն եւ բազումողորմ եւ մարդասէրն Աստուած, եւ մասն ընդ սիրելիս իւր, ընդ սուրբսն արասցէ եւ ինքն աւրհնեալն յամենայն իւրական արարածս, Տէր մեր Յիսուս Քրիստոս, աւրհնի, գովի եւ բարեբանի, անլռելի արտադրութեամբ, այժմ եւ միշտ եւ անզրաւ յաւիտենին ամէն »։*

51, Avenue Montaigne.

Փարիզ, 29 Յուլիս 1949

---

# 14.— ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ յանի — ՌՃԻԳ = 1674

*ԹՈՒՂԹՔ՝* 350 (=700 *էջ*)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 21×13×4 *սնդմ*։ — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն*. — *ՏՈՂՔ՝* 21։ — *ՆԻՒԹ՝ հաստատ թուղթ*։ — *ԿԱԶՄ՝ սեւ կաշեպատ փայտեայ, կողքի վրայ բեւեռներով. արծաթէ խաչը ինկած*։ — *ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահպանուած*։ — *ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան*։ — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ ՎԵՐՆԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ*։ — *ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, սովորական մոտիւներով ու ծաղկումով*։ — *ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներու՝ ո՛չ յաջող*։ — *ԳԻՐ՝ բաւական վարժ բոլորագիր*։

*ԳՐԻՉ՝ Ստեփաննոս քահանայ*։ — *ՍՏԱՑՈՂ՝ տէր Մարտիրոս քահանայ*։ — *ՏԱՂԿՈՂ՝ անծանօթ, գրի՞չը*։ — *ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԻԳ* (=1674)։ — *ՏԵՂԻ՝ Դամադիկլի վանքի Մղրայ գիւղ. Ձեռագրիս այժմու տէրն է Հասան Գէյլիցի Պր. Գեւորգ Քէչիչեան, գնած՝ Տիգրանակերտի մէջ*։

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա.* — *Աւետարանիս ի վերջ* (Գլխաւոր յիշատակարան) — *« Փա՛ռք անպարագիծ էին այնմ որ ոչ են հետազօտելի, եւ ոչ գինչ են եւ ոչ զոր ինչ պիտին, համբաւբաձելոյն յամենայն մտաց սլացման... (սովորական ներածութեամբ)*։

*« Արդ կատարեցաւ աստուածախաւս եւ տիեզերաքարոզ Աւետարանս ի խնդրոյ աստուածասէր եւ հաւատարիմ ծառային Աստուծոյ* տէր Մարտիրոսին, *եւ կողակցին* խումարին *եւ իւր որդոյն* Յովսէփին։ *Եւ իւր ծնողացն* Յովսէփին *եւ* Մանիշակին *եւ ամենայն մերձաւորացն, մեծի եւ փոքու առ հասարակ ամենեցուն, զոր Աստուածն Յիսուս Քրիստոս ընկալցի զսայ որպէս զպատարագն Հաբէլին եւ զԱբրահամուն եւ ամենայն նախահարցն սրբոց. եւ որպէս հայեցաւ ի Հաբէլ եւ ի պատարագն նորա, նոյնպէս հայեսցի եւ հաճեսցի ի* տէր Մարտիրոսն *եւ ի յիւր կողակիցն* խումարն *եւ իւր որդոյն* Յովսէփին*։ Եւ իւր մեծ մամուն՝* Մամխաթունին*։ Եւ իւր ծնողացն* Յովսէփին *եւ* մախդա-

սի Աւետարին։ Եւ կողակցուն Զաւհարին եւ քուերն Խաթունին եւ Մանիշակին եւ ամենայն մերձաւորացս ամէն։

« Եւ արդ ես ունայնս բարեաց գործոց սուտանուն գրչակս Ստեփաննոս, որ անուամբս եմ խէթ, եւ ոչ արդեամբք եւ երկեակ՝ որ եւ հոգով կորացեալ եւ մտաւք մոլորեալ՝ ըստ իմում տկարութեանս գրեցի զսուրբ Աւետարանս ի գեղս որ կոչի Մգրայ, ի դուռն սուրբ Վարդանայ զաւրավարին եւ սուրբ Գէորգայ զօրավարին՝ որ փոքր մի հեռի է։ Ի յառաջնորդութիւն վանացս Գամաղիէլի տէր Աբրահամին, ամէն։ Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՌՃ եւ ԻԳ (=1674)։ Որ եւ կրկին զոգեպայծին հեզ սաաջի արկեալ բանին գեբեսս զնեմ ձեզ ի մտորին, մինչեւ յաղօթս միստին զմեղապարտ գրիչս զսուտ անուն Ստեփաննոսն եւ զծնողսն իմ զտէր Յովհաննէսն եւ զմայրն իմ զՄարգարիտն եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

« Դա՛րձեալ կրկին ան... » (յաջորդ թերթը ինկած ու կորսուած)։

Բ. — Մատթէոսի Աւետարանին ի վերջ. — « Յաւհաղին տէրնին եւ յաններելի տանջանացին փրկեա եւ ազատեա Քրիստոս Աստուած մեր զստացող սուրբ Աւետարանիս զտէր Մարտիրոսն »։

Հալէպ. 15 Ապրիլ 1945

---

# 15 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ԺԴ-րդ դա՞ր

ԹՈՒՂԹ՝ ԻԸ (=698 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×14×9 սմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՏՈՂ՝ 19։ — ՆԻՒԹ՝ շատ լաւ յղկուած մագաղաթ։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակեայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հակառակ ո՛չ այնքան հնութեան այլ տեսած աւեր ու կոզոպուտներուն, բաւական լաւ պահպանուած։ Կողքին կոնակը ամբողջովին ինկած, բայց շնորհիւ ամուր կարին եւ կազմին, թուղթերը ինկած մասեր չունին։ Ներսի քանի մը թերթերը պատռուած, ամբողջ հատորը ջուր տեսած եւ ներսի բազմաթիւ թերթերը ծռած ու մասամբ ծալլուած։ Գլխաւոր յիշատակարանը ցաւալիօրէն ինկած կամ յափշտակուած։ Եւսեբիոսի առ Կարպիանոս գրած ծանօթագրութիւններն ու համաձայնական 10 տախտակները կը մնան անվթար զմայլելի խորաններու եւ սիւնազարդերու մէջ։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ երկու էջ միայն, Մատթէոսի Աւետարանի ի վերջ, ուր յեցուած ժամանակակից յիշատակութեամբ մը (1895)։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ մեծագիր, յաջող ծաղկումով զարդագրեր։ — ԳԻՐ՝ ծայրէ ծայր սեւ անթափ մելանով շատ յաջող բոլորագիր՝ միեւնոյն գրիչէն. համարները ոսկեզօծ երկաթագիր։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը. առաջին տողերը զարդագիր եւ յաջորդ երեք տողերը ոսկեզօծ սիրուն երկաթագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, իւրաքանչիւր էջի վրայ, ոսկիի եւ լագուարդի գեղեցիկ, այլազան ծաղկումներով. — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, զանազան մոթիվներով, ամէն տեղ միեւնոյն յաջող վրձինը։ — ՆԿԱՐՔ՝ բազմաթիւ, բոլորն ալ յաջող եւ արժանի առանձին ուշադրութեան։ Խմբագիր աւետարանիչներէն Յովհաննէս միայն ունի իր յաջող նկարը. անկասկած որ միւսներն ալ ունեցած են՝ բայց կամ յափշտակուած են եւ կամ ինկած ու կորսուած։ Սկզբի տասնըչորս նկարները, որոնք կը մնան անեղծ ու յաջող գործեր, կը ներկայացնեն Յիսուսի մկրտութիւնը, Ղազարոսի յարութիւնը, Յիսուսի Երուսաղէմ մուտքը, Ոտնլուան, Յիսուս առօրէններուն ձեռքը, բոլորովին ինքնատիպ յղացումով, Յիսուս խաչին վրայ, Յիսուս խաչէն վար կ'առնուի, Յիսուսի յարութիւնը, Հոգեգալուստ, Պայծառակերպութիւնը, Ս. Կոյսի ննջումը եւ վերջին դատաստանը (?)։ — ՏԵՂԻ՝ անյայտ (Տիգրանակե՞րտ)։ ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ երկու հատ միայն, նոյնքան յաջողութեամբ։

ԳՐԻՉ՝ անծանօթ։ — ԾԱՂԿՈՂ՝ նոյնպէս անծանօթ։ — ՍՏԱՑՈՂ՝ Եսայի վարդապետ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ըստ Եղեկիէլ վրդ.ի յիշատակագրութեան՝ 985՝ իբր փրկչական թուական, բայց ըստ մեր տեսութեան՝ 1536, վարդապետը շփոթած ըլլալով Հայոց թուականը փրկչականի հետ։ Կարելի է ընդունիլ նաեւ իբր ԺԳ-ԺԴ դարու գրչութիւն*։

* Այս արժէքաւոր Աւետարանը քննելու եւ ցուցակագրելու համար դժբախտաբար ինծի միայն կէս ժամ ատեն տրուեցաւ. այլապէս պարտաւոր էի աւելի երկար ատեն կանգ առնել անոր գեղարուեստական յօրինուածքներուն առջեւ։

Մատեանս է Աւետարան, մագաղաթեայ, պատկերազարդ եւ բնաիր ու ամբողջ գրչութիւն։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Կարգիմեայ համաձայնական ծանօթութեանց երկրորդ էջի ի վերջ՝

« Զատացող սուրբ Աւետարանիս զնսայի վարդապետն յիշեցէք առ Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւն ամէն։ »

Բ. — Մատթէոսի Աւետարանին ի վերջ, յէջ 214-215, զոյգ պատարկ թերթերու վրայ կը կարդանք Տիգրանակերտի սաղմոսարդ հանդուցեալ Եզեկիէլ վրդ. Արշակունիի հետեւեալ բնիկալիր յիշատակագրութիւնը՝

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

« 1895 թուին Քրիստոսի, Հոկտեմբեր 20. Օսմանցոց Համիտ թագաւորի ժամանակին, մեծ ջարդ մը տրուեցաւ Հայոց ազգին։ Բոլոր Հայաստանի մէջ գտնուած Հայոց եկեղեցիները յափշտակուեցան, այրեցան, ունեցած հնութիւնները եւ սուրբ անօթները պղծելով ցիրուցան եղան։ Սոյն սուրբ Աւետարանը մեծ քանակութեամբ անօրէն Տաճիկներէն առնուեցաւ։ Արդէն Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցիին կը պատկանէր եւ իր սեպհականութիւնն էր, ի փառս Քրիստոսի Փրկչին մերոյ եւ ի պատիւ Հայկազեան տոհմի ամէն։

Այս Աւետարանի գրուած թուականը գեռ չյափշտակուած Քրիստոսի իՆՃ հարիւր ութսունը հինգ (՞) թուականը կը կրէր. այս թիւը գրեցինք հին թուականի կորսուելու տարին՝ 1895 Հոկտ. 25։ Տիգրանակերտ։

Ի կաթողիկոսութեան Հայոց Էջմիածնի Տ.Տ. ազգասէր հայրենանուէր սրբազնագոյն Մկրտիչ Խրիմեան Հայրիկ կոչեցելոյ։ Ի պատրիարքութեան Պոլսոյ ամենապատիւ ծրաքան ազգասէր Մատթէոս Իզմիրլեան։ Ի պատրիարքութեան Ս. Երուսաղէմի Ամեն. առաքելաշաւիղ Յարութիւն Վեհապետեանի եւ յառաջնորդութեան Ամթայ Տիգրանակերտի Տ. Եզեկիէլ վրդ. ի Արշակունի՝ որ համառօտ քաջարար գծոտն Քրիստոսի. յամի Քա. ի 1895 Հոկտ. 25։ »

Փարիզ, 17 Փետրուար 1948

---

# 16 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ԹԻՒ ԹՈՒՂԹԻ 1617

ԹՈՒՂԹՔ՝ ԻԳ × 24 (=552) էջ։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27 × 18 × 8 սնդմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն — ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստրակ թուղթ։ — ՏՈՂՔ՝ 21։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակեայ, լանջքով եւ թիկունքով, կաշեայ երեք կապիչներով, կողքերուն վրայ խաչանիշ տպուածներ։ Կողքերուն ներքին մասը գունաւոր ծաղկեայ կերպասներով պատած։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ մէկական թերթ սկիզբն ու վերջը։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած. կողքին թիկունքը մասամբ մաշած։ Սկիզբի 18 մեծադիր նկարներուն կը յաջորդէ Եւսեբի առ Կարպիանոս գրած թուղթը, խորանազարդ զոյգ մը տախտակներու մէջ. համաձայնական ութը տախտակներու հետ, նմանապէս զարդարուն։ Իւրաքանչիւր էջի տակ կ'երեւան համաձայնական համարանիշերը։

Զորրորդ տախտակին տակ գրիչը կ'աւելցնէ.

« Մէկ տափն ի յարբնակն զալատ էր, ես էլ զալատ գրեցի, յետ ւյատաջ էր կետած տփեր. վա՜յ ինձ հազար բերան մեղաւորիս։ » Աւետարանի բոլոր համարները կարմրագեղ երկաթագիր են։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ զարդագիր են։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ առաջին տողերը կարմրագեղ զարդագրեր են. իսկ յաջորդ երկու տողերը՝ ծանուշակի կարմիրով երկաթագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ շատ են, կարմիրի եւ լեղակի խառնուրդ պարզ ծաղկումներով։ — ԽՈՐԱՆՔ չորս հատ, Աւետարաններու սկիզբը, հին օրինակներու վրայ՝ բայց անյաջող ծաղկումներով։ — ՆԿԱՐՔ բաց ի չորս աւետարանիչներու բաւականին յաջողակ նկարներէն, ձեռագրիս սկիզբը կան 18 մեծադիր նկարներ, Քրիստոսի տնօրինական կեանքի դրուագներով եւ միջակ յաջողութեամբ։ — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ միայն ութը հատ կան, նոյն վրձինի անյաջող գործով։

ԳՐԻՉ՝ Բաղդասար քհյ։ — ՍՏԱՑՈՂ՝ Խլղաթ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՁԶ (=1617)։ — ՏԵՂԻ՝ Մոկաց գաւառի Բոլենց գիւղ։ — ԾԱՂԿՈՂ՝ Ներսէս, եղբայրը գրչին, որ եւ խմբագիրը յիշատակարանին։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Գառնիկ Գէորգեան,
21, Quai Malaquais, - Paris 6e.

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, մեծագիր եւ նկարազարդ։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա.* — *Էջ* 341*բ* (Գլխաւոր յիշատակարան).

*« Փառք համագոյ եւ միասնական սուրբ Երրորդութեան. Հաւր անժամանի եւ Որդւոյ կակցի եւ անմահի եւ ամենասուրբ Հոգւոյն, ի նոցունց բղխմանց, երեքանձնեայ տէրութեան, եւ մի աստուածութեան, այժմ եւ հանապազ, յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։ Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ աւրինակ իմն ցուցմամբ տեսանի։ Զի ոմանք ասեն թէ չորից աւետարանչացն են աւրինակ չորք անկիւնք արարածոց. արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ։ Պարտ էր համաշխարհ քարոզել զԱւետարանն Քրիստոսի։ Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոց յադենական ադրեբէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց աստուածն···* (կը շարունակուի սովորական ներածութեամբ)։

*« ···Զայս մեծ գանձս աստուածային տեսեալ հաւատարիմ եւ բարեպաշտ* Խլղար *եւ ետուր գրել ի մեղաւորս որ* Բաղդասար *կոչիմ անուամբ մեղօք լցեալ եմ յաշխարհի ի բարի գործս մերկ եւ ունայն զանուամբ ունիմ քահանայի, գործովս չար եւ անարժան։ Զձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք յիշման առնէք զիս արժան. բազում ջանիւք աշխատեցայ. յաւարտ հասի զԱւետարան. որք ընթեռնուն կամ տեսանեն, բոլոր սրտիւ զողորմի տան։ Զձեզ աղաչեմ սուրբ քահանայք, յիշման առնէք զմեզ արժան. զուք յիշեալ լիջիք յԱստուծոյ, լսել զձայն երանութեան։ Եւ Աստուծոյ մարդասէրին փառք եւ պատիւ միշտ յաւիտեան։*

*« Գրեցաւ Աւետարանս. Թու* ՌԿԶ (=1617) *էր թուական. ի գեաւղս որ* Բոլնիս *կոչի՝ ի դուռն* Եօթն սուրբ Նշանացն. *ընդ հովանեաւ* սուրբ Գէորգեան։ Կաթողիկոս Աղթամարայ տէր Գրիգորիսն *էր սրբազան վարուքն սուրբ ռաբունին, անուանակցին բերոյ նման, թուին սրբոյ Լուսաւորչին, որ Հայրապետ նստաւ* յԱղթան։ *Հայցեմք յապախնեաց տեառնէ անփորձ մնալ եւ անսասան. շրջել փառաւք նա զարդարի ընդ վարդապետս երկոտասան. զպսակն առնու ի Քրիստոսէ թէ եկ առ հովիւ քրտնաջան։ Զծաղիկն որ ես ռըկար* Ներսէս, *մեղօք լցեալ ի մէջ մարդկան։ Զձեզ աղաչեմ սուրբ քահանայք, յիշման առնէք զիս արժան։ Զշարագրող սուրբ գրոցս որ կոչի յիշատակարան, զերգարան իմ* զտէր Բաղդասար *որ գրեց զայս սուրբ Աւետարան։ Եւ զկողակիցն* տէր Բաղդասարին՝ *որ* Սողոմէ *կոչի անուամբ եւ զմիւս եղբարն* զԳրիգոր քահանայն, *զ*Կարապետ *եւ զ*Կիրակոս, *զկրտսեր եղբարն* Ղուկաս *անուամբ։ Եւ զիմ ծնողքն* զՄովինար *եւ* զՄարտին (*բո՞ս*)։ »

*Բ. — Յաջորդ սիւնակին վրայ, տարբեր գրչէ եւ աւելի թանձր թանաքով.*

*« Տէր Աստուած Յիսուս Քրիստոս որ ելեր ի կառս խաչին, արբեր զքացախն եւ զլեղին եւ ձայնեցեր աւազակին՝ այսաւր ընդ իս լինես ի դրախտին, ի հայրենիս քո առաջին, բաց զքո ողորմութեան դուռն ընդդէմ հոգւոյ* Խլղաթին *որ ստացաւ* Աւետարանս *ի հալալ եւ յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ եւ ծնաւղաց իւրոց՝ հօրն* Ասատուրին *եւ մօրն* Յաքիրին *և եղբարցն* Մասխուդին (*այսպէս*), Շայնազարին, Խուսդեղին, Ցառուլխին *եւ այլոցն ամենեցուն՝ ամէն։ »*

*« Դարձեալ Աստուած ողորմի ասացէք զստացողի սուրբ Աւետարանիս* պարոն Խըլղաթին *եւ կողակցոյն* Խանզադին *եւ զաւակացն* Բաղդադին, Ցամանին, Մրաւթին, Շաղզուլին։ *Ողորմի եղբօրն* Մասխուդին *եւ կողակցին* Բէկիսին (*թրքերէն* Փակիզէ՞). *եւ զաւակացն* Էթարին, Խանձային *եւ միւս եղբօրն* Շայնազարին *եւ կողակցոյն* Մարգարտին *եւ այլ ամենայն արեան մերձաւորացն, մեծի եւ փոքու՝ ամէն։ »*

*« Քրիստոս Աստուած ողորմի* Աղաջանին. *Աստուած զինքն անփորձ պահեսցէ. ամէն։ »*

*« Եւ արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ ամենամեղ եւ եղկելի անարհեստ եւ փծուն գրչի* Բաղդասար *սուտ անուն* իրիցու։ *Եւ արդէն ես յետինս՝ ի կարգաւորաց եւ անպիտան եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս եւ անիմաստս՝ ի գիրս*

գրչութեան եւ յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ Բաղդասար: Շնորհիւ տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցի զսուրբ Աւետարանս: Ի թուականին Հայոց Ռ եւ ՃՁ, ի յերկիրս Մոկաց. ի գեաւղն որ կոչի Բոլենց, ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ զաւրավարին եւ Նորին սուրբ Նշանացն եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսի զաւրավարին եւ յայլ սրբոցն՝ որ աստ կան հաւաքեալ. ի կաթողիկոսութեան Աղթամարայ տէր Գրիգորիսի: Արդ աղաչեմ զամենեսեան, զմանկունս սուրբ եկեղեցւոյ, զի որք հանդիպիք տեսութեամբ սուրբ Աւետարանիս, զաւելորդն բանաք եւ զպակասութիւն լնուք. խոշորութեան եւ սխալացն անմեղադիր լինել, զի կար մեր այս էր: Վասն որոյ երեսս ի գետին դնելով աղաչեմ զձեզ լի սրտիւ եւ բոլոր հաւատով անարժանիս Աստուած ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ մեղաւորիս եւ ծնողացն իմոց Մարտոսս (այսպէս) Քահանային եւ Մոլինարին: Եւ արդ ես անպիտանս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անսուրբս ի սրբոց, չարս ի բարեաց, յիմարս յիմաստնոց, անմիտս ի մտաւորաց, անբանս ի բանականաց, անարուեստս ի յարուեստաւորաց, անյիշելիս ի գրչաց, տղէտս ի գիտնաւորաց, տունկս զանտառեան, բարունակս ապականաբերս, Քանանու զաւակս եւ ո՛չ Յուդայի, բազմամեղ եւ սուտանուն երէց Բաղդասար գրիչ, տեսի զսէր եւ զփափաք պատուական եւ սրբամիտ քրիստոսասէրն Խլղաթն: Զի յոյժ փափաքէ յօժար կամօք եւ սրտի հաւատով ցանկացող եղեալ այսմ ծաղկեալ եւ փարգափթիթ բուրաստանիս: Եւ ստացաւ զսա ի հալալ եւ յարդար վաստակաց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւղաց իւրոց հաւրն Աստուրին եւ մաւրն Յաքիրին՝ ամէն: Դա՛րձեալ կրկին անգամ Աստուած ողորմի ասացէք Աղաջանին... եւ Աստուած ողորմի իւր ծնողաց՝ ամէն: »

Գ. — էջ 351՝ վերջին գրչէ. — Դա՛րձեալ Աստուած ողորմի ասացէք ըռէս Խաչօին եւ կողակցուն Մրվաթին եւ որդոց Ալլահվէրդուն, Յովանէսին եւ Կարապետին, Մկրտիչին, Գօզալին, սանուհաչ Աբրահամուն, Մարտիրոսին, եղբօրորդոյ Կուլիջանին, Վարդանին, Ալթունին, Ասմինին՝ ամէն:

Գ. — էջ 33. — Տէր մեր Յիսուս Քրիստոս քո անճառելի խոնարհութեամբ որ խաչի համբերեցիր, գթացումն յաչս առեր զերեքօրեայ, զզօրիս աւերեցեր եւ արարեր ազատութիւն հոգւոց, որ էին ի բանդին. Արա՛յ ազատութիւն եւ մեղաց թողութիւն ստացողի սուրբ Աւետարանիս՝ ըռէս Յակոբին (վերջին ստացող), կողակցոյն Շօհին (այսպէս), որդոցն՝ Եղիային, Կազարին, ըռէս Մարգարին, կողակցոյն Խանումին, որդոյն Մխիթարին, կնոջն Կուտրաթին, թոռին Պետրոսին, Յովսէփին: Միւս որդոյն Գրիգորին, կնոջն Ալթունին, թոռին Մարտիրոսին, Կարապետին, Սահակին, Սարգիսին: Միւս որդոյն Հերապետին, կնոջն Մարգրտին, Եքրօին, թոռին Պօղոսին, Մարգարին, Խաչատուրին, Կազարին, Եղօին՝ ամէն: Աստուած ողորմի Մխիթարին աներորդւոյն, Փոխանին (այսպէս), կնոջն իւրոյ Եղիսին, որդոյն Ատոմին՝ ամէն:

Գրեցաւ յիշատ(ակ) սուրբ Աւետարանիս ի խնդրոյ տէր Ստեփաննոսին, ձեռամբ Տատ(ա)խեցի Ստեփան սարկաւագին. ով ընթեռնոյք ասացէք Աստուած ողորմի: Գրեցաւ թվին ՌՃԿԵ (=1716) ամէն.

Փարիզ. 28 Ապրիլ 1948

---

## 17 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌՃԺ = 1661

ԹԵՐԹ՝ 296 (= 592 էջեր). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27 × 19 × 7 սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. — ՏՈՂ՝ 22. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած փայլուն թուղթ. — ԿԱԶՄ՝ խաւաքարտեայ, թիկունքը կանաչ թաւիշով պատած, երկու երեսները զարդարուած խաչելութեան եւ յարութեան բարձրաքանդակ արծաթեայ

նկարներով։ Կողքի առաջին երեսի վրայ, կ'երեւան աւանդական առաքեալներու նկարները, իսկ կռնակի կողքին վրայ կան աւանդական մարգարէներու պատկերները, բոլորն ալ երկնագոյն և դեղին կիտուածի վրայ ագուցուած և գունաւոր քարերով զարդարուած։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ երկուական թերթ՝ սկիզբն ու վերջը։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած եւ անթերի։ Սկիզբի նկարներուն կը յաջորդեն Եւսեբիոսի համաձայնութեան ծանօթագրութիւններն ու գունազարդ տախտակները։ Չորս Աւետարաններն ալ ունին իրենց նախագրութիւններն ու բովանդակութեան ցանկը։ Գրեթէ բոլոր էջերուն տակ կան համարաբերական համարանիշերը։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս խորաններու տակ, երկու տող, գունազեղ թռչնագիր։ — ԳԻՐ՝ համառօտ խոշորկէկ բոլորագիր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ փառագիր յաջող զարդագրեր. համարները ունին ոսկեղէն երկաթագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ ո՛չ բազմաթիւ, բոլորն ալ լաւ ծաղկումներով։ — ԽՈՐԱՆՔ՝ բացի ծանօթագրութեանց տախտակներ զարդարող յաջողակ տասը խորաններէն, չորս Աւետարանները ունին իրենց շատ յաջող ծաղկումով խորանները։ — ՆԿԱՐՔ՝ բացի ի չորս աւետարանիչներու նկարներէն, Աւետարանին սկիզբը կան Աւետման, Մոգերու երկրպագութեան, Քառասնօրեայ ընծայման, Մկրտութեան, Պայծառակերպութեան, Ղազարու յարութեան, Երուսաղէմ մուտքի, Վերջին ընթրեաց, Ոտնլուայի, Ըմբռնման, Խաչի ճանապարհի, Խաչելութեան, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան եւ Վերջին դատաստանի բաւական յաջող մեծադիր նկարները։ Բայց Աւետարանին ամէնէն յաջող եւ յատկանշական զարդերը իր մանրանկարներն են՝ որոնցմով, գրեթէ ամէն էջի վրայ, մանրանկարուած են Յիսուսի տնօրինական բոլոր դրուագները, գոյնի, տարազներու եւ արտայայտութեանց այնպիսի բնականութեամբ մը՝ որ միայն պատիւ կրնայ բերել արուեստագէտ վարպետին։

ԳՐԻՉ՝ Մկրտիչ Ջահրնկալ։ — ՍՏԱՑՈՂ՝ Խոճայ Բարսեղ. վերջին ստացող՝ Յովհաննէս։ — ԾԱՂԿՈՂ՝ գրիչը։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԺԸ (=1661)։ — ՏԵՂԻ՝ Եւդոկիա։ Ձեռագիրս մաս կը կազմէ Թոփալեան Մարկոսեան Հաւաքման՝ Փարիզ։

Մատեանս է Աւետարան, թղթեայ, նկարազարդ, մեծադիր եւ արծաթապատ, նկարուն եւ սկանազարդ կազմով։ Յովհաննու Աւետարանին ի վերջ կայ «Հանգիստ երանելւոյն Յովհաննու աւետարանչին»։

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Էջ 586ա (Գլխաւոր յիշատակարան). — «Փա՛ռք անսկզբնականին Հօր և Որդւոյ նորա Միածնի եւ ամենասուրբ Հոգւոյն՝ ելօղի ի Նորին էութենէ։ Աւրհնութիւն Աստուծոյ Հօր որ գթացաւ յարարածս իւր եւ առաքեաց զմիածին որդին...։

«Արդ՝ ես նուաստ հոգս՝ Մկրտիչ ծոյլս եւ անարժան ջահանկալս։ Եւ շնորհիւն Աստուծոյ եւ ողորմութեամբ Նորին գրեցի զսուրբ եւ զկենսունակ Աւետարանս։ Եւ ծաղկով եւ պատկերովք՝ ոսկէնկար զարդարեցի, ըստ չափոյ իմոյ տկարութեանս, քանզի եմ եւ ես ի մէջ մեծ նեղութեան ցաւոց։ Զոր նկարեցի զսուրբ Աւետարանս ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի գուարճութիւն մանկանց Նորին։

Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՌՃԺին (=1661)։ Ի քաղաքս յԵւդոկիայ՝ որ այժմ ասի Թոխաթ։ Ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, որ է Տաշ Մէրտիվանն։ Արդ աղաչեմ զձեզ մանկունք նորոյ Սիոնի՝ որք հանդիպիք այս սուրբ եւ աւետաբարբառ Աւետարանիս, եւ թէ կարդայք օգտիք՝ կամ թէ օրինակէք, եւ թէ լսելով գրանս սորա։ Յիշեցէք սրտի մտօք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զփցուն եւ զխոշոր գրչակս սուտ անուն Մկրտիչս եւ յանդգնութեանս իմոյ ո՛չ մեղադրել, զի յոժարութիւն եւ փափագ սրտիս մատուցումն եղեւ տկարութեանս։ Յիշեսջիք և զծնողսն իմ, հայրն իմ՝ զՍիրիքն եւ զմայրն իմ զՆուշանն, որ հանգուցեալ են առ Քրիստոս, եւ ամենայն ազգատոհմք իմ՝ որ յուսով առ Քրիստոս փոխեալ են. եւ զկենակիցն իմ զՆազխաթունն եւ զորդիքն իմ՝ զՄարտիրոսն եւ զԱստուածատուրն եւ զդուստրն իմ Շուշանն։ Եւ ես անպիտան եւ անարժան Մկրտիչ ջահանկալս՝ որ գրչութեան չէի հմուտ եւ միտքս իմ հանապազ ի տատանման կայր՝ սխալանաց եւ խոշորութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այսչափ էր։ Այլ եւ, նոյնինքն բարին Քրիստոս Աստուած որ առատն է յամենայնի եւ կարող, ձեզ յիշողացդ՝ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ամենեցուն ողորմեսցի։ Եւ նմա փա՛ռք հանդերձ Հարբ եւ ամենասուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։»

«Արդ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս զմաքրամիտ եւ զհեզահոգի մահդասի Խոճայ Բարսեղն՝ որ բազում սիրով եւ փափաքա-

նոք բառոյու պսուրբ և պկենդանի Աւետարանս յիշատակ իւրն և ծնողացն, հօրն Մարութային և մօրն Մամիկին և իւր կողակցոյն՝ Սանդխտին, որդոյն Պետրոսին, Աբիսողամին, Մարութին, Ղութլուճանին և հանգուցելոյ որդոյն Փիլիպոսին և դեռաբոյս թոռին Բարթողիմէոսին և քուերցն Մարիամին, Գուլպէկուն և ամենայն զարմիցն և Վարդխաթունին։ Եւ եդ յիշատակ ի դուռն սրբոյն Մինասայ, յիշելով զայն թէ երանի՛ որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանի՝ ի վերին Երուսաղէմ։ Արդ երես անկեալ առաջի մանկունք նորոյ Սիոնի, յիշել ի սուրբ աղօթս ձեր զվերոյ գրեալ մահդասի Բարսեղն և զծնօղսն իւր և զամենայն արեան առ մերձաւորսն, և որք յիշէ աղօթիւք վարձս ի Քրիստոսէ առցէ հարիւրապատիկ՝ ամէն։ Արդ և կրկին յիշեցէք զվերջի ստացող սրբոյ Աւետարանիս զՅովհաննէսն որ յայժ և բազում սիրով առեալ զսա և եդ յիշատակ ի դուռն սրբոյն Մինասայ եկեղեցին՝ որ ի յԸնդոկիայ քաղաքիս կառուցեալ կայ յանուն սրբոյ արդարահաս վկային, ի թուին ՌՃԺԵ (=1666) ամին. Արդ՝ այսուհետև մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սրբոյն Մինասայ եկեղեցւոյն, ո՛չ հայրապետ և ոչ վարդապետ, ո՛չ քահանայ, և ո՛չ աշխարհական. ապա թէ յանդգնեսցի նենգել սմա զօղանալով և կամ ծախելով, պատժեսցին Աստուծոյ Հօրէ, որպէս Աքար զարմն և զՅուդայն. և ...: Այսուհետ ես զՅովաննէս ծառայս Քրիստոսի, զհանդիպողքդ սրբոյ Աւետարանիս, յիշել և յիշատակել զծնողսն իմ զՎարդապետ Քահանայն և զմայրն իմ զԽանումն և զկենակիցն իմ զՄանուշան և զդուստրն իմ զԳուհարն և զամենայն ազգատոհմս իմ, հանդերձ ննջեցելովք մերովք առ Տէր, ձեր յիշողաց և մեր յիշեցելոցն ամենեցուն, ողորմեսցի իւր միասնգամ զօրութեանն ամէն: Հայր: »

Բ. — Ի վերջ Մատթէի Աւետարանին՝

« Յիշատակ է սուրբ Աւետարանս մահդասի Բարսղին և ծնողացն իւրոց, հօրն Մարութային և մօրն Մամիկին և իւր կողակցոյն Սանդխտին, որդոյն Պետրոսին, Աբիսողամին, Մարութին, Ղութլուճանին և ամենայն զարմից նորին: »

Գ. — Նոյնը՝ ի վերջ Ղուկասու Աւետարանին:

Փարիզ. 10 Յուլիս 1948

---

# 18 – ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌՃԺԷ = 1668

ԹՈՒՂԹՔ՝ ՃԿԸ (=336 էջ)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×18×5 սնթմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՏՈՂՔ՝ 25։ — ՆԻՒԹ՝ շատ գէշ յղկուած [illegible] թուղթ։ — ԿԱԶՄ՝ սեւ կաշեպատ փայտէ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ գէշ պահպանուած. կազմի կռնակը պատռուած ու կիսաւեր, ներքին [illegible] բոլոր թերթերը կարէն խախտած։ Ունի համաձայնական եօթը գունաւոր և բուսական սիրուն ծաղկումներով տախտակները միայն ու միւսները կը պակսին, ինկած ու կորսուած ըլլալով։ Չորս Աւետարաններն ալ ունին իրենց նախադրութիւնն ու բովանդակութեան ցանկերը ու համաբարբառի համարանիշերը ստորին լուսանցքներու վրայ։ Կողքերու ներսը կարմիր յատակի վրայ ծաղկուն ճերմակ երիզով կերպաս փակցուած է։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ երկտող, առաջինը մեծագիր սիրուն թռչնագրերով, երկրորդը՝ պարզ կարմրագեղ։ — ԳԻՐ՝ միջակ բոլորգիր։ — ԱՆՁՆԱՏԱՌՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, մարդագիր, կենդանագիր, թռչնագիր ու ծաղկագիր, յաջող ծաղկումով։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, այլազան չափերով, ձեւով ու ծաղկումով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս Աւետարաններուն վերեւ, կարմրագեղ շատ պարզ ծաղկումով. աւելի հոյն ծաղկումներով են համաձայնական տախտակներու սիւնազարդ կիսախորանները՝ իրենց շուրջի այլազան բոյսերով և կենդանիներով։ — ՆԿԱՐՔ՝ չորս հատ, չորս աւետարանիչներու բուսական յաջող [illegible]։

ԳՐԻՉ՝ Յովհաննէս սարկաւագ։ — ՍՏԱՑՈՂ՝ Վաստակաւոր պարոն [illegible]։ — ԾԱՂԿՈՂ՝ գրիչը։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԺԷ (=1668)։ — ՏԵՂԻ՝ անյայտ, անկասկած ի Նոր Ջուղայ։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Յարութիւն Հայարեան, Նիւ Եորք, գնուած Փարիզէն։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — էջ 165 (Գլխաւոր յիշատակարան).

— «Փա՜ռք Եղակի և միաւորական սուրբ երրորդութեան և մի աստուածութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն։ Սուրբ Աւետարանս յիշատակ է Վ.աստկանայ սարաճ Պօղոսին և ծնողացն իւրոց՝ հօրն Խաչատուրին և մօրն իւրոյ՝ Խանումին. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դա՛րձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Պօղոսն և զկողակիցն իւր Խանսօլթանն, յիշեցէք և Աստուած ող․․․։

Դա՛րձեալ յիշեցէք ի Քրիստոս Պօղոսն և եղբարքն իւր՝ Ղազարն, Ներսէսն, Խաչատուրն. յիշեցէք։

Դա՛րձեալ յիշեցէք ի Քրիստոս Պօղոսն և զքոյրն իւր՝ Նարինն, Մէյջանն, Գուլումն. յիշեցէք և Աս

Դա՛րձեալ յիշեցէք ի Քրիստոս զՎ.աստկանայ քահանայքն զտէր Սուքիասն և զտէր․․․ (անունին տեղը բաց ձգուած), յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Արդ գրեցաւ և նկարեցաւ ձեռամբ անարժան և մեղօք ապականեալ Յովհաննէս սարկաւագի, ի թուականութեան Հայոց ՌՃ և ԺԷ (1668) ամին։ Եւ ի թագաւորութեանս մերոյ փոքր Շահ Սիլէմանին և ի հայրապետութեան մերոյ Ս. Էջմիածնայ սրբազան Յակոբ կաթողիկոսի և ի առաջնորդութեան մերոյ՝ քաջ բարունապետիս մերոյ տէր Դաւթիս։ Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ։ Նմա փառք յաւիտեանս ամէն։ »

Բ. — Սկզբի համաձայնական տախտակներու կռնակի քանի մը դատարկ երեսներուն վրայ, իբր ընտանեկան յիշատակարութիւն.

«Ի 1872 ամին Հայոց ընակութիւն եղեւ Գիշնիզան գիւղն և․․․ հարն Հայոց էր՝ Մահմուտ խանն, որ էր հաքէմ Զարմահալայ և զկնի քանի ամաց է Միրզայեայ խան ասէին՝ որ էր ծառայ թագաւորին՝ Նասըրալի Շահի. հրամանաւ Շահի և Սպահան քաղաքն ըէկլարբէկի էր եղած՝ և յիշեալ խանն Մահմուտի հետ մեծ թշնամի եղաց․․․ (երկու բառ մնացած) յաւուր միում ի ծառայից իւրոց երկու անձինք պատուիրեալ յղեալ էր ի Դէյփօրդ գիւղն Զարմահալի. զի սպանցեն յիշեալ խանին, զոյով անդանօր զկնի հայկերպութեան իւրեանց ափեալ են բարեկամաբար ընդ խանին խօսել և սէր ընծայել․․․ յիշեալ խանն ատացեալ էր միամտաբար եկայք․․․ խաղալ ի քում խաղից. ամն ի ծառայից էմիրզավլի յանկարծ սրով հարեալ էր ի սիրտ խանին և միւս ծառայն զայդ նմին սրով հարեալ էր ի թիկնամէջ նորին։ Զկնի միոյ ժամոյ մեռեալ էր. և նորա գնացեալքն ի փախուստ. և զկնի քանի ամաց որդի նորա Խանի Մամդըա խանն հաքէմ Զարմահալու եղաւ։ Յիշեալ խանն շատ բարեմիտ աղբար (?) էր և Հայոց ազգին շատ սիրէր և օգնէր։ Բայց որդի նորա Խան Բաբախանն շատ վատ և․․․ բարէ։ Աստուած վերջ և կատարածն բարի առնէ։

Ի ժամանակի․․․ և գնաէրան եկաց, այլ ոչ ունէր զինչս․․․ և ընչաւէրքն ևս ոչ կարէին օգնել ողորմելի աղքատացն։ Նաեւ թան, մածուն և բանջար ևս ոչ գոյր քանզի ձմեռն էր, մերձ առ զարուն՝ որ 1871 թուին և էր ամիսն յունուարի. վա՜յ ինձ, մեծ տառապանութիւն էր վրան խղճալի աղքատացն, քանզի ձեռս իւրեանց ի ծնոտի եղեալ իբրեւ որբացեալ ազատք յաց լինէին և հայքին ամ ուրեք զի միխիթարիչք զտանիցին և ոչ ուստեք էր նոցա միխիթարութիւն և օգնականութիւն, իբրեւ զհօգմս որ․․․ յանդաց երեւեալ և զոգալով կային. և եթէ ննջեցին ասէին՝ յերբ իցէ և յե՞րբ յառնեն զարձեալ թէ յե՞րբ իցէ ցերեկ։

Ո՜հ, ո՜հ և աւաղ մեզ զի սովն ևս քան զեւս սաստկացաւ. մին չափ լիդրա ցորեանն եղեւ վեց զզահի որ է Սպահան քաղաքն. 15 չափ լիդր ցորեանն եղեւ տասն և ութն թումանի, զայն ևս զժուարաւ գտանէին, որ և ի ձեռն սովու և նեղութեան սաստկանալ մեռանէին. ամենք անճար մնացեալ գնացին առ մեծամեծսն ի ժամ զենման ոչխարաց և այծից՝ անօթ ինչ պահելով ի կոկորդաց ու գնացին զարեան եփելով ի յեա․․․ և ուտէին։ Վա՜յ և աւաղ մեզ՝ սուգ արին քահանայք վասն ժողովրդոց, սուգ արին քեաթխուդայք և քեայանթարք վասն ազգաց, սուգ արին հարք և մարք վասն զաւակաց։

Տեսանելով այսպիսի նեղութիւնս՝ ժողովեցան քահանայք, բնայանթարք, քեաթխուդայք եւ ծերունիք եւ գնալով ի գիւղերայս Հայոց անոց ի տուն գնալով ...գի եւ հայթայթանօք... ցու է մեզ ծանուցանել ձեզ... Նասրադին Շահ Պարսկաստանայ ի 1870 եւ յամսեանն մարտի, սկիզբ եղեւ սով լինել, քանզի ի բազում ժամանակ եւ ամբ էր որ երկինքն եղեւ պղնձի, անձրեւ ոչ լեա եւ երկիրն եղեւ երկաթ, խոտ եւ բուսանք ոչ էր եւ զոր ինչ ցանեալ սերմանիքն էին, թառամելով չորացան, աղբերք հուղեցան եւ գետք ցամաքեցան, ի վեր առացեալ ամսէս ի վայր օր բստ օրէ սովն սաստկացաւ մինչեւ ի ամիսն օգոստոսի։ Մին չափ լիտր ցորեանն փարթամ եւ ընչու տէրքն գնահատ առնելով՝ վաճառէին աղքատացն չորս ղղանի, մինչեւ ի ժամանակս կալի եւ հնձոց, դարձու մին չափ լիտր ցորեանն եղաւ երկու ղղանի, այսպէս մնալով մինչեւ գինի միոյ ամի ի 10 մարտի սովն եւս բան զեւս սաստկացաւ զորս ոչ գտանէին ճարակ ողորմելի աղքատք քրիստոնէիցն եւուն զցանկալի՝ ցանկս լի գինչս իւրեանց զգինս կերակրեաց եւ ուտելեաց եւ գինի միոյ ժամանակի Մստր Բրուս (*) քահանայ ումն Անկղիացի, հրամանաւ թագաւորին իւրեանց, եկ ի երկրէն Հնդկաստանէ ի քաղաքն Ասպահան ի Ջուղայ եւ զոր ինչ Հայք գտանէին ի Հնդկաստան զգինս ուտելեաց եւ կերակրոց՝ ի փառս Աստուծոյ առաքէին ի ձեռն Մստր Բրուսի եւ նա բաժանէր եւ բաշխէր աղքատացն։ Նովաւ կենցաղավարէին եւ գինի միոյ պատրաստեցան ապա եւ այնորիկ եւ գնացին առ մեծամեծս այլազգեաց զբաւական տալով սակաւուկ ինչ գարի, կորեակ եւ ցորեան արքն բերելով բաշխեցան ողորմելի աղքատացն, մինչ ի գինի քանի յաւուրց սկիզբ արարին գնալ ի գաւառս եւ ի լերինս, քաղէին զբանջար, բերելով առնուին զթան, ժածուն եւ ալիւր առնուին ի գրացեաց եւ ածէին ի վերայ բանջարոյ եւ ուտէին։ Մինչեւ ի սոսն յունիսի՝ որ է մերձաւոր կալի եւ հնձոյ, յիշեաց Աստուած ողորմելի քրիստոնեայսն եւ էած զմեզ ի լիութիւն եւ առատութիւն։ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

1873 ամի ի 27 դեկտեմբերին՝ ի Մամուտան (*), չնչին եւ ապաշնորհ Խաչանայ տէր Սուքիաս Տէր Մարտիրոսեան։ Գրեցայ սոյն վերոյ գրեալ ցաւալի բանքս։

Գ. — Յաջորդ նոյնպէս զատարկ էջերէն մէկուն վրայ գիւղին բոլոր քահանաները Աւետարանին վրայ իրենց ստորագրութիւնը դնելով կ'ուխտեն միաբան՝ որ առանց Աւագերէց տէր Սուքիաս Խաչանային եւ Երէց-փոխ տէր Յովհաննէսին հրամանի առնելու « օրէնք » չկատարեն, այսինքն մկրտութիւն, պսակ, թաղում, հոգեհանգիստ, եւ այլն, եւ ստացած ժամուց ու նուէրներն ալ բերեն յանձնեն աւագերէցին կամ իր փոխանորդին, ի բաց առեալ « Ս. Հաղորդութիւն տալն ու Ս. Աւետարան կարդալը » ու աւագերէցը յետոյ հաւասար բաժնէ բոլորը։ Ութսուն տարի առաջ Նոր Ջուղայի գիւղերէն մէկուն մէջ ուխտով կանոնադրուած այս արդար սովորութիւնը կարելի չեղաւ կիրարկել շատ աւելի յառաջացեալ թեմերու մէջ, դեռ մինչեւ այսօր։

Դ. — Յաջորդ զատարկ էջերէն մէկուն վրայ՝

1873 ամի ի 7 փետրուար սկիզբ արարաք ի հարսանեաց սիրելի Մկրտում որդւոյ մերում՝ Մկրտիչ Խեխայ Դաւթեան ի Մամուտան։ Քանի մը արձանագրութիւններ եւս հարսանեաց։

Փարիզ. 1 Յունիս 1949

# 19. — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ 83

1724էն առաջ

*ԹՈՒՂԹՔ՝ ԻԲ × 12 (=528 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×10×4 սնթմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՏՈՂՔ՝ 23։ — ՆԻՒԹ՝ հաստրակ թուղթ։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկու թերթ՝ սկիզբն ու վերջը Մայր Մաշտոցի մը շատ մաքուր մնացած էջերով. այսպէս՝ « ···ցի ոչ լուաք ձայնի նորա։ Եւ արդ տէր Աստուած մեր որ հաներ ժողովուրդն երկրէն Եգիպտացւոց·· »։ Եւ ապա՝ կարմիրով՝ «Թէ» այսօրէկ դնեն գծար որբոյ Աեղանոյն արտաքոյ դրան եկեղեցւոյ... ի վերայ փայտեղէն սեղանոյ կից նմին։ Եւ ամենեքեան արտաքս ելանեն. եւ ձգեալ եպիսկոպոսն զզաւռնն զկնի իւր։ Եւ կան առ դրանն քահանայք եւ ամենայն դասք կղերիկոսացն եւ բոլորովին ամենայն մանկունք եկեղեցւոյն առեալ ակումբ։ Եւ զսեղանն ի վերայ պատուանդանին դնելով եւ զհանդերձսն։ Եւ համբարձեալ քահանայիցն առձեռն հաստատութ...։ Տէ՛ր իմաստնոյն պատճառս եւ իմաստնոյն լիցի··։ Ընթերցուած յեսայեա մարգարէէ·· զուարճացիր եւ պայծառացեա՝ որ ոչ երկնէիր. զի բազում են որդիք ամուլին՝ առաւել քան զարամբւոյն·· »։ Պաւղոսի առաքելոյ յեփրայեցւոց։ « ···կոչմանն բաժանորդք··· » — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս Աւետարաններուն սկիզբը երկու տող. առաջինը զունաւոր թռչնագիր, երկրորդը՝ կապտագոյն երկաթագիր։ — ԳԻՐ՝ յաջող բոլորագիր. համարներու սկզբնատառերը կարմրագեղ։ — ԽԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս խորաններու տակ, յաջող զարդագրեր — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բոլոր գլխակարգութեանց քով՝ սովորական ծաղկումներով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններու սկիզբը, սովորական ծաղկումներով։ — ՆԿԱՐՔ՝ չորս հատ, խմբագիր չորս աւետարանիչներու յատուկ, չորսն ալ ոսկեզօծ յատակի վրայ, սովորական ծաղկումներով։ — ԿՆԻՔ՝ հատ մը միայն, առաջին խորանի մուտքին վրայ, բոլորշի, սեւ մելանով, մեծագիր՝ Թադալեան խորհուրդ յեղեսիո՞յ. Լաւ չի կարդացուիր։*

*ԳՐԻՉ՝ Բարսեղի Վարդան քահանայ։ — ՍՏԱՑՈՂ՝ անծանօթ, գրիչը՞։ — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ։ — ՏԵՂԻ՝ անծանօթ՝ Բալու՞, Եդեսիա՞։*

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, լիակատար, «Իւր կնոջն չնացելոյ» մասով։*

Յիշատակարութիւն՝ *շատ քիչ, յաւելուածի կորուած ըլլալով գլխաւոր յիշատակարանը։*

*Ա. — էջ 528ա. — Շնորհիւ սեառն սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի։ Զմեղուցեալ եւ տառապեալ* Բալուեցի վարդան քահանայ *գրիչս յիշեցէք. եւ Աստուած զձեզ յիշէ ամէն։*

*Բ. — Մագաղաթեայ առաջին թերթին բաժորդող դատարկ թուղթին վրայ. — Յիշատակ է սուրբ Աւետարանս* Սուրկուղունեցի *(Սունկուրլու՞ս)* Այվազի *որդի* Պապասխոտմի *յիշատակ* Ս. Գէորգին. *ո՛վ որ կարդայ Աստուած ողորմի իւր ծնողացը. թվ՝ ՌՃՂԶին (=1747) գրեցաւ···։ — Թիվն՝ ՌՃՀԳին (=1724) Օսմանցուն* Երեվան *առաւ։ Թվն՝ ՌՃՁԴին (=1735)* Թահմազն Կորբուլօղլին *բոմբիչ արավ։*

*— Թիվն՝ ՌՄԷ (=1758)՝ ես Տէր Մար*տիրոսս *Քալայջ՞ւմն (Երեւանի բերդի եկեղեցի՞ն) օրհնեցայ(*)։*

Լիոն, 21 Յունուար 1948

** Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Յովհաննէս Պասթանեան, Անթապցի։*

# 20 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌՂԴ = 1645

*ԹԵՐԹՔ՝ 385 (=770 էջք)։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13×10×5 սնթմ։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ՏՈՂՔ՝ 17։ — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած թուղթ։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահպանուած. կողքի քամակը պատռած — մնացած, ներքին թերթեր կարէն ընկած, մասամբ ցեցակեր։ Չորս Աւետարաններն ալ ունին իրենց նախադրութիւնն ու բովանդակութեան ցանկը։ Միայն Մատթէոսի եւ Մարկոսի Աւետարանները ունին համաբարբառի համարանիշերը։ Յովհաննու Աւետարանի ի վերջ կայ «Իւր կնոջն չնացելոյ»։ Կը թուի որ առաջին երեք Աւետարաններն ու Յովհաննէսը ու-*

նկած են առանձին գրիչներ, ծաղկումի թեթեւ տարբերութիւններով։ Ոփշատակարանին մէջ կը յիշուի միայն Յովհաննու գրիչը։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը՝ երկուական թերթ. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը՝ երեք տող, առաջինը՝ թռչնագիր, յաջորդ երկու տողերը երկաթագրի նմանութիւն, պատ կարմրագեղ։ — ԳԻՐ՝ յաջող մանր բոլորգիր, սկիզբէն մինչեւ վերջը, ենթագրարար միեւնոյն գրչէն։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս խորաններու տակ, բոլորն ալ կարմրագեղ թռչնագիր. նոյնը, գունաւ, բոլոր գլխակարգութեանց սկիզբը։ Համարները կը սկսին կարմիր գոյն գլխագրով։ — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴՔ՝ բազմաթիւ, կարմրագոյն առուերագիծ՝ առաջին երկու Աւետարաններուն մէջ. իսկ յաջորդ Աւետարաններուն մէջ աւելի խնամուած ծաղկումներով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս Աւետարաններուն վերեւ, բաւական յաջող ծաղկումով։ — ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներու, բաւական յաջող —

ԳՐԻՉ՝ գպիր Մարգար։ — ՍՏԱՑՈՂ՝ պարոն Աղախանջիկ. — ԾԱՂԿՈՂ՝ անծանօթ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՂԴ (=1645)։ — ՏԵՂԻ՝ Ջուղա գիւղ։ — ԿՆԻՔ՝ մեծագիր, կարմիրով՝ Մատենադարան Անտոնեան Միաբանութեան։ Ձեռագրիս այժմու տէրն է՝ Պր. Յակոբ Գալըպճեան, Փարիզ։

Մատեանս է Աւետարան, թղթեայ, պատկերազարդ եւ ամբողջ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանին (Գլխաւոր յիշատակարան). — « Փառք ամենասուրբ Երրորդութեան Հայր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն յաւիտեանս ամէն։ Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս Յովհաննու, ի թվականիս Հայոց ՌՂԴ (=1645), ի գրչիս՝ ձեռամբ գպիր Մարգարի, ի գեօղն Ջուղայ. ի խնդրոյ հաւատարիմ քրիստոնեայ Աղէ՝ որ է որդի Մէլիք Աղէ. որ ստացաւ զսայ վասն վայելումն հաւատոյ եւ ուղղափառութեան իւրոյ, ստանել ի ամանէ բան ճշմարտութեան։ Որով ալ էր Աստուած անփորձ պահեսցէ զինքն եւ անսասան յաւիտենից ամէն։

Դարձեալ յիշատակ է սուրբ Աւետարանս ստացող գրոյս պարոն Աղախանջիկին և ծնողաց իւրոյ պարոն Մելիք աղէ Նաշխունին եւ եղբարցն իւրոյ Միքայէլին, Սինանին, Բաղումին (այսպէս), Մէլիքճիհագին եւ քվերցն Սոլթանփաշին (այսպէս) ամէն։

Դարձեալ յիշատակ է ստացողի սորին խաչիկաղայ անուղի եւ կողակցին իւրոյ Սարիխանին։ Եւ եղբօրն իւրոյ Սինանին եւ կողակցին իւրոյ Մարիամին եւ որդոցն սոցայ Մելիքին, Պետրոսին, Խաչայէլին, Բաղումի որդի Թեւումին եւ դուստր Նաշխունին՝ սոցին եւ ի հանդերձելումն ամէն »։

Ասոր յաջորդ գաղտարկ էջին վրայ կայ՝

Բ. — Այս Աւետարանս Աղէ կին՝ բարիմիտ եւ աստուածասէր Սարիխանին է։ Աստուած իւրն և իւր ծնողաց մեղքն թողցէ այստեղ եւ ի հանդերձեալ դատաստանի՝ Յիսուսի Քրիստոսի ամէն։ Գրվեցաւ գիրս թվին ՌՃԼԲ (=1683). փոքր թվին կր դամայ ամսոյն. ա։ Զապիկար եւ գանարժան Ն.Եթ անուն տէր Յակոբ Քահանայս յիշեցէք ի Քրիստոս՝ որ գրեցի այս յիշատակարանս Նիրհան ԺԴ։

Փարիզ, 2 Յունիս 1949

---

# 21 — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին բիւ՝ չունի — ՌՃՂԷ = 1748

ԹԵՐԹՔ՝ ԻԲ×ԻԴ (=308) էջք — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×16×6 սնղմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՏՈՂՔ՝ 21։ — ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստաւոր թուղթ։ — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, կողքին վրայ ծաղկեալ տպումներով։ — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ չատ գէշ պահպանուած. կողքի քամակը ամբողջովին ինկած, թուղթերու կէսէն աւելին կարէն զատուած։ Չորս Աւետարաններն ալ ունին իրենց նախադրութիւնը, բովանդակութեան ցանկը եւ համարաբրաքանչ համարանիշերը։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան։ — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ երկու տող, առաջինը զարդագիր, եւ երկրորդը պարզ գլխագիր, կարմիրով։ — ԳԻՐ՝ հաստարակ բոլորագիր։ — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ մարդագիր, կենդանագիր, թռչնագիր եւ զարդագիր, հասարակ ծաղկումով։ — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴՔ՝ բազմաթիւ, միջակ ծաղկումով։ — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններուն համար, անյաջող, պարզ ծաղկումով։ — ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներու, նոյնպէս անյաջող։

ԳՐԻՉ՝ գպիր Խաչատուր։ — ՍՏԱՑՈՂ՝ տիրացու Սրապիոն։ — ԾԱՂԿՈՂ՝ գրիչը։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃՂԷ (=1748)։ — ՏԵՂԻ՝ Չէյթուն։ Ձեռագրիս այժմու

*տէրն է Պր. Յարութիւն Հազարեան, Նիւ Եորք, գնած Փարիզի մէջ։*

*Մատեանս է* Աւետարան, *թղթեայ, նկարուն եւ լման։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Հատ մը միայն, ի վերջ Յովհաննու Աւետարանի* (Գլխաւոր յիշատակարան). Ա. — «*Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան և միաստուածութեան...։ Որ պընդագոյն խորհրդեամբ բարեպաշտ ոմն եւ երկիւղած յԱստուծոյ... (անունին տեղը բաց ձգուած)։ Շնորհին Աստուծոյ յանկ եհաս աւարտեցաւ քառավտակ գետարուխ սուրբ Աւետարանս ի յերկիրս Գերմանիկոյ ի գիւղաքաղաքս ի* Զէյթուն։ *Ընդ հովանեաւ* Ս. Աստուածածնին *եւ սրբոյն* Թէոդորոսի զինւորին *եւ* սրբոյն Պարսամայ ճգնաւորին *եւ այլ ամենայն սրբոցս որ աստ կան ի յօգնութիւն հայկազեան սեռի։ Ի կաթողիկոսութեան Կիլիկեցւոց* տէր Միքայէլին *եւ յաջորդութեան մերոյ գաւառի* տէր Կարապետ վարդապետի։ *Ի թվին Հայոց ՌՃՂԷ* (= 1748)։ *Բայց գրեցաւ եւ ծաղկեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ հող եւ փոշի նուաստ սուտ երիցու եւ մեղսամած գրչի եւ ստացողին խմոյ* խաչատուր դպրի։ *Եւ խնդրեմ սուրբ Աւետարանիս հեզահոգի եւ բարեսէր ընկերիչ եւ* տիրացու՛ Սրապիոնին, *զոր եղ յիշատակ ի* սուրբ Քառասուն Մանուկ եկեղեցին, *վասն իւր եւ վասն ծնողացն եւ ննջեցելոցն յիշելիք՝ ամէն։ Արդ աղաչեմ զամենեսեան որք հանդիպիք սմա, յիշեսջիք ի Քրիստոս զստացօղս սուրբ Աւետարանիս ի հայոյ արդեանց. յիշատակ զվերոյիշեալ* տիրացու Սրապիոնն, *եւ զհայրն իւր զ*Արութինն *եւ զմայրն՝* Եղիսէն *եւ զմեծ պապն զմահտեսի* Յովասափն *եւ զ*Սառայն, *եւ զքոյրն իւր զ*Թմլոյն։ *Յիշեցէք եւ ասէք Աստուած ողորմի՝ ամէն*»։

Բ. — *Ասոր կը յաջորդէ՝ երկտող. Թվին Հայոց. ՌՄԲ* (=1753)*ին, ի ապրիլ Լ.ին։*

Փարիզ, 4 Յունիս 1949

---

# 22.— ՄԱՍԵՐ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Հին թիւեր՝ չունին — ԺԳ-ԺԷ դա՞ր

Ա. — 40×30 *սնգմ. մեծութեամբ, մագաղաթեայ* 12 *թերթ,* 24 *էջերով, հնագրուշմ երկաթագիր մեծագիր Աւետարանի մը նկարազարդ ու ծաղկուն թանկագին մասունքներով, բոլորն ալ Ղուկասու, որ կը սկսի՝ « ...եթող կինն զսափորն եւ չոգաւ ի քաղաքն... յետ այսորիկ գնաց Յիսուս յանկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերիայ։ Եւ զհետ երթային նորա ժողովուրդ բազում զի տեսա...* »։

*Այս թանկագին մասունքները ունին համաձայնութեան վեց տախտակներ միայն, յաջորդական էջերու վրայ։*

*Առաջին էջը երեք սիւներու վրայ հանգչած զմրխթարդ մեծադիր շատ պարզ խորան մըն է, գագաթը՝ վիզերնին իրարու պլլուած երկու թռչուններով։ Քիչ մը վարօք՝ աքաղաղ մը եւ հաւ մը դէմ դիմաց։*

*Երկրորդ էջը, նոյնպէս, երեք սիւներու վրայ հանգչած պարզ խորան։ Վերեւը՝ գլուխնին թեւերնուն տակ գալարած երկու թռչուններ ու մէջերնին կարմիր բրուկով երկու այլ թռչուններ։*

*Երրորդ էջը գրեթէ նոյնն է երկրորդին, գոյներով ու չափերով, միայն բաժակ մը կայ երկու թռչուններուն միջեւ։*

*Չորրորդ էջը շա՛տ աւելի հետաքրքրական է։ Հնգկահաւի նմանութեամբ երկու թռչուններու ձագերն են որոնք ջուր կը խմեն բաժակէն։*

*Հինգերորդ էջը, նոյնպէս, սիւնազարդ պարզ խորան մըն է, վերեւը՝ ագռաւի նման երկու գոյն թռչուններով։ Սիւներուն մէջ համաձայնութեան համարանիշերը շատ աւելի խիտ են։ Աջ լուսանցքին վրայ նախնական բոլորագրով մէկուկէս տող գրութիւն մը կը նշմարուի՝ որ սակայն մաշած ըլլալուն չի կարդացուիր։ Իսկ ստորին լուսանցքին վրայ կը կարդանք « Յիսուս Քրիստոս ողորմեա Նորագոյի պատկերիս նկարիչ (°)... (երեք բառ մաշած) մեծի ողորմութեան* »։

*Վեցերորդ տախտակը, նոյնպէս զմրխթարդ պարզ խորան մըն է, վերեւը իրարու վիզի պլլուած երկու թռչուններով եւ զիրենք նախանձի աչքով դիտող աքաղաղներով։*

*Աւետարանի մասերս ունին նկարներ, ո՛րքան անյաջող՝ նոյնքան հնատիպ։ Առաջինը՝* Յիսուսի Երուսաղէմ մուտքն է։ *Յիսուս նստած է երկար ու տձեւ ոտքերով եւ գլուխը դէպի գետին հակած չէկ իշու մը վրայ։ Հագած է գորշագոյն ներքնոց եւ կարմիր կիսագգեստ։ Ետեւէն, գոյն չափի վրայ, կու գան առաներկու աշակերտները։ Առջեւը, ճանապարհին*

վրայ, բազմութիւն մը հրեայ երիտասարդներու, ծերերու եւ երիտասարդներու՝ որոնցմէ ոմանք ձիթենիի ճիւղեր ունին։ Ետքուն ժանտաթզենիի մը վրայ ելած է Զաքէոս, մանկական մարմնով, գլխով ու հանդերձով, որ խոր հետաքրքրութեամբ Յիսուսի կը նայի։ Քիչ մը հեռուն Զաքէոսի երկյարկանի, պատշգամով ճոխ տունը։ Երկրորդ նկարն է՝ Վերջին ընթրիքը։ Զուտնէ, ընդարձակ սեղանի մը շուրջ՝ միաշարք բազմած են տասներկու աշակերտները՝ որոնց ամէնէն վերջինը՝ Յուդայ, սպիտակ մազերով, դառնօրէն կ'արտասուէ։ Սեղանին վրայ, երեք ամաններու մէջ դրուած են՝ խորոված գառնուկը, ձուկ եւ աղցան, նաեւ տասներեք նկանակ։ Յիսուս նստած է սեղանին գլուխը, անջատ եւ քիչ մը հեռու ու աջ ձեռքով կ'օրհնէ սեղանն եւ սեղանակիցները։ Սրահին ձեղունէն կախուած են դեղնորակ երեք զարդ լամպարներ։ Նկարին վերեւը կը կարդացուի՝ « Տէր Յիսուս էր վերնատունն երկոտասան առաքելովք ի խորհուրդ ընթրեաց »։ Երրորդ նկարն է՝ Յիսուսի մատնութիւնը՝ « Համբուրէ Յուդայ »։ Մատնիչը զՅիսուս յանկըրծ ու բռնակէն սեղմօրէն գրկած, զէյն [illegible] կը համբուրէ։ Յիսուսի աջ եւ ձախ կողմերը արդէն խռնուած ու պաշարած են սուրերով եւ կոյթիններով զինուած բազմամարդ ամբոխ։ Չորրորդ նկարն է Յիսուս խաչին վրայ։ Նկարիս վերեւի երկու անկիւններուն վրայ կ'երեւան երկու հրեշտակներ, խաւարած արեւ եւ լուսին։ Յիսուսի երկու կողմերը կ'երեւան մին երիտասարդ եւ միւսը ծեր երկու անձեր, Յովսէփ եւ Ղունկիանոս՝ որոնք իրենց հասակէն շատ աւելի երկար վառած մոմեր կը բարձրացնեն։ Աւելի անդին՝ Տիրամայր եւ Յովհաննէս։ Վերին լուսանցքին վրայ՝ երկաթագրով՝ Զգեղազարդողս յիշեսջիք ի Քրիստոս։

Աւետարանիս այս ընկորներուն երկաթագիրը միաձեւ եւ խնամուած գրութիւն է, անթափ մելանով՝ որ դարեր յետոյ այսօր ալ կը կարդացուի շատ յստակ կերպով։ Մագաղաթն ալ լաւ ընտրուած է եւ շատ խնամքով պատրաստուած։ Համաձայնութեան խորանները հայ գրչագրական ծաղկումի սկզբնական շրջանի գործեր են՝ երբ տակաւին ծաղկողը դիւրութիւն չունէր իր մօտ ունենալու ծաղկենկար ձեռագիր մատեաններ եւ արուեստի հանդէպ ունեցած իր սէրը խառնած էր իր միտքի յղացումներուն։ Աղքատ են նոյնպէս իր ընտրած թռչուններն ու բոյսերը։ Օրինակ՝ ժանտաթզենին բացարձակապէս իր երեւակայութեան արդիւնքն է, վասն զի այդ բոյսը գոյութիւն չունի Հայաստանի մէջ։ Չորս նկարներն ալ, իբր արուեստ, թէեւ զուրկ են յաջողութենէ, բայց եւ այնպէս կը կրեն հին դարերու նկարչական արուեստի հարազատ դրոշմը։ Նկարիչը, բոլորին մէջ ալ ի յայտ կու գայ նոյն բարեպաշտ անձը՝ որ ծանօթ է Նոր Կտակարանի պատմութեան եւ որ անկասկած իր առջեւ ունեցած է հին նկարներ ալ, բայց փափաքած է ինքնատիպ մնալ։

Այս մասունքները կը պատկանին ԺԱ-ԺԲրդ դարուն Հայաստանի մէջ գրուած ու ծաղկուած մագաղաթեայ երկաթագիր Աւետարանի մը։

Բ. — 32×21 սնդմ մեծ, գեղեցիկ խորանով մը զարդարուած, նոյնպէս սիրուն լուսանցազարդով ու սկզբնատառով, թղթեայ՝

Երանելւոյն Սարգսի շնորհալից վարդապետի արարեալ՝ Մեկնութիւն Առաջին թղթոյն Պետրոսի։ Աւգնեա Աստուած. — Բանք աստուածայինք արգիւնաւորք են եւ շահաւորք։ Եւ ի ձեռն քաջաց եւ առաքինեաց... Էջի ստորին լուսանցքին վրայ կը կարդացուի՝ Գիրքս Վարագայ Սուրբ Նշանիս է։ Նոյն ձեռագրէն ուրիշ թերթ մը, միշտ ընտիր բոլորագիր եւ նոյն ոճի խորանով՝

Երանելւոյն Սարգսի շնորհալից վարդապետի արարեալ՝ Մեկնութիւն Առաջին թղթոյն Յովհաննու Առաքելոյ՝ ի փառս Քրիստոսի։ — Ի փոքունս մեծամեծացն յանդգնելոց չէ՛ն առանց կարծեաց դատապարտութեան։ Իսկ փոքուցն... Անջատ թերթի մը վրայ, նոյն Աւետարանի մասը, բաւական յաջողութեամբ կ'երեւի « Սուրբ առաքեալն Յուդայ », ձեռագրի. ասոր ձախ կողմը՝ Սուրբ վարդապետն Սարգիս. կանաչ, ծաղկենկար, երկար պարեգօտով, կարմիր ու վեր հանգրիճուած վերարկուով եւ ոսկի ճառագայթով մը ամբողջուած մութ մանիշակագոյն փիլոնով, գլուխին ամփոփ սեւ վեղար։ Կանգնած Յուդայ առաքեալի դէմ, անոր կ'ընծայէ իր ոսկեկազմ Մեկնութիւնը։ Վարօք, երկուքին մէջեւ, փոքրագիր, համեստունակ, « Կիրակոս՝ ստացող սուրբ տառս », երիտասարդ, սեւ մօրուքով, կարմիր պարեգօտով, կանաչ շուրջառով եւ ամփոփ փոքր վեղարով։ Ուրիշ անջատ թերթի մը վրայ, Յիսուսով նկարազարդուած շատ յաջող խորանի մը տակ՝ Պետրոս առաքեա՞լ՝ որուն դիմաց կանգնած Սուրբ վարդապետն Սարգիս՝ կը կարդայ իր Մեկնութիւնը։ Շնորհալի հո՛ս ալ նոյն հանդերձները ունի. գլխուն ու դէմքին մազերը բոլորովին ճերմկած եւ վեղար չի կրեր։ Երկուքին մէջեւ, Առաքեալին առջեւ ծունր նստած վիճակով ու ձեռնամած, կ'աղերսէ՝ Կիրակոս ստացողն. վեղարը հանած եւ դէպի ետ ձգած։

Յաջորդ էջին վրայ՝ Յիշատակարան, սկիզբը՝ պակասաւոր. « ...եւ յասորի լեզուէ Քարաշիրաւ կոչի։ Անդ, բնակեաց, եւ անդ աւարտեալ զկեանս իւր. որ եւ անդանաւր կան նշխարք ոսկերաց նորա եւ շնորհաւք յամենայն տեղիս։

Ահաւասիկ ցուցաւ փափագաւղաց եւ խնդրաւղաց յայտնի լինել ժամանակն, եւ կենցաղավարութիւն կենաց նորա։ Եթէ առ ո՞ վարժեցաւ, եւ թէ ո՞յք էին ընկերք նորա, եւ տեղին՝ ուր պանդխտեցաւ եւ գրեաց։ Ի սոյն ժամանակս էր, եւ շատաշնորհն, Ներսէս Լամ(բ)րոնացի որ էր որդի եղբաւր տեառն Ներսիսի կաթողիկոսի։ Սա արար Մեկնութիւն Սաղմոսացն Դաւթի, եւ Պատարագին Խորհրդոց եւ Առակացն Սողոմոնի, եւ Երկոտասան Մարգարէիցն, եւ Համառաւտ Յովհաննու Աւետարանչի։ Եւ թարգմանեաց յունականէն ի մերս զՄեկնութիւն տեսլեանն

Յովհաննու։ Եւ Գրիգոր գերագոյն վարդապետն, Սիսուացին։ Է՛ր եւ յարեւելս՝ սարկաւագն Հաղբատեցին եւ Դաւիթ՝ որդի Ալաւկայ՝ եւ այլք բազումք։

Արդ՝ եւ մեք սիրողք Քրիստոսի, յորդորեսցուք զանձինս մեր՝ արթունս եւ պատրաստս լինել եւ յաւժարամիտ սիրով ունկնդիր լիցուք աստուածական հրամանացս։ Եւ գիտեմ երթիցուք կենդանի եւ կենդանարար բարբառոյ սոցա։ Զի սոքա են մեզ առաջնորդ կենաց, եւ յո՛յս փրկութեան։ Սոքա են մեզ դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան։ Որով եւ զմեզ զամենեսեան բարեխաւսութեամբ սոցա՝ արժանի արասցէ Քրիստոս, վերին կոչմանն եւ երկնից արքայութեան։ Մա՛նաւանդ զստացող յուսադարդ գրոցս, զԿիրակոս սրբակրաւն աբեղայ հանդերձ ծնաւղաւք եւ հարազատաւք, եւ ամենայն արեան մերձաւորաւք։ Նա՛եւ՝ եւ զմեղսամած գծողս՝ զԿիպճատխոս սուտանուն աբեղայ, հանդերձ ծնաւղաւք իմովք եւ հարազատաւք՝ ամէն։ Կարողացո՛ Տէր իմ Յիսուս՝ զտկարս ոգով, ելանել ի գագաթն աստուածունակ լերինս իմանալոյ, մաղթանաւք մաւր քո ամենաւրհնեալ սուրբ կուսին Մարիամու Աստուածածնին, որոյ այսաւր զամենաւրհնեալ փոխումն կատարեցաք։ Զեզիսէն եւ զմայրն իւր զՇամչէն յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն։ (Հմմտ. Սիսուան, էջ 408բ։ Տաշեան ցուցակ, էջ 338բ։ Հալէպի Ա. ցուցակ՝ էջ 77բ)։

Այս Յիշատակարանը՝ որ նախնական գաղափարինն է, իր բոլորագիր Մեկնութեամբ, հաւանաբար գրուած է ԺԷրդ դարուն։

Գ. — Բոլորագիր թղթեայ Աւետարանի մը մէկ թերթը, պատառատուն, Յովհաննու առաջին էջով եւ իր « Գրաւխորոն »ի բաւական յաջող նկարով։ Կոնակը՝ երկու յիշատակագրութիւն՝

ա) Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զբարեմիտ եւ զհաւատարիմ ճահամայն տէր Վարդանն եւ զիւր ծնողն՝ տէր Վարդան եւ զՇամամն եւ կողակիցն՝ Գօզալին եւ որդոցն՝ Գրիգորին, կողակցուն՝ Գօզալին, որդոյն՝ Ղազարին, խաճօին, կողակցուն՝ Գօզալին (երեք ուրոյն Գօզալներ), փոքր որդոյն Աբրահամին. յիշեցէք եւ....։

բ) Զաստուածարեալ եւ զլոյսներանեան զաբրաւէր կրաւնաւորին զՅովհաննէս եւ զխաչատուր՝ որ առիթ եղեն ստանալոյ սուրբ Աւետարանիս, յիշեսջիք ի Տէր։

Սա այ հաւանաբար ԺԷրդ դարու գրչութիւն, որ ունի իր չորս նկարները, անջատ թերթերու վրայ, բուն գրչութիւնը կորսուած։

1. — Յիսուսի թաղումը։ — Յիսուսի պատանքուած մարմինը Նիկոդեմոսի եւ Յովսէփ Արեմաթացիի բազուկներուն մէջ կը հանգչի։ Վերեւը՝ Մարիամ, Յովսէփ աստուածահայր եւ Յիսուս, շատ ինքնատիպ տարազներով։ Նկարիս աջ կողմը ուրիշ հանդիսարան մըն է։ Յարուցեալ Յիսուս, Ադամի ձեռքէն բռնած՝ որուն ետեւն է Եւա, դուրս կը հանէ դժոխքէն։ Յիսուս ձախ ձեռքին մէջ բռնած երկկողեան բարձրագիր խաչ մը։ Վերեւնին երկու հրեշտակներ կ'առաջնորդեն։

2. — Յիսուսի յարութիւնը։ — Երկու հրեշտակներ՝ « մի ի սնարից եւ մի յանոտից գերեզմանի »։ Յարուցեալ Յիսուս կ'օրհնէ իրեն մօտեցող չորս իւղաբեր կիները՝ որոնցմէ առաջինը մէկ ձեռքով բուրվառ եւ միւսով խնկանօթ մը բռնած է։ Կիները ունին երկար շրջազգեստ։ Թափուր գերեզմանին առջեւ, կէս քուն կէս արթուն վիճակով, կ'երեւին կարմիր գլխանոցով եւ կապոյտ զգեստով վեց պահակներ, նիզակով ու վահանով զինուած։

3. — Մատթէոսի երկաթագիր Աւետարանի մը սկիզբի թերթը, հնագրուչմ խորան, երկար թռչնազարդ, սկզբնատառ եւ միատող զարդագիր վերնագրով։ Հանդիպակաց էջին վրայ, չորս աւետարանիչները, մէկ կարգով, բոլորին ձեռքերուն մէջ կարմրապատ Աւետարան։ Հանդերձնին ու գլխանոցնին մասամբ հրէական բարբիններ յիշեցնող։

4. — Յաջորդ էջերէն մէկը, միջտ ապակիի տակ պաշտպանուած, նոյն Մատթէոսի Աւետարանէն է « ...Յուդայ ծնաւ զՓարէս... Ովբեայ ծնաւ »։ Մեծկակ բոլորագրով, երկսիւն։ Կոնակի էջը կը ներկայացնէ Երկոտասան Առաքեալները, մէջտեղնին Մարիամ, վերեւնին Յիսուս՝ երկու հրեշտակներու մէջ։ Հետաքրքրական են առաքեալներու թէ՛ դիմագիծները եւ թէ հանդերձանքնին։ Մէջերնին կը տեսնուին կանացի դէմքով չորս առաքեալներ։

Փարիզ, 12 Օգոստոս 1949

## 23·— ԺԱՄԱԳԻՐՔ

Հին թիւ՝ չունի

ԺԳրդ դար, 1275*

ԹՈՒՂԹՔ՝ 190 (= 380 էջք). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×12×4 սնդմ.. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՏՈՂՔ՝ 13.— ՆԻՒԹ՝ թաւիշի նման նուրբ, մաքուր մագաղաթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, կողքերուն ներսի երեսները ծածկուած բաց վարդագոյն եւ կանաչ գծերով մետաքսէ նուրբ կերպասով, իսկ արտաքին կաշեպատ երեսները՝ զարդական տպագումներով.— ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ հատ մը միայն, ի վերջ.— ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ արքայական այս շատ սիրուն ու միանգամայն հետաքրքրական ժամագիրքը, հակառակ իր բարձր հնութեանը, պէտք է ըսել որ բաւական լաւ պահպանուած է։ Գրուած ու ծաղկուած է ԺԳրդ դարուն Սսոյ կամ Արքակաղնի վանքի մէջ Սսեցան կրոնաւորի կողմէ։ Ըստ գրչի յի-

չատակարանին, Ստեփան Վահկացի ժամագիրքս գրած է Լեւոն Թագաւորի խնդրանքով, որդի Հեթումի, որդի Կոստանդինի եւ մայրենի ազգաւ որդի Զապէլ Թագուհւոյ, որդւոյ Լեւոնի Թագաւորի Հայոց առաջնոյ յիշատակաց», որ է Լեւոն Բ. Թագաւորի իշխանութեան օրով (1270-1282)։ Կարելի է ենթադրել որ ձեռագրիս թուականը գրուած էր յիշատակարանիս կորսուած թերթերուն մէջ, որով գրչութեան ճիշդ թուականը պէտք է ընդունիլ 1274՝ փոխան 1224ի։ Ձեռագրիս մէջէն դժբախտաբար կը պակսին բազմաթիւ թուղթեր. այսպէս 12, 94 եւ 102 էջերէն յետոյ թուղթեր կը պակսին, պատահմո՞ւնք թէ յատկապէս զոգցուած մանրանկարներուն համար։ Էջ 115էն յետոյ կը պակսին երկու թուղթ եւ 108էն յետոյ՝ չատ աւելի։ 83րդ եւ 103րդ էջերէն յետոյ, կը պակսի ամբողջ թուղթ մը 12 էջնոց, իսկ 107րդէն անդին կը պակսի նոյնիսկ երկու թուղթ։ Բարեբախտաբար բոլոր այս պակասները կարելի է լեցնել նախընթաց էջերու օգնութեամբ և գիտութեամբ գաղափար մը կազմել բնագրին ամբողջութեան վրայ. — ՍԿԶԲՆԱՏԱՌԹ, ՎԵՐՆԱԳԻՐԹ՝ սկիզբի խորանին տակ, սկզբնատառը չատ նուրբ գունազարդ թռչնագիր, իսկ վերնագիրները երեք տող չատ յաջող երկաթագիր, ամբողջովին ոսկեզեղ. — ԳԻՐ՝ սեւ անթափ ընտիր մելանով յաջող բոլորագիր. բոլոր համարները ունին ոսկեզեղ երկաթագիր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԹ՝ 150 հատ, բոլորն ալ չատ սիրուն եւ յաջող ծաղկումներով, ընդհանրապէս ոսկիով ու լազուարդով դրուագուած. — ԽՈՐԱՆ՝ հատ մը միայն, փոքրագիր, սկիզբը, ոսկի յատակի վրայ լազուարդ սիրուն փարդակներով. — ԿԻՍԱԽՈՐԱՆԹ՝ երեք հատ, 94րդ էջի վրայինը դժբախտաբար չատ ուչադրութեամբ կտրուած հանուած ու տեղը թուղթ մը փակցուած է. — ՆԿԱՐԹ՝ երկու հատ. առաջինը սկիզբը, մեծագիր, տաճարի մը ներսը՝ որուն հայրապետական աթոռին եւ խորանին միջեւ կանգնած Ս. Ներսէս Շնորհալի, կ՚աղօթէ գլխահակ եւ ձեռնամած։ Հայրապետը՝ որ ոսկեզեղ նեմբուս ունի, գլխարաց է, առանց վեղարի. եւ հագած է յունաձեւ գունաւոր չապիկ, ծիրանագոյն փորուրար եւ խաչանիչ սպիտակ եմիփորոն։ Երկրորդ նկարը, յէջ 19, նոյնպէս մեծագիր է եւ չատ հետաքրքրական։ Կը ներկայացնէ ձեռագրիս ստացողը, Լեւոն արքայ, իր պալատի մատրան մէջ, Ս. Սեղանին առջեւ ծնրադիր, իր առօրեայ աղօթքի ժամուն։ Կարմիր, ոսկի երիզով ծածկոցով Ս. Սեղանին վրայ կ՚երեւայ ոսկի Ս. Սկիհը, մէջը Յիսուս Մանուկի փոքրագիր սիրուն նկարով, ոսկի Օլմբուսով եւ աջ ոտքը դէպի գուրս, իր առջեւ ծնրադիր թագաւորին։ Թագաւորը երկար մօրուսաւոր է, այեխառն, երկար հեղաւով, գլուխը ճերմակ գդակով։ Հագած է արքայական ծիրանի պարեգօտ, վրան կարմիր ծաղկենկար եմիփորոնով։ Թագաւորին ետեւը կանգնած է, հաւանաբար արքունի դրան մարաջախտը, մօրուսաւոր, գլուխը նոյն սպիտակ գդակով, ձեռքերուն վրայ բռնած թագաւորական թագը։ Հագած է ծիրանի պարեգօտ, վրան կանաչամոյն թիկնոց։ Նկարին յատակը ոսկեզեղ է եւ թագաւորական ամպիոնէն մինչեւ մատրան սեղանը երկարած է կարմիր ծալլուած փարագոյր մը։ — ՄԱՆՐԱՆԿԱՐ՝ հատ մը միայն, 200րդ էջին վրայ, աջ լուսանցքին մէջ, որ կը ներկայացնէ ոսկեզեղ նեմբուսով սուրբ մը՝ որ կանաչ չապիկի վրայ ունի կրէ ծիրանագոյն չուրջառ եւ ոսկի խաչանիչ սպիտակ եմիփորոն։ Ձախ ձեռքին մէջ բռնած է ոսկեկազմ Աւետարան, որուն վրայ երկարած է աջ ձեռքը — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս Վահկացի — ՍՏԱՑՈՂ՝ Լեւոն Բ. Թագաւոր Հայոց։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1275՞։ — ՏԵՂԻ՝ անյայտ. Սի՞ս։ Ձեռագրիս այժմու տէրն է՝ Պր. Գ. Գէորգեան, Փարիզ։

Մասնաւոր է ժամագիրքս մագաղաթեայ, միջակ գիրքով եւ նկարազարդ ու արժէքաւոր՝ իբր արքայական մասեան։ Կը բովանդակէ՝

1. — Ոսկեզեղ յատակի վրայ լազուարդ եօթը վարդեակներով ծաղկուած եւ վերեւը զոյգ մը ագռաւներով զարդարուած սիրուն խորանի մը տակ, արքայական այս ժամագիրքս կը սկսի « Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ աղաւթք ըստ ԻԴ. ժամու աւուրն տունս ԻԴ. Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ... (ոսկեզեղով ու լազուարդով խառն երեք տող երկաթագիր-վերնագիր, նոյնքան սիրուն ու նուրբ թռչնագիր սկզբնատառով մը)։ Առաջին տունը ամենայն ժամագիրքերով ունի « ...եւ ողորմեա քո արարածոցս եւ ինձ բազմամեղիս », իսկ յաջորդ երկրորդ տունը ունի « ...եւ ողորմեա՛ ինձ մեղաւորիս »։ Երրորդ տունը առաջինէն քիչ տարբերութեամբ ունի « ...եւ ողորմեա ինձ բազմամեղիս », առանց քո արարածոցի։

Չորրորդ տունին « եւ համբարձար փառօք առ Հայր քո մէջ կը պակսի փառաւքը։

Վեցերորդ տունը ունի « Անմեղ բնութիւն »՝ փոխանակ անեղի։

Եօթներորդ տունը ունի « ի դպրութեան կենաց »։

Ութերորդ տունը ունի՝ « քննող գաղտնեաց... ինձ մեղաւորիս զոր ի ծննդենէ առաջանին, ...պղայարանաւք խմոյք եւ անպատճառ մարմնոյս... »։

Իններորդ տունը ունի « ոչ ախորժելով » ... եւ կը պակսի լինելը։

Տասներեքերորդ տունին մէջ կը կարդանք « յատել եւ առնել զկատուիրանս քո սուրբ... »։

Տասնըհինգերորդ տունը ունի « ամ քո պահապան եղիցի… »:

Յաջորդ տունը ունի՝ « Աստուած իմ որ բանաս զձեռն քո եւ լցուցանես զա… »:

Տասնըեօթներորդ տունը ունի «… եւ զործեցից զարդարութիւն եւ հաստեցուցից զկամս արարչիդ ընդ արարածս եւ ող »:

Քսաներորդ տունը ունի՝ « բարերար ակր բայի հրեշտակի յանձն արտացես զիս… այսոցն որ ի ներքոյ երկնից… »:

Լոյս ճշմարիտ տունը չունի Քրիստոս:

Յաջորդ տունին մէջ պակասութիւններ կան չրջուած. « Դատաւոր արդար, մի՛ մատներ զատաստան ընդ ծառայիս քո, յորժամ գաս փառօք Հօր դատել… »:

Վերջին տունը ունի՝ « …Սուրբ Երրորդութեանդ եւ մի աստուածութեանդ այժմ եւ… »:

2. — Էջ 21րդ՝ Նուրբ կիսախորանի մը տակ, ոսկեզօծեալ եւ կիտուածի հանգոյն խաչանիշ լուսանցազարդի մը քով եւ թռչնագիր նոյնքան սիրուն սկզբնատառով մը՝ ունի Նորին յամենասուրբ երրորդութիւն դաւանութիւն: Լեւոն արքայ կ'երեւայ հանդիպակաց 20րդ էջի վրայ մեծադիր մանրանկարով մը, թագաւորական ճոխ զգեստով, կարմիրով ծածկուած սեղանի մը վրայ դրուած ոսկեայ ցած սկիհի մը առջեւ՝ որուն մէջ գլուխը լուսապսակով մերկ մանուկ մը կ'երեւայ նստած վիճակով, աջ ոտքը սկիհէն դուրս կախած, իսկ ձախ ձեռքի հինգ մատները սկահէն տակ երկարած, ծնրադիր, ձեռնամած, աղերսական, Դաւանութիւնը արտասանողի ձեւի մէջ, ետեւը զօրավա՞ր մը, ձեռքերուն մէջ արքայական թագով:

3. — Ասոր յաջորդող գիշերային ժամերգութեան՝ որուն սկիզբը անպայման խորան եւ թերեւս նկար ալ կար՝ առաջին երկու թերթերը ինկած կամ զողցուած են ու կը սկսի « …եա եւ Տէր օգնական էր իմ »: Յաջորդ տուներուն մէջ կը նշմարուին հետեւեալ տարբերակները.

Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զաւրաց ի նոցանէ…:

Եղին զիս ի գուբս ներքինս:

Միթէ մեռելոց յանդիցես զարմանալիս կամ բժիշկք յարուցանիցեն, խոստովան առնիցեն առ քեզ:

Արշաւի հեռի են արեւելք յարեւմտից, այսպէս հեռի… »

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, (կը պակսի)՝ այնպէս գթասցի… »

Բայց ողորմութիւն տեառն (կը պակսի մնայ) յաւիտենից մինչեւ յաւիտեանս…:

Տէր զերկինս պատրաստեաց…:

Աւրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նորա, զաւրք զաւրութեանց որք…:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խաւսեցայ յամենայն ի գործս քո…: Զի նուաղեաց:

4. — Նոյն, բայց աւելի մանր ոճի, կիսախորան, լուսանցազարդ եւ զարդագիր սկզբնատառով կը սկսի, էջ 40, Երգ գիշերային պաշտամանց՝ զկնի Տէր եթէ շրթանցն (կարմիրով). — Յիշեցաք ի գիշերի զանուն քո Տէր… (խազաւոր): Զարթիչները կը սկսին փառագիր զարդագրով մը, առնելով իր լուսանցազարդը: Նոյն զարդագիրն ու լուսանցազարդը՝ Զարթիր, ընդէ՞ր ննջեսին, աւելի բարդ խազաւոր: Ապա՝ Ե եւս խաղաղութեան՝ առանց ալէլուեաներու:

5. — Զարթուցեալքս ամենեքեան… զորոյ խաչին մեծ եւ կարող զաւրութիւն, ի պախպանութիւն անձանց հաւա…:

6. — Դիտելի է որ Աշխարհ Ամենայնն ու Աստուած յաւսյն կը պակսին եւ նոյն էջին վրայ անմիջապէս կը սկսի « Մարտիրոսաց եւ ապաշխարութեան՝ Հարիւր Տէր ողորմեա ի թիւ. կիւրակէից եւ տէրունական տօնից՝ երեք Տէր ողորմեա՝ եղանակաւ (կարմիրով) Զքէն գոհանամք Տէր Աստուած մեր.. ամբողջովին յետոյ կը պակսի եւ պահեան:

7. — Քարոզ երանել կանանց եւ իբրեւ զի բարոյ (կարմիրով). — Վասն ի վերուստ խաղաղութեան…:

8. — Էջ 60. — Զկնի թագաւորին՝ ասեն ազբա: Քարոզ երկինք պատմեն եւ Տէր ապաւէնի (կարմիրով): Վասն ի գիշերի…:

9. — Էջ 62. — Քարոզ՝ Մի նախանձիր կանոնին եւ խոստովանի. — Վասն ողջելոյ…:

10. — Քարոզ՝ Ողորմեա կանոնի եւ նեղութենի (կարմիրով). — Վասն զատնելոյ եւ իր աղօթքը՝ Գոհանամք զքէն...։

11. — Էջ 70. — Երգ երից մանկանցն՝ առանց սկիզբի մաղթանք եւ քարոզին. — Աւրհնեալ ես Տէր Աստուած հարցն...։

12. — Էջ 83. — Քարոզէ սարկաւագն՝ Եւ եւս խաղաղ... (կարմիրով) Ընկալցի ամենեքեան...։ Այս մաղթանք՝ Յարութեան, Մարտիրոսաց եւ Ապաշխարութեան։ Մեծացուսցէ...։ Քարոզէ սարկաւագն՝ Եւ եւս խաղաղութեան (կարմիրով) Սուրբ զԱստուածածինն... Ընկալ Տէր զաղաչանս մեր զա...։ Կիւրակէին քարոզէ սարկաւագն՝ Եւ եւս խաղա... (կարմիրով) Վասն սուրբ եկեղեցւոյս չի...։ Դու ես Թագաւոր յաւիտենանս...։ Եղիցի անուն Տեառն աւրհնեալ...։ Արի Տէր աւգնեա՛...։ Այս իրարերից չորս Աւետարանները։ Փա՛ռք քեզ Տէր Աստուած մեր։ Ոչ դադարեցից Քրիստոս աւրհնել զքեզ զամենայն աւուրս...։ Քարոզէ սարկաւագն՝ Եւ եւս խաղաղութեան (կարմիրով)։ Զաւրացուցելոցս մեծաւ ուրախ...։

13. — Էջ 120. — Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մե...։ Որպէս արդար եղիցես ի բանս քո եւ յաղթեսցես ի դատել քեզ (այլուր՝ ի դատելն քո)։ Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զգաղտնիս իմաստութեամբ քով ցուցեր ինձ։ Տուր ինձ ցնծութիւն...։ Պատարագ Աստուծոյ հոգի բեկեալ...։ Բարի արա Տէր հաճութեամբ քով։

14. — Էջ 124. — Քարոզէ սարկաւագն՝ Եւ եւս խաղաղութեան (կարմիրով). — Երկրպագեմ քեզ Տէր Աստ... մատուցում զառաւաւտս այ...։ Այս սովորական մաղթանքները՝ ըստ առձեռն ժամագիրքերու։ Աւրհնեցէք զՏէր յերկ.։ Եւ ապա Փա՛ռք ի բարձունս յայսմն վայրի (կարմիրով)։ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յեր... (կարմիրով եւ թեթեւ խաղաղութեամբ)։ Ի ժողովոյն մինչեւ ցայս ասացաւ։ Աւրհնեմք զքեզ եւ զով... (Եւ յամենայն ժամը կը պակսի)։ Փա՛ռք պատշի եւ Երկր...։ Սարկաւագն՝ Աստացուք ամենեքեան միաբանութեամբ...։ Վասն քահանայից, սարկաւագաց, վարդապետաց, դպրաց...։ Յաղագս հոգւոյն հանգուցելոցը նոյնութեամբ կրկնուած է, երկրորդը խաղաւոր, հաւանաբար երգուելու համար։ Մաղթանքին սկիզբը Բարեխօս ունիմքը կը պակսի ու կը սկսի՝ Սուրբ զՄարիամ զԱստուածածինով եւ ունի... մարգարէն, բարեյաղթող սուրբ վկայն։

14. — Էջ 140. — Մննդի քարոզէ սարկաւագն՝ Մայր սուրբ եւ սքանչելի լուսոյն՝ որ զԱստուածն ամենայն յաւիտենից յորովայնի քում կրեցիր...։ * Լուր Տէր եւ ողորմեա՛։

15. — Էջ 144. — Քարոզ առաքելոց եւ մարգարէից (կարմիրով). — Աստուած մեծ հզաւր, փառաւորեալ, լուսաւորիչ սրբոց եւ ի սուրբս հանգուցեալ. զճգնութիւն սրբոց... (բոլորը ձայնագրուած)։

16. — Էջ 151. — Սրբոց Հայրապետացն է քարոզս. — Առաջնորդք եղեն մեզ ուղիղ գնա... (նոյնպէս ձայնագրուած)։

17. — Էջ 153. — Պահոց քարոզէ սարկաւագն. — Փառաւորեսցուք զամենակալն Աստուած...։ Գոհանամք զքէն Տէր Աս...։ Միւսան ասասցեն ըստ պատշաճի աւուրն երիցս անգամ (կարմիրով) Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր... որ յայտնեցար... որ խաչեցար...։ Փառաւորեալ միշտ...։

18. — Էջ 163. — Քարոզէ սարկաւագն՝ Վասն լսելի լինելոյ...։ Զկնի մանկանցն քարոզէ սարկաւ՝ Վասն խաղաղու...։ Սուրբ ես Տէր Աստուած մեր, հզաւր եւ...։ Պահոցն սաղմոս՝ Բանից իմոց ունկ... (յաջորդ թերթերը՝ Արեւագալի՝ ինկած ու կորսուած են եւ կը սկսին Ճգնաւորք Աստուծոյ փա...։ Քարոզէ սարկաւագն՝ Սուրբ Հոգին...։ Սուրբ ես Տէր եւ ի սուրբս հանգուցեալ...։ Յիշեա Տէր զողորմ...։ Բարեբար ե բազումողորմ...։ Սաղմոս՝ Աստուածածին

---

*Ինչպէս բոլոր հին ժամագիրքերու, այնպէս ալ հոս Լուր Տէր եւ ողորմեա՛ է. եւ Մայր սուրբ բարեխօսեա՛ն նորամուտ է այժմու ժամագիրքերու մէջ։ Հանգուցեալ Սահակ Բ. Կիլիկիոյ կաթողիկոս, որ քննած էր բազմաթիւ ժամագիրքեր եւ աւանդապահ էր, «Լուր Տէր»ը կը հրահանգէր. ինչպէս որ հոս ալ, մաղթանքի սկիզբը կը պակսի Բարեխօս ունիմք։

կամ Նայեաց *առի՝ Աստուած Աստուած իմ…: Լոյս արարիչ լուսոյ… (զա՛րձեալ պակաս թերթեր)։ Զատուստ ագաթն եւ գրա…: Տէր հովուեսցէ զիս…:* Բանայք ասեն շարական՝ *Ճանապարհ եւ ճշմարտութիւն… (Դիտելի է որ* Արեւագալի *չորս երգերուն չորս* Յորդորակներն *այ կը պակսին, ինչ որ նորութիւն մըն է մեր տեսած ժամագիրքերուն մէջ)*։ Քարոզէ սարկաւագն՝ *Եւ եւս խաղաղութեան*։ Աղաչեցէք *զամենակալն Աստուած…: Տէր Աստուած փրկիչ մեր…: Առաջնորդ կենաց ե…:*

19. — *էջ* 192 (*կտրուած եւ հանուած կիսախորանի մը տակ*). — *Քարոզ երրորդ ժամուն եւ աղօթք նորին եւ շարական զկնի Ողորմեային։ Աւրհնեմք զքեզ Հայր ան… (յաջորդ թերթերը ինկած կամ զողցուած) խորով սրբով եւ շնորհեաց առատապէս զպարգեւս… (կը պակսի՝ Որ առա եւ զամենայն տիեզերս)։ Որ քրովբէական եւ յանպատում հանգ…:* Սաղմոս՝ *Տէր Աստուած աւրհնեալ, աւրհ…:* Քարոզէ սարկաւագն՝ *Խնդրեսցուք հաւատով։ Առաջնորդեա՛ մեզ Տէր Աստուած մեր…:* Սաղմոս՝ *Տէր հովուեսցէ…:* Քարոզէ սարկաւագն՝ *Գոհաբանելով աղաչեսցուք… Խաղաղութեամբ քո Հոգիդ Սուրբ…: Աւրհնեալ* Հոգին *Սուրբ Աստուած ճշմ… Վեցերորդ ժամուն սաղմոս Ողորմ. և շարական։ Խաւարեցաւ լոյսն արեւուն…:* Քարոզէ սարկաւագն՝ *Արթուն մտաւք եւ անա…* Սաղմոս՝ *Տէր մի՛ յիշեր զմեզ…: Աւգնեա մեզ Աստուած…:* Քարոզէ սարկաւագն՝ *Վասն հիւանդաց եւ… (յաջորդ թերթերը ինկած) սրբոյ խորոց մեծ եւ ահաւոր ի փերայ այնոցիկ…:* Մեսեդիք Ապաշխարութեան՝ *Լուիցէ ինձ ի կարգալ իմում առ նա… (զա՛րձեալ պակաս թերթեր)*։

20. — *էջ* 214. — Կիրակէից եւ տէրունական տաւնից՝ *Ասասցուք ասի եւ պահոց եւ մարտիրոսաց՝ Աղաչեսցուք զամենակալն Աստուած…: Լուր ձայնից մերոց Տէր Աստուած մեր…:* Ասի Սուրբ Աստուածն եւ իւր քարոզն՝ զոր գրած կայ ի գիշերական կարգն։ Համբարձի…: Պահոց եւ Մարտիրոսաց Սաղմոս՝ *Որ բնակեալն յաւգնու…:* Տէրունական տաւնից ո՛չ ասի Հայր գրածն եւ ոչ Սաղմոս։ Այլ քարոզէ սարկաւագն ըստ պատշաճի աւուրն եւ ասի արձակման աղաւթքն։ Եւ աղաւթիցն՝ զկնի Հայր գրած աղաւթիցն։ Ասի Տէր ամենակալն եւ իւր աղաւթնին (*բոլորը կարմիրով*)։ *Տէր ամենակալ Աստուած Աբրահամու, Սահակայ…:* Քարոզէ սարկաւագն՝ *Ընկալցո ի խոստո…: Տէր Աստուած փրկութեան մե…:* Սաղմոսէ՝ Որ բնակեալն յաւգնութիւն եւ առ քեզ Տէր համբարձի զաչս իմ որ բնակ. Աստուած յանուան քում կեցոյ զիս *Զօրաւորեա՛լդ* արարաք ապաւէն մեզ…: Քարոզէ սարկաւագն՝ *Միաբան զողորմութիւն ի Տեառնէ…: Յոյս կենաց, քաւիչ մեղաց…:* Կիրակէիցն եւ տէրունական տաւնիցն արձակման՝ քարոզէ սարկ. Եւ եւս խաղաղու… *Խնդրեսցուք հաւատով…: Թագաւոր խաղաղութեան… (միշտ պակաս թերթեր)*։

21. — *էջ* 233. — Քարոզէ սարկ. *Եւ եւս խաղա…* Աւրհնութիւնք աշտիճանաց՝ *Ի նեղութեան իմում եւ առ Տէր կարդացի…* (ՃԺ) *Աւրհ.* աստիճանաց. ՃԻ. *Համբարձի զաչս իմ ի լե…: Եւ յաջորդաբար՝* ՃԻԱ, ՃԻԲ, Երգ աշտիճանաց, Աւրհնութիւն աշտիճանաց (ՃԻԳ), ՃԻԴ, ՃԻԷ, ՃԻԸ, *զա՛րձեալ* ՃԻԸ՝ *բայցում անգամ մարտեան, ապա* ՃԻԹ, ՃԼ, Աւրհնութիւնք չուոց՝ ՃԼԱ…: Ալէլուիա՝ ՃԼԵ, Ի Դաւիթ՝ ի ձեռն Երեմիայի. անձշան յերբայեցւոցն՝ ՃԼԶ՝ *Ի գետս Բաբելոնացւոց անդ նստաք եւ լացաք, որպէս յի…* Իմաստութիւն ի Դաւիթ Աղաւթք. ի ժամանակի զի էր նա յայրի անդ՝ ՃԽԱ՝ *Զայնիւ իմով եւ առ Տէր կար…:* Սաղմոս ի Դաւիթ. ի ժամանակի հալածեաց զնա Աբիսողոմ որդի նորա՝ *Տէր լուր աղաւթից ի…:* Դաւիթ առ Գողիադ ՃԽԳ, Ալէլուիա Անգեա եւ Զաքարիա՝ ՃԽԵ, Աւրհնութիւն Ամբակումայ մարգարէի՝ *Տէր լուայ քո լուր եւ…: Փա՛ռք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգ… այժմ եւ մի…:* Սարկաւագն քարոզէ՝ *Եւ եւս խաղ…: Վասն զտանելոյ մեզ… ի կարգալ իմում լուաւ ինձ Աստուած, բաց արդա… (յայտնի է որ* Հանգստեան *սկիզբը ինկած ու կորսուած է)*։

22. — էջ 318. — Շնորհեա՛ մեզ Տէր ի գիշե...: *Փառք Հօր եւ...: Աստ յաջորդ թերթերն ալ կորսուած ըլլալով՝ կը հասնինք՝* Նայեա՛ սիրով Հայրդ գթած... *ի մերձենալ երեկոյիս ժամը...:* Սարկաւագն քարոզէ. *Եւ եւս խաղա...: Գոհացարուք զՏեառնէ որ խրով ոզն...: Տէր բարերար որ մեծաւ գթ...: Տէր յոյս իմ եւ փրկիչ իմ...:* Սարկաւագն քարոզէ՝ *Եւ եւս խաղ...* Աղաչեցէք *զամենակալն եւ խնդր.:* *Գրած է յետ* Նկեսցէին *ի վերջը գրոցս:* *Շնորհատու բարեաց առատ ամեն...: Արարիչ իրաւունս եւ արդարութիւն...:*

23. — էջ 347. — Աւրհնութիւն յեսայեա մարգ.: *Աւրհնեցէք զԱստուած յաւրհնու...:* Աւրհնութիւն Յովհաննու մարգ. *ի նեղութեան իմում...:* Ի քէն հայցեմք Հայր գր...: Սրկ. *Եւ եւս խաղ... վասն հոգւոցն հանգուցելոցն... Քրիստոս որդի Աստու...:* Եւ ամենեքեան խոնարհեցուցեալք զգլուխ. խոստովանին զմեղս իւրեանց ասելով՝ Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ հրեշտա:

24. — էջ 357 (*գեղեցիկ կիսախորանի, լուսանցազարդի եւ ակլինատանի միջեւ*).-- Սաղմոսք խաղաղականին՝ յորժամ ննջել կամին՝ *Եկեսցէ ի վերայ* մեր *ողորմ...:* *Վերջաւորութեան կայ՝ «Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունոյն արձակեա զիս զգրաւմամբ ի կապանաց մահու, ի կեանսըն յաւիտենից»: Ապա՝ Անձն իմ ի ձեռս քո յամենայն ժամ ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր. գրաւմութիւն որոց քոց բարեխաւս ունիմք առ քեզ. մի անտես առներ զպաղատանս ի քեզ, այլ պահեա պատուական եւ սուրբ խաչիւդ քո ի խաղաղութիւն.* որ երկայնամիտդ ես առ ամենեսեան եւ ներող յանցանաց մերոց, *ամենողորմ տէր մեր եւ Աստուած:* Սրկ.՝ *Եւ եւս խաղա... Աղաչեսցուք զամենակալն Աստ...: Տէր Աստուած մեր պահեա զմեզ խաղա...:* Այլ Աղաւթք՝ *Հրեշտակի խաղաղութեան յանձն արայ զան...:*

*Արքայական* ժամագիրքս *կը վերջանայ հոս հետեւեալ խրատով. դիտելի է որ* Նարեկացիի *աղօթքները կը պակսին:*

*«Ցերեկայունիցն (բնաւնիքի) յաւելն զաղաթս եւս ի խնարհ կալով, առեն զխոստովանութեան բանն՝ արդէն եւ գրեալ կայ նախ ի գիրքս, եւ նա պատասխանէ և աւրհնեսցեն մի զմի եւ շնորհեն զթողութիւն միմեանց, եւ երթայցեն ամենեքեան յիւրաքանչիւր յարկսն հանգչելով ի խաղաղութեան, մինչ զի եւ հնչէ փողն արթնացութեան աղաւթելոյ ի մէջ գիշերի եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, պատիւ եւ երկրպագութիւն յամենայն արարածոց իւրոց: Ամէն, Ամէն, Ամէն»: Եւ յետոյ զլխաւոր յիշատակարանը՝ գծախառար կիսատ:*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

*Ա.* — էջ 378 (Գլխաւոր յիշատակարան). — *«Փառք միայնոյ անբաժանելոյ, անհասանելոյ, եռանձնեան եւ անեղրական Սուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեան, ի վերնայնոց հրաշունից զաւմարտակացն, եւ ի սորբանի եղանակացս յաւիտեանս յաւիտենից: Ամէն, ամէն:*

*Շնորհիւ Տեառն եւ ամենառատ ողորմութեամբ ամենակարող եւ անճառ զաւրութեան նորա, սկսա(յ) եւ գերագոյն անեղրական իմաստութեան արգահատութեամբ Հոգւոյն Սրբոյ, աւժանդակեալ կատարեցի զաստուածամալթան և տիրապատում տասս մարգարէից և զքրիստոսայայտ տնաւրէնութեան բացայայտութիւն, առաքելական եւ աւետարանական թղթովք: Որ է զանձ ծածկեալ բազմարեղուն եւ չքնաղատիպ մարգարիտ եւ ա՛կն լուսատու եւ սափրայեան ոսկի որ եւ ի զէպ է բստ տեսողին. քրբեւ ոսկի ընդ սարդիոն յեռեալ եւ կինամոմոն աաչխիւք կնդրկաց խրնկեալ անմահարար հոտիւք, զոր Նուաստս յոգնաեղեգս եւ փցուն գրիչս,* Ստեփաննոս վահկայցի, *յանգ եղեալ կատարեցի: Հրամանաւ եւ ծախիւք քրիստոսասէր բարեպաշտին եւ աստուածունակ արքային Հայոց* Լեւոնի՝ *որդւոյ* Հեթմոյ՝ *որդւոյ* Կոստանդեա(յ) *եւ մայրենի պապու՝ որդի* Զապել *թագուհոյ, որդւոյ* Լեւոնի *թագաւորին Հայոց առաջնոյ յԹուբինանց. որ ի յարմատոց բարեաց զաւակ դերազանց բարունակ ատեցնեալ անուշահոտ և քաղցրաճաշակ պտղովք աստուածայնոցն*

տալցեալ կտակարանացն բղձիւք, եւ մեծա-
ւենչ եւս որ առ Տէր հրով սիրոյն փափաք-
մամբ մինչ փաւեալ, որ եւ յաղագս անբաղ-
դատելի սիրոյն առ Աստուած եւ առ ամե-
նայն ուղղափառ քրիստոնեայս. բազում ան-
գամ գանձն ի մահ եդ, աւրինակ եղեալ...»:
Ո՛վ գիտէ յաջորդ էջերուն վրայ պատմական
որքան տեղեկութիւններ պիտի կարդայինք,
թերեւս անտիպ:

Բ. — Աստ տակ, որ է վերջին էջի ստո-
րին լուսանցքին վրայ, կը կարդանք վերջին
ժամանակի հետեւեալ նոտրագիր բաւական
վարժ տողերը՝

«Գրեալ է ժամագիրքս յամի Տեառն 1221
եւ ի թուին Հայոց ՉՃՀԳին. ձեռամբ Ստե-
փանոսի Վահկեցւոյն »:

Փարիզ. 20 Յունուար 1949

---

# 24.— ՄԱՆՐՈՒՍՈՒՄ

Նոր թիւ՝ 261

ՊԿ = 1411

ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×10×5 սմ. — ԹԵՐԹՔ՝ 188 (=376 էջք). — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած բամպակեայ թուղթ. — ՏՈՂՔ՝ 12. — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չորս թերթ սկիզբը, մէկ թերթ ի վերջ. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հակառակ հնութեան բաւական լաւ պահպանուած, բազմաթիւ թերթեր նորոգուած ըլլալով, առանց պակասի. — ԿԱԶՄ՝ մութ շագանակագոյն կաշեպատ փայտեայ. — ԳԻՐ՝ սեւ մելանով ընտիր բոլորագիր, խազաւոր, համաբարբառութիւնները կարմրագեղ երկաթագիր. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ կարմրագեղ բոլորագիր. — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ ծաղկուած գեղեցիկ զարդագրեր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ գեղեցիկ ծաղկումներ բոլոր կանոններու սկիզբը, նոյն յաջող ծաղկումներով. — ԽՈՐԱՆՔ եւ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ բոլոր կանոններու սկիզբը, զարդական միեւնոյն ոճով:

ԳՐԻՉ՝ Յովհաննէս արեղայ Սանահինցի. — ՇԱՂԿՈՂ՝ գրիչը. — ՍՏԱՑՈՂ՝ Սարգիս արեղայ. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՊԿ (=1411). — ՏԵՂԻ՝ Երուսաղէմ:

Մատեանս է Մանրուսում, թղթեայ, փոքրագիր, խազաւոր՝ որ կը բովանդակէ՝ բաւական յայն տարրերակներով՝

1. — էջ 1. — Սկսեալ ի գիշերի զանուն քո Տէր...:

2. — էջ 8. — Կանոնվն գլխերկա. — ած՝ Սիրեցից զքեզ Տէր...: ակ՝ Դատեա՛ Տէր...: բձ՝ Ասաց անզգամն թէ...: բկ՝ Ի քեզ Տէր յուսացայ...: գձ՝ Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան աւրհնեցից...: գկ՝ Խոստովան եղերուք տեառն զի քաղցր է...: դձ՝ Արարի իրաւունս եւ արդարութիւն...: դկ՝ Աւրհնեա անձն իմ զտէր...: Այս ութ կանոնագլուխներուն բոլորն ալ երբե՛ք անգամ կրկնուած են ձեռագրիս մէջ:

3. — էջ 20. — Թագաւորք ապաշխարութեան. — ած՝ Թագաւոր յաւիտեան. լուր մեզ Աստուած փրկիչ մեր եւ կեցո զմեզ...: Բոլորը համաձայն ձեռագիր եւ տպագիր ժամագիրքերու:

4. — էջ 43. — Թագաւորք Մարտիրոսաց. — Ակ՝ Զողորմութիւն քո Տէր արա ի...: ած՝ Թագաւոր յաւիտեան՝ բարեխաւսութեամբ սրբոց մարտիրոսացն...: Յաջորդ կանոնները՝ համաձայն տաձեռն օրինակներու:

5. — էջ 61. — Ալելուք գիշերուան. — ած՝ Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր...: Յաջորդ Ալելուքները՝ համաձայն տաձեռն օրինակներու:

6. — էջ 93. — Խաղաքերից Անտարանացն. — Երգեցէ՛ք անուան տեառն աւրհնեալ...:

7. — էջ 97. — Առաւօտու երգեր կարգ. — Լոյս տուր Տէր աչաց իմոց զի մի ննջեա...: Ի քէն զգիր կենաց...: Ես ասացի Տէր ողորմեա ինձ...: Ես առ քեզ Տէր աղաղակեցի...: Մացեն աղօթք իմ առաջի քո Տէր...: Տէր հաներ ի գժոխոց զանձն իմ...: Այսաւր մտանէ թագաւորն մեր Քրիստոս...:

8. — էջ 103. — Առաւօտու երգեր աւագ շբթ. — (բչ) Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցիր...: (գչ) Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա...:

9. — էջ 117. — Ժամամտեր կարգաւ. — Որ ի հայրէ առաքեցար փրկիչ..., բոլորովին համաձայն հին եւ նոր տպագիր օրինակներու, բայց յաճախ կարգը տեղափոխուած:

10. — էջ 185. — Մեսեդիք ճաշո պահոց.

— *Արքայութիւն քո Տէր: Հաստատեալ է Տէր: Երկրպագից ի տաճար: Պարծեսցին ի փառս…:*

11. — էջ 188. — Ստողողիք Յինանցն. — *Ալէլուիա— ալէլուիա: Երանեալ է այր որ ոչ: Ընդէր խռովեցան…: Եւ ապա կարգս զգործքն: Զկնի գործոյն պատաջի սաղմոսն ասա: Եւ ապա կարգս զկաթուղիկէն: Զկնի կաթուղիկէն Ալէլուա է: Ալէլուիա: Եւ ապա զվերջի սաղմոսն ասա:*

12. — էջ 190. — Սաղմոսք Յինանց ճաշոյ. — *Քեզ վայել է…:*

13. — էջ 192. — Ալէլուք ճաշոյ կարգաւ: — *Ալէլուիա, ալէլուիա. Եկայք ցնծասցուք ի Տէր: Հոգի քո բարի…:*

14. — էջ 223. — Երգ բաշխման Սր. խորհրդ. — *Քս պատարագեալ: Բաշխի ի մէջի մերում, ալէ:* Կիր. *Մատիք առ Տէր, ալէ: Եշ՝ Լոյս ճշմարիտ եւ ճառագայթ հաւր ծագումն եւ կնիք: Բանն եւ ծընունդ: Որ կանգնեցեր եւթեանց սեանց զեկեղեցի. Սուրբ ածեալ ի սղանց զեղըն պարարակ: Շնորհեա մեզ կերակրել յիմաստութեան քում սեղանոյ: Ողորմ: Ճաշակեսցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր, ալէ: Գշ. Հաց կենաց եւ անմահութեան: Ճաշակ սուրբ եւ անճառ: Սոսկալի խորհուրդ: Որ ի յերկնից իջեր կենդանութիւն: Մարդկան կենդանի եւ կենդանաբար, պարգեւեալ քաղցելոցս ըղքաղցրութեան քում ճաշակումն: Ող.: Աւրհնեցէք ըղՏէր յերկինս: Դշ՝ Դուն յերկնից եւ ճանապարհ արքայութեան Տէր երկնի յերկնայնոցն աւրհնեալ զասուց: Որ զմարմին քո եւ զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն: Մաքրեա ըզմեզ հաղորդել սրբութեան քում խորհրդոյ: Ողորմեա: Աւրհնեցէք ըզնա ի բարձունս, ալէ: Եշ՝ Բան հաւր եւ քահանայապետ սուրբ յանմարմնոցըն զովեալ ի բարձունս: Որ ի վերայ խաչին պատարագեալ մարմնով, հեղեր զարիւնդ ի փըրկութիւն, սրբեա զմեղըս մեր, կենաբար եւ փրկական քաւիչ քո արեամբդ: Ողորմեա: Աւրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք նորա: Ալէ.: Զշ՝ Վէմ հոգեւոր եւ գլուխ անկեան, ածեալ բարեբանեալ ի հրեշտակաց: Որ ի խաչին բացեր ըղկողահոս աղբիւրդ զանմահութիւն ցաւղեալ տիեզերաց: Արբո ե մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան: Ողորմեա. Աւրհնեցէք ըզնա ամենայն զաւրութիւնք նորա, ալէ.* Շբ՝ *Գառն աստուծոյ զենեալ միշտ եւ կենդանի անմեղ եկեալ ի պատարագս: Որ ի հաշտութիւն հաւր պատարագեալ բառնաս ըզմեղս աշխարհի յանմահից զաւրաց փառաւորեալ: Յիշեա ըզհոգիս հաւատով ի քեզ ննջեցելոց մերոց: Ողորմեա: Լցաք ի բարութեանց քոց Տէր, ճաշակելով ըզմարմին քո եւ զարիւն: Փառք ի բարձունս կերակրողիդ ըզմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ: Առաքեա ի մեզ ըզհոգեւոր քո զաւրհնութիւն: Փա՛ռք ի բար.: Գոհանամք ըզքէն Տէր որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քո:*

15. — էջ 231. — Խոնարհեցուք հասարակ. — կիրակամտի՝ *Խոնարհեցո Տէր… եւ տընանկ եմ ես: Փառք քեզ Աստուած: Պահեա… Աստուած իմ որ ի քեզ յուսացայ. Փառք քեզ Աստ.: Ապրեցո զիս Տէր ի մարդոյ չարէ: Խորհեցան զանաւրէն… (Երեք անգամ կրկնուած):*

16. — էջ 276. — Երեկոյի փառքեր տաւնից. — Ած՝ *Վասըն սըրբոյ քո (սըրբոց քո) Մարտիրոսաց հաշտեա Տէր: Որք վասն անուան քո տանջեալ ըհամբերեցին եւ մարտնչեալ ընդ անաւրէնսըն յաղթող գտան: Բարեխաւսութեամբ ըսոցա լուր Տէր եւ ողորմեա: Ուստի եւ մեք տաւնեմք ըզհանգստեան աւր յիշատակի ձեր… Այս՝ Լոյս զուարթ սուրբ փառաց…:*

17. — էջ 278. — Մեղեդիք Ծննդեան, Յարութեան, Մարտիրոսաց եւ Պահոց Ապաշխարութեան. — *Տէր ասաց զիս որդի իմ…:*

18. — էջ 290. — Ուղղեցիք կարգաւ. — Ած՝ *Ուղիղ եղիցին աղաւթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր…: Հոս, իւրաքանչիւր* ուղղեցիքի *հանդիպակաց սիւնակի մէջ գրուած է՝* գզգած, անմեղուկ, խաւսողն. ձագ, մահկոն, ձագ, հիւանդ, գուսճակ, հոռոմ, ջուլհակ եւ փորակ:

19. — էջ 300. — Տէր ողորմայք տէրունական տաւնից. — Մեծ՝ *Վասն ի վերուստ*

խաղա...: Տէր ողորմեա...: Յիշեա Տէր. Քեզ տո...: Փոխ՝ Վասն ի գիշերի...: Կց՝ Վասն սուրբ տեղ...: Թափուր՝ Վասն ի վերուստ...: Բաւսային՝ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, յիշեա Տէր եւ ողորմեա:

20. — էջ 303. — Աւագ մեծեղիք ապաշխարութեան աղուհացից:— Դարձոյ զիս Տէր ի մեղաց իմոց...:

21. — էջ 309. — Կցուրդ փոխման Ած. — Լոյս: Բազմութիւնք առաքելոցն: Ժողովեալք ի միասին: Կոչեցեալք ի հոգւոյն սրբոյ: Ի փոխումն կուսին Մարիամու աստուածածնին: Ակն ունելով զալըստեան որդւոյն Աստուծոյ: Եկեալ արարիչն լուսեղէն փառաւք անմարմնական զաւուք: Առ կոյսն եւ մայրն եւ բնակարան հոգւոյն սրբոյ: Այսաւր տեսեալ սուրբ կոյսն ամպեղէն կառաւք համբարձեալ յերկինս...:

22. — էջ 329. — Կցորդներ Հսկման գիշերոյ ի յապաշխարութեան եւ հանգ կրգէ. — Անբաժանելի եւ համագոյ Երրորդութեանդ: Համաձայնեալ ընդ զզաւրսն երկնից փառս մատուցանեմք: Փառք քեզ...:

23. — էջ 345. — Հանդիսաւոր տաւնի ասի ի ձայն: — Հաւատամք ի մի Աստուած, հայր ամենակալ. յարարողն երկնի եւ երկրի... յԱստուծոյ ճշմարիտ ծնեալ եւ ոչ արարեալ... հոգի միտք... ճշմարտապէս եւ ոչ կարծիս ունելով: Չարչարեալ, այսինքն խաչեալ...: Հաւատամք եւ յայս միայն...: Ի դատաստան յաւիտենական... եւ ի կեանսն յաւիտենականս: Իսկ որ ասենն էր... եւ կամ ի գոյութենէ ասեն լինել... կամ փոփոխելի են եւ կամ այլայլեն, զայնպիսի ասացողսն ոչ ընդունի կաթուղիկէ եւ առաքելական սուրբ եկեղեցի.

24. — էջ 352. — Կանոնգլխ կարգաւ. — աձ՝ Սիրեցից զքեզ զաւրութիւն իմ, այլ (երեք անգամ կրկնուած): ակ՝ Դատեա Տէր, որք դատեն զիս այլ: Տէր յերկինս... (վեց անգամ կրկնուած): բձ՝ Ասաց անզգամն ի... (հինգ անգամ կրկնուած): բկ՝ Ի քեզ Տէր յուսացայ... (չորս անգամ կրկնուած): գձ՝ Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան... (վեց անգամ կրկնուած): գկ՝ Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, այլ (հինգ անգամ կրկնուած): դձ՝ Արարի իրաւունս եւ արդարութիւն... (վեց անգամ կրկնուած): դկ՝ Աւրհնեա անձն իմ զՏէր, այլ: Գովեա Երուսաղէմ զՏէր, այլ: Ննջեցելոց՝ Դատեա Տէր զայնս... այլ. Տէր յերկինս է ողոր...: Աւրհնեա անձն իմ զՏէր... (վեց անգամ կրկնուած):

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. — էջ 304 (Գլխաւոր Յիշատակարան). — «Փա՜ռք համագոյ անբաժանելի եւ միանական Սուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ:

Արդ գրեցաւ եղանակաւոր տա՛ղս որ կոչի Մանրուսումն, ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ընդ հովանեաւ տիեզերաժողով. յակապ՝ զերահռչակեալ հրաշափառ մեծի Յարութեանն եւ երկնանման Սուրբ Գողգոթային եւ աստուածընկալ Սուրբ Գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եւ այլ համայրէն սուրբ տնաւրինականացս. ի սուրբ ուխտս Հայոց՝ Սուրբ Առաքելոյս Յակոբայ Զեբեդեան: Ի թուականութեանս Հայոց: ՊԿ (=1411): Ի խնդրոյ սիրելի եւ համշիրակ եղբաւր մերոյ սրբասէր եւ պատուական կրաւնաւորի Սարգիս աբեղայի: Ձեռամբ ամենամեղ եւ փցուն գրչի Յովհաննէս Սանահնեցւոյ: Ի յաւ եւ յընտիր աւրինակէ կարապետցս: Արդ՝ աղաչեմ զամենեսեան՝ որք աւգտիք ի սմանէ՝ յիշեցէք ի Քրիստոս զստացող սորին զցանկալի եղբայրն մեր զՍարգիս՝ որ յոյժ աշխատեցաւ ի սպասաւորութիւն մեզ: Նաեւ զվարժիչ նորա զքաջ գիտողապետն զհաւրեղբայրն իւր զՏէր Յովհաննէս մականուն կոչեցեալ Հեքում զփոխեցեալն ի Քրիստոս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, հանդերձ ծնողաւք եւ համայրէն ազգայնաւք, կենդանեաւք եւ ննջեցելովք: Ընդ նմին եւ զերանաշնորհ զգերեցս երանեալ զըստ հոգւոյ հայրն իմ եւ զուսուցիչն զՅովհաննէս փիլիսոփայ աղաչեմ յիշել սրտի մտաւք, հանդերձ միեղէն եղբայրութեամբս Տէր Մարկոսիւ եւ Տէր Գրիգորիւ, որ ի միասին ժամանեցաք յերկրպագութիւն սուրբ տնաւրինականացս:

*Ո՛վ եւ զանապատս ի բարեաց, զմեղաւոր գրիչս մաղթեմ յիշել եւ սխալանացն անմեղադիր լինել, որով յիշողացդ ողորմեսցի Քրիստոս, եւ նմա փառք յ »:*

*Բ. — Էջ 60 — Զանարժանս եւ զանարժան զմեղօք մեռեալս՝ ...* զՅովհաննէս *գրող եւ նկարող այսմ աւետարանի յիշել հայցեմ եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի ամէն:*

*Գ. — Էջ 376՝ վերջին ստացողէ. — Արդ՝ ես* Յովհաննէս արեղայ *ստացայ զկենդանակարար աւետարանս ի հալալ վաստակոց իմոց յիշատակ հոգւոյ իմոյ. որք հանդիպիք սմա յիբերանով Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծնողացս իմոց,* Մկրտիչին *եւ* Գոհարին *եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց, ամէն**:

Նիս, 15 փետրուար 1947

« *Գրեցաւ երանգով ծաղկեալ ձաղաղլուս գրեանքս այս ի սուրբ քաղաքս* Երուսաղէմ, *ընդ հովանեաւ* Սրբոյն Յակոբայ, *տիեզերածաղ եւ աստուածադիր Աթոռոյս ամենայն Հայոց: Մեղաւորիս մատամբ* Մակարու *իրրու* վարդապետի Սեբաստացւոյ: *Ի հազար եւ երկու հարիւր քսանեւչորս թուին եւ յամսեանն Մայիսի Ժ.ին* (=1775) »:

*Թռչնագիր եւ ձկնագիր այբուբենք, վայելչապէս ծաղկուած, վեց սինակի մէջ. վերջին տողը*

— *ԱՍՏՈՒԱԾ ԻՄ* —

34×24 *անգմ.*

*ապակիի տակ:*

Բան, 10 փետրուար 1947

---

*Ձեռագիրս 1914ին սեփականութիւնը եղած է Կ. Պոլսեցի Միհրան Յովհաննէսեանի, ուսուցիչ. որ նոյն տարւոյ Օգոստոս 5ին նուիրած է « իր ամենասիրելի բարեկամին եւ բարերարին, դոյզն յիշատակ երախտագիտութեան », ինչպէս որ կ'երեւայ ձեռագրիս դատարկ էջերէն մէկուն վրայ գրած յիշատակարանէն, մոռցած ըլլալով սակայն դնելու ստացողին անունը: Ներկայ սեփականատէրն է Քանարեան Գր. Գարագոչ՝ որ մեր միջոցաւ ձեռագիրս նուիրեց Երեւանի Պետական Մատենադարանին: Շնորհակալութիւն եւ օրհնութիւն:

# 25.— ՃԱՌՔ Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ

Հին թիւ՝ չունի — ՌԿԷ = 1618

*ԹՈՒՂԹՔ՝ ԼԴ×24 (=816 էջք). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 24×20×6 *անգմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՆԻՒԹ՝ բամպակեայ հաստրակ թուղթ. — ՏՈՂՔ՝* 30. — *ԿԱԶՄ՝ սեւ յաթապատ խաչաքարասեայ, նոր. — ՊԱՀԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած, սկիզբի խորանին ճակատը կորուած ու վերցուած. կազմը հաւանաբար նոր. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ թռչնագիր, զարդագիր եւ երկտող կարմրագեղ երկաթագիր. — ԳԻՐ՝ շատ յաջող եւ տպագրի նմանութեամբ բոլորագիր, ծայրէ ի ծայր նոյն գրչէն. — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ փառագիր-զարդագիր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ սկիզբի խորանին կից՝ մեծ ու յաջող ծաղկումով. ներքին լուսանցազարդերը մանուշակի կարմիրով քրաներկ պարզ ծաղկումներ. — ԽՈՐԱՆՔ՝ գեղակերտ, նուրբ ծաղկումով խորան մը սկիզբը, ...կի յատակի վրայ յագուարդով ծաղկումներ, ուր վարդակներուն մէջ հրեշտակներու յաջող գլխեր, խորանին ճակատը Ներսէս Լամբրոնացիի նկարով. — ՆԿԱՐՔ՝ սկիզբը. վերեւը՝ Յիսուս, ասեղնագործ կապոյտ երկնքի մէջ, նստած գիրքով, չորսը՝ հրեշտակներու գաւ մը. Վարը, զոյգ մը խորանի մէջ երկու սուրբեր կամ աւետարանիչներ, մին Աւետարան, ու միւսը խաչ բռնած, բիւզանդական եպիսկոպոսական զգեստաւորումով:*

*ԳՐԻՉՔ՝ Տէր Խաչատուր եպիսկոպոս Զէյթունցի եւ Տէր Ղազար քհյ. Ֆռնուզցի (Զէյթունցի). — ՍՏԱՑՈՂ՝ Տէր Յովհաննէս կաթողիկոս Այնթապցի. — ԺԱՄԱՆԱԿ՝* ՌԿԷ (=1618). — *ԾԱՂԿՈՂՔ՝ Տէր Ղազար քհյ. Ֆռնուզցի եւ Ստեփան. — Ձեռագրիս այժմու տէրն է Պր.* Jean Pozzi, - Paris.

*Մատեան է՝* Ս. Ներսէս Լամբրոնացիի ճառերը. *թիւով* 129: *Թղթեայ, մեծագիր, որ կը բովանդակէ*

1. — Սուրբ եւ Տիեզերական ժողովոյն որ եղեւ ի շրջան ընթացից ժամանակի ՈԻՋ թուականի: Հրամանաւ Գրիգորիսի. յաջորդի առաքելական Աթոռոյ Գրիգորի: Համաձայնութիւն՝ Ներսէսի նուաստ նացին պաշտօնակցի. — *Ո՛վ հարք սուրբք եւ վարդապետք ճշմարտութեան, ո՛վ Քրիստոսի ժողովրդեանն գլուխք եւ հովիւք: Ո՛վ ամենն*

*Աստուծոյ վերակացուք եւ մատակարարք, զորս տեսանեմ այսաւր զումարեալ ի մի շունչ եւ ի մի մարմին եւ առ գլուխ հանուրց պատկանեալ…:*

2. — Գլխաւորգութիւնք Հռոմայ զորս պահանջեն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան: Ընդ որս եւ լուծմունքն առընթեր եդեալ. — *Նզովեցէ՞ք զասացողն մի բնութիւն զՔրիստոս, զԵւտիքէս եւ զԴիոսկորո՛ս, եւ զՏիմոթէոս զկուզն, եւ զամենայն համախոհս նոցին: Նզովեմք զԵւտիքէս զոր եւ նզովեցին…:*

3. — Խնդիրք Հայոց. — *Ամենայն մեղուցեալք ըստ իւրաքանչիւր յանցանաց կանոնական հրամանաւ զատեսցին եւ ճշտիւ քննեալ ապա՛ յեկեղեցի Աստուծոյ աշխարհն ընկալցին…:*

4. — Ներսէսի եպիսկոպոսի Կիլիկեցւոյ Տարսոնի' խորհրդածութիւն վասն Ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյ ի Սուրբ Երրորդութիւն եւ ի տնաւրէնութիւն Քրիստոսի: — *Հաւատամք իմացականիս զխոստովանութեամբ զԱստուած նախ քան զամենայն եղականքս անեղութեան, որոյ բնութեան խակութեան ո՛չ կարեմք մտաւք վերահասու լինել. եւ ոչ բանիւ…:*

5. — Ի խնդրոյ հայցման երիցակից եղբարց: Քննութիւն կարգաց Եկեղեցւոյ եւ բացատրապէս որոշումն արտաքուստ մտեալ ի սա նորաձեւութեանց. — *Սկիզբն առաջի եդեալ բանիս գոհութիւն Աստուծոյ կարգեմք որ շարժեաց զողորմական իմաստ եղբարց մերոց բանագատել զմեզ ի խնդիրս…:*

6. — Դարձեալ վերստին խորութիւն նորաձեւութեանց որ մտին յԵկեղեցի. եւ քննութիւն պատուոյ եւ աշտիճանաց զաւրութեան ի սմա վինակելոցն պարզաբար. ընդ որս եւ ընդ դիմադրութիւն. — *Որոց զիտաւորութիւն անկեալութեան մտաց ի մարմնական փառասս յասոյ պատուի, հարկաւոր է միշտ զայն հնարել ընթացս կենաց եւ բանի որով առ ի տեսողացն զամութենէն…:*

7. — Քննութեամբ արփինակաց հաստատութիւն հարցն առանձնութեանց: Որք սահմանեցին յամենայն տեղիս քրիստոնէից նստել եպիսկոպոսաց ի քաղաքս, եւ ո՛չ թէ ի վանս, ընդ որ եւ վասն պատարագի ընդ դիմադրութեանց պատասխանի. — *Պարզաբա՞ր որպէս կարծեմ եդ առաջի բանս զբացատրութիւն քահանայութեան եւ կրաւնաւորութեան. սակայն կարեւոր է…:*

8. — Որոշումն ինն դասուց: Աստիճանաց եկեղեցւոյ: Եւ յատկութիւն գործառնութեանց նոցա եւ զգեստուց. ընդ որ եւ ընդդիմադրութիւն այսորիկ խորհրդոց ունայնացուցանողաց. — *Եկեղեցիք քրիստոնէից առաքելական խաւսիւք հարսնացեալ երկնաւոր փեսային իւրոյ Քրիստոսի, յարդինեալ զանձնակ իւր…:*

9. — Իմաստասիրութեամբ բացայայտութիւն աստուածային խորհրդոյ պատարագին: Եւ առ ունայնացուցիչսն զնոյն ընդդիմադրութիւն. — *Քանզի որ մինչեւ ցայժմ հաստատեալ զճշմարտութիւն բանն կարաւտեալ ի պէտս այնորիկ այժմ անդր ճարտկեցաւ զխաւսել եւ զխաւս…:*

10. — Բնախաւսութեամբ քննութիւն Յաղագս զաւրութեան աղաւթեան աղաւթից եւ հաստատութիւն թէ պարտ է ներգործութեամբ մտաց ի նոյնն կանխել: — *Արարիչն Աստուած զեղական արարածոց կենդանեացս ոչ յերբ՞ս սեռս զանազանեալ որոշեաց: Նախ եղելոց հոգեղինացն զաւրութեանց զմերին կոյսանն…:*

11. — Զի՞նչ նշանակէ անուանելն զտունս Աստուծոյ եկեղեցի. — *Եկեղեցի անուն տերաւղէս ի վերայ ժողովրդեանն առնու քան ի տանն, յառ որում զոր Աստուած առ Մովսէս ասաց. եկեղեցացո՛ ինձ զժողովուրդ, այսինքն ժողովեա…:*

12. — Զի՞նչ նշանակէ իգական անուամբ եկեղեցին կոչել եւ հայրն անուանել: Իսկ զՔրիստոս փեսայ, քանզի յառաքելոյ ուսաք զխորհուրդս. — *Տէր մեր ասաց յԱւետարանին. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի որ արասցէ հարսանիս որդւոյ իւրոյ. եւ առաքեալն նորին…:*

13. — Ո՞րպէս եւ ո՞յր աղագաւ Մերս Եկեղեցի անուանի զատանս վերինն Սիոնի եւ

Երուսաղէմի. — *Սիոն վերին եւ Երուսաղէմ ուսուցանեն մեզ գիրք սուրբք խորհրդականապէս առաքելոց եւ մարգարէից, զհոգեւորդոյն որ առ Աստուծոյ...:*

14.— Թէ պարտ է հաւատալ զեկեղեցի Աստուծոյ երկի՞ն ի յերկրի. — *Աստուած մարդ թէ եղեւ, եւ երկնաւորն երկնաւոր՝ ապա եւ երկիրս երկին եղեւ եւ զի ո՛յս է ճշմարտապէս. յի՛ են գիրք սուրբք...:*

15. — Զի յորժամ մտանեմք ի տաճարս սուրբ, պարտ է հաւատալ անընդմիջաբար զմեզ առաջի Աստուծոյ որպէս եւ հրեշտակք. — *Փառքն Աստուծոյ եւ ներգործութիւն խնամոցն եւ զուարթութիւն հաստնէ առ երկնաւորս եւ առ երկրաւորս: Իսկ զխուութիւն ընու...:*

16. — Զի՞նչ նշանակէ ձեւ կերպարանաց սրբոյ տաճարի եկեղեցւոյ զի անջրպետեալ է խորանն ի հասարակաց խմբարանէ տաճարին. — *Երկին ի յերկրին հաստատեաց զոյ զսուրբ տունս, վասն այնորիկ եւ ի սոյն կայանի երկնաւորացն ձեւակերպեցաւ...:*

17. — Զի՞նչ կը նշանակէ սեղանն սուրբ. — *Եւ զսեղանն սուրբ պատկեր Աստուծոյ, քանզի որպէս խաչն պատկեր Նորա անուանի...:*

18. — Զի՞նչ նշանակէ զգեստ կերպասուցն զոր ի վերայ սրբոյ սեղանոյն արփինեմք. — *Աստանց խորհրդոյ աւանդութիւն, յընդհանուր եկեղեցի քրիստոնէից ո՛չ է. այլ աստուածային խմն ազդեցու...:*

19. — Զի՞նչ նշանակեն աստիճանք աթոռոցն շուրջ զսրբով սեղանովն ի միմեանց որոշեալ ի վերայ որոյ քահանայապետականն աթոռ հաստատեալ. — *Ամբողջ պահելով զկարգ բանիս եւ զայս կարեմք ճշգրտել ասանել. քանզի զեկեղեցիս երկին ասաք, եւ զխորանն երկնից երկին...*, այսպէս մինչեւ 40րդ ճառը:

*Փոքրագիր զմայլելի խորանի մը եւ սրբուն խաչի մը տակ, որուն քով իբր լուսանցազարդ Ս. Ներսէս Լամբրոնացիի մեծագիր եւ յաջողակ մանրանկարը կայ, կը կարդանք հետեւեալ 41րդ գլուխը.*

41. — Աւրէնք արկանելոյ Սպաս եկեղեցւոյ: Յորժամ կամեսցի քահանայն պատարագ մատուցանել, պարտէ այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ. հանդերձ սարկաւագաւքն մտանէ յաւանդատունն ուր զգեստքն են պատարագի: Եւ զգեցեալ պաշտաւնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի: Ասեն ասա ասդմոս: Յիշեա Տէր զԴաւիթ տուն առ տուն ամենիքեան: Թարգէ նախասարկաւագն (*բոլորը կարմիրով*). — *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք՝* ձողովեալքն՝ *Տէր ողորմեա: Խնդրեսցուք հաւատով...:*

*42.— Նրբագիծ չափ սիրուն կիսախորանի մը եւ լուսանցազարդի մը տակ կը կարդանք՝*

Խրատ եւ սահման վերոյ գրեալ գործոցս բարեձեւ սպասաւորութեան. — *Քանզի ի բազում ինչ եզոյց բանս հրահանգութեան զործ սարկաւագացն աստիճանի, եւ առ մեւք այս կարգ ընաջինջէ յեկեղեցւոյ: Ոչ է պարտ սակս այսր թերութեան...:*

43. — Սրբոյն Դիոնէսիոսի Յաղագս Եկեղեցական կարգաց աւանդութեան եւ դիտումն նոցին. — *Արդ քանզի որ մերս է քահանայապետութիւն ո՛վ սրբազանդ Տիմոթէոս յաստուածայնէ աւանդեալ, եւ որք աւրին զաստիճան պատուոյ յեկեղեցի Աստուծոյ...:*

*Այսպէս 129 ճառ եւ խրատներէ յետոյ կը հանդիպինք* սկզբնական *բնագրի* Գլխաւոր Յիշատակարանին՝

« *Նորին սրբոյ. — Գրեցաւ ի թուականիս ՈԻ եւ Զ* (= 1177), *յանապատս* Սուրբ Գէորգ, *ի մէջ լերինս Տաւրոսի, ի գաւառ Կիւլիկիոյ, եւ ի սկիզբն Պանփիւլեայ, ի կաթողիկոսութեան* Տեառն Գրիգորի, *եւ յիշխանութեան* Հեթմոյ Սեւաստաւսի:

« Բան Ներսէսի սրբոյ.

« *Այս բանք եւ աստուածային աւրինագրութիւնք սպասաւորութեամբ մտաց եւ ձեռին իմոյ թշուառ* Ներսէսի *ասացաւ ի հոգւոյն Աստուծոյ ի Նախադրեալ թուականիս ի Ո եւ Ի եւ Զն, եւ ի ժամանակ կենաց իմոց մինչ էի .Ի եւ Դ. ամաց եւ կայի ի յուսութեան եւ ի միայնութեան ի մէջ լերանցս Տաւրոսի: Իսկ յետ ամաց ինչ դարձեալ ածայ յեկեղեցական պաշտաւն, եւ ի մարմնա-*

կան գործոյ գրոցանք, եւ զնուր տաճարման որտի խմոյ որ ի բանքս ցուցաւ, հնարէի եւ յա յլս բորրոգել, և ըստ բանիս գործ գլխաւորել, եւ անկարանայր այս: Քանզի միանգամ եւ երկիցս հանի զայն յառեան եւ ի ժողով եպիսկոպոսաց եւ իշխանաց, եւ ո՛չ եղեւ պարապումն զանէ ընթերցման կամ ունկնդրութեան: Եւ ի սոյն ժամանակս ի Թուականութեանս ի ՈԼԶ (=1187) յափշտակեցաւ սուրբ քաղաքն Երուսաղէմ ի Թուրքաց ազգէ, եւ եկեղեցականքն եւ իշխանքն որք սպասաւորէին Սուրբ տեղեացն գերեցան եւ համբաւս այս հասեալ յարեւմուտս, գրնաւ ազգսն թագաւորաւք եւ իշխանաւք, ըստ հրամանի Հռոմայ հայրապետի, շարժեաց զալ յայս աշխարհ: Եւ մինչ նոքա հեզուին անթիւ բազմութիւնք նաւուք ի ծովէ անտի ի Պտղոմիդայ. ի Թուականութեան ի ՈԼԸին (=1189), յղեաց իշխաւղս մեր Մեծ Լեւոն զմեզ առ կաթողիկոսն սուրբ Տէր Գրիգոր յաթոռն հայրապետական որ կոչի Հռոմկլայ ի վերայ Եփրատայ. Եւ ի գնալն մեր յաւուրս Պենտակոստէին, յայն կոյս Մարաշայ յարձակեցան ի վերայ մեր Թուրքմանք, եւ սրով ձարակեցին զորս ընդ մեզ կրաւնաւորք եւ աշխարհականք ողիք իբր եւ Ի·: Եւ յափշտակեցաւ ընդ այլ ինչսն եւ գրեանքս, եւ այս սուրբ պատուիրանքս. ի վերայ որոյ ազայի անմխիթարն, չունելով զհաւասարն: Իսկ ապա ի տեսչութենէ զթութեանն Աստուծոյ, ի Թուականութեան ՈԽԱ (=1192), քննեալ ուր վաճառեալ էին զարձուցաք զայն զերութենէն: Քանզի գտաւ ի գաւառն Ջահնայ. եւ ստարութեամբ եպիսկոպոսի գաւառին Ներսէսի եւ Վարդանայ կրաւնաւորի, ածաւ սոյն առ իս վերստին, եւ եղեւ վշտացելոյ ոգւոյ իմոյ մեծ սփոփանք եւ մխիթարութիւն, եւ առ Աստուած երկրպագութեամբ գոհութիւն »:

« Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ․․․:

Յիշատակարան մատենիս գրութեան (կարմիրով)․

« Յամի վեցհարիւրորդի յիսներորդի (=1205) Թուականութեանս Հայոց, ես նուաստ եւ անարժան ծառայ Աստուծոյ՝ Ներսէս, փափաքեալ աստուածայնոյ տեսոյս, Նորագոյն մեզ պարգեւեցելոյ ի Հոգւոյն Սրբոյ, ի յետին եւ անբարի ժամանակիս յորում ըստ նախագուշակ բանին Տեառն, Կարապետ Նեռին, այսինքն յանաւրէնացն բազմանալոյ, սիրոյն ցամաքութիւն երեւեալ: Եւ ետաւ զծագրել սա, առ ի մխիթարութիւն վշտացելոյ եւ թշուառական ոգւոյ իմոյ, ո՛չ ի գրաւսանս կատարման գործոյ սորայ խրատու, այլ առ ի գիտել ճշմարտութեամբ, թէ հետի եմք ի պատուիրանացն Աստուծոյ, ուստր իմն չափ ունելով եւ․․․․:

« Արդ ի սկզբանն ի զսոյն մեզ պարգեւողէ սորոյն, գրեցաւ սա յերկրատարգականն հաստկի, ի քան եւ չորս ամացն լինել: Որպէս զի քեզ հաստատեսցի բան իմաստնոյն, որ ասէ զիմաստութիւն եւ հաստկ ծերութեան զանարատ կոչէ: Եւ եղեւ այս, մինչ անձամբ անձին առեալ էր զլուծ խոնարհութեան, խաչիւ խաչելոյն զհետ մտեալ: Վարժեալ յորմէ լուաւ ասել․ բարի է մարդոյ որ կրէ զլուծ խոնարհութեան ի մանկութենէ իւրմէ, Նստեալ ռիկ ի տան, եւ տալով հոգւոյ զլեռան, յայտ արարեալ զմեծագունի իմն կայեալ յոյս, մինչ էրն ի յաւութեան եւ ի միայնութեան կրաւնս: Ի Հայոց Թուականութեան ՈԻ և Զ (=1177): Իսկ առ ի մէնջ ի նախ գրեալս: Յամի եւթն երրորդի փոխման Սրբոյս, եւ խաւար ածելոյ բազմաց եւ յանց եղանելոյ բանի մարգարէին որ ասէ. Յերեւաց անիրաւութեան բանի արդար, եւ մեր առ ի նմանէ որբ մնալոյ: Ի չորրորդում ամի զրկելոյ եղբաւր սորա Հեթմոյ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանի եւ մեր եւ բովանդակ զարմից մերոց: Ի սեպհական ընակութենէ մերմէ, ի դղեկին Լամբրոնի կոչեցելոյ, եւ ի մեծ բանակեաց եւ հրեշտակարնակ ուխտէ՝ Սկեւռա վերձայնելոյ, յորում տեղւոջ ծնունդ եւ սնունդ Սրբոյս, և յորոց միջի և այժմ զամբարանն սորա: Եւ գրեցաւ սկիզբն գրոցս, որպէս յայտնի է սրբանութիւն գրոյն այլայլութեամբ, ի ձեռն ուրումն եղբաւր, անուանց որդւոյ Բաղանայի, ի մեծաբանա-

կեալ վանս Աննոգատ Անատանեյոյ : Իսկ այն ի Սիկուայն վերատեսչեալ, ձեռամբ ուրումն ի կղերիկոսաց սուրբ եկեղեցւոյն Զաւրվար անուանելոյ . ի յիշատակ Ներսէսի մեղապարտ ծառայի Աստուծոյ . ի դատապարտութիւն եւ միայն պիտակարար Ֆանանայ կոչեցելոյ, որդւոյ քուեր սոյն անուան սատուածայնոյ, որոց յիշատակ իւրաքանչիւրոցն ուրախութեամբ եղիցի եւ պատիւք նոցա ի վերայ մեր : Յիշատակեսցին այսպէս առաջի Աստուծոյ ով բարեկամք նորա եւ երջանիկ վարդապետաքս մեր եւ սածիչք ողւոց մերոց Գրիգոր եւ Բասիլ, առ որովք այժմ գեղեցիկ ի վարժս, որովք լցեալ աս մեզ լինին թերութիւն որքոյն յորմէ գրկեցաք, որք յազատ եւ ի Նսեմացեալ ժամանակս մեր որպէս զաստեղս լուսապայծառս փայլեն ի գիշերի, բայց միայն զի խաւարաւ մեղաց կուրացեալ մեք, ո՛չ կամիմք բանալով զաչս նոյնց : Ընդ սոսին եւ զանուցիչ մեր եւ տախտակաւ վարժիչ զԲասիլ Բուհատսոյ . եւ զայլ եւս ուսումնակից եւ զաշակերտակից անձինս . զՅովհաննէս եւ զԲարդողեմէոս : Նա եւ զամենայն զարմս մեր, զմեռեալս եւ զկենդանիս, զաշխարհականս եւ զեկեղեցականս, եւ որոց միանգամ անուանքն գրեալ են ի գրքութեան կենաց, որպէս զի ընդ նոսին եւ անուանք ձեր յիշատակողացդ գրեալ լիցին յանմահ գիրն, ի Քրիստոս ի Տէր մեր : Որում ընդ Հաւր...

Ընդաւրինակեցան գիրքս այս, ընդ առաջին գրեալսն ձեռամբ սրբոյ առնն Աստուծոյ եւ հաւատարիմ պաշտաւնէի Քրիստոսի Ներսէսի, վասն որոյ զզուշացի իւրաքանչիւր ոք թէ ո՛ գիտէ եւ առցէ ի գաղափար բանի եւ գրոյ, հրամանի եւ սարքատի եւ տան... (Հոս կ՚աւարտի, կիսա՞տ) » :

Այլ յիշատակագրութիւնք՝

40 — Սիրուն կիսախորանի մը տակ՝ Ներբողեան պատրաստաբար՝ ասացեալ վասն մեծի քահանայապետին սրբոյն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ, ի խնդրոյ Նորին համանուն եւ համադրւոյն Ներսէսի քահանայի . — Բազում զզուշաթեան եւ սակս արթնութեան պէտք են այնոցիկ որ յաստուածայնոց եւ ի սրբազանից որանց ձեռնարկեն գրուաս գովեսաբ...

Որդ իբրաւի ի վերջ կայ ձեռագրիս հետեւեալ Գկլտաւր Յիշատակարանը . — « Փա՛ռք անսկզբն եւ անեղին Հաւր եւ պատճառին բարերիս : Փառք Որդւոյ անկատարածին եւ անբաժանելին ծնեալ ի Հաւրէ անժամանակաբար : Փա՛ռք եւ Հոգւոյն Սրբոյ ելողին ի Հաւրէ ըղխմամբ անճառաբար : Առաւելին յՈրդւոյ եւ լցողին գեղեցեցի իր սուրբ : Աւրհնութիւն, գոհութիւն, փառաբանութիւն ա՛յժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն :

Որ տայ աստուածայի՛ն եւ բաշխէ աննախանձաբար զձիրս իւրական բարեացն հաւատով խնդրողացն՝ բստ իւր առատաբար ամէնաւրհնեալ հրամանին որ ասէ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով տացի ձեզ ի Հաւրէ եւ զարձեալ՝ որ խնդրէ գտանէ, եւ որ հայցէ շնորհեսցի նմա զձիրս իմոյ պարգեւի բստ չափոյ խնդրողացն ըղձի : Վասն որոյ աւրհնութիւնս տալով գոհանամ զԱստուծոյ ողորմութեամբ ողորմեցաւ եւ զթալով գոհացաւ եւ քաղցրութեամբ քաղցրացաւ ինձ մեղաւք գանացեալ անձինս, այինքն ծառայ ծառայից Աստուծոյ : Ինձ վերջնոյս ի պարս բանասիրաց, Յովհաննէս բանի սպասաւորիս որ եմ բստ մարմնոյ ծնընդեամբս Անիփցի . իսկ բստ հոգեւորական շնորհի սնմամբ եւ վարժմամբ Կիլիկոյ Սոսեցի : Եւ այժմս շնորհաւք եւ ողորմութեամբն Աստուծոյ կարգեալ վերատեսուչս եւ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք սուրբ աթոռոյն յԷրուսաղեմայ եւ սպասաւոր Ս . Լուսաւորչի յաջոյն : Որ եւ բստ աստուածձիր պարգեւացն աստուածածնոյ զոր ունէի ի գանձարանս իմ . զմատեանս աստուածային բղխին եւ շնորս, զնուրբս եւ զարտաքինսն, նոյ եւ զսուրբ մատեանս՝ զայս տեսեալ եսափափաք սիրով եսու գրել՝ զի զմի գիրքն ․ դ․ բանքն ․․․ , դ․ժդ․ ատար նորին գրչի եսու գրել հոգեւոր որդւոցելոյս իմոյ, Տէր Խաչատուր եպիսկոպոսին Ջերմնցւոյ և զայլն ․․․ կարգին թէ զծողիկն՝ Տէր Ղազար Բահանայի Դրօնաւացոյ ինքն եւ իւր նոր շառաւիղեալ Սոփիանն ուշակերան : Տէր Աստուած մեր պահեսցէ

*պատսպար անփորձ եւ անսասան կենաց եւ գրեսցէ զանուանս սոցա ի դպրութիւն կենաց ամէն:*

*Այլ եւ ես՝ յետինս եւ վերջինս ի յուսումնականաց վերջին եւ նուաստ ծնունդս եկեղեցւոյ.* Յովհաննէս վարդապետս Այնթապցի *որ եւ շնորհաւք ամենազաւր Սուրբ Հոգւոյն կարգեալ վերատեսուչ եւ Կաթողիկոսս մայրաքաղաքին* Սըսոյ. *ետու զսուրբ մատեանս յիշատակ ինձ եւ ծնողացս իմոյ հոգեւորացն եւ մարմնաւորացս գրել. այլ եւ ի վայելումն աշակերտեալ մանկանցս որ եւ թախանձանաւք եւ եռափափաք սիրով պատճառ եղեն սուրբ գրոցս գրել տալոյ. վասն որոյ յայտնի եւ արտասուաթոր աչաւք աղաչեմ զանեցգրս եւ զզգայախաղարացդ եւ զվայելողքդ սուրբ տառիս որ յի՛ սրտի Աստուած ողորմի եւ Հայր մեղայի յիշեսջիք ի մաքրափայլ սուրբ յաղաւթ՛ս ձեր ի վերոյ ասացեալքս: Եւ Տէր Աստուած մեր ձեզ յիշողացս եւ մեզ ողորմիս ասողացս, ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն. ամէն: Հայր մեր որ յերկինս: Եւ եղեւ սկիզբն եւ կատարումն սուրբ կտակիս ի Ռ եւ ԿԷ* (=1618) *թուականիս մեր ի մայրաքաղաքս ի* Հալպայ, *ձեռամբ եւ հրամանաւ նուաստ ոգւոյ՝* Յովհաննէս Կաթողիկոսի: *Եւ դարձեալ աղաչեմ ես նուաստ գրիչս* Խաչատուր եպիսկոպոս *զընթերցողս այսմ տառիս որ յի սրտի Աստուած ողորմի ասէք ինձ, մեղաւորիս եւ Տէր Աստուած մեր ձեզ ողորմեսցի ամէն »:*

*Ա. — Ի վերջ 1րդ Խորանին.— Զկանխաւ յուութեան պտուղն ի թուին ՈԻԷ* (= 1178) *ասա վերստին չարագրեալ թողի զինի եկեղեցւոյ նուաստ* Ներսէս *ի թուականիս ՈԽ և Բ* (= 1193) *յորում ամի տարբերի եկեղեցի Քրիստոսի, ի Պաղեստին շուրջ զաստուածակոխ քաղաքաւն Երուսաղէմի եւ տակաւին ես մրիպեա՛լ են ի զնոյնն ժառանգելոյ: Որոց զանկն աստուածային իմաստից ընդունակ անպատրաստ յաջողմամբ պատրաստեալ իցեն, թեթեւացեալք յանց կրից որք խնոյն զնոյն. նոքայ ամենայն իրաւք անտուեալ արար ունին յանել, տանց ամենայն ինչ ընդմիջաւց կարծեաց՝ առ կերտկրաւղս բառ Աստուծոյ զինքեանս. Յորոց մաղթեմ*

*զհամանուն կերպին եւ կերտկրողին, արբեցելոյն եւ արբուցանողին մի՛ վարկպարազի ընդունայնութեամբ տանց յիշատակի թողուլ. որով եւ դուք կեցջիք: Եւ զանպիտան գրծաւղ* Խաչատուր եպիսկոպոսն Զէյթունցի *յիշեա՛:*

*Բ. — Ի վերջ 6րդ Խորանին.— Ո՛վ եղբարք որք արբենայք զոմպուցիչ արբմամբ զոր ի սմա, զաստուածաւէր եւ զբարեմիտ Հայոց Կաթողիկոսն զՏէր Յովհաննէս զստացող գրոցս եւ զամենայն ազգատոհմ իւր զկենդանիսս եւ զհանգուցեալսն յիշեցէք աղաւթիւք ի Տէր. նա եւ զիս մեղաւոր եւ զանարժան գրիչս* զԽաչատուրս Զէյթունցի *յիշման արժանի աղաչեմ առնել եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս ամէն:*

*Գ.— Ի վերջ 7րդ Խորանին՝ զմեղաւոր* Խաչատուր եպիսկոպոսն *յիշեա:*

*Դ.— Ի վերջ 8րդ Խորանին՝ զմեղաւոր* Խաչատուր եպիսկոպոսն Զէյթունցի *յիշեա. Ի վերջ 9րդ Խորանին.— Զստացող կենսանուէր մատենիս զաստուածաւէր Հայրապետն* զՅովհաննէս Կաթողիկոսն *հանդերձ ծնողաւք եւ ամենայն զարմիւք յիշեցէք ի Քրիստոս: Ընդ սոցին եւ զիս զանարժան գրիչս* Խաչատուրս *որ եմ* Զէյթունցի, *յիշեցէք աղաչեմ զձեզ:*

*Ե. — Ի վերջ 11րդ Խորանի.— Զաստուածաւէր եւ զհեզահոգի բարունապետն զսեաւն* Տէր Յովհաննէս Կաթողիկոսն: *զՍտացող գրոյս եւ զծնողսն իւր յիշեսջիք ի Քրիստոս հանդերձ յամենայն զարմիւք: Եւ զփրկուն զախմար գրիչս* զԽաչատուր եպիսկոպոս *եւ զծնողսն իմ յիշման արժանի առնել աղաչեմ: Եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի՝ ամէն:*

*Զ. — Ի վերջ 40րդ Խորանի. — Զմահացեալս ի մահուանէ որ ոչն ունի զկենդանութիւն մահուամբ. որոյ պտուղ կենացն ժառանգութիւն, մահու սրբոյս, զի զոր զուան յինել կարծէք մաքիչ որ յինքն նախկի փոթացա, ախեաց ամբութեամբ զխակ մեզ մեղացն ախտ բազմայիմի: Որոյ ներումն խնդրել մաղթեմ, եւ սմա բացողին, զի եւ մեզ յիշատակօղ լիցի բացեալ: Նա եւ ստացողի*

գրոյս քրիստոսասէր եւ հոգեւոր Տէր Յովհաննէս կարողիկոսի Տանն Կիլիկեցւոց եւ ծնողաց նորին բացցի դուռն ողորմութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ արժանեաց ընդ Հայր և Սուրբ Հոգւոյն (յ)աւիտեանս ամէն։ Եւ զարձեալ յիշեցէք զիս մեղաւոր գծողս Խաչատուրս անարժան եպիսկոպոսն որ է Զեյթունցի եւ զծնողս իմ, զմայրն իմ Պատտասարն եւ զԹագուհին եւ զեղբարսն իմ եւ զորդիսն իմ որ փոխեցան առ Աստուած եւ ողորմի ասացէք եւ ձեզ յիշողացդ եւ ձեզ ողորմի իւր մեծամեծ ողորմութեան. ամէն Հայր մեր։

Փարիզ. 3 Օգոստոս 1949

---

## 26.— ԿԱՆՈՆԳԻՐՔ

Նոր թիւ՝ 8

ԹԵՐԹՔ՝ 166 (=332 էջեր). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20×15×3 սնթմ.— ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկաթ. Միայն Յառաջաբանութիւնը միասին է՝ իբր 36 էջ. — ՏՈՂՔ՝ 26. — ՆԻՒԹ՝ բամպակեայ ողորկ թուղթ. — ԿԱԶՄ՝ խաւաքարտեայ կաշեպատ. — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀԱՊԱՆԱԿՔ՝ չկան. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկզբնական կազմը հաստատուն քայքայուած ու ի նորոյ կազմուած, ամբողջ հատորը մնացած զօրաւոր գեղի մը հանդիպելով, որով թերթերը կարմրած ու կարծրացած ու մէկ թիւով թերթեր կարէն չարժած. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չկան. — ԳԻՐ՝ սեւ մելանով բնաիր ու միօրինակ բոլորգիր. Գլխագրութիւնները կարմրագեղ բոլորգիր. — ԱԿԶԲՆԱՏԱՌՔ՝ կարմրագեղ պարզ զարդագրեր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ թիւով ցանցառ, կարմիրով ու պարզ ծաղկումով։

ԳՐԻՉ՝ Նիկողոս երէց Ղալաթիոյ. — ՍՏԱՑՈՂ՝ անծանօթ.— ՏԵՂԻ՝ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցի. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՀ.— Ձեռագրիս ակէրն էր Հայկազեան Քէհեաեան ընտանիք՝ որ նուէր գրաւ Անթիլիասի Մատենադարանին։

ՌՀ = 1621

Մատեանս է կանոնագիրք, թղթեայ, որ կը բովանդակէ՝

1. — էջ 1.— Բովանդակութեան ցանկ։

2. — էջ 10.— Համարէն բան ասացած առաքելական. — Յարեւելս աղօթք կար։ Կիրակէի. պատարագամատոյց։ Զորեքշաբթի պահելոյ։

3. — էջ 5.— Յառաջաբանութիւն Առաքելական կանոնաց. — Սահմանք և Կանոնք առաքելականք։ Զոր կարգեցին առաքեալքն քրիստոնէից՝ զկնի վերանալոյն Քրիստոսի առ Հայր ի յերկինս...։

4.— էջ 25.— Կանոնք Առաքելականք. — Առաջին կարգեցին եւ եդին առաքեալքն ոչ ելթէ յանձանց իւրեանց յիմեկոց բացն...

5.— էջ 37ա.— Երկրորդ կանոնք Առաքելականք՝ իր բովանդակութեան ցանկով՝ իբր 62 գլուխք։ Սահմանք և կանոնք Առաքելոյն Կղեմայ՝ Առաքելոյն հետևանաց. — Եպիսկոպոս ձեռնադրեսցի յեպիսկոպոսաց երկուց կամ երից։ Երէց կամ սարկաւագ կամ այլ ոք ի ժառանգաւորաց ի...։

6.— էջ 53բ. — Այս գ գլուխս ոչ կայ աւրէն. — Եպիսկոպոս որ իցէ զաւառացն առնիցի իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով, մի իշխեսցէ յայլոց իշխանութեանցն ձեռն առնուլ ի մերոյ եկե...։

7. — էջ 54բ.— Կանոնք եւ սահմանք Առաքելոցն Թադէոսի, ի գնալն նորա յՈւռհայ քաղաք եւ լուսաւորել նորա մկրտութեամբ սուրբ աւազանն. — Յայժամ լուսաւորեցաւ քաղաքն մկրտութեամբ ձեռնադրեցան եպիսկոպոսունք եւ քահանայք եւ սարկաւագունք եւ Հաստատեցան վարդապետք եւ...։

8. — էջ 66ա. — Կանոնք յետ առաքելոց հայրանց հետեւողաց՝ իբր գլուխք իդ. — Եթէ ոք հեղցուցանէ զպտղոյ իբրեւ զխեղ կամ ձուութեան...։

9. — էջ 73ա. — Գլխաւոր կանունք ճն. — Վասն իբիցան՝ որք բանութենէ հեթանոսաց մինչեւ ամենեանս ածեալ ի վերայ եւ մահ ազատնել...։

10. — էջ 81բ. — Կանոնք Նիկիական. — Սահմանք և կանոնք որ եղան ի սուրբ Կաթողիկէ եկեղեցւոջ ի մեծ ժողովն Նիկեայ...։

11.— էջ 89բ.— Կանոնն Կոստանդիոսի թագաւորին՝ առ եպիսկոպոսն եւ առ ժողո-

*մարդն գի չարեաց եւ ամբարշտաց յծակից եղեւ Արիոսի․․․։*

12․— էջ 90բ․ — Հաւատոյ սահմանք այս է․ — *Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ․․․։*

13․ — էջ 92բ․ — Կանոնք երկրորդ Նիկիայկանք՝ զոր եդին *յժը* եպիսկոպոսունք կրկնաբանելով կարճ ի կարճոյ․ — *Ոչ է պարտ կրճատելոյն եւ ներքինիսն սպարեալ զինքեանս ի վիճակ քահանայութեան յառաջ ածելոյ․․․։*

14․ — էջ 100բ․ — Կանոնք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին Հայրապետին․ *գլ․* է․ — *Քահանայ որ ի մեղս գտանելոյ է, ժ ամ ապաշխարեսցէ ջերմեռանդ սրտիւ․․․։*

15․ — էջ 102բ․ — Կանոնք Աթանասի՝ գլուխք ձէ․ — *Յանկ գլխոց․— Ի ժամանակին այնմիկ երեւեցաւ այր մի Գորգիոս անուն արիանոս ի Կապադովկիոյ եւ․․․։*

16․ — 122բ․— Երանելոյն Մակարու սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետին կանոնական թղթոյն ի Հայս վասն կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց՝ զոր չէ արժէն ընդ սահման եւ ընդ հրաման․ գլուխք ը․ — *Աճայ վասն ահի եւ երկիւղի Աստուծոյ եւ փափաք սիրոյ․ բարեպաշտութեան ձերոյ փութացայ գրքուցանել գրաբեալ եւ զպարզամիտ․․․։*

17․ — էջ 131․ — Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրիգորի աստուածաբանի Ազիաց (*այսպէս*) եպիսկոպոսի․ Յաղագս ուղղափառութեան հաւատոյ ապաշխարութիւն յանցաւորաց․ *գլուխ* ը․ — *Աշակերտեալք սրբութեան հաւատոյ զաւանութք սրբոյ ուխտիս, քարոզիչք ճշմար․․․։*

18․ — էջ 140ա․ — Մեկնութիւն եռամեծի եւ գիտնական եպիսկոպոսապետի Բարսեղի․ *րանն* ծա․— *Արտաքնեայքն յեկեղեցւոյ ամենայն հեթանոսաց հերձուածոց․ իսկ կէս հերձուածողք կոչեցին ոչ միայն․․․,*

19․ — էջ 206բ․— Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի գիր դաւանութեան՝ յաղագս կարգի եկեղեցւոյ եւ պտղոցն ժողովրդականաց ընծայելոյ ի տուն Աստուծոյ․ — *Քանզի սուրբ Լուսաւորիչն Հայոց մեծն Գրիգորիոս ծնեալ վերստին զՀայաստանեայս աւազանին ծննդեամբ․․․։*

20․ — էջ 211ա․ — Սահմանք եւ կանոնք կարգի Աստուծոյ սուրբ եկեղեցւոյ՝ զոր եդին վարդապետք Հայոց՝ ի յառաջին առաքելական եւ Նիկիական կանոնաց հաստատութեան․ — *«Պարտ է եւ պատշաճ է նախավարի հօտոյ զարուեստագործութիւն նորին եւ չարիքս ծովուն նկատել․․․։*

21․ — էջ 224բ․ — Նորին Սրբոյ Սահակայ Հայոց Հայրապետին՝ թէ որպէս սահմանեցաւ կարգ, ուխտ եւ որոշումն վկայից բան երրորդ․ — *Քանզի բազումք կարծեցին ողխալութեամբ այլ զմն․․․։*

22․ — էջ 233բ․ — Նորին թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց տանել զընդանիս սուրբ եկեղեցեաց․ — *Այցելու եւ հոգաբարձու հայր է վասն այսորիկ տանց ակնածութեան պարտի խնամել․․․։*

23․ — էջ 248ա․— Կանոնք երկրորդ Անտիոքայ — *Որպէս երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան, այլ ինքն իսկ․․․։*

24․ — էջ 252ա․ — Յոհանն Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի․ *կանոնք*՝ ը․ — *Վասն որոց պատուէրն ի կանոնս ի շաբաթու ոչ հրամայի պահել եւ․․․։*

25․ — էջ 256բ․ — Տեառն Յոհաննու Մանդակունեցւոյ Հայոց կաթողիկոսի՝ *աշակերտ* Մեծի Սրբոյ Սահակայ Հայրապետի *ըն* կանոնք․ — *Արդ եւ զայս բան խնդրեմ գիտելոյ աւետ թէ որ մանուկ ախմար․․․։*

26․— էջ 258ա․— *Հարցմն*․ կանոնք․ Յովհաննու Սիւնի քաղաքի եւ առընթերս գրեալ։ Պատասխանիքն նմին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ նորին աթոռակցաց եպիսկոպոսաց բազմաց․ *գլուխք* ժե․ — *Եթէ պարտ իցէ եպիսկոպոսին մինչդեռ եկեղեցւոյն իշխում իցէ․ եւ ի գործս եպիսկոպոսութեան երկայթս տանել անձն իւր եւ այն վարել զանեզութեան․․․։*

27․ — էջ 261ա․ — Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի՝ *գլ․* իբ․— *Որք պատմեն աստուածային արբնագրութեան անեղին աշակերտութեան․․․։*

28. — Էջ 268բ. — Կանոն և սուրբ ժողովոյն Զոր ա մի խնչ որդի Կոստանդիանոսի կայսեր բարեպաշտ թագաւորի: Հոռոմոց· այս գիր հաստատութիւն գրեցաւ: Յուղիղ կարգի եւ կանոնաց սրբոց եկեղեցւոյ եւ առաջնորդաց և ժառանգաւորաց հրամանաւ երանելոյն կաթողիկոսի Հայոց Ներսէս շնորհալի այլոց եպիսկոպոսաց որոց անուանք՝ դրոշմեալ կան գրով կատարման կանոնացդ: *Գլուխ. Ա*: Վասն առաջնորդաց: Վասն եպիսկոպոսաց թէ ոչ է պարտ այլոց... — *Զառաջնորդաց սրբոց եկեղեցւոյ այսինքն է եպիսկոպոսաց բառ կանոնի...:*

29. — Էջ 272բ. — Սրբոյն Եղիշէի կանոնական գրոց. *գլուխ. ա.* վասն ղխտհարաց թէ պարտ իցէ արէնս տալ կամ հրեխայիցն կնիք՝ մինչդեռ դեռ ի նման է. *խզ* — *Բազում տեսաք են ի մարդ վասն գի...:*

30. — Էջ 291ա. — Թուղթ զոր առաքեաց Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի առ Կոդրատոս՝ զի ցուցանէ նմա թէ զինչ հրաման եառ Տիրիկոս կայսր վասն Հրէիցն որ ի խաչն հանին Քրիստոս. — *Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի առ Կոդրատոս անունդ բարի եւ աշակերտ հաւատացեալ ի տէր ողջոյն: Լուայ ես եւ որպէս եղէ...:*

31. — Էջ 293բ. — Գիր կանոն(*ական*) Սուրբ Եպիփանու Հայրապետի. — *Ի վերայ բազում նշանաց եւ մարգարէութեան երեւի այս շնորհեալ երանելոյն...:*

32. — Էջ 301 ա — Մեծի Աթանասի բանէն որ զկայէնէ. — *Արդ սատանաւր գալբաւնեանն գաղարեցուցուք պատուատնաւ...:*

33. — Էջ 302 ա — Երանելոյն Միսրոպայ Հայոց Վարդապետին. — *Բարիք ոգւոյս ամն ի սրբոցն գրոց գիտացէք աւէ ո՛վ սիրելիք զի թէպէտ...:*

34. — Էջ 303 ա. — Յոհաննիսի իմաստնասիրի Հայոց Կաթողիկոսի Յիշատակարան. — *Լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած հնազանդութիւն ընդհանուր հաստատելոց ի Քրիստոս...:*

35. — Էջ 308 բ — Վասն թագաւորաց Հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացին. — *Մովսէս Խորենացի գրած թագաւորացն Հայոց այսպէս կարգէ: Յորեթէ որդի Նոյի: Գամէր: Թիրաս...:*

36. — Էջ 319 (*մինաւին*). — Խաւսք եւ խրատ եւ իմաստութիւն Խիկար իմաստնոյ. — *Յամս Սենեքերիմայ Նինուէի եւ Ասորեստանեաց: Ես Խիկարս գրիր էի ....:*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Էջ 317 (Գլխաւոր Յիշատակարան). — *«Փառք ամենասուրբ աստուածոյն սրբազանի բանիցս կանոնական սահմն որ յաժանդակեաց զիմ տկարութիւնս սիրելաւորեալ զնամակս զայս զայրի երջանկացն զաստուածազգեացն զառաքելոցն սրբոցն եւ զնոցին աշակերտացն հաւատոյցն ճշմարտութեան: Եւ զվարդապետացն սրբոցն զանձանց մաքրագոյնից եւ աստուածական խոստովանողաց հաւատոյ յութեան որք իւրաքանչիւր ժամանակս փայլեցին իբրեւ զլուսաւորս աշխարհի զխաւար կռապաշտութեան եւ զհերձուածողացն չարութիւն փարատեցին. զաէղն զանութեան եւ զզօղն մնոտակար իբրեւ զմշակս երկնաւորս արմատախլեցին եւ ընցանեցին ի բանաւրկուէն զոր ամն չարութեան էր սկիզբն անցն տարածեալ զայն աշխարհն զբռամբքն կալեցին խրձունս ա. ի յայրել. եւ զցան մաչոյրեալ ոչ բառ մարմնոյ այլ զհոգւոյ ողեցանեալք աշխարհութեան ողջացուցին եւ զժանդախտն որ անհնարին էր ի բժշկութիւն յուսով թագուեին ողխացուցին եւ զհատատ հաստատեցին եւ ամրացեալ մեզ տղխ տղխ հիմանց տաճարեցին զեկեղեցիս զարդարեցին եւ զխորանին մանկունս նորա լուսաւորեցին: Զբաժանեալս աստուածարանս զարդարեցին եւ զժողովուրդս բառ ձեռամբ նոցա հնազանդեցին: Զմաւանդեալսն սրբազանեցին եւ զկուսանս պարկեշտացուցին զարդարս խրատեցին եւ զմեղաւորս զարձուցին մարդասիրութեամբ անսան. զմեծամեծան կանկեցին եւ զփոքունս ոչ անտես արարին: Ըստ քանիաւոութեան աւուրց եւ ամաց եւ ամաց, զժամանակաց աշխարհութիւն սահմանեցին: Աղաւթիւք եւ պահովք զմեղկութիւն ոգացն ընդեալ հրամայեցին եւ ջերմեռանդն*

*արտասուաւք զ՚նուրն փոյլակն չիջուցին. Արդ այս գեղեցկայարմար տաւիցս ցանկացողացս եղեալ եւ թշուառականս ամէն մեղաւք է լիք եւ անարժանս։ Արդ գրեցաւ Կանոնագիրքս ձեռամբ սուտանուն* Նիկողոս երիցուս. *թվին ՌՀ* (=1621) *ի քաղաքն* Կոստանդնուպօլիս *ի* խալաթիայ *ի դուռն* Սուրբ Լուսաւորչին *ամէն։ Դարձեալ յիշէք զվարպետն մեր* Սարգիսն *որ եւ մեզ (զօրինա՛կն). շատ աշխատեցաւ. Աստուած ողորմի նմա։ Դարձեալ յիշեցէք զ՚նայր իմ* Մելքսէթն, *զմայրն իմ* Շահնիկարն*(ու) Աստուած ողորմի աւէք նմա*(*)։ *Դարձեալ Աստուած ողորմի աւէք* Վարդէվանին, Շահանեցին. *(այսպէս). ամէն։ Դարձեալ յիշեցէք զեղբայրն* Պօղոսն, Վարիպշան, Տիրանջին։ *Աստուած ողորմի իւրեանց հոգուն՝ ամէն։ Դարձեալ ողորմիս տացէք* Մարէմին, Մահպուպին, Տուրվարին, Մէրհէ(*), Թուրվանտին *ամէն։ Այս սուրբ հայրապետք որ այս գրիս մէջն գրեցաւ զիմ անարժանիս ձեռաւքն՝ նայ(*)բարէխաւս լինին առ Աստուած իմ մեղաւորիս աւրինակ շնորհողիս. սուրբ աստուածածնին բարէխաւսութեամբ եւ սուրբ հայրապետաց աղաւթիւքն ողորմի ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն քրիստոնէից. ամէն. Հայր մեր որ յերկինս»։*

Բ. — Էջ 332՝ *ի վերջ «Խօսք Խիկարին». — ...եւ որք կարդաք զգիրս կամ աւրինակէք թղութին խնդրեցէք ստացողի գրոյս եւ ինձ մեղապարտ գրչիս սուտանուն* Նիկողոս երիցուս *որ չեմ արժանի յիշել զանուն իմ ի տառս. եւ ամենայն ազգականաց իւրոց եւ ծնողաց եւ եղբարաց. Աստուած ողորմի ասէք ամէն։* Զէյթուն *Երդայ գիրս մնայ ով որ ողորմի ինձ եւ նորայ որ զայս գիրս կարդայ եւ հաւաքմամբ զՏէրն աղաչեա՛յ որ եւ մեզ զարքայութեան դուռն բանայ կարդացողաց ամենեցուն՝ ամէն։ Արդ գրեցաւ* Կանոնգիրքս Կոստանդինուպօլիսն, *ի* Ղալաթիեայ *ի դուռն* Սուրբ Լուսաւորչին. *թվին ՌՀ։ Մարտ* ·իա· *արն գ։թ հանց ցուրտ եղաւ որ ծովն պաղեցաւ որ մարդիք Ըսկուտարու պաղին վրա(յ) ով՛ն* Ըսկոյտարն *անցան. հացին դրամ* ·մի· *ծախուեցաւ։*

Գ. — Էջ 316 բ. — *Ձեռքս երթայ գիրս մընայ. մարմինս ի հող դարձեալ զանայ, հոգիս յոր տեղ մեր Տէրն կամայ։*

Պէյրութ, 4 Մայիս 1945

---

# 27 — ՄԱՇՏՈՑ

Հին թիւ 31

ՋՀԷ=1528

*ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 13×10×5 *սնթմ.* — *ԹԵՐԹՔ՝* 298 (=596 *էջք*). — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն.* — *ՏՈՂՔ՝* 19. — *ՆԻՒԹ՝ լաւ յղկուած մագաղաթ.* — *ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ, յանկյով ու թիկունքով. կողքերուն վրայ ծաղկեայ տաղումներով.* — *ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահպանուած. կազմին յանկյն ու կողը հինցած ու վնասուած.* — *ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ երկու թերթ ի վերջ, մէկը կիսովին պատռած.* — *ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չկան. զանոնք կը փոխանորդեն զանազան բոլորագիրք.* — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ պարզ ծաղկումներով թռչնագրեր եւ զարդագրեր՝ բոլոր գլխակարգութեանց սկիզբը.* — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ նոյն ոճի ծաղկումներ բոլոր բաժանմանց էջերու վրայ.* — *ԽՈՐԱՆՔ եւ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ մէկ հատ, սկիզբն ու* 108*րդ էջի վրայ, սովորական ծաղկումներով.* — *ԳՐԻՉ՝ Կարապետ երէց.* — *Առաջին ՍՏԱՑՈՂ՝ անյայտ. երկրորդ ստացող՝ Գոմքցի Կիրակոս.* — *ԺԱՄԱՆԱԿ՝ ՋՀԷ* (=1528). — *ՏԵՂԻ՝ Համշէնի Ս. Խաչիկ հայր Անապատ.* — *ԿՆԻՔ՝ առաջին էջին վրայ՝* Տէր Յովհաննէս, *բոլորշի եւ մեծադիր։*

*Մատեանս է՝* Մաշտոց՝ *մագաղաթեայ, փոքրադիր ու հնագրուշմ, որ կը բովանդակէ՝*

1. — *Էջ* 1–2. — Այս ինչ հաւաքեալ կայ ի գիրքս յայս. — *Վասն ջուր...։*

2. — *Էջ* 3–31. — Կանոն ջուր աւրհնել. — *Սղ. Ձայն տեառն ի վերայ ջուրց եւ աստուած փառաց որոտա և ընթերցուածս ի չորրորդ թագաւորութեան։ Եւ առեն արք քաղաքին ցեղիսէէ։ Աճաւասիկ բնակութին քաղաքիս բարի է որպէս եւ տէրդ իմ տեսանէ եւ ջուրքս չա՛ր...։ Ընթերցուածս*

յՅիսուսեայ մարգարէէ. — Այսպէս ասէ Տէր. եւ առէք ջուր ուրախութեան...։ Ընթերցուածս յԵզեկիէլէ մարգարէէ. Եւ եմոյծ զիս հոգին առաջի դրան տաճարին...։ Գաւլոսի առաքելոյն ի Կորնթացւոց թղթոյն է ընթերցուածս. — Ոչ կամիմ եղբարք՝ եթէ ազէտք...։ Ալէլու. ուրախ լիցին երկինք եւ ցնծասցէ երկիր։ Աւետարան ըստ Մատթէոսի. — Ցաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ...։ Վասն ի վերուստ խաղաղութեան...։ Աւրհնութիւն ջրոյ զոր առասցեալ է Բարսղի հայրապետին. — Աւրհնեալ ես տէր Աստուած ամենակալ...։ Եւ ապա տեառնագրեն եւ ասեն։ Աւրհնեսցի, ածցի եւ սրբեսցի ջուրս այս, նշանաւ...։

3. — ԺԷ 32. — Կանոն մկրտութեան առնել։ Առ Աղ՝ ի Թիւ. Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ. գ. անգամ ալէլուիա։ Աւրհնութիւն եւ փառք եւ զպսակն սլորէ։ Աղաւթք ի վերայ երեխային՝ նախ քան զմկրտութիւն։ Այս է մկրտութեան սկիզբն. — Տէր Աստուած մեր, ատսուած բարերար...։ Եւ ապայ Ցաւուր մկրտութեան առ դուռն եկեղեցւոյն կատարեսցէ քահանայն զայս կարգ հանդերձ միաբան ուխտին, ի վերայ տղայոց եւ չափահասակաց։ Առ Աղ ի Թիւ. գ. խզ. Առ քեզ տէր համբարձի. խե։ Դատ արա ինձ տէր զի ես յամբծութեան. Ծ. Ողորմեայ ինձ Աստուած...։ Եւ սարկաւագն քարոզէ. եւ եւս, վասն երեխայիս աղաչեսցուք...։ Քահանայն ասէ. գ. տէր ողորմեա եւ զաղաւթս զայս։ Ընկալ մարդասէր Աստուած...։ Քարոզէ սարկաւագն՝ եւ եւս՝ վասն քաւութեան մեղաց, իջանելոյ...։ Քահանայն ասէ զաղաւթս՝ Տէր Աստուած մեծ եւ փառաւորեալ...։ Եւ ապա հրամայէ երեխային դառնալ յարեւմուտս. Եւ երդմնեցուցանէ երիցս անգամ ասելով այսպէս՝ Հրաժարի՞մք ի չէն սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա եւ ի պատրանաց նորա եւ ի պաշտաւնէ նորա եւ ի գնացից նորա, եւ ի հրեշտակաց նորա. գ. կրկնէ։ Եւ դարձեալ հարցանէ քահանայն։ Հրաժարի՞ս, հրաժարի՞ս, հրաժարի՞ս։ Եւ ըստ միոյ հարցմանն ասասցէ՝ հրաժարիմ։ Ապա՝ դարձուցանէ յարեւելս, խոստովանելով զմի աստուածութիւն սրբոյ երրորդութեան՝ ասելով այսպէս՝ Հաւատա՞ս յամենասուրբ երրորդութիւն, ի հայր եւ յորդի եւ ի հոգին սուրբ։ Հարցանէ քահանայն այսպէս։ Հաւատա՞ս ի հայր։ Հաւատա՞ս յորդի։ Հաւատա՞ս ի սուրբ հոգին։ Եւ ըստ միոյ միոյ ասասցէ երեխայն՝ հաւատամ, հաւատամ, հաւատամ։ Եւ դարձեալ հարցանէ երիցս անգամ։ Հաւատա՞ս, հաւատա՞ս, հաւատա՞ս։ Եւ առ միոյ միոյ ասասցէ երախայն, հաւատա՛մ։ Եւ պաշտեն զհաւատամքն Նիկիոյ ի բուն։ Ապա ասեն Սաղմոս ի Թիւ։ ՃԺԷ։ Խոստովան եղերուք տեառն զի բարի է՝ մինչեւ ցայն վայրն՝ բացէք ինձ զդրունս արդարութեան։ Եւ բացեալ զեկեղեցին մտանեն ի ներքս։ Ճրգ. գձ։ Արեգակն արդարութեան Քրիստոս ծագ. Երթալով առաջի աւազանին, պատրաստ ունելով զիւղն սուրբ։ Քարոզէ սարկաւագն։ Եւ եւս։ Վասն իջանելոյ յիւղս յայս շնո՛րհ՛ք ամենասուրբ հոգւոյդ զտէր աղաչեսցուք։ Երեք տէր ողորմեայ։ Քահանայն ասէ զաղաւթս զայս։ Աւրհնեալ ես տէր Աստուած մեր որ ընտրեցեր զժողովուրդ...։ Եւ ապա արկանէ զջուրն յաւազանն, խաչանման։ Աղ. իը. Ձայն տեառն ի վերայ ջրոց։ Ընթերցուածս յԵզեկիէլ մարգարէէ։ Այսպէս ասէ Ադոնիա տէր. եւ ցանեցից...։ Ալէլուիա։ Աղ. խգ։ Տէր հովուեսցէ զիս եւ ինձ։ Աւետարան ըստ Յովհաննու։ Եւ էր այր մի ի փարիսեցւոց անտի։ Քարոզութիւն ի վերայ մկրտութեան ջրոյն։ Վասն խաղաղութեան ամենայն...։ Եւ կացուսցէ զնորածնեալն մաւտ յաւազանն եւ ասէ զաղաւթս զայս։ Դու տէր զաւրութեամբ քով մեծաւ...։ Եւ կնքէ խաչիւ և մեռանաւ զջուրն՝ աւրհնեսցի եւ սրբեսցի ջուրս։ Եւ արկանէ զսուրբ իւղն յաւազանն խաչանման. եւ ասէ ձայնիւ։ Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։ Եւ մերկանայ երեխայն։ Եւ ասէ զաղաւթս զայս. — Որ կոչեցեր զծառայս քո տէր...։ Եւ իջուցանէ զնորընծայն յաւազանն խնդրելով զանունն։ Եւ արկանէ ի սուրբ ջրոյն ի վերայ գլխաթանն երիցս անգամ եւ ասէ այսպէս։ Այս անուն մկրտի յանուն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց եւ ընդունի զորդեգրութիւն որդեգրութեան մեծիդ աստուծոյ

հաց, լինել մասնակից Քրիստոսի եւ առնուլ հոգւոյդ սրբոյ։ Եւ լուանայ զբովանդակ մարմինն եւ ասէ։ Որք ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս զգեցեալ էք. ալէլուիա։ Եւ որք ի հայր լուսաւորեցարուք սուրբ հոգին. բերկրեսջիք ի ձեզ։ Սղ. բազում նեղութիւնք են արդարոց։ Փառք եւ երկրպագութիւն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ։ Եւ հանէ յաւազանէն եւ տայ ցկնքահայրն։ Եւ ընթեռնու զաւետարանս։ Աւետարան ըստ Մատթէոսի. — Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէ...։ Եւ ասէ Հայր մեր որ յերկինս ես։ Զկնի զաղօթս զայս։ Որ լուսաւորեցեր զարարածս քո Քրիստոս աստուած, ծագելով զլոյս...։ Եւ ապա տեառնագրէ սուրբ եւղովն։ Նախ զճակատն եւ ասէ. Եւղ անուշ հեղեալ յանուն...։ Եւ ապա զգեցուցանէ եւ թագ կապէ։ Եւ ասէ զաղօթս. Աւրհնեալ ես բարերարդ Աստուած որ...։ Եւ հանէ ի բեմն եւ երկրպագեցուցանէ սուրբ սեղանոյն, համբուրելով յերեսին կողմանս։ Այս անուն եկեալ կամաւ ի մկրտութիւն...։ Եւ ասէ զաղօթս։ Տէր Աստուած ամենակալ, հայր տեառն...։ Եւ հաղորդէ ի սուրբ խորհրդոյն եւ ասէ։ Սղ. Երանի՛ որոց թողութիւն եղեւ մեղաց եւ։ Քարոզ. փառք ի վե...։ Փառք քեզ թագաւոր յաւիտենական որ արժանացուցանես...։ Եւ ողջունեալ արձակեն։ Եւ յաւուրն ութերորդի մերկացուցանէ քահանայն զթագն։ Եւ ասէ զաղօթս։ Որք մկրտեցան եւ լուսաւորեցան...։

4. — էջ 54. — Կանոն խաչ արկանելոյ հարսանեաց։ Աւետեա՛լ զխաչ երկոցունց դնէ քահանայն առաջի սեղանոյն եւ գինի եւ ասէ՝ Սղ. Ետուր երկիւղածաց քո նշան զի ապրէ։ Պաւղոսի առաքելոյ ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցու։ Այլ ինձ քաւ լիցի պարծել բայց միայն ի խաչ...։ Ալէլու։ Սղ. Նշանեցաւ առ մեզ լոյս։ Աւետարան ըստ Մատթէոսի։ Եւ ապա երեւեսցին նշան որդւոյ մարդոյ...։ Եւ քարոզէ՝ որ խաչիս։ Եւ արկանէ զխաչն։ Եւ ասէ զաղօթս զայս։ Աստուած յաւիտենական որ զանջատեալս եւ զբացորոշեալս զուգաւորես ի միաւին եւ միաւորութեամբ կապես անքակտելի։ Որ աւրհնեցեր զԻսահակ եւ զՌեբեկայ, եւ զմառանգս նոցա եւ առիր աւետեաց քոց երեւեցուցեր. լինելին. ամէն, եւ այժմ աւրհնեա՛յ զսոսա եւ առաջնորդեա՛յ սոցա, յամենայն գործս արդարութեան, մարդասէր եւ ողորմած Աստուած եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ յ...։ Խաղաղութիւն ընդ ամենեսեան, Աստուծոյ երկիր...։ Տէր Աստուած մեր որ ի հեթանոսաց խաւսեցար քեզ եկեղեցի սուրբ. եւ արդ ինքնին տէր աւրհնեա՛յ զուգաւորութիւնս զայս, եւ սրբեա՛յ եւ միաւորեա՛յ եւ խաղաղութեամբ պահեա՛յ եւ քեզ փառք...։ Եւ առեալ զբաժակն՝ ասէ. Տէր Աստուած մեր՝ որ զամենայն ինչ իմաստութեամբ արարե՛ր, եւ հաստատեցեր զերկիր, եւ զարդարեցեր զհաստատութիւն, ինքնին, տէր աւրհնեա՛յ զխաչս եւ զբաժակս, զի յամենայն ժամ զոհասցուք զպարգեւաց քոց, եւ քեզ հան...։

5. — էջ 57. — Կանոն պսակ առնելոյ. — Սղ։ Տէր ի զաւրութեան քում ուրախ եղիցի թագաւ։ Ընթերցուած ի Ծննդոց։ Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ...։ Դարձեալ ի Ծննդոց. Եւ ասաց Աստուած ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել...։ Ընթերցուած յԵսայի մարգարէէ. Ցնծասցէ՛ անձն իմ ի տէր, զի զգեցոյց ինձ...։ Պաւղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցու։ Կանայք իւրեանց արանցն հնազանդ լիցին...։ Ալէլ...։ Կացցէ զգլխոյ ընդ աջմէ քո։ Աւետարան ըստ Յովհաննու. Եւ յաւուրն երրորդի հարսանիք...։ Քարոզէ՝. փառս զաւանելոյ մեզ զհայր. Եւ ասէ զաղաւթս։ Տէր Աստուած զաւրութեանց եւ արարիչ ամենայն արարածոց... եւ առեր ոսկր յոսկերաց նորա եւ մարմին ի մարմնոյ նորա. կարգեցեր ՚ւ շինեցեր կենակից նմայ, յորդէծնութիւն եւ յանումն արարեր զնոսա ասելով՝ աճեցէ՛ք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր, զոր տեսեալ մարգարէն ասէ... Յաղագս այսորիկ պատուական է հարսանիք եւ սուրբ են անկ...։ Յամենայն չարութենէ... որպէս զի մի՛ յայտնեալ երկուս կոչեսցին... պարկեշտ վարուք, սգաստ մտաւք, անբիծ խորհրդով... պահպանեսցին ի հրեշտակական զաւրութենէդ... որպէս զի կեալով եւ բարի հանդիսանալով առա-

չի քո, անցցեն զորդիս···: Եւ ապա բազկապէ: Յանուն քո կենդանի Աստուած, արարիչ երկնի եւ երկրի, *որ արարեր զամենայն ինչ հրամանաւ քով. ստեղծեր զմարդն զառաջին Ադամ եւ* հաստատեցեր ի նմանէ զամուսնութիւն Եւայի. պսակեցեր զնա փառաւք քովք եւ ասացեր բարի են յոյժ: Աւրհնեցե՛ր զամուսնութիւն Սեթայ եւ ի նմանէ անեաց երկիր մինչեւ զՆոյ: Աւրհնեցե՛ր զամուսնութիւն Նոյի եւ ի նմանէ ժառանգեցաւ մինչեւ զԱբրահամ: Աւրհնեցե՛ր զամուսնութիւն Աբրահամու, եւ զԻսահակայն եւ զՅակովբայն եւ անեցին յերկրի եւ յերկինս պսակեցան: Աւրհնեցեր ի ցեղէն Յուդայ՝ զԴաւիթ եւ ի զաւակէն Դաւթի՝ զՄարիամ եւ ի նմանէ ծնար փրկիչ աշխարհի· քանզի դու եղեր պսակիչ ամենայն սրբոց, այնմ աւրհնութեամբ աւրհնեսցի պսակս այս եւ ամուսնութիւն սոցա, զի ծառայք քո եւ ազախնայք խաղաղութեամբ վարեսցեն զկեանս իւրեանց, ամենայն աստուածպաշտութեամբ. զի հեռասցի սատանայ ի միջոյ սոցայ եւ եկեսցէ ողորմութիւն քո ի սոցայ *եւ քեզ հանցեն զաւրհ···: Եւ յաւուրն ութերորդի վերացուցանէ քահանայն զպսակն. Տր. զկ: Բանն որ ընդ հաւր յէութեան: Սղ: Բղխեաց սիրտ իմ զպատգամս քո···: Աւետարան ըստ Մատթէոսի: Եւ զնայլն զՀեռ Յիսուսի ծաղամուրդք բազումք···: Քարոզ: Լուիցէ տէր ձայնի··· Եւ ասէ զաղաւթս այս···:* Աւրհնեալ ես տէր Աստուած ամենակալ, որ արարեր զամենայն արարածս քո, զերկնաւորն եւ զերկրաւորս ի բանից քո կենդանի եւ զմարդն ստեղծեր ձեռամբ քովք. ըստ պատկերի աստուածեղէն կերպարանաց քոց եւ զուգեցեր եւ կարգեցեր նմա բանից ընկեր եւ կենաց կցորդ· զոսկրն զոր առեր յոսկերաց նորա, եւ մարմին ի մարմնոյ նորա, եւ եղեն երկոքեանն ի մարմին մի: Վասն զի դու միայն ես բարերար եւ ողորմած Աստուած որ մարդէութեանս մերում պատրաստեցեր զերկնաւորն եւ զերկրաւորս. զերկնաւոր պսակն սրբոց կուսանաց, եւ զերկրաւոր պսակս ի զուգաւորութիւն ամուսնութեան:

*Աւրհնեա՛յ տէր, զամուսնութիւն սոցա, որպէս աւրհնեցեր զամուսնութիւն Աբրահամու եւ զՍառային···:* Աւրհնեա՛յ, տէր, զսոսայ յաւրհնութենէ հոգեւոր· եւ որպէս ասացեր ի ձեռն առաքելոյն՝ թէ *պատուական է ամուսնութիւն եւ սուրբ են անկողինք նոցա, սուրբ պահեա՛յ, տէր, զանկողին ամուսնութեան սոցա, եւ շնորհեա՛յ սոցա, զաւակ ըստ կամաց քոց,* զի աւրհնեսցին ի բանից քո կենդանի· զոր ասացեր անեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր: Անեցո՛յ զսոսա յանուանն սրբութեան քո, որպէս զի բազմասցի զաւակ սոցայ, եւ քեզ հանցեն զաւրհնութիւն եւ զփա···: *Խաղաղութիւն ընդ ամենեսեան, Աստուծոյ երկրպա: Տէր Աստուած մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ···:Նայեա՛յ, տէր, քաղցրութեամբ քով* եւ անանց աւրհնութեանց արժանի արա՛յ զսոսայ *եւ փոխանակ այսմ պսակայս, ստացեա՛յ զչրեչասակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զսոսայ, անարատ·* զգուր միմեանց յորդորելով:

6. — էջ 77. — կանոնն եազարդ տալոյ·

*Ասեն զանրբծան եւ աւրհնութիւն ի նեղութեան չարակն: Ի վերանայ յինէն: Քարոզ՝ վասն ի վերուստ խաղաղութեան. — Եւ ասէ զաղաւթս զայս:* Տէր Աստուած ամենակալ, ամենախնամ, ծածկագիտող որդւոց մարդկան՝ որ քննես խորհս քո տեսչութեամբդ զծածկոյթս եւ զգաղտնիս մարդկան որպէս դու իսկ խաւսեցար առ Նոյի եւ ասացեր՝ թէ միտք մարդոյ հաստատեալ է ի խնամս չարի ի մանկութենէ իւրմէ: Եւ հաղբք սրոգայթից բանսարկուին որսայ հանապազ: Եւ արդ, տէ՛ր բարերար, հայեա՛յ ի ծառայս քո եւ ի կենդանասքուղս շնորհաց քոց ցաւղեա՛յ ի սա, զի զղջացեալ խոստովանեսցի զմեղս իւր զանըմբերելի, զի լուաք ի սրբոց պատուիրանաց՝ եթէ մեղք որ խոստովանին նուազագոյն լինին եւ որ ոչ խոստովանին եւ զքան զեւս յանձրանայ: Եւ այժմ ողորմած Աստուած, շնորհեա՛ սմա զիմաստութիւն. յելս նանապարհաց: Բա՛ց զբերան սորա ի խոստովանութիւն եւ մի՛ ինչ ծածուկ լիցին մեղք սորա, գաղտնիք, կամ յայտնիք. եւ զպաղատանս մեր ընկալ, զի եւ մեք արժանի լիցուք հայցել ի քէն սմա քաղութիւն մե-

գաց, ըստ անուան քանից՝ զոր հրամայեցեր Պետրոսի՝ թէ որում թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եւ եթէ զորուք ունիցի, կալեալ լիցի: *Վասն որոյ գոհանալով փառաւորեսցուք*···: Խաղաղութիւն ընդ ամենեք··· Աստուծոյ երկրպա: *Աւրհնեալ ես տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենայն արարածոց, որ արժանի արարեր զամենայն հաւատացեալս հաղորդել մարմնոյ եւ արեան քո. արժանաւորեա՛յ զծառայս քո լինել արժանի յետին թոշակին՝ որ հանելի ի կեանսն յաւիտենից: Քանզի ասացեր ամենասուրբ բերանովդ՝ եթէ ո՛չ կերիջիք զմարմին իմ եւ արբջիք զարիւն իմ, ո՛չ ունիք կեանս յանձինս ձեր: Արդ ի ձեռն կենսարեր մարմնոյ եւ արեան քո. պահեա՛յ զսոսա ի յանցանաց մեղաց եւ մահու. սըրբեա՛յ զթարախեալ մարմինս եւ մաքրեա՛յ զպղծացեալ որովայն սրտայ, զի ճաշակելով ի մարմնոյ եւ յարենէ քումմէ՝ սրբեալ եւ մաքրեալ, արժանի լիցուք յուսոյ արքայութեանդ երկնից եւ քեզ հա*··· *Սղ. Ողորմեա՛յ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան*··· *Ընթերցուած յեսայեայ մարգարէէ: Եւ եղեւ յամին՝ յորում մեռաւ Ոզիա: Յովհաննու առաքելոյ ի Կաթուղիկէի թըղթոյն է ընթ: Մարմին եւ արիւն որդւոյն Աստուծոյ սրբէ*···: *Պաւղոսի առաքել ի Կորնթացոց թխտ. ընթերց: Ո՛չ կամիմ եղբարք եթէ տգէտ լինիջիք*···: *Ալէլուիա: Աւրհնեցի՛ց զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ: Աւետարան ըստ Յոհան: Ամենա՛յն որ տայ ինձ հայրն եւ ուսանի զայ առ իս*···: *Եւ առեն զՃաշուսաղմսքն եւ զնորին քարոզն եւ զաղմոսն եւ զՃայր մեր որ յերկինսն եւ զնորին սաղմոսն եւ զՔրիստոս պատարագեալն եւ որ զկնի: Եւ տան զՃաշորդն: Եւ առեն՝ լցաք ի բարութեանց քոց տէր, եւ զնորին քարոզն՝ Եւ եւս հաւատով ընկալեալ յաստուածայինն: Գոհանամք զքէն Հայր անուն մերոյ ձեռաւք Քրիստոսի՝ որ արժանի արարեր զմեզ*···:

7. — Էջ 86. — Կանոնքն յորժամ տղայ վախճանի. — *Առեն: Սղ: Առ քեզ, տէր, համբարձի: Առ քեզ տէր կարդացի: Ի քեզ տէր յուսացայ: Ծնծացէք արդարք ի տէր: Դատեա տէր զայնոսիկ: Կանոնաղաւթ: առ : Աւրհնութիւն՝ Ես ասացի: Քարոզ՝ վասն ի վերուստ խա: Եւ առէ զաղաւթս զայս: Սուրբ ես տէր Աստուած մեր*՝ որ բնակեալդ ես ի յերկինս եւ բարեբանիս երեքսրբեան աւրհներգութեամբ եւ քաղցրութեամբ քո խնամես զամենայն արարածս՝ զոր ընտրեցեր քեզ յամենայն ազգաց, ժողովուրդ սուրբ, փառաւորել զանուն քո սուրբ եւ խոստացար տալ զանանց բարութեան զհանգիստն: Ընկա՛լ եւ աւրհնեա՛յ եւ դասաւորեա՛յ զհոգի ծառայիս քո այսորիկ, ընդ ամենայն սուրբս քո՝ որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ ի խոստացեալ հանգիստ քո եւ զամենայն յանցանս սորայ զոր յանցեալ իցէ առաջի քո, ներեա՛յ եւ թո՛ղ սմայ եւ ողորմութեամբ քով ազատեա՛յ զհոգի սորայ յանմաքուր գործոց եւ ի կապանաց մեղաց. եւ հանգո՛յ ի դասս սրբոց քոց եւ զմեզ արժանաւորեա՛յ փառս···: *Խաղաղութիւն ամենեցուն՝ Աստուծոյ երկրպագեսցուք*: Աւրհնեա՛լ ես արդարադատ եւ ողորմած Աստուած՝ որոյ ճշմարտութիւնդ անպատում է և ողորմութեանդ ո՛չ գոյ թիւ. որ վասն բազում մարդասիրութեանդ քո յուծեր ի հողոյ զշնչաւոր մարմինս, զպատրեալս ի բանաւորկուէն՝ *ասելով*. հող էիր եւ ի հող դարձ···: *Ընթերց. յեսայ մար: Սրբոյն Գրիգորի ասացեալ՝ Եթէ մեք*···: *Պաւղոսի առա՝ Այլ մեռուցեալ էք*···: *Սղ: Դատ արա՛ ինձ եւ*···: *Աւետարան ըստ* Մատթէոսի՝ *Եւ մատուցանէին առ նա*··· (*այս բոլորը՝ համաձայն առձեռն Մաշտոցներու*): *Քարոզէ՝ վասն ուղղելոյ զկնացս մեր*··· *Եւ առէ զաղաւթս՝* Տէր Աստուած բազաւոր յաւիտենից. ընկա՛լ զաղաչանս մեր եւ զթո՛յ ի վերայ հոգւոյ տղայիս այսորիկ եւ հանգո՛յ ի դասս անդրանկաց գրելոցն յերկինս, ի լուսեղէն յառագաստին, զի դու ես կարող յամենայնի եւ քեզ վայել···: *Խաղաղութիւն ամենից. Աստուծոյ երկրպագեսց: Որդի Աստուծոյ եւ բան Հաւր, որ վասն մեր մարդացար ի սրբոյ կուսէն: Սըրբեալ զառաքեալսն ի ձեռն սուրբ* աւազանին մկրտեալ լուսաւորին առնուլ զորդեգրութեան պատիւ, ի ծնեն մկրտութեան շնորհէն. թէ մկրտեցէք զնոսա *յանուն Հաւր եւ որդւոյ եւ*···: *Եւ տանին ի հանգիստ: Եւ*

տեան զանբիծն եւ չարչարանս մինչեւ ի գլուխ զերեզմանին։ Ասեն Սղ՝ Եղիցի անուն Տեառն...։ Ընթերցուած յետոյ մարգարէէ։ Այսպէս ասէ Տէր. ո՛չ եւս եղիցի այսուհետեւ որդւոց...։ Սրբոյն Գրիգորի ասացեալ՝ Ամենեքեան որ տեսանիցեն զարգարն, հանդիսեսցեն...։ Պաւղոսի առաքելոյն յԵբրայեցւոց... Արդ՝ որովհետեւ մանկունք հաղորդեսցին...։ Ալէ. որդւոցն որպէս զարմանեցին։ Աւետարան ըստ Մատթէոսի։ Յայնժամ իբրեւ եհաս Հերովդէս թէ խա...։ Քարոզ՝ վասն զատկելոյ...։ Եւ ասէ զաղաւթս՝ Հայր երկնաւո՛ր, քաղցր եւ երկայնամիտ, մարդասէր եւ ողորմած, կեանք եւ կենդանացուցիչ. զքեզ խոստովանիմք ի ձեռն միածնի որդւոյ քո եւ կենդանարար հոգւոյդ սրբոյ. մի աստուածութիւն կատարեալ, միասնական անբաժանելի սուրբ երրորդութիւն. որ խոստացար բերանով միածնի քո՝ հանգիստ աշխատելոց եւ նորոգումն յուսացելոց, ի քեզ որդւոց մարդկան։ Հաւատով խոստովանիմք զամենամեծ եւ զբարձրացեալ հզաւր, սքանչելահրաշ անուն քո, յամենայն սրտէ եւ յամենայն զաւրութենէ մերմէ. ի սէր քո կախեալք զաւր հանապազ. բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. դո՛ւ ես յերկինս ի վեր, եւ յերկիր ի խոնարհ փրկիչ կենդանեաց եւ հանգուցիչ ննջեցելոց, որ յառաջ քան զստեղծանիլն ճանաչես զստեղծուածսն, ըստ առաքելոյն Պաւղոսի, որ ընդրեցեր զնա՝ յառաջ քան զլինել աշխարհի եւ ըստ մարգարէութեան՝ թէ մինչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնէ գիտեմ զքեզ. որ յառաջ քան զստեղծանիլն խաւսակայ առ Աբրահամ, դրօշմամբ կոչէիր զանազան սքանչելաւք զանուն եւ զմարգարէ ի հեթանոս դնելով։ Ընկա՛լ եւ այժմ զանուանեալս յանուն Քրիստոնէութեան զպտուղ սուրբ աւազանի քո, անարատ պատարագ եւ խունկ ընդունելի. աննենգ աստուածութեան քո, անկարաւտ աստուած, եւ կարգաւորեա՛յ ի զգանս հանգրստեան անմատչելի լուսոյդ պայծառահրաշ շնորհացդ, զի դու ես մարդասէր ի տղայութեան եւ ի չափ հասակի, եւ ի ժամանակի ծերութեան եւ քեզ վայելէ...։ Եւ իջեցուցանեն ի գերեզման եւ ասեն զհաւատ անկերպն։ Եւ փառք ի բարձունս։ Եւ առկաւսոյն քարոզէ՝ վասն յոյս յեղելոյ ազգաչանաց մերոց...։ Տէր Աստուած յաւիտենական որ արժանի...։ Աւրհնեալ զնակութիւն (այսուր՝ փառալխշտի) ծառայիքս... եւ ընկալցի զանանց զեղ կերպարանացն (այսուր՝ զգեստաւորս կերպարանն)...։ Սղ։ Եղիցի անուն տն...։ Ընթերցուած յետոյեալ մարգարէէ։ Զի ի տեառնէ եղիցի զարձ որդւոց եւ եկեսցեն ի Սիոն...։ Պաւղոսի առաքելոյն ի Կորնթացւոց թղթոյն։ Այսուհետեւ եղբարք ո՛չ էք աւտարք եւ պանդուխտք, այլ...։ Ալէլուիա՝ Զայնիժմ եւ ասէ Տէր կա...։ Աւետարան ըստ Ղուկա։ Եւ եղեւ ի վաղին զի երթայր... Քարոզէ՝ վասն ի զիշերի եւ ի... Եւ ասէ զաղաւթս՝ Աւրհնեալ ես բարեխնամող եւ բարեգութ Աստուած, նեղելոց մխիթարութիւն, տնանկաց ապաւէն, սգաւորաց սփոփանս, աշխատելոց նաւահանգիստ եւ զաւրացուցիչ տարակուսելոց, մեղաւորաց քաւարան, եւ անմեղաց ապաւէն, յոյս կենդանեաց եւ մեռելոց, ընկա՛լ զհոգի ծառայիս քո եւ պայծառացո ընդ սուրբս քո եւ կարգաւորեա՛յ ընդ արդարս, յանճառ փառսն եւ յաննուաղելի լոյսն ե. կնքեա՛յ զբնակութիւն սորա։ Աւրհնեա՛ եւ զեր քաւարան յուղարկաւորացս եւ զհետ եկելոց ժողովոյս. փրկեա՛յ զմեզ ի խորամանկութենէ սատանայի, զզաստացո՛յ զսիրտ մեր ի հանոյս քո, եւ բեւեռեա՛յ զմեզ յերկիւղ քո եւ ի սէր. միշտ խորհիլ զպատուէր քո սուրբ հրամանիդ եւ հանապազ առաջի աչաց մերոց ունել զահաւոր քո դատաստան. զի արժանի լիցուք կալ առաքինաւէր վարուք ի մարմնական զբաղմանց եւ յամենայնի փառաւորել...։ Խաղաղու. ամենեցուն, Աստուծոյ երկրպագեսցուք։ Արդ եւ ձե՛զ այսաւր պարտ է զոհանալ զԱստուծոյ, զի վախճանեալս մեր յերկրէ ի յերկինս վերացաւ. ի մարդկանէ ի հրեշտակս փոխեցաւ. ի մահուանէ ի կեանս, ի խաւարէ ի լոյս մերձեցաւ. յաղքատութենէ ի թագաւորութիւն, ի վաստակոց ի հանգիստ, ի տրտմութենէ աշխարհիս յերկնային ուրախութիւնն, ի մեղաց յարդարութիւն, ի հողեղինաց ի հրեղէնսն դասեցաւ։ Վասն այնո-

րեկ ո՛չ է պարտ քրիստոնէից սուգ առնել ի մեռելոյն, այլ լացցեն հեթանոսքն եւ կոծեսցեն թերահաւատքն, զի նոքայ են արժանի կոծոյ եւ ողբոյ: Այլ դուք նորոգեցարուք միաբանգամ նորոգմամբ ամենայն ընտրելոց ի Քր. Յս. ի Տէր մեր՝ որում փառք....

Տ. — էջ 107. — Կանոնն համարէն նն-ջեցելոց՝ սաղ Սաղմոս: Ողորմեայ ինձ Աստուած ըստ մեծի ո: Երկինք պատմեն: Կանոնն սաղ՝ Դատեան ձայնիւ: Կանոնագլուխ մահու: Աւրհնութիւն՝ Ես ասացի՝ չարախաւսա: Խաղաղութիւն: Եւ ասէ աղաւթս՝ Աստուած յաւիտենական... ծընաւող զմիածինն (այլուր՝ ծնող միածնի որդւոյ)... յանցաւ, յանախտ եւ յանաշխատ կեանս անմահս, աստուածազարդ տնկացն վայելչութեամբ նով զկեցուցեր զաս... ամենայն չարքն... ընդ մեծութիւն պատուի նորա... որ եւ զիւրն ոչ պահեաց զտեղն փառաց, կամակոր եղեալ... եւ յանդգանեալ... զախտալի եւ մեղսասէր մարմին ... ի ձեռն կենդանարար թաղման իւրոյ: Եւ այժմ... զժամանակ պանդխտութեան, ննջեցելոյն ի վերայ երկրի...: Խաղաղութիւն ամ...: Հա՛յր մեր որ... ի հանգստեան արդարոց, ի փրկութիւն միածնի քո՛ եւ նորոգութեամբ սուրբ հոգւոյդ. որով փառաւորիս հայր ամենակալ, այժմ: Սղ: Աշա չափով եղիր զաւուրս իմ: Պաւղոսի առաքելոյն ի Կորընթ...: Ալէլու՝ Ձայնիւ իմովին առ Տէր...: Աւետարան՝ ըստ Յովհաննու...: Քարոզէ՝ վասն ի վերուստ խաղ...: Եւ ասէ զաղաւթս Աստուած հոգւոց... (կը պակսի՝ եւ զատանայ կոխեցեր)... մերժումն (այլուր՝ ներումն) արարցես... (որ ո՛չ անցանէ՝ կը պակսի): Եթէ դպիր կամ ապաշխարող իցէ՝ տանին ի դուռն եկեղեցւոյն եւ ասեն՝ Սաղմոս՝ Երանելիք որ բնակեալ են...: Պաւղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց...: Ոչ կամիմ եղ...: Ալէլ՝ Ոչ կամէր մխիթարել անձն իմ (այլուր՝ բարձր առնեմ զքեզ...): Աւետարան ըստ Յոհան՝ Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ...: Սարկաւագն քարոզէ՝ վասն հրաժարելոյ...: Որ թագաւորդ ես յաւիտենից՝ եւ ե՛ւս որ առնես զամենայն ինչ առել քան զամենայն՝ զոր ինչ խնդրեմք եւ...: Եւ զմեր կատարումն (այլուր՝ հաստատ) քրիստոնէութեան...: Եւ ասեն զանդրիժան՝ մինչեւ տանեն ի դուռն գերեզմանին: Սղ: Դա՛րձ անձն իմ հանգիստ քո՝ զի Տէր կոչեաց զիս: Պաւղոսի առաքելոյն ի Կորընթացւոց թղթոյն է ընթ: Ապա թէ Քրիստոս քարոզի՝ եթէ ի մեռել...: Ալէլու՝ Տէր լուր աղաւթից իմոց...: Աւետարան ըստ Յոհան՝ Ամէն ամէն ասեմ ձեզ զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ...: Քարոզէ՝ վասն ննջեցելոյ զգնացս մեր ի...: Եւ ասէ զաղաւթս: Աստուած հոգւոց եւ ստեղծիչ մարմնոց... եւ բացր տէրութիւն քո անխափանութիւն է ամենայն ննջեցելոց... ի կոչումն ամենայն հաւատացելոց քոց...: Քանզի հրամայեցեր (այլուր՝ շնորհեցեր)...: Եւ ապա իջուցանեն ի հանգիստն ասելով: Հաստատ ունելով հոգի խաղաղութեան: Եւ զկնի՝ փա՛ռք ի բարձունս Աստուծոյ: Եւ սարկաւագն քարոզէ: Եւ եւս խաղաղութեան զՏէր...: Եւ ասէ զաղաւթս՝ Աւրհնեալ ես Տէր Աստուած մեր՝ որ ստեղծեր զմարդն հող յերկրէ եւ փչեցեր յերեսս նորա շունչ կենդանի...: Յորժամ զաս... այցելութիւն արա՛յ տէր...: Խաղաղութիւն ընդ ամենեքեան Աստուծոյ յերկրպա...: Տէր մեր սուրբ փրկիչ՝ ... որ վճարեաց (այլուր՝ փախճանեաց զերկրաւոր...): Աւրհնին ժողովուրդքն եւ գնան ի տուն: Եւ ի գրանն ասեն՝ Սղ: Այս ամենայն եկն ի վերայ մեր եւ մեք զքեզ ո՛չ մոռացաք: Ապա ասէ զաղաւթս՝ Հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխի...: Իսկ յերկրպագումն ասեն: Սղ: Ընդ երեկոյս հանգիցեն լալիք՝ ասա: Պաւղոսի առաքելոյ ի Թեսաղոնի...: Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ...: Ալէլու՝ Հոգի քո բարի առաջնորդեա: Աւետարան՝ ըստ Ղուկասու: Զգոյշ լերուք անձանց...: Քարոզ՝ վասն ի վերուստ...: Եւ ասէ զաղաւթս՝ Գոհանամք զքէն Տէր... ի մեքենայից սատանայի (այլուր՝ բանսարկուին)...: խոնարհութեամբ թո՛ղ զպարտիս... պատրանաւք խարմամբ...: Խաղաղութիւն ամե...: Աւրհնեա՛լ ես Տէր Աստուած մեր՝ որ նեղելոց եւ անդորրութիւն... մինչեւ յաւր վերջնումն մեծի կրկնակի գալստեան

*քո․․․ (Հոս կը պակսի « Խոկ դրանական կենդանիքս պահեայ․․․ » չորս տողը)․․․ եւ զգժոխս* կործանեցե՛ր *(այլուր աւերեցեր)․․․ յերկնաւորաց* երկրպագես․․․ պարսպեա՛յ *զմեզ եւ զ․․․* Լե՛ր տէր քաղցրութեամբ քով քաւարան զործեաց մեղաց մերոց․․․ *եւ ի հանդերձեալ գեհենոյն* պահեա՛յ *(այլուր՝ փրկեա՛) զմեզ, եւ ժամանեցո՛յ զամենեսեան արժանաւորս հանդերձեալ քում գալստեանդ ամենագութեդ․․․ » Դիտելի է որ Ներկայ Մաշտոցի այս կանոնին մէջ երբեք չկայ քահանայի ձեռքով ափ մը հողի խաչակնքումը։ Նմանապէս կը պակսի գերեզմանը փակելէ առաջ երեք անգամ կրկնուած՝ « Օրհնեսցի եւ կնքեսցի պահեսցի գերեզման եւ ոսկերք ծառայիս․․․ » աղօթքը։*

9․ — *Էջ* 159․ — Կանոնն Ոգէհանգիստ առնել․ — *Սաղմոս։ Ողորմեայ ինձ Աստուած ըստ մեծի։ Գուրդայս գ։ Մի նախանձիր ընդ չարս։ Տէր մի՛ սրտմտութեամբ քով։ Երանի որ խորհի։ Եւ ասացի՝ Շարականս․ Քարոզ՝ Վասն ի վերուստ խաղաղութեան ազ։ Անկեալ եմք առաջի։ Ապա ասի Սաղմոս՝ Ահա Աստուած աւգնական իմ է տէր։ Ընթերցուածս յառակաց։ Պատուեա՛յ զտէր ի քոյոց արդար վաստակոց․․․։ Ընթերցուածս ի Գործոց Առաքելոց։ Այսպէս պաշտեմք զհայրենի Աստուած․․․։ Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկէ։ Սիրելի՛ք զայն խոկ եւ մեծարեց խոստացեալ է․․․։ Ալէլու՝ Զողջակէզս ուղարկեալս։ Մատուցէք տեառն որ։ Աւետարան ըստ Ղուկա։ Եւ մինչ չրջէր ընդ Երիքով․․․։ Քարոզէ սարկաւագն՝ Վասն ի վերուստ խաղաղութ։ Եւ ասէ զաղօթս՝ Հայր երկնաւոր բարեգութ ողորմած, քաղցր, երկայնամիտ առ ամենեսեան, որ խնդրեն ի քէն, հայեա՛ց ի ստեղծուածս ձեռաց քոց, որ ապաւինիմք ի քո բարերարութեանդ, ընկա՛լ ողորմութեամբ քո զպատարագս՝ զոր մատուցանեմք հաւատացեալքս․․․։ Նկատելի է որ աղօթքիս յաջորդ մասը կը պակսի տպագիր առձեռն Մաշտոցներու մէջ, այսպէս՝* Աւրհնեա՛լ ես տէր Աստուած ամենակալ՝ արարիչ ամենայն արարածոց։ Որ տէրդ ես ուխտից եւ Աստուած՝ ամենայն պատարագաց․ որ մարդասիրութեամբդ քո (վ) խոնարհեցար յերկնից եւ զգեցար մարմին ի սրբոյ կուսէն, զի զնախաստեղծին բարձեր զյանցանսն։ Զենա՛ր դու ինքնին պատարագ ի վերայ սեղանոյ քառանկիւնի եւ հեղմամբ արեամբ քո՝ փրկեցեր զտիեզերս ի մեղաց։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, աւրհնեա՛յ զպատարագս մեր եւ զընծայս․ զուարակս եւ զնոխազս, եւ աւրհնեա՛յ զհացս եւ զգինիս։ Ընկա՛լ զսա ի ձեռաց մերոց ի հանոյս քեզ, եւ յորոց անուն մատուցանեմք քեզ զնուէրս։ Հաշտեա՛ մարդասէր տէր ընդ հոգի ծառային քո՝ եւ բո՛ղ նմայ զմեղս իւր, զկամայ եւ զականայ։ Ընկա՛լ զնայ ի բիւ սրբոց քոց եւ զժողովուրդս քո աւրհնեա՛։ Զի դու ես մարդասէր եւ քաղցր տէր՝ որ ոչ երբեք թողուս զստեղծուածս քո ի ձեռաց քոց։ Արդ՝ լո՛ւր աղաչանաց մերոց որ կարդամքս առ քեզ տէր։ Ընկալ եւ հաշտեա՛յ եւ դասեա՛յ յաջակողմեան դասուն, ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան քո սրբոյ։ Որք յամենայն զաւրութենէ սիրեցին զքեզ եւ զպատուիրանս քո պահեցին, սուրբ եւ անարատ վարուք եւ առաքինասէր գործովք։ Զի ի բերանոց ամենայն արարածոց փառաւորի ամենասուրբ երրորդութիւնդ այժմ եւ միշտ եւ։

10․ — *Էջ* 167․ — Կանոնն Տերունականի․ — *Ածեն զխաչափայտն ի դուռն եկեղեցւոյն՝ առաջի սրբոյ խաչին․ եւ դնեն կարմիր եւ բանրակ եւ կարմիր հանդերձ արկանեն ի վերայ։ Այլ մատուցանեն զանասուն եւ մի՛ ակամայ՝ զի ընդունելի լիցի Աստուծոյ։ Եւ ասեն Սաղմոս՝ Երանի ում թողութիւն եղեւ մեղաց եւ Աւրհնեցից զտէր յամենայն ժամ։ Ողորմեա՛յ ինձ Աստուած ըստ մեծի։ Քեզ վայել է աւրհնութիւն։ Գուրդան ի բուն ասի․ Շար։ Պարունակեալ։ Սարկաւագն քարոզէ՝ Խնդրեսցուք հաւատով միաբան։ Աւրհնութիւն եւ փառք։ Եւ ապա ասի Սաղմոս՝ Յիշեսցէ տէր զամենայն պատարագս քո։ Ընթերցուածս ի Ղեւտացւոցն՝ Եւ կոչեաց տէր զՄովսէս ի խորանէ անտի վկայութեան․․․։ Ընթերցուածս Յերկրորդ Թագաւորութենէ՝ Եւ մատոյց Դաւիթ ողջակէզս․․․։ Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ՝ Եւ զամենեսեան որ պահեսցեն զշա-*

բանն իմ եւ ոչ պղծիցեն . . . : Պատգամք առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Ունիմք մեք սեղան՝ ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշա . . . : Այլուր՝ մատուցէք տեառն որդիք Աստուծոյ։ Մատուցէք տեառն։ Աւետարան ըստ Ղուկասու՝ Եւ ասէ ցկոչնականսն. յորժամ առնիցես . . . : Քարոզ՝ վասն ի վերուստ խաղաղութեան։ Եւ ասէ գաղութս՝ Ամենակալ Աստուած փառաւորեալ ի վերնայնոցն կարգապետութեան եւ ի ստորնայնոցս երկրպագեալ; բանդ Աստուած՝ որ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն որ ի սկզբանէ տպաւորեցեր զձեւ եւ զօրինակ առ յաղագս եկեղեցւոյ։ Քանզի ստորանկեալ մարդոյն ի բարեփայելուչ դրախտէն եւ կամակոր եղեալ ի մեծապատիւ փառացն խաբմամբ թշնամւոյն խորամանկութեամբ բանսարկուին։ Սակայն ի սկզբանէ (այսպէս) եւ ի բազմանալ մարդկան ի վերայ երկրի. հաճեցար մերոյս ազգին բարեպաշտել առ քեզ սեղանաւք եւ պատարագաւք՝ որպէս մատուցանելով Աբէլի արդար կոչեցաւ եւ Նոյ եղեալ ի տապանէն, մատոյց պատարագս։ Եւ հաստատեալ քեզ ի հաւատ անուշից տեառնդ Աստուծոյ եւ Աբրահամ մատուցանելով զճշմարիտ ողջակէզ փրկութեան՝ որ աւրինակէ՛ր անապական մահ քո ի խաչին։ Եւ արդ բարերար տէր Աստուած մեր, աղաչեմք եւ մաղթանաւք հայցեմք. ընկա՛լ ողորմութեամբ քո ընծայս զայս ի ձեռաց մերոց եւ հաշտութիւն ամենայնի կամացդ, ընկա՛լ տէր Աստուած մեր ընծայս նուէրս խոստմանս մերոյ՝ զոր ուխտեցաք քեզ ի նեղութեան մերում, յորում աղաղակեցաք առ քեզ եւ փրկեցեր զմեզ։ Ընկա՛լ բարեխնամող Աստուած զպատարագողացս՝ զոր համարձակեալ մատուցանեմք անկարաւտ փրկչիդ՝ որոյ անչափ եւ անհաս է ողորմութիւն գթութեան քո։ Ընկա՛լ եւ հաւատարեա՛լ ընդ երջանկացեալ սուրբ ընծայաբերութիւն նախահարցն որոց՝ զորս մերժեալ հեռացուցեր ի սատանայական գահիցն եւ հեթանոսական ճենճերացն զխոմոյ կռապաշտութեանցն, որ ի ձեռն սուրբ եւ երանեալ մարգարէին Մովսէսի հրամանատուեցեր ժողովրդեան քում Իսրայէլի, մատուցանել քեզ պատարագ ի հաւտից

յաւելեաց եւ այլոց անասնոց սրբոց, ածելով առ դրան խորանին վկայութեան, առ քահանայս Ղեւտացիս, դնելով ձեռս ի վերայ եւ հեղլով զարիւն առ սուրբ սեղանոյ քո տէր, որով յանցանքն քաւէին եւ խնդրուածքն կատարէին։ Այլ այնու ամենայնիւ աւրինակեցեր զաւուր հանդերձելոյն ճշմարիտ փրկութեանս այսմ՝ որ շնորհեցաւ մեզ զալստեամբ քո՝ յաշխարհս։ Քանզի դու նոյնինքն ամենողորմ բարերար տէր, նախապատշաճ հոգւով քո սրբով ի ձեռն մարգարէին ասացեր՝ ո՛չ ընդունիմ ի զուարակաց քոց պատարագս, այլ մատո՛յ պատարագ աւրհնութեան Աստուծոյ եւ կամաւորական մատո՛ց զոհ անարիւն մատուցանել զի է խոկ ասեմն պատարագ Աստուծոյ հոգի մաշեալ եւ սիրտ բեկեալ եւ զհոգի խոնարհ Աստուած ո՛չ արհամարհէ։ Այլ այժմ մեք մեղուցեալքս եւ անարժանքս, խոնարհեալ սրտիւք մերովք անկանիմք առաջի անբաւ գթութեանդ քո եւ աղերս արկանեմք զբազում մարդասիրութեանդ քո եւ զանստոտ խոստումն քո, որ հարցն մեր սիրելեան քո։ Խնդրեմ՛ք տէր յընծայս մեր, եւ ընկա՛լ զսոյս ի ձեռաց մերոց որպէս զողջակէզս խոյոց եւ զուարակաց եւ իբրեւ զբիւրաւոր գառանց պարարտաց։ Շնորհեա՛յ տէր զխնդրուածս մեր, զի մի՛ եղիցուք յամօթ ի թշնամեաց մերոց։ Այլ ընծայով սորաս եղիցուք ի փրկութեան քում. զի եթէ զամենայն լերինս եւ զդաշտս կշռեսցես յակն արկեալ քում, եւ զերկինս եւ զերկիր ի բուռն ունիս, եւ նստիս ի բարձրութեան բարձանց ի քերովբէական աթոռս եւ անդունդք ոչ են քեզ աներեւոյթ, եւ ամենայն չորքոտանիք եւ ամենայն ընչաւորք չեն քեզ բաւական յողջակէզս։ Զի արդ մեք առաջի քո համարձակիմք իբրեւ մատուցանել պատարագս։ Այլ դո՛ւ տէր՝ որ վասն մեր հաճեցար մարմնանալ, եւ ուսուցեր մեզ սրբովք առաքելովք զանբիծ հաւատս՝ որ ի սուրբ Երրորդութիւնդ, որով եւ արժանաւորեցե՛ր զմեզ որդիս եւ եղբարս անուանեալ անարատ մարմնով եւ արեամբ Աստուած բանդ, նոյնինքն մեծ եւ սքանչելագործ տէր։ Ընկալ ի ձեռաց մերոց զնուէր զընծայս այսորիկ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ

եւ ամենայաղթ նշանիդ քո, որով հանա-
պազ երկրպագեմք եւ ապաշխարեմք սրբոց
տաճարիդ եւ մարգարէից եւ ընդհանուր
սրբոցն եւ երանեալ վկայիցն՝ որք զարիւնս
իւրեանց փոխանակ արեան քո հեղին եւ
պարգեւեալ զհայցուածս մատուցանեմ ա-
քայ, եւ շնորհեա՛յ զթողութիւն մեղաց՝ ա-
ճեցո՛յ զհաւատս եւ զանդեայս եւ զամենայն
ինչս եւ զստացուածս ծառայից քոց: Բազ-
ցրութեամբ հաւեալ զամպս յանդաստանս
մեր: Պարգեւեա՛յ յերկրի մերում զխաղաղ
շահեկանութեան. հալածեա՛յ եւ զամենայն
սատանայական որոգայթս՝ զի սոսա բարե-
պաշտութեամբ կեցեալ ի հաճոյս քո. եւ
արժանի լիցուք՝ հանդիպել քեզ, յերեւել
փառաց քոց յահագին աւուրն, յորժամ զար-
ձեալ միւսանգամ գայցես յերկնից հատու-
ցանել բատ գործոց եւ քեզ վայելէ փառք,
իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ...:
Սաղմոս՝ Աստուած ողորմեա մեզ եւ աւրհ:
Եւ ասէ զաղօթս: Աւրհնեալ ես տէր Աստ-
ուած ամենակալ, արարիչ ամենայն արա-
րածոց, որ արարեր զամենայն արարածս քո
բարի եւ յաւ եւ չիք ի նոսա խոտան եւ ե-
տուր ի պէտս պիտոյից որդւոց մարդկան եւ
արարեր աղ ի հաստատութենէ երկրի եւ ի
ժողովոյ ջրոյ: Եւ արդ մեք առեալ զպար-
գեւս մեծ, եւ զոհանամք զանուանէ քումմէ:
Աւրհնեա՛ տէր ողորմութեամբ քո զաղս
այս. զի յամենայն ինչ եւ խառնեսցի աղս
եղիցի մեզ ի սրբութիւն եւ ի թողութիւն
մեղաց, որպէս զի յամենայնի անդադար
փառաւորեսցուք զհայր եւ զոր...:

11. — Էջ 182. — Կանոնն Գառն աւրհնե-
լոյ Զատկի կամ Վարդավառի կարգն տե-
րունականի. — Եւ աղօթք այս է: Տէր
տանէդ եւ Աստուած ամենայն ուխտից եւ
պատարագաց, որ յանուն քո յամենայն ժամ
յի առնես զերկիրպածս քո: Ընկա՛լ զզառն
պատարագիս՝ զոր մատուցանեմք քեզ. ա-
ճեցո՛յ եւ բազմացո՛յ զսուն ծառայիս քո՝
որպէս զսունն Աբրահամու, զԻսահակայ եւ
զՅակոբայ. ի հաշտութիւն քեզ եղիցի պա-
տարագս, որպէս զպատարագն Աբէլի. եւ
յամենայն ժամ քեզ պատարագս մատուցա-
նեմք, բարեբարի եւ խնամողի եւ գոհու-
թեամբ փառաւորեսցուք զհայր եւ զոր...:

12. — Էջ 183. — Կանոնն Հաւ աւրհնելի.
— Աւեն Սաղմոս՝ թեւք ազանոյ արծաթա-
պատ: Քարոզ՝ Լուիցէ տէր ձայնի աղաչա-
նաց մերոց բարեխաւ: Աւրհնեալ ես տէր
Աստուած մեր՝ որ ի ձեռն աւրինացն հրա-
մայեցեր մատուցանել աստուածութեան
քում հաւս, աղաւնիս եւ տատրակս՝ որ է
աւրինակ ճշմարտութեան: Իսկ մեք պատ-
ուական արեամբ միածնի քո ազատեցար ի
ձեռն հօգոյդ սրբոյ: Եւ մեք հաւատացեալքս
ի քեզ մատուցանեմք զհաւս զայս ի հա-
ճութիւն քեզ: Ընկա՛լ եւ աւրհնեա՛յ զսայ եւ
յառողջութիւն պարգեւեա՛յ եւ տուո՛յ ար-
ժանի աւրհնել եւ փառս մատուցանել հաւր
եւ որդ...:

13. — Էջ 184. — Կանոնն Խաղող աւրհնե-
լոյ. — Բերեն յեկեղեցին: Եւ տանեն ա-
մանով ի վեր ի սեղն: Փա՛ռք սուրբ խաչին
այէլուիա: Նշանեցաւ ի մեզ լոյս երեսաց: Ի
պտղոյ ցորե: Փառք եւ երկրպագութիւն
հաւր եւ որդոյ: Քարոզ՝ Խնդրեսցուք հա-
ւատով միաբանութեամբ՝ զի տացէ մեզ կե-
րակուր ուրախութեան եւ լցուսցէ զսիրտս
մեր ի լիութենէ արարածոց իւրոց ամենա-
կալ տէր Աստուած մեր կեց...: Աւրհնեա՛լ
է հայրաստեղծ ոգւոյն կենարրոյն, որ ի
վերայ քառաթեւին պատարագեցա՛ւ եւ
զպտուղն ուրախութեան մեզ բաշխեցա-
կեաց փեսայիւն Քրիստոսի եւ հաւեա՛ց մեզ
զինի ուրախութեան եւ փայլակնացոյս եւ
յակնաւոք զաւրագունէն, որ զորակս փայ-
տից կարմրացոյց, զունակ զունակ զործե-
լով, որոց չրթունք ըմպողաց՝ ներկեն յա-
րենէ խաղողոյն զոր ի ախպախոց կողէն մեզ
շնորհեաց, որպէս եւ կենարարն ասաց՝ եթէ
բաժակս այս աւրհնեալ եղիցի յաւիտեան.
քանզի սա՛ է միջնորդն ընդ երկինս եւ ընդ
երկիր: Սմա՛ւ պայծառանան եկեղեցիք:
Սմաւ քուեն մեզ ժողովրդեան: Որթն եւ
ուսն աւրհնեալ եղիցի. հանդերձ զեղեցկա-
պատ՝ զանկիւն, որպէս բարունակ բարեբա-
րին արփիահրաշ, արփիաճեմ, լեառն հո-
վանաւոր միոյն միացեալ, հաստատ զեր-
պատի հայրապետաց, որպէս եւ նահա-
պետն Նոյ ասաց, եթէ բաժակս այս աւրհ-
նեալ եղիցի յաւիտեան, ի հա՛ռ, ի հա՛մ, ի
կարմրութիւն արեանցն, ի կարկաչեն ի

*գուրս հրճմանց: Պաշտօն՝ բարեգութեան յի-մաստութեան միասցի եւ ի սէրն Աստուծոյ ա-ձէ, որոյ առեալ ասպիկարն զանձուն ի վե-րայ հինգաշա՛րժ մատանցն, արտնեաց զուսն եւ զատնկն եւ զայն՝ որ մշակեաց զորկոյն: Աւրհնութիւն հօր առաքեալ զորդին միածին՝ ի փրկութիւն աշխարհի: Աւրհնութիւն որդւոյն միածնի՝ որ պատա-րագեցաւ ի վերայ խաչին եւ փրկեաց զմա-գաւուրքն ի մեղաց եւ յապականութեանց դժոխոց: Աւրհնութիւն եւ գոհութիւն ամե-նասուրբ հոգւոյն՝ որ եկից իմաստութեամբ եւ շնորհաւք զառաքեալսն ամենայն, որով եւ մեք հաւատացեալքս Քրիստոսի Յիսուսի հանգուք գոհութիւն եւ փառս՝ հօր եւ....:*

14. — ԽԹ 187. — Կանոն զարմտիս աւրհ-նել. Սերմն, Շեղջ, Հրնձան եւ Հոր. — *Սաղ-մոս՝ կցուրդ: Հովիւք բազում ապականե-ցին. փ. քեզ վայել է: Ընթերցուածս յառակաց՝ պատուեա՛յ զտէր ի քոյոց ար-դար վաստակոց....: Ընթերցուած յԱմբեղայ մարգարէէ: Բաջողեսցեա՛յ երկիր, խնդա՛յ եւ ուրախ լեր, զի մեծ արար....: Պաւղոսի առաքելոյ ի Կորնթացւոց Թղ....: Այլ այժմ որ արդեւէ սերմն սերմանահանաց եւ հաց ի.... Աւետա՝ Սաղմոս ի կարգաւ խմում յուր: Աւետարան բստ Մարկոս՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ. այսպէս է արքայու-թիւն Աստուծոյ. որպէս այր մի զի արկա-նիցէ սերմ....: Քարոզէ՝ Եւ եւս ի. Լսի-ցէ տէր ձայնի աղաչանաց: Եւ ասէ զաղաւ-թս՝ Աւրհնեալ ես տէր Աստուած ամենա-կալ* փառս ամենայն բարեգործութեանց քոց. զոր ի սկզբանէ ցուցեր ազգի մարդկան. որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն որ է ի նոսա: Հրամայեցեր բանիւ քով եւ առա-ջեր՝ բղխեաց երկիր զբանճար խոտոյ ա-մենայն սերմանեալ հանդերձ եւ ծառ պտղա-բեր առնել պտուղ ի վերայ երկրի եւ ե-ղեւ. զոր տեսեալ ասացեր՝ թէ բարի են յոյժ: Եւ հրամայեցեր աճել եւ լնուլ զեր-կիր: *Աւրհնեա՛յ տէր եւ այժմ զսերմանիս քո հանգերձ սերմանողաւք:* Աւրհնեա՛յ տէր զերս այգեաց մերոց եւ ծառոց եւ անդաց եւ զմրգոց. որպէս ասացեր հոգւոյդ քո սրբով եւ բերանով մարգարէին՝ թէ երկինք լուիցէ երկրի եւ երկիր տացէ զխուրիւն ցորենոյ եւ զգինոյ եւ ձիթոյ եւ ճաճուք լցցի՝ ժողո-վուրդ իմ: Դիտեմք զի աստ ես ի սպար-զեւս քո, տաս սերմն սերմանողաց եւ հաց ի կերակուր որդւոց մարդկան: Եւ արդ մեք առնումք զպարգեւս քո եւ գոհանամք զան-ուանէդ քումմէ: Աւրհնեա՛ տէր զամսդ՝ զի քաղցրութեամբ ցաւղեսցեն յանդս մեր: Աւրհնեա՛ տէր զերկիր, զի բուսուցէ՝ զբոյս դալարի եւ շահեկանութեան:

Աւրհնեա՛յ տէր զաղս զի սրնուցեն բզ-պտուղս առանց ամենայն վնասու: Աւրհ-նեա՛յ տէր եւ զմշակս՝ զի առողջութեամբ ժողովեսցեն զարմտիս: Աւրհնեա՛յ տէր եւ զպակ տարոյ քաղցրութեան քո զի խա-ղաղութեամբ կատարեսցի ամենայն ինչ կեալէս: Եւ մեք արարածք քո անարատ ծե-ռացդ առեղծուածք, առ բարեկեալք մեծա-պէս պարգեւաւք բարերարութեան քո, բա-րերարութեամբ եւ գոհացողական աւրհնու-թեամբ երգաբանեմք փառս վերա՛յ հան-գուն՝ հօր եւ որ....: Ողորմութիւն քեզ ամենե....: Տէր Աստուած ամենակալ՝ որ վերածեր զամպս ի ծագաց երկրէ եւ զփայ-լատակութիւն յանձրեւս, հանես զհողմ ի զան-ձէ քումմէ, որ կայես զջուրս ծովու եւ հե-ղուս զնոսա ի վերայ երեսաց երկրի, խոն-արհեմք ի քէն եւ աղաչեմք զքեզ եւ վերա՛յ զաչեմք եւ երկիր պագանեմք, խոստովանե-լով զմեղս մեր եւ հայցելով ի քէն զառատ ողորմութեանց, բա՛ց զաւանս երկնից եւ առաքեա՛յ զամպս զաւղեա՛յ զանձրեւ, զուարճացո՛յ զամենայն երեսս երկրի: Դր-բա՛յ ի ծերս եւ ի տղայս ստնդիացս. յաւ-տերս եւ ի դատերս եւ յամենայն անասունս երկրի՝ զոր սեզ ի ծառայութիւն ետուր: Բղխեսցէ երկիր զողորմութիւն, բուսու-ցին դաշտք վնաս անասնոց, հանցէ՛ զհաց ի կերակուր եւ զդալար՝ ի ծառայութիւն մարդկան: Աղաչեմք զքեզ բարերար զաւ-րութեանց Աստուա՛ծ. Աստուա՛ծ մեր, հա՛ցդ կենաց. երկնային մանանա՛յ, անծա-խելի պտուղ՝ որ անկենարկութեամբ քո լր-ցուցանես զդաշտս երկնաւոր պարարտու-թեամբ: Հայեա՛ց ի վերայ սերմանիցս այ-սոցիկ որ կարգող եմ եւ առանց սերմանց շնորհեն հասկս. որ բամանդակես եւ ա-ռանց հացի կերակրես զքաղցեալս եւ

հրամայելով երկրի պտղաբերել առ ի յայտնութիւն սքանչելեաց քոց. արա՛յ սէր ի վերայ սերմանցս այսոցիկ զսքանչելիս քո: Աւրհնեա՛յ տէր զպտուղ տարւոյ քաղցրութեան քո. անեցոյ զարդիւնս ծառայից քոց, քանզի դու ես աղբեր անապական աւրհնութեան անբաւելի. ամպ խաղաղութեան, ցաւղ բժշկութեան, եւ աչք ամենեցուն ի քեզ հային եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու եւ որք կերիցեն՝ լցցին պարգեւաւք հոգւոյդ սրբոյ եւ քեզ հանցեն զաւրհնութիւն եւ փառս հաւր եւ որդ...:

15. — Էջ 195. — Կանովն Ճեզջ. Հոր. Հրնձան աւրհնել. — *Ասէ Սաղմոս՝ Աբրացանէ զերկինս ի չանմարանաւս. ասն: Քարոզէ՝ խնդրելով ի տեառնէ զի զողորմութիւն:* Աղաւթք Ճեզջի: *Աւրհնեա՛յ ես տէր Աստուած ամենակալ, արարիչ ամենայն արարածոց, երեւելեաց եւ աներեւութից եւ բանիք քո անուտ է. որոյ հեծանոցն ի ձեռքն սրբէ զկալ եւ ժողովէ զցորեանն ի շտեմարանս: Արդ՝ աւրհնեա՛յ տէր ողորմութեամբ քո զկալս զայս եւ զշեղջս, որպէս աւրհնեցեր զկալն Ոռնա՛յ, եւ որհնա՛յ զպղծութիւն սորա, որպէս որհեցեր զպղծութիւն զոհիցն եւ զձեռներոցն եւ եթէ մեռեալ ինչ իցէ ի սմայ ի պիղծ սողնոց եւ կամ թէ առն կնոջ ապարախի մերձեալ իցէ ի սմայ եւ թաթաւեալ արեամբն երկեալ, եւ պղծեալ իցէ զկալս զայս եւ զշեղջս, դու որպէս բարերար եւ մարդասէր Աստուած, աւրհնեա՛յ եւ որհնա՛յ զհացս զայս յամենայն պղծութեանց եւ մի խափեր զառ հայ մեղաց մեզ եւ անաւրէնութեան, առ ի կերակուր ուրախութեան, որպէս զի ամատաւեսլեալ ի փառս քո զոհացողական ձայնիւ փառաւորեսցուք զհայր եւ զ...:*

Աղաւթք ի վերայ հրաշոյ, եւ թէ անձրեւ լինի եւ զարմտեաց աւրհնէքն այլ ի հետ կարդա՛յ: Պաշտամամբ գիշերոյ եւ սուրբ պատարագաւ եւ վերջքն զաղմոս զայս: Եւ ժողովուրդքն եւ քահանայքն ամենեքեան ի ծունկս անկեալ ասեն զհարկիր տէրողորմեալ յաղաւոր ձայնիւ, արտասուելով եւ զձեռս ի վեր կարկառելով. — *Տէր Աստուած մեր՝ որ յաղագս առ քեզ նախանձուն յուար Եղիայի մարգարէին, բառ ժամականի երկրի, անձրեւաբեր անձրեւաբխաւն հրամայեցեր: Իսկ զու՛րձեալ յաղագս նորայ խնդրոյ, ցաւղ պտղաբերս պարգեւեցեր: Դու տէր ամենայնի, զքո ինքեան զթութիւնդ բարեխաւս ունելով, անձրեւ բառ կամաց պարգեւեա՛յ մարդասիրութեան քում եւ զբազմամեղութիւնս մեր անտես արա՛յ, որք պէտս ունին եւ խնդրեն. ուրախ արայ զերեսս երկրի, յաղագս աղքատաց ժողովրդեան քո եւ յաղագս այսոյց եւ անասնոց եւ այնոցիկ որ ակն ունին առ նոցա կերակուր ի ժամու, զի դու ես Աստուած մեր եւ քո՛ է կարողութիւն եւ կեցուցանել եւ քեզ փառս մատուցանեմք հաւր եւ որ...:*

16. — Էջ 198. — Կանոնն խաչալուայ առնելոյ. *Ասեն Սաղմոս՝ գ. Նշանեցաւ առ մեզ. փ. ի կարգայ խմս: Ընթերցուած ի Չորրորդ թագաւորութենէ: Եւ ասեն արք քաղաքին...: Պաւղոսի առաքելոյ ի Գաղատացւոյ թղթոյ ընթեր՝ Այլ ինձ քաւ լիցի պարծել բայց միայն ի խաչ...: Ալէլուիայ՝ Աստուած մեր ողորմեա՛յ մեզ եւ աւրհնեա՛յ զմեզ. երեւեցո: Աւետարան բառ Յոհան՝ ի վերջնում աւուրն մեծի տաւնին կայր Յիսուս...: Քարոզէ՝ Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած՝ որ ես յոյս եւ ապաւէն զյաղթող սուրբ զխաչն որ է զէն անպարտելի, ընդդէմ* ներգործութեանց սատանայի. զի ամենայն յինչ յոր եւ մերձեցէ զջուրս եւ զամենայն արարածս: Եւ բժշկութիւն եւ ողորմութիւն շնորհեսցէ սոցա՛, ամենակալ տէր Աստ...: Եւ ասէ զաղաւթս զայս՝ Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց՝ որ զամենայն ի զգայութենէ ածեալ յաւրինեցեր. որ ի սկզբանցն լինելութեան արարածոց մշտնջենաւոր բանիւդ քո, բաժանեալ զջրաման կամարն մասամբ զերագունին ի տարանոցս, եւ զմնացուածս փոքր ի շատէ, զետեղեալ ի ժողովս իւրեանց. յոր բղխեալ ազգ ազգ զեռնոց ի հրամանէ քումմէ, առ ի վայելումն մարդոյն եւ քան զամենայն արարածս պատուեցեր զմարդն. ընդ որ չարացեալ չարն առ ի յորսալ ի կորուստ եւ յապականութիւն, զոր ի քումմէ իմաստութենէդ բարի յաւրինուածով զարգարեալ էր. զոր միւանգամ նորոգեցեր զհնացեալ պատ-

կերս քո. խցմամբ յանըսկզբնական փառաց քոց եւ զգեցեալ մարմին հողեղէն ըստ մե-րում բնութեանս. եկիր ի լուացումն ամե-նասուրբդ ի մեղաց եւ մաքո՛ւր եւ սրբիչ զջուրս կացուցեր: Եւ ի ձեռն մարգարէի Ե-ղիսէի, աւրհնեցեր զջուրն չարաչունչս եւ մահականս: Եւ մեծին Մովսէսիւ բաժան-եալ գաւազանաւ յարփնակ խաչին զյաղ-բաղ զջուրսն եւ զթշնամին ի խորսն ընկղմե-ցեր. ետուր քաղցրութիւն եւ ջուրցն Մեռա՛յ դառնաբուղխ եւ լցուցեր զպասքումն ժո-ղովոյն:

Եւ այժմ տէր բարերար, առաքեա՛յ զնոյն հոգի շնորհաց ի ջուրս յայս եւ աւրհնեա՛յ զսայ, անարատ աջովդ քո եւ զաւրութեամբ կենդանարար սուրբ խաչիդ. ի ձեռն քահա-նայիս եւ խոնարհուածաւք ժողովրդեանս. եւ տո՛ւր սմայ շնորհս եւ զաւրութիւն, զի ա-մենայն որ ըմպիցէ ի սմանէ եղիցի ի բժշկութիւն հոգւոյ եւ մարմնոյ. առողջու-թիւն ախտաժետաց: Աւրհնեա՛յ տէր զջուրս զայս սուրբ խաչիւս զի հաւտք եւ խաշինք որք մերձեսցին եւ սրբեսցին ի սմանէ, եղի-ցի յանցանութիւն եւ ի ծնընդականութիւն. ուստի եւ նուէրս անուշութեան քեզ ընծայս մատուցանեմք: Աւրհնեա՛յ տէր զջուրս զայս սուրբ խաչիւս՝ զի յանդս յորս ցաւղեսցի, տացէ տոհմականս շահեկանս որ է նաշխի սրբութեան պատարագի քում տէրութեանդ: Աւրհնեա՛յ տէր զջուրս զայս սուրբ խաչիւս՝ զի յամենայն յորս ցաւղեսցի. ի բոյսս կամ ի տունկս, առաւել եւս պտղաբերութեամբ եւ անմամբն ի շահաւորութիւն որդոց մարդ-կան. եւ ամենեցուն յորոց ի սպաս պաշտա-ման խորանի քում սրբութեան զքոյդ քեզ մատուցանեմք, ամենայաղթ եւ ամենազաւր թագաւոր՝ որ միշտ յամենայն արարածոց աւրհնիս ամենասուրբ երրորդութիւն, այժմ եւ մ···:

17. — Էջ 204. — Աւրհնութիւն Սեղանոյ Տէրունականի եւ պատարագի. — Աւրհնեա՛լ ես տէր ամենակալ՝ հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ առիր սիրոյ պատ-րաստեցեր քո ծառայիցս, բարեպաշտիլ առ քեզ սեղանովք բարութեան: Խնդրեմ ի քէն եւ աղաչեմք. ընկալ եւ աւրհնեա՛յ զուխտ պատարագիս՝ որպէս զԱբելին, Նոյին եւ զԱբրահամուն եւ յիշատակեա՛յ զհոգիս հան-գուցելոցն (այս անուն) ընդ սուրբս քո ի փառս քո: Շնորհեա՛յ զբարի ի պարգեւաց քոց հատուցումն: Ընկա՛լ զնուէրս զայս ի մէնջ, յանուն սուրբ խաչին եւ սրբոյ յարու-թեանն եւ սրբոյ Սիովնի. զի եւ մեք գոհա-նալով ըզգթութեանց քոց, փառաւորեսցուք զամէնաւրհնեալ անուն քո, զմատուցող պա-տարագիս եւ կատարեալ ի բարի զխըն-դրուածս սոցայ եւ հատո՛յ զողորմութիւն քո յաւիտենից, որ յամենայնի կարող ես եւ քեզ մատուցանեմք զաւրհ···:

18. — Էջ 207. — Կանոն յորժամ յերկուսն լի-նի Ն դժուար. — *Երթայ քահանայն առ Սեղ-անն՝ Առ քեզ տէր համբարձի զաչս իմ որ բնա: Յրնթերցուածս յեսայեայ մարգարէէ՝ Այսպէս ասէ տէր սուրբն Իսրայէլի. մինչեւ իցէ յօգայն ծնեալ.... Պաւղոսի առաքելոյ յեբրայեցւոց թխտ...: Հաւատովք որ Աբրա-համն կոչեցաւ, ունկնդիր եղեւ...: Ալէլու: Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ: Որպէս երկ: Աւետարան ըստ Յոհան՝ Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի լացջիք եւ ողբասջիք որ աշ-խարհն են...* (ա՛յսքան, առանց աղօթից):

19. — Էջ 208. — Կանոնն՝ յորժամ քահա-նայն առ հիւանդն երթայ. — *Առ Սեղանն՝ Ես ասացի տէր ողորմեայ ինձ: Յրնթեր-ցուածս յեսայեայ մարգարէէ՝ Այսպէս ա-սէ տէր՝ սուրբն Իսրայէլի. յորժամ դարձ-ձիս եւ.... Պաւղոսի առաքելոյ ի Կորնթա-ցւոց թխտ՝ Վասն որոյ եւ մեք յորմէ հետէ լուաք ոչ դադա.... Ալէլու՝ Երանի որում թողութիւն եղեւ՝ Աւետարան ըստ Ղուկայ՝ Եւ կոչեաց յերկուս աշակերտաց իւրոց Յովհաննէս.... Եւ ասէ զաղաւթս՝* Աւրհնեալ ես տէր Աստուած ամենակալ, ա-րարիչ ամենայն արարածոց, որ առաքեցեր զմիածին որդին քո որ եկն եւ բժշկեաց զախտս եւ զհիւանդութիւնս ժողովրդեան քում. ընկղմեաց զմահ եւ փոխեաց զմեզ ի կեանս եւ անմահութիւն: Եւ այժմ աղա-չեմք զքեզ տէր, դիր զձեռն քո ի վերայ հի-ւանդիս այսորիկ. եւ բժշկեա՛յ զսայ ի ցա-ւոց եւ ի հիւանդութենէ իւրմէ, զի զքեզ փառաւորէ զառողջացուցիչ եւ զբժիշկ հո-

*զաց եւ մարմնոց, զի եւ այս խոստովանի յի-ցի ամենասուրբ երրորդութեանդ՝ հայր եւ...: Թագաւորութիւն ընդ ամենեսեան՝ Աստուծոյ երկր...: Աստուած անսկզբնաւոր՝ որ իջեր ի տարբին կողմ երկրի եւ շնորհս ծաւալեցեր յարարածս քո: Առաքեցեր եւ զերանելի առաքեալսն հրաման տալով՝ բժշկել զախտս եւ զհիւանդութիւնս ժողովրդեան: Եւ արդ եւս ծառայս քո՝ ակարս եւ անարժանս՝ դնեմ զձեռն ի վերայ հիւանդիս այսորիկ եւ խնդրեմ յաստ բարերարութենէ քումմէ, առաքեա՛յ այժմ զառատ մարդասիրութիւնդ քո եւ բժշկեա՛յ զախտս եւ զհիւանդութիւնս ծառայից եւ աղախնեաց քոց, նշանաւ խաչիդ քո, որով բարձեր զակարութիւն ազգի մարդկան եւ զատապարտեցեր զթշնամին վասն կենաց եւ փրկութեան մերոյ, զի դու ես Տէր Աստուած մեր եւ զքեզ...:*

20. — էջ 213. — Աղօթք ի վերայ դիւահարի. — Տէր Աստուած զաւրութեանց. որ բժշկես զախտս եւ զհիւանդութիւնս ժողովրդեան քում. որ փառաւորիս հանապազ ի ծառայից քոց: Դու՛յ ի զրկեալս յայսոց չարաց եւ մի՛ բառնար ի ձեռաց քոց տէր բարերար: Սաստեա՛յ յայսս պիղծ եւ խորտակեա՛յ զատամունս ի ներքոյ ոտից մերոց: Սրբեա՛յ զծառայս քո եւ նորոգեա՛յ զսա՝ ի միաբանութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. շնորհաւք եւ մարդասիրութեամբ տեառն մերոյ...:

21. — էջ 213. — Աղօթք ի վերայ ջերմնոտի. — *Տէր գթած եւ ողորմած, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Դու՛ ես այրեր բժշկութեան եւ սկիզբն առողջութեան. դու առաքեցեր ողորմութեամբ քով զմիածին որդին քո յաշխարհ՝ որ ձայնիւ զմեռեալս յարոյց եւ բանիւ զբորոտս սրբեաց եւ ի ձգել ձեռին նորայ՝ փախեաւ ջերմն եւ առանսուն եւ ի պատմուճանէ նորա բղխեցին բժշկութիւնք բազումք: Որ ետուր իշխանութիւն ծառայից քոց աշակերտացն եւ առաքելոց՝ յորժամ մտանիցեն ի գիւղս կամ յագարակս, դիցեն զձեռս ձեր ի վերայ հիւանդաց նոցա եւ բժշկեսցեն զնոսա յանուն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ եւ ես ի ձեզ եմ ի բժշկել զնոսայ: Եւ արդ եւ մեղաւոր ծառայս քո, դնեմ զձեռս իմ...* (յաջորդ մէկ էջը ինկած ըլլալով՝ հոս կը վերջանայ աղօթքը՝ որ պակասաւոր է եւ կը սկսի Սամարացւոյ կանոնը:)

22. — էջ 215. — Կանոն Սամարացւոյ՝ սկիզբը պակասաւոր. — *...յով ծածկեն զերեսս խորեանց, անդադար փառաբանութիւն...: Եւ առեալ ջուր արկանէ ի կժոյ եւ տայ Սամարու՝ Զայն տեառն ի վերայ ջուրց եւ Աստուած փառաց ա: Ընթերցուած Ելից՝ Խաւսեցաւ Տէր ընդ Մովսէսի եւ ասէ. արա՛յ աւազան պղնձի...: Ընթերցուած երկրորդ Թագաւորութեանց՝ Եւ արար Քիրամ աւազան պղնձի...: Ընթերցուած ի Մնացորդաց՝ Եւ արար Սողոմոն զծովն հալածոյ ի տասն կ...: Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ՝ Մի՛ երկնչիր ծառայ իմ Յակոբ եւ սիրեալ...: Պետրոսի առաքելոյ ի Կաթուղ՝ Զի եւ Քրիստոս միանգամ ի վերայ ձեր վասն մեղաց մեռաւ...: Պաւղոսի առաքելոյ ի Կորնթ՝ Ոչ կամիմ եղբարք եթէ ագէտ լիցէք զի հարքն մեր...: Յովհաննու առաքելոյն ի Կաթուղիկեայց թղթոյն է ընթերց՝ Սիրելիք սիրեսցուք զմիմեանս զի սէր Աստուծոյ է: Աւետարան ըստ Ղուկասու՝ Յառաջագոյն քան զգալն Զատկի, գիտաց Յիսուս...: Քարոզ՝ որ ասի ձայնիւ՝ Աստուած մեծ եւ արարչագործ զաւրութիւն, անեզանելի բնութիւն, որ ողորմութեամբ հաճեցար* լինել (ասել) *զամենայն արարածըս...: Զգեցեր* զերկինս որպէս խորան ի վերայ ջուրց. մածուցեալ հաստատեցեր *անպարագրելի աստուածութեամբդ եւ զամենայն հրաշ...: Եւ առէ զաղօթս՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս արարչագործ Աստուած հզաւր եւ...: Եւ ապա առէ զաղօթս ի վերայ ջրոյն՝ Տէր Աստուած մեր որ վասն բազում ողորմութեան քո ընկալար զաւծումն իւղոյ ի պոռնիկ կնոջէն եւ զյիշատակ նորա գրով աւանդեցեր ընդ ամենայն աւետարանս ի ձեռն սուրբ աւետարանի քարոզութեանց, ասաց եւ զնոյն աւրհնութեան...: Եւ ապա աւրհնեսցէ զեւղն եւ զջուրն՝* որպէս միւռոնեան՝ *Աւրհնեսցի, ածցի եւ սրբեսցի իւղս եւ ջուրս այս...: Եւ լուասցեն զոտս միմեանց՝ ի մեծամեծաց մինչեւ*

ցփոքունսն: Եւ ընթեռնուն՝ Աւետարան ըստ Յոհան՝ Եւ յորժամ լուաւ զասս նոցա, առ զնան...: Քարոզէ սարկաւագն՝ Միաբան ամենեքեան զոհացարուք...: Եւ ասէ՝ զաղօթս՝ Տէր Աստուած բազում ողորմ եւ սքանչելագործ որ մարդասիրութեամբդ քով...:

23. — Էջ 244. — Քարոզ պատուիրանի՝ Զոր քահանայն գնկուցանէ՝ նախ քան սկիզբն խորհրդոյն: Առեալ զսուրբ Աւետարանն ի գիրկս եւ կարկառեալ զձեռս իւր եւ ասէ՝ Լուարո՛ւք ինձ որդեակք իմ եւ զերկիւղ տեառն ուսուցանեմ ձեզ...:

24. — Էջ 257. — Իւղաբերից Աւետարան ըստ Մարկոսի. — Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր...:

25. — Էջ 261 — Աւետարան ըստ Մարկոսի՝ Եւ իբրեւ եկին ժողովուրդն, մատեաւ այր մի, ծունր իջ...: Աւետարան ըստ Մատթէոսի՝ Յայնմ ժամանակի՝ պատասխանի ետ Յիսուս եւ ասէ՝ Գոհանամք զքէն տէր հայր...: Աւետարան ըստ Մարկոսի՝ Եւ իբրեւ երեկոյ եղեւ քանզի ուրբաթ էր...: Աւետարան ըստ Մարկոսի՝ Այլ վասն աւուրն այնորիկ եւ ժամու, ո՛չ ոք...: Աւետարան ըստ Ղուկա՝ Եւ ահա այր մի անուն Յովսէփ...: Աւետարան ըստ Ղուկայ՝ Եւ իբրեւ կատարեաց զամենայն ըստ օրինաց...: Աւետարան ըստ Ղուկա՝ Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն...: Աւետարան ըստ Յոհաննու՝ Յետ այնորիկ աղաչեաց զՊիղատոս՝ Յովսէփ որ...: Աւետարան ըստ Յոհաննու՝ Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ...: Աւետարան ըստ Յոհաննու՝ Զայս խաւսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթակղեսջիք...:

26. — Էջ 281. — Գանձ Յարութեան. — Մարդասիրութեամբ որդին միածին, եկեալ ի խնդիր եղծեալ պատկերին, կատարելով զկամս տառքդին, զոր մարգարէքն յառաջ ծանուցին: Եւ եր ի կառս քառաթեւին, ապառեցեր զկեղամն առաջին: Ճաշակեցեր զքացախն ընդ լեղին եւ քաղցրացաւ կամքդ աստուածային: Մեռար բնութեամբ մեռով ի խաչին, ու յայտնի եղար ի գերեզմանին, այսաւր յարեար փառաւք հրաշալի, տէր մեր Յիսուս հզաւր: Ահա՛ կեցո՛ զմեզ տէր, եւ արդարացո՛յ յոյս սուրբ կերակէի, ուսուրս տէրունի, աղաչեմք:

Կեանքդ կենաց, լոյսդ հայրենի, եղար ի հող մահու ստուերի. տեղի եառն խնդրք հեղեղատին՝ զոր եւ փորեալ սամնաս ի վիմի: Երեք աւրեալ թաղմամբ ի յերկրի, որպէս Յովնան ի կէտին փորի. այսաւր յարեար փառաւք սքանչելի, զարդարեցեր սուրբ զեկեղեցի: Միամն երդէ զերդքս պանծալի եւ աւետէ զանեքն կուսի՛: Փեսայն յարեաւ փրկիչ աշխարհի, քեզ աւետիս մեծ ուրախալի. ահա կեցոյ զմեզ տէր եւ արդարացոյ յոյս...:

Բեհեզական լոյսն՝ այսաւր ծագեալ, յորժամ փրկիչն մեզ յարուցեալ, իւղաբերից կանայցն երեւեալ...:

Տանելն այսաւր որդիք Սիոնի, զյարութիւն փրկչին Յիսուսի...:

Իմաստնոյն լոյսն այսաւր ծագեաց, զխաւար մեղաց մերոց փարատեաց...:

Զորեքկերպեան աթոռ անեղին, պայծառացեալ յայտ երկնային. ամենաւրհնեալ կոյս աստուածածին...:

27. — Էջ 287. — Գանձ բազմաց ննջեցելոց. — Միոյ ի էէն, բանդ որ ի հաւրէ, յորժամ ծագիս փառաւք...:

28. — Էջ 297. — Երգմնեալ ի յայտ. — Աստուած՝ որ մարդոյ բնութիւնս փոփոխական եւ տկար գիտես, եւ զաս ի մածութենէ մերմէ խորհուրդս ճշմարտութեան ճանաչես...:

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. — Էջ 298 (Գլխաւոր Յիշատակարան). — « Փա՛ռք, համագոյ, անբաժանելի, միաւանական սուրբ երրորդութեան, հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ: Շնորհիւն Աստուծոյ եւ ողորմութեամբ նորին գծագրեցաւ գիրքս որ կոչի Մաշտոց, ձեռամբ անիմաստ եւ մեղապարտ Կարապետ երիցու. ի յերկիրս Համշինու ի յանապատս սուրբ Խաչիկ Հաւրն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ Նշանաց սրբոց Վարդանանց եւ սուրբ Խաչիկ Հաւրն՝ որ ասա են

*եղեալ ի պաշտպանութիւն երկրիս եւ գաւառիս մերոյ, ի թվին ՋՀԷ* (=1528)՝ *դեկտեմբերի խա։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեան։ Ի յիշատակ եւ ի վայելումն* (*ստացողի անունն տեղը բաց թողուած ու յիշատակարանն ալ հոս աւարտած*)։

*Բ. — էջ* 300. — *Յիշատակ է* Մաշտոցս Գումքըցի Կիրակոսին, *կողակցին*՝ Խանումին *եւ զաւակաց*՝ Մարիամին, Թուրփանտին, Կատարինային *եւ այլ ամենայն յարեան ննջեցելոցն հօրն ասացէք Աստուած ողորմի. ամէն Հայր մեր։ Թվ. ՌՃԺԵ* (=1666) *եւ եդ ի յիշատակ ի դուռն* Ս. Յարութեան՝ *ի ձեռն* տէր Կիրակոսին։

*Եւ ես* Ալաձորեցի *Զօհրօ՞ գրի* (*յաջորդ էջը ինկած եւ կորսուած*)։

*Գ. — Սկիզբի բովանդակութեան ցանկի ի վերջ*՝ Կարապետ Յովհաննիսեանց Ալեքսանդրապոլցի։ *Ապրել եմ* 1857–1887՝ Ալեքսանդրապոլսում։ 1887՝ Կարսում։ 1894–1912՝ Քիշնեւում. 1912*ից ցայժմ* (1920)՝ Թիֆլիսում։

*Դ. — էջ* 301՝ *Դատարկ մագաղաթի վրայ*՝ Կարապետ Խաչատուրեան Յովհաննիսեանց՝ Ալեքսանդրապոլցի՝ *ստացայ ներկայ* Մաշտոցը Բեսարաբիայում *եղած ժամանակ* 1894 *թուին*։ Թիֆլիս՝ 5 *ապրիլի* 1919 *թ.*։

Փարիզ, 9 Հոկտեմբեր 1947

# 28. — ՇԱՐԱԿՆՈՑ

Հին բիւ՝ չունի

Ժերգ դա՞ր

*ԹՈՒՂԹՔ*՝ *ԻԲ*×24 (=528 էջք)։ — *ՄԵԾՈՒԹԻՒՆ*՝ 14×10×7 *սնթմ*։ — *ԳՐՈՒԹԻՒՆ*՝ *միասին*։ *ՏՈՂՔ*՝ 23։ — *ՆԻՒԹ*՝ *բամպակեայ հաստահակ թուղթ*։ — *ԿԱԶՄ*՝ *չագանակագոյն կաշեպատ փայտեայ*։ — *ՀԱՆԳԱՄԱՆՔ*՝ *չատ անխնամ պահպանուած, սկիզբն ու վերջը պակասաւոր։ Նաեւ էջեր ինկած ըլլալով վերջէն նորը գրուած ու լրացուած, շատ աւելի էջեր կարկտնուած։ Կը սկսի « Որ զնախարարեալսն յառաջագոյն... » շարականէն։ — ԳԻՐ*՝ *շատ խնամուած մանր բոլորագիր։ — ՉԱՐԴԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ*՝ *սիրուն ծաղկումներ են, բայց աղաւաղուած։ — ԽՈՐԱՆՔ եւ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ*՝ *մանուշակի կարմիր պարզ ծաղկումներ։*

*ԳՐԻՉ*՝ *Թորոս դպիր։ — ՍՏԱՑՈՂ*՝ *անյայտ։ Նոյնպէս անծանօթ*՝ *ՏԵՂԻՆ եւ ԺԱՄԱՆԱԿԸ։ Ձեռագիրս սեփականութիւնն է Պր. Վարդ Կիւլպէնկեանի. Փարիզ։*

*Մաւանդ է՝* Շարական *թղթեայ, փոքրագիր, հին լաւ գաղափարէ մը ընդօրինակուած, որ կը բովանդակէ առձեռն Շարականցներու բոլոր մասերը, վերջը պակասաւոր, ուրով ինկած ու անհետացած է գրչութ յիշատակարանը։*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Հոս մը միայն, « Երգէ երեկոյին ժամու խաղաղականին » ի վերջ*՝

*Ա. — Զբազմամեղս* Թորոս *անարժան* դպիր *աղաչեմ մեզաց թողութիւն խնդրել եւ Տէր զձերն թողցէ. ամէն։*

Փարիզ, 24 Նոյեմբեր 1947

# 29. — ՇԱՐԱԿՆՈՑ

Հին բիւ՝ չունի

ՌԻԹ = 1580

*ԹԵՐԹՔ*՝ 308 (= 616 *էջք*). — *ՄԵԾՈՒԹԻՒՆ*՝ 13×9×5 *սնթմ*. — *ԳՐՈՒԹԻՒՆ*՝ *միասին*. — *ՏՈՂՔ*՝ 24. — *ՆԻՒԹ*՝ *բամպակեայ ցեղնորակ թուղթ*. *ԿԱԶՄ*՝ *մուք չագանակագոյն կաշեպատ փայտեայ, աստղումներով*. — *ՀԱՆԳԱՄԱՆՔ*՝ *անխնամ պահպանուած, կազմը հինցած, սկիզբի եւ վերջի թերթերս պակասաւոր։ Ներքին շատ թերթեր կարէն ելած*. — *ՎԵՐՆԱԳԻՐՔ*՝ *կարմիրով մանր բոլորագիր*. — *ԳԻՐ*՝ *մանրութիկ յաջող բոլորագիր*. — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ*՝ *սիրուն թռչնագիր-զարդագրեր*. — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ*՝ *բազմաթիւ, նուրբ ծաղկումներով*. — *ԽՈՐԱՆՔ*՝ *հնագոյն գաղափարներէ յաջող ծաղկումներ, առատ լաջուարդով. նոյնը եւ կիսախորաններ, նոյն հոս*. — *ՆԿԱՐ*՝ *հոս մը միայն, Յարութեան կանոնի հանդի-*

[illegible] Յիսուսը կը փրկ-ուէ, հրեշտակ մը եւ քնացող երկու զինուորներ՝ կարմիր որմածայր գլխանոցներով, բուն վիճակի մէջ։

ԳՐԻՉ՝ անծանօթ. — ՍՏԱՑՈՂ՝ Տէր Ներսէս քահանայ. — ՏԵՂԻ՝ անյայտ. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԻԹ-էն յառաջ. — ԳԻՄԱԿ (յիշատակագրութեան) եւ ԿԱԶՄՈՂ՝ Կարապետ աբեղայ։ Ձեռագիրս Փարիզէն գնեց Պր. Յարութիւն Հովսէփեան, Նիւ Եորքէն։

Մասնաւոր է Նարեկաց՝ փոքրադիր, թըղթեայ՝ որ կը բովանդակէ առձեռն շարականները ամբողջ։ Գիր. Յիշատակարանը ինկած ու կորսուած ;

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — էջ 594. — Արդ աղաչեմ զձեզ ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ. յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՏէր Ներսէսն եւ զհայրապետ եղբայրն իւր զԳասպարն՝ որ սրախողխող մահուամբ կատարեցաւ ՚ի Քրիստոս. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ամէն։ Հայր մեր։

Բ. — Ասոր կը յաջորդէ՝ տարբեր գրչէ՝ Սակաւ գծող եւ կազմող Կարապետ սուտանուն աբեղայ, յիշել զիս ալ ողորմայիւ, զմեղաց յէջ Քրիստոս ամէն, եւ տասել Աստուած վարձահատոյց լինի ուէր Գիրքարին՝ որ եւ տպագրական (այսպէս) կազմեցինք եւ կազմեցինք։ Ի թուականիս Հայոց ՌԻԹ (=1580)։

Գ. — Յաջորդ պատարկ էջին վրայ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Մարգարս գրեցի ՌՃԼԹ (=1690) ապրիլ ամսուն Ժ։

Դ. — Նոյն էջին վրայ՝ Ես Յարութիւն տէր Շարակնոս թվին ՌՃԽԳ (=1694)։

Փրկ. 14 Յունիս 1949.

# 30 — ԵՐԳԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌԽ=1591

ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10×7½×4 սնդմ. — ԹՈՒՂԹՔ՝ ԼԱ×20=620 էջք. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՏՈՂՔ՝ 21. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած գեղեցիկ թուղթ. — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակեայ, շագանակագոյն, յանջրով եւ թիկուներով, կողքին վրայ զոյգ ճարմանդով եւ չզթ-... — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ երկուական սպիտակ թերթ, սկիզբն ու վերջը. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հակառակ հնութեան շատ լաւ պահպանուած թեթեւօրէն ցեցակեր շրթունքներուն վրայ ու քանի մը թերթեր կարէն բաժնուած. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ ոսկեզարդ յաջող ծաղկումով թռչնագիր. — ԳԻՐ՝ շատ մանր բայց գեղագիր բոլորագիր. սկզբնատառերը համակ ոսկեզեղ. — ԱԿԶԲՆԱՏԱՌՔ՝ մարդագիր եւ թռչնագիր գեղեցիկ ծաղկումով. — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴ՝ շատ առատ, իւրաքանչիւր կանոնի քով, նոյն համաչափ եւ հարուստ ծաղկումներով ու մեծագոյն թիւով շատ յաջող ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՎ, խորաններու եւ կիսախորաններու քով շատ աւելի մեծ. — ԽՈՐԱՆՔ եւ ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ [illegible] վերեւ, ոսկիի եւ լազուարդի յաջող եւ զանազան ծաղկումներով. — ՆԿԱՐՔ՝ երկու հատ. սկիզբի պատկերը կը ներկայացնէ Զաքարիա եւ Եղիսաբեթ՝ կանգնած, մին՝ տանը խոկ մէջը տաճարին մէջ կը սպասէ Ս. Հոգւոյն օրհնութիւնը։ Եղիսաբեթի քով ծառ մը՝ վրան զոյգ աղաւնիներով։ Երկրորդը՝ Հոգեգալստեան կանոնին կից՝ Սիոնի վերնատունը՝ ուր առաքեալներ կ՚ընդունին Ս. Հոգւոյն շնորհը։ Նկատելի է գծերու բացառիկ յաջողութիւնը։

ԳՐԻՉ՝ Գասպար (կրօնաւոր). — ՍՏԱՑՈՂ՝ Աստուածատուր եպիսկոպոս. — ՅԱՂԿՈՂ՝ անյայտ, անհամեմատ գրիչը, նոյնը ձեռագրիս գրի եւ ծաղկումի նոյն ներդաշնակ ոճին. — ՏԵՂԻ՝ Շէնքուշ գիւղաքաղաք. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԽ (=1591)։ Ձեռագրիս այժմու տէրն է Պր. Նուբար Չիլինկիրեան, Փարիզ։

Մասնաւոր է Երգարան, փոքրադիր, թըղթեայ, ճոխ ծաղկումներով եւ բուռական շահեկան պարունակութեամբ, որ կը բովանդակէ առձեռն Շարակնոցի գրեթէ բոլոր մասերը, հետեւեալ դասաւորութիւններով՝

1. — Աստուածայայտնութեան ձրագալոյցի կանոնէն կը պակսի «Ուրախացիր Աստուածածին. մեծացուցէն»։

2. — Ս. Ծննդեան Օրհնութեան «Անսկիզբն լոյսից» հայրն ու Մեծացուցէի առաջին երկու տունները կը պակսին. Համառօտ թերթը ինկած ու կորսուած է։

3. — «Որ զմարմնացեալն տիրապար»ը՝ որ Ծննդեան քարոզ է, հոս Մեծացուցէ կը ներկայացուի։

4. — Երկրորդական տաղերուն կանոնին վերջին թերթը տունը հոս կը պակսի։

5. — Պօղոսյ բժ. Մանկունքի « զանուն անուն »ը կը պակսի։

6. — Երգարանիս խմբագրութեան կարգը ընդհանրապէս ուղիղ է ու ճաշու շարականները ժամակարգութեանց վերջաւորութեանը գրուած են միշտ։

7. — Յովհաննու Մնդլեան կանոնի ի վերջ « Որ ի յաւմսեան վեցերորդի » Մեծացուսցէն կը պակսի մեր Շարականոցէն, որ է՝

« Որ ի յամսեան վեցերորդի, առաքեալ հրեշտակապետն Գաբրիէլ, ի քաղաքն Նազարէթ, աւետարանել սրբոյ կուսին ընդ արմնոցեալն յորովայնին, զծածկեալ խորհուրդն յաւիտենից. ուրախութեամբ երգով բղխեալ բանին մեծացուցանեմք։ Որ աւրհնեալ էր սրբոյ կուսին, զամուլ արգանդն Եղիսաբէթին, որով յղացաւ քարոզող բանին, զձայն բարբառոյ յանապատէ, սուրբն Յովհաննէս մեծն ի մարգարէս. աւրհ....։ Այսաւր սուրբ կոյսին Մարիամ, ողջունիւ մտեալ ի տունն Զաքարիայ, լուեալ զողջոյնն Եղիսաբեթի. խաղալ մանուկն յորովայնին, երկրպագել տեառն, աւրհ...։

8. — Սրբոց Հայրապետաց կանոնի Մանկունքին մէջ աւելորդ տուներ կան։

9. — « Հայր ամենակալ » մեղեդի միասնի ի վերայ նորայծնելոցնը կը պակսի հոս։

10. — Սրբոյն Մինասայ, Երմոգինեայ եւ Գրատոսի « զլեշտակ վկայից »ը նմանապէս կը պակսի։

11. — « Ի հանդերձեալ նորոգմանն » էն մինչեւ յաջորդ էջին « Ես սատյի »ն կը պակսի Շարականոցէն։

12. — Երգարանէն կը պակսին « կուսածին »ին եւ « Աստուածածին »ի մէջտեղի երկու տուները։

13. — «Յաղթականք եւ զուարճութիւնք»ի մէջ Շարականոցէս կը պակսին հետեւեալ տուները՝

« Անբաւելիդդ Աստուած համագոյծով ամենասուրբ երրորդութեան, լոյսդ միայն անեղ եւ անփոփոխ, աւրհնեմք զքեզ ի յաւութեան երեկոյիս յահուոր թագաւոր։

Որ բղխեան անբաւելիդ հաստատեցեր անպարագիր լոյսդ համաւփիւս եւ ի լուսոյ արարեր զհրեշտակս եւ լուսափայլ բղխարդն ի զպախտին. աւրհ։

Վասն որոյ եւ մեք հաւատացեալք քեզ երկրպագանեմք ու արտասուաք հայցեմք ի քէն, բարեխաւսութեամբ աստուածածնին, զաստուածային լոյս քո ծագեա՛ ի յանձինս մեր. աւրհ։ »

Ասոր կը յաջորդէ « Խորհուրդ խորին անհաս անբաւելիդն... » ու պատարագ մատչի շարականը։

14. — Շարականոցէս կը պակսի նոյնպէս « Շարական խնկարկութեան » հետեւեալ մասը՝

« Խնկոս՛յ յոյժ զուսար լուսոյ ժայր սուրբ կաթողիկ մանկամբ քո սխոփն, զարդարեա՛, զծնեա հարսն զանձալի երկնաւորման լուսաձեմ խորան, զի ածեալն Աստուած միշտ ի յէն անծախտապէս ի քեզ միշտ պատարագիս. հօր ի հաշտութիւն, մի զի քաւութիւն բաշխէ զմարմին եւ զարիւն իւր սուրբ, վասն իւր կատարման սուրբ տնաւրէնութեան, չնորհեա՛ զխաղութիւն կանդնոց տաճարիս »։

Հոս կը վերջանայ Երգարանը ու կը յաջորդէ Դիպաւոր Յիշատակարանը։

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. — Էջ 617 (Դլխաւոր Յիշատակարան).

— « Փա՛ռք պատիւ, գոհութիւն եւ երկրպագութիւն համագոյ, համարուն, երրեակ անձնաւորութեան եւ մի եւ անբաժանելի աէրութեան հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ։

Որ զօրացոյց եւ կարողացոյց բոլորս եւ զանգօրս յամենայն իմաստից եւ ի բարութեանց հասանել աւգնականութեամբն Աստուծոյ ի վերջին գիծ աւսիս։ Որ կարողութեամբն Աստուծոյ սկսայ եւ շնորհիւ նորին աւարտեցի ակար եւ տխմար մաօք եւ անձամբ։ Ի զաւն եւ նեղ ժամանակիս որ ոչ ուստէք ունէաք զմխիթարութիւն, բայց միայն զՔրիստոս եւ զնորին անսուտ խոստմունսն։

Արդ՝ գրեցաւ Երգարանս այս ի գիւղաքաղաքս Շէնճուշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին, ի յաւ եւ ընտիր աւրինակէ, ձեռամբս մեղսամակարդ եւ սուտ անուն Գասպարիս, ի խնդրոյ աստուածասէր եւ բարեմիտ Աստուածատուր Եպիսկոպոսին։

Արդ աղաչեմ զամենեսեան՝ որք հանդիպիք սմայ ուսանելով կամ աւրինակելով, աղայանաց եւ պակասանաց եւ անարուեստ գրչութեանս եւ զրադարձիս անմեղադիր լերուք, եւ յիշեցէք ի յաղօթս ձեր զսուտանուն Գասպար գրիչս եւ զկենակիցն իմ զՄեծխաթունն, զփոխեցեալսն, եւ զորդին իմ զՅովհաննէսն, եւ զդստերքն իմ զՀռիփսիմէն եւ զՎառվառեայն, եւ զծնողքն իմ եւ զեղբարքն իմ, ըզքոյրն իմ եւ զամենայն արեան մերձաւորքս իմ եւ լիով սրտիւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած զձեզ յիշէ ի բարի կամս իւր, ամէն: Ի թվ. ՌԽ (=1591):

Բ. — Ղազարու Յարութեան կանոնի նախորդ թերթի ստորեւ «Ջեղկելի գրիչս Գասպար յիշեցէք ի Քրիստոս եւ զկենակիցն իմ՝ զՄեծախաթունն»:

Գ. — Էջ 619. — «Վերստին ստացօղ եղեւ այսմ հոգեշահ երգարանիս մահտեսի Պաւլիթ պատանին, ջերմ եւ եռափափաք սիրով, ի վայելումն անձին իւրոյ: Զոր տէր Յիսուս բարեաւ եւ խաղաղութեամբ վայելել տացէ եւ ընդ երկայն աւուրս պահեսցէ: Եւ մանուկս այս՝ է ցեղեալ ի զարմէն խոճայ Աստախանենց. որդի մահտեսի Յոհաննէսին եւ եղբօր որդի մահտեսի Յովհաննիսին. Յառաջնորդութեան Ամիդ մայրաքաղաքիս տեառն Խաչկայ աստուածաբան վարդապետին եւ ի կաթողիկոսութեան սրբոյ էջմիածնի՝ տեառն Նահապետի ամենայն հայոց Հայրապետի, եւ ի թագաւորութեան Օսմանցոց Սուլթան Մուստաֆայ կոչեցելոյ: Արդ՝ որք հանդիպիք կամ եղանակէք սովաւ, յիշեսջիք յաղօթս ձեր, զմահտեսի Պաւլիթ բարեմիտ պատանին, զի եւ դուք յիշեցեալք լիջիք ի Քրիստոսէ, այժմ եւ յաւուրն ահեղեկի. ամէն:

Ո՛վ ընթերցօղք քաղցրաբարբառ,
եւ Նուագօղք սրտօք պայծառ,
թիւն հայոց է յոյժ պատկառ,
որ ի ստորեւ գրել երկրառ.
յու համարեա եւ ի միտ ա՛ռ,
գներքոյ գրեալ յետին գիր քառ,
մուտ ի յայգիս ո՛վ զերափառ,
կրթեա սիրով զու Ճ. Ծառ (= 1702)»:

Փարիզ. 14 Նոյեմբեր 1947

---

# 31.— ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Հին թիւ՝ չունի — 1679էն

ԹԵՐԹՔ՝ 315 (=630 էջ). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14×7×5 սնթմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. — ՏՈՂՔ՝ 18. — ԹՈՒՂԹ՝ պարզ թուղթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտեայ. — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած. — ԳԻՐ՝ ամբողջութեամբ նոտրգիր. — ԶԱՐԴԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ, ԽՈՐԱՆ եւն չունի:

ԳՐԻՉ՝ Թումէյեցի Ստեփան եւ Կիւրնազար. — ՍՏԱՑՈՂ՝ գրիչները. — ՏԵՂԻ՝ Ագրիանուպոլիս. — ԺԱՄԱՆԱԿ՝ 1679–1703: Ձեռագիրս սեպհականութիւնն է Մ[illegible]ի Միրզաեանց ընտանեկան մատենադարանին:

Մատեանս է Համառօտ Հաւաքումն վարդապետաց եւ այլ հաւաքումներ՝ որ կը բովանդակէ՝

1. — Էջ 1. — Համառօտ հաւաքումն վարդապետաց՝ յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեան, ընդդէմ հերձուածողաց հականառութեան. — Հաւատով խոստովանիմ զհամագոյ զամենասուրբ Երրորդութիւն անբաժանելի, անսկիզբն եւ անփոփոխ, որ գոյացոյց....:

2. — Էջ 7. — Վկայութիւնք յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ եռանձնեայ աստուածութեան եւ մի բնութեան. — Ետուն ի կերակուր ինձ լեղի. լեղի ինձ տաք եւ ո՛չ մեր. ծակեցին զձեռս իմ եւ ո՛չ բղմերս....:

3. — Էջ 17. — Յուլիայ Հռովմայ հայրապետի վկայութիւնք՝ ի թղթէն որ առ Դիոնեսիոս. — Մի որ պատճառաւ տայց ծնողացն երկուս տալով բնութիւն....:

4. — Էջ 20. — Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի վկայութիւնք ընդդէմ Սամոստացոյն. — Զթիկունս իմ ետու ի հարուածս....:

5 — էջ 29 — Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք — *Սեղբեստրոս ասէ. յերկուս պարտիս հատանել զի զխառնուածս ի սոսանց յերկուց բնութեանց...։*

6 — էջ 34 — Դիոնեսիոսի Արիոպագացւոյ եպիսկոպոսի վկայութիւնք. — *Աստուածաբանն ճշմարիտ հաղորդութեամբ ըստ ամենեցունց նմանութեան եղեալ...։*

7 — էջ 38 — Փելիքսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք — *Բայց նոքա՞ մեք ախտակիր զաստուածութիւն ասեն, եւ որք...։*

8 — էջ 55 — Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի, ժողովն Եփեսոսի ասացեալ ընդդէմ Նեստորի — *Որ ոչ խոստովանեսցի, մի տէր զՅիսուս Քրիստոս եւ մի...։*

9 — էջ 61 — Կիւրղի՝ ի պարապմանց գրոց ի Թէոդոսի թղթէն, զի պարտ է ուտել երեկունն ծրագալուցին. — *Արդ՞ պահելով զօրն յորում մատնեցաւ եւ մատնեցաւ ի չորեքտասաներորդ լուսնին յառաջնում ամսեանն եւ...։*

10 — էջ 131 — Մարութայ Նփրկերտոյ եպիսկոպոսին՝ որ է Մուփարղին — *Զի թէպէտ եւ տեսանիցեն զնա խանձարուրս պատեալ եւ ի մսուր եդեալ...։*

11 — էջ 181 — Ի հաւատոյ թղթէն Ներսիսի վերջնոյ Հայոց կաթուղիկոսի որ առ Տանիլ թագաւորն — *Այս թէ ոք վասն ակամայ եւ անզգամելի կրից ապականացու ասէ զնա, այսինքն կերակրոց եւ...։*

12 — էջ 202 — Ի հաւատոյ ճառէն Դաւթի Հայոց փիլիսոփայի — *Բանն Աստուած կատարեալ, մարմնացեալ. կատարեալ մի անձն Աստուծոյ միջնորդ. խոստովա...։*

13 — էջ 203 — Ի հաւատոյ ճառէն Մովսէսի Հայոց քերթողահօրն. — *Մարդկայինն աստուածային եւ որ յերկրէս յերկնից...։*

14 — էջ 205. — Ի մեծափառ հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վարդապետի. — *Հօր հաւասար եւ Ս. Հոգւոյն խորհրդակից...։*

15. — էջ 212. — Գրիգորի Նարեկացւոյ Հայոց վարդապետի — *Իսկակից Հօր աննուագ գոլով ընդ անփառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի աստուածա...։*

16 — էջ 213 — Պետրոսի Հայոց Քերթողի — *Քանզի Աստուած է եւ ըստ կամի անէ...։*

17 — էջ 213 — Պօղոսի Հայոց վարդապետի է. — *Արդ ի նմա ձեռս այլ ըստ նմա եւ ոչ ըստ մտաց իմացեալ զբանն մարմնոյ եկեալ եւ միացեալ նոյնակէս մարմինն աստուածացեալ եւ ոչ փոփոխեալ, բայց ո՛չ երկուց բնութեանց կամ երկուց զիմաց փորեացին հետք։*

*Ո՛վ զու երկարնակ ոչ ոք կարէ բաժանել զբանն ի զրոյն, եւ ո՛չ զՔրիստոս յերկուս բնութիւնս։ Արդ՝ զասոյ զխաւարն ի լուսոյ որ յինկիզասս, կամ զարիւնն ի ջրոյն. ահա՝ ձեռաքանչ հրաշք, նոյն խաւար՝ Իրարէ ջուր եւ նոյն արիւն։ Արդ՝ զասա խմացիր եւ բաժանեա ի միմեանց եւ ապա սկիզբն արա քննել եւ զատուցանել յերկուս զմի բնութիւն Քրիստոսի։*

*Թէ Աստուած խոստովանիս զՏէր մի, այլ ապա չէ հնար. բայց թէ...։*

18. — էջ 215 — Ի թղթոյ հաւատոյ Կոմիտասա Հայոց կաթողիկոսի — *Ի վերջին ժամանակս աստուածորդին կամ ոք հօր եւ սուրբ հոգւոյն, վասն մերոյ փրկութեան ծնաւ Աստուած վայելչարար ի սրբոյ կուսէն...։*

19 — էջ 217. — Խոստովանութիւն Մանազկերտոյ ժողովոյն — *Որ ոչ խոստովանի զմարմնացեալ բանն Աստուած մի բնութիւն յետ անճառ միաւորութեան, որ յաստ...։*

20 — էջ 218 — Ի հաւատոյ թղթէն Մարութայի Սիւնեաց եպիսկոպոսի՝ զորս գրեաց հրամանաւ Եզրի Հայոց կաթուղիկոսի եւ այլ եպիսկոպոսացն առ Հերակլ արքայն Յունաց — *Քանզի որ ո՛չ խոստովանի Աստուած խաչեալ, ո՛չ խոստովանի Աստուած ի կուսէ ծնեալ...։*

21 — էջ 222 — Ի հաւատոյ թղթէն Սամուէլի Հայոց կաթողիկոսի՝ զոր գրեաց պատասխանի Թէոդորոսի Մելիտենոյ պատրեարքի. — *Արդ՝ թէպէտ եւ հարքն առաջինք, ...միայն հետս բնութեան. վասն հաստատելոյ, զնոր կուսութիւն՝ թէ ճշմարտապէս մարդ եղեւ եւ ո՛չ կարծեօք, եւ մարմնով խորով կրեաց...։*

22 — էջ 222 — Ի հաւատոյ թղթէն Սա-

մուէլի հայոց վարդապետին՝ զոր գրեաց ընդդէմ երկաբնակացն՝ ի խնդրոյ իշխանին որ մականուն ասիլէ կ··· ծնունդ (այսպէս) կոչիւր·— *Ո՞վ վանմականդ Հարց ընդ երկաբնական. թէ ո՞ր բնութեանցն մեռաւ վասն մեր···:*

23·— էջ 232·— Ի հաւատոյ թղթէն Տիրանոյ հայոց վարդապետաց՝ զոր գրեցաւ Սինաքերիմ·— *Զկնի երկու բնութիւն ասացի անձնք վասն այնր է զերկու բնութիւն···:*

24·— էջ 234·— Ի հաւատոյ թղթէն Սահակայ հայոց վարդապետի՝ որ առ Զորա·— *Ասաց Տէրն. առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր···:*

25·— էջ 236·— Ի հաւատոյ թղթէն Խոսրովու հայոց հռետորին· — *Մարգարէն առանց յուսոյ ո՛չ սակ մարգարէ եւ աշխարհական մարմինն ո՛չ սակ Քրիստոս փրկիչ՝ առանց Աստուծոյ բանին···:*

26·— էջ 238·— Եղիշէի հայոց վարդապետի· — *Աստուած միայն մարդասէր եւ մարդ միայն աստուածասէր. Աստուած մարդոյ եւ մարդ՝ Աստուծոյ: Վասն մարդոյ Աստուած մարդացեալ եւ վասն Աստուծոյ՝ մարդ աստուածացեալ···:*

27·— էջ 238·— Ի հաւատոյ թղթոյն Յեսուայ Խորխոռունեաց եպիսկոպոսի·— *Հայրանակ գծաւորութիւն միջնակ գծաւորեալ բնութիւն եղակի· զարմանեալ անորինաբար-ներգործութեամբ···:*

28·— էջ 238·— Ի հաւատոյ բանէն Դվնայ ժողովոյն — *Էր ազգաւ անէք մարդացեալ եւ թէ ո՛չ է միաւորեալ ի մարմնի բանն Աստուած զի մարդացեալն ի մարմնի խառն···:*

29·— էջ 239·— Եղիշէի հայոց վարդապետի·— *Արդ՝ թէ մարդ ի հոգւոյ եւ ի մարմնոյ բաղկացեալ եւ է մի բնութիւն···:*

30·— էջ 240·— Ի հաւատոյ թղթէն Փօնոյ Ներսէսի հայոց կաթողիկոսի՝ զոր գրեաց ի խնդրոյ Մուշեղայ Բագրատունւոյ· — *Ո՞վ զո՞ր երկաբնակք յորժամ դաւանեաց Պետրոս զՏէրն մեր Յիսուս···:*

31·— էջ 240·— Ի հաւատոյ թղթէն Յովհաննու հայոց կաթողիկոսի·— *Ոչ որոշեմք զբանն Աստուած յիւրմէ մարմնոյն յերկուս դէմս···:*

32·— էջ 241·— Ի հաւատոյ թղթէն Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի եւ Գրիգորի Արծրունեաց եպսկի·— *Իսկ թէ երկու բնութիւն էր Քրիստոս ըստ Լեւոնի եւ Սամոստացւոյն, նախ քան զխաչն···:*

33·— էջ 243·— Ի հաւատոյ թղթէն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ որ առ Գերմանոս· — *Ամենայն ուրեք աստուածային գրոց ի սուրբ Կուսէն ասեն առնուլ ըզմարմինն···:*

34·— էջ 246·— Ի թղթէն Եզրնկայ՝ որ առ Մաշտոց· — *Բանն Աստուած ի վախճան ժամանակաց եղեալ վասն մեր մարդ առանց յեղաշրջելոյ ի յիւրմէ աստուածութենէն, եւ ո՛չ բաժանի էմանուէլն յերկուս առաջս եւ ո՛չ մարդ ոք եղեւ Աստուած, յաւելուած երրորդութեան. այլ են Աստուած եւ որդի Աստուծոյ արժանի արար լինել մարդ անփոփոխելի եւ անզատելի յորովայնէ կուսին, յետ միաւորութեան բանին ընդ մարմնոյն. ո՛չ ասի մարմին մարդոյ, այլ մարմին Աստուծոյ:*

35·— էջ 250·— Ներսէսի վերջնոյ իմաստասիրի Հայոց կաթողիկոսի՝ թղթէն որ Առմանի քաղաքին· — *Այլեւ խառնի ընդ մարմնոյ անմարմին Բանն եւ միացուցանէ···:*

36·— էջ 252·— *Ես ողորմելի* Վարդան՝ *որ Հաւաքեցի զայս աստուածային եւ լուսաւոր մարգարէսս հաւատոյ մեծաւ ցանկութեամբ յուսոյ եւ սիրոյ հետեւելով աստուածային եւ բարեփառ հարցն ուղիղ դաւանութեան: Հաւատով խոստովանիմ անթերի մտօք համագոյ զամենասուրբ Երրորդութիւնն, անբաժանելի· յամենայնի կատարեալ: Հաւատով խոստովանիմ ուղիղ խորհրդով զանկցընակից···:*

37·— էջ 272·— Ի կարգոյ կանոնացն որ եղաւ հրամանաւ Յուստինիանոսի· — *Վասն մեծի յայտնութեան զոր կարգեցին առաքեալքն ի զ· յունուարի ուրախութեամբ տանել ի փառս Աստուծոյ···:*

38· — էջ 274·— Ի թղթէն Գրիգորի Արծրունեաց եպսկ·ի՝ զոր գրեաց Երուսաղիմայ ի Հայս· — *Ցերեսներրորդի երրորդի*

*ամի թագաւորութեան Յուստինիանոսի կայսեր, կրկին մարտ եւ ատեանս ընդ եկեղեցի. եւ փոխեցին զաւուրս Յայտնութեան եւ այլայլեցին* (ասոր կը յաջորդեն Յովհաննու Հայոց Կաթողիկոսի, Յովհաննու Իմաստասէրի Հայոց Կաթողիկոսի եւ Կոմիտաս Հայոց Կաթողիկոսի *համառօտ վկայութիւնները*):

39.— էջ 280.— Ի հաւատոյ թղթէն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ զոր գրեաց պատասխանի ի թղթոյն Անտիոքայ պատրիարքին.— *Դարձեալ ասէք վասն կուսական աւետեացն թէ մեք ո՛չ տօնեմք...։*

40.— էջ 283.— Անանիայի հայոց վարդապետի.— *Տեսցուք եւ զայն զոր ասեն Յոյնք՝ թէ յորում աւուր պատանձեցաւ Զաքարիայ, նմին աւուր յղացաւ կին նորա եւ առաւ թուէն...։*

41.— էջ 287.— Ի հաւատոյ թղթէն Ներսէսի հայոց կաթողիկոսի որ առ Մանուէլ թագաւորն.— *Եւ այս աւանդութիւն Հայոց ի նախնեաց սկսեալ զտօն Ծննդեանն եւ Մկրտութեան տօնել ի միում աւուր եւ այս ո՛չ է վայրապար, զի ի սկզբանէ ամենայն եկեղեցիք նոյնպէս կատարէին որ եւ այս գրեալ է ձեռամ...։*

42.— էջ 297.— Ի հաւատոյ թղթէն տեառն Գէորգայ հայոց կաթողիկոսի՝ որ առ Յովհաննէս պատրիարքն Ասորւոց.— *Արդ զխմորն օրինակ անհաւատութեան ասաց Տէրն. վասն յինքն ձգող...;*

43.— էջ 300.— Ի հարցմանցն Կոմիտասայ հայոց կաթողիկոսի եւ պատրիարքին.— *Արդ ի վերնատանն առ Յիսուս հաց եւ գինի եւ ջուր ոչ ասաց...։*

44.— էջ 307.— Տեսիլ սրբոյն Պօղոսի առաքելոյն Քրիստոսի՝ զոր խօսի վասն խոզից մարդկան, արդարոց եւ մեղաւորաց այսպիսի է.— *Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. ասա ժողովրդեանդ, այլ մինչեւ յե՞րբ մեղանչիցէք եւ յաւելուք ի մեղս...։*

45.— էջ 331.— Հարցմունք Գրիգորի Լուսաւորչին եւ պատասխանիք հրեշտակին՝ որ է այսպ.— *Յաւուր միում շրջէր սուրբն Գրիգոր յանապատն եւ յանկարծակի զմտաւ ածեալ...։*

46.— էջ 362.— Ոտանաւոր վասն ի վերայ կիրակէի՝ ասացեալ Առաքել վարդապետէ.— *Տէրն է զգեր ել օրէնքն հին, մատամբն սուրբ աստուածային թէ պինդ պահես զկիրակի եւ մի գործեր գործ ինչ նովին, եթէ զանէք զկիրակէն, հօտք եւ անդաստանք ձեր բազմասցին, թէ հակառակ կենայք նմին, ամէն բարիք ձեր խափանին...։*

47.— էջ 375.— Գիրք Առակաց.— *Այր մի էր մեծատուն եւ անուն նորա Յովսիմոս եւ բնակէր ի լերինն Սկիթ ամս* խ. *բայց ոչ էր ճաշակեալ հաց եւ մտեալ ընդ յարկաւ...։*

48.— էջ 399.— Պատմութիւն վասն Ներոնի ծննդեան եւ սնընդեան եւ չար գործոյն եւ անօրէն Եղիայի եւ Ենովքայ, վասն զօրանալոյ փրանկ ազգին եւ առնելոյն ըզմեծն Ըստամպօլ, զսուրբն Երուսաղէմ եւ վասն փոխման թագաւորացն եւ վասն կատարածի աշխարհի եւ վասն դատաստանի աւուր ասացեալ սրբոյն Ագաթանգեղի, սուրբ եւ անյաղթ փիլիսոփայի.— *Արդ ի լինել տացէ. անց զարին (այսպէս) տասելոց, ամէն, ԸՍ. ԸԾ. եւ քառասուն ամին լինի։ Կատարումն լուսնին բոլորիմբ. ո՛չ աճումն եւ ո՛չ պակասումն, այլ հանապազ միապէս երեւի մարդկան, բստ մարգարէութեան Դաւթի, մինչեւ կատարեսցի լուսինն։ Եւ դարձեալ Պօղոսն կոչէ թէ յորժամ...։*

49.— էջ 461.— Պատմութիւն ի Հռոմ քաղաքին՝ որ է Պօղոսի եւ Պետրոսի.— *Այս է հրամանքն յԱստուծոյ որ ի յերկնից իջեալ, յեկեղեցին Պետրոսի առաքելոյն։ Ես պապս Հռոմ քաղաքի եկի ի տաճարս կալ յաղօթս եւ տեսի զայս թուղթս ի մէջ խորանիս ի վեր, ի յօդս եւ սարսեցայ զձեռս իմ թէ առից, եւ ո՛չ կարացի հասանել. օրհնեցի զԱստուած եւ ասացի. մեծ ես...։*

50.— էջ 480.— Պատմութիւն պղնձէ քաղաքին՝ որ օրինակէ...։ *Կայր ի Պաղտատ խալիֆայ մի՝ որում անուն էր Արզումելիք. որ մի ի միոյ տուն իջեալ եւ ժողովեաց իւր մեծամեծքն եւ եհարց զնոսա վասն Սողոմոնի արքային, թէ որպէս առնէր հրաման ի վերայ զիւացն...։*

51.— էջ 556.— Տաղ Այբ բանիս եզնաւորի է.— *Աստուած գթած եւ մարդասէր, երեւակ լուէր իւր ծառային.*

*Ով հաւատով պարգեւ խնդրէ,*
*Ծունրով ի տանէս գինդրելեալն···*
*Անդ շինեցին յեկեղեցին,*
*Ի վերայ սուրբ Գերեզմանին,*
*Գմբէթաձեւ եւ պատուական,*
*Ի յանուն սուրբ Աստուածածնին:*
*Մտօք բոլոր գրանս երգօղին,*
Թուլկուրանցի Յովհաննէսին,
*Եւ զայս Յիսուս յիշման բարին,*
*Ասէք զամէնդ ողորմի՛ իր հոգուն:*

52·— էջ 557·— Աղթարք արանց եւ կանանց. — *Նոյն եւ իր սաղն տարեխն է ստացին իմաստունքըն, թէ մարդ որ այս աղթարքն ձնանի, նա լինի···:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

*Ա. — էջ 361 — Տէր Աստուած բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ողորմեսցի գտողացդ սորին՝ մեղապարտ* քՍտեփանիս *եւ ծնողացն* Մէլքոէքին *եւ* Փաշէին *եւ Աստուած ողորմի. ամէն:*

*Բ. — էջ 372 — Թվն ՌՃԻԸ* (= 1679) *մայիսի ամսուն ի ումն եւ տեսի* խորանս *իմ գաղաւեայ խանումն (երկու գուսով* *խանէ որ սոխն (սեխեակին) աջեւրն մէկ ասորն ձրնձուղակ կու եկին մէկտեղ. մէկն կախեցին՝ այլ մնացածն թռան, մինչեւ Գ որ կացաւ, Գ օրէն յետեւ անհետացաւ եղեւ եւ ես իմ աչօքս տեսայ կայէս հնար:*

*Գ. — էջ 374·— Թվն ՌՃԾԲումն* (=1703) *գրեցաւ··· ողորմի ասէք իմ հանգուցեալ* Ստեփանին *կամ իմ գանկուշ (ժամկո՞չ) Թառյանն (Թառա՞նս), կամ մեղաւորիս ծնողքը յիշեցէք···*

*Դ. — էջ 398· — Բարեխօսութեամբ ընդ սրբոյն Յովսէփի, զաւեսայ գամենայն հաւատացելոյ քրիստոնեայք եւ զանարժան ծառայս Աստուծոյ* Գուլնազարս. *գրիչս եւ զմեր ննջեցեալսն:*

*Ե·— էջ 459·— Եւ եղաւ (գրեցա՞ւ) ի քաղաքըն* Աղրանապօլիս՝ *որ էր թագաւորութիւն* Սուլթան Մուստաֆին *(Մուսթաֆա) եւ Հայոց ազգաց հայրապետութիւն՝ տեառն տեառն* Նահապետին··· *Եւ արդ գրեցաւ ձեռամբս իմով* Ըռումէլիցի Ստեփանին, *Թվն՝ ՌՃԾԱ* (=1702), *օգոստոս ամսուն Գ ումն:*

Մարսէյլ, 23 Յունուար 1947

# 32·— ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Հին բիւ՝ չունի

ՌՃԴ = 1655

*ԹՈՒՂԹՔ՝* 220 (= 440) *էջք. — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 13×9×3 *սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. — ՏՈՂՔ՝* 21 *— ԿԻԶՔ՝ լաւ յղկուած ճերմակ, վարդագոյն եւ կապտաւոյն թուղթ. — ԿԱԶՄ՝ ծաղկենկար կաշեպատ խաւաքարտեայ. — ԴԱՏԱՐԿ ԹԵՐԹՔ՝ մէջ հատ ի վերջ. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած. — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝* 93 *հատ, զարդագիր ու թռչնագիր, յաջող ծաղկումներով. — ԳԻՐ՝ բոլորագիր, սեւ մելանով. Բոլոր համարները ունին ոսկեզեղ սիրուն երկաթագրեր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝* 73 *հատ, առատ ոսկիով զունազեղ ծաղկումներ բոլորն ալ՝ որոնց մէջ խկատիպ նմոյշներու ալ կարելի է հանդիպիլ. — ԽՈՐԱՆՔ՝ երկու հատ, ոսկի յատակի վրայ գունազեղ եւ շատ ծաղկումներով. — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝* 17 *հատ, շատ յաջող, ակնապարար. — ՆԿԱՐՔ՝* 16 *հատ, խորաքանչիւր ժամակարգութեան սկիզբը, ընդհանրապէս սուրբերու պատկերներ, բոլորն ալ նոյն յաջող ու բանգասնակէն. — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝* 30 *հատ, բացառիկ յաջողութեամբ. մէկը միւսէն յաջող ու գեղեցիկ, ամենարուեստական գործոյներ ու ինքնատիպ յղացումներ:*

*ԳՐԻՉ՝ Կիրակոս. — ՍՏԱՑՈՂ՝ տիրացու Յակոբ Տիարպէքիրցի. — ԺԱՄԱՆԱԿ՝* 1655 *— ՏԵՂԻ՝ Տիարպէքիր. — ՏԱՂԿՈՂ՝ գրիչը: Ձեռագրիս այժմու տէրն է՝ Պր. Նուրհան Ա. Ֆրէնկեան, Փարիզ:*

*Մատեանս է* ժամակարգութիւն՝ *թղթեայ, փոքրադիր եւ նկարազարդ, որ կը բովանդակէ սովորական ժամատղութիւնները, Տօնացոյցի բաժնով:*

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝

*Հատ մը միայն, գրիչէն.*

*«Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ այժմ եւ: Արդ գրեցաւ* ժամակարգութիւնս *ի ղուան*

Սուրբ Գէորգայ Զօրավարին, *առաջնորդութեան* Տէր Ովաննէս վարդապետին: *Ի թագաւորութեան գեաւհատակ* Սուլթան Մէհէմէտին: *Զնամր գրչիս* Կիրակոսի: *Ի վայելումն Տիարսլէջիրցի* տիրացու Յակոբին. *Աստուած խրեան բարով վայելել տացէ ամէն: Գրեցաւ գիրս Հոկտեմբեր ամսոյ Ժ. օրն Գչի ամէն Հայր: Թվն. Հայոց ՌՃԴ* (= 1655):

Փարիզ, 3 Դեկտեմբեր 1947

# 33 — ԽՐԱՏԳԻՐՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Հին թիւ՝ չունի

ՌՂԳ=1644

*ԹՈՒՂԹՔ՝ ԺԴ (=286 էջք). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 22×16×4 *սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՏՈՂՔ՝* 22 *— ՆԻՒԹ՝ լաւ յղկուած գեղնաւուն թուղթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ փայտակոյ. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շա՛տ գէշ պահպանուած, կազմը քայքայուած, ներսի թուղթերէն շատեր պակաս. — ՊԱՀԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան. — ԳԻՐ՝ վարժ բոլորգիր. Համարներու գլուխները կարմրադեղ — ԶԱՐԴԱԳԻՐՔ եւ յնթեւ չկան, բայց ամբողջ գրչութիւնը խճողուած է շատ անյաջող պատկերներով, բոլորն ալ ծաղրանկար կոչուելու արժանի:*

*ԳՐԻՉ՝ Յակոբ երէց. — ՍՏԱՑՈՂ՝ անյայտ, հաւանաբար գրիչը. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՂԳ* (=1644). *— ՏԵՂԻ՝ Թիֆլիս. — ՍԱՂԿՈՂ՝ գրիչը:*

*Մատեանս է Յովհաննու Ոսկեբերանի* խրատգիրք՝ *պատկերազարդ, որ կը բովանդակէ պատկերներով բացատրուած բազմաթիւ խրատ ու քարոզներ: Ձեռագիրս սեփականութիւնն է Մարսիլիայ Միրզախանեան ընտանեկան մատենադարանին:*

### ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

*Ա.* — *էջ* 171. — *Քրիստոս Աստուած*, *ողորմեայ իմ ծնողացս եւ մօրս... (տեղերը բաց ձգուած): Քրիստոս Աստուած քո սուրբ ծննդեան բարեխաւսութեամբդ ողորմեայ իմ պլլրրտոցս եւ քրմերացս եւ ամենայն ազգեանն մերձաւորացս, քրիստոնեաց, կարդացողաց, լսողաց, օրինակողացս եւ իմ աներոջս.. եւ իմ զաւքընչիս..., ընկերոջս, եւ ինձ մեղաւոր եւ անարժան սպասաւոր* Յակոբ Էրէցս. *Թարմատար գրչիս, ամէն: Հայր մեր...:*

*Բ.* — *էջ* 181. — *..Աղաչեմ զձեզ ի բերանոյ ննջեցելոցն յիշել զնոսա եւ զիս մեղաւոր անարժան եւ անպիտան ստացողսի* Յակոբ Բախտիարս. *ընդ նոսին եւ Աստուած ողորմի սուել իմ ծնողացս եւ ամ հաստարակ...:*

*Գ.* — *էջ* 219. — *Ո՛վ աստուածասէրք Քրիստոսի ժողովուրդք, լսեցէք խրատս Յովհաննու Ոսկէբերանու, որ վասն մեր մեղաւորացս (յ)այտնեց. այս սուրբ քարոզս եւ զիս մեղաւոր* Յակոբ Էրէցս *յիշեցէք, որ գրեցի հրամանաւ Քրիստոսի Աստուծոյ մերում, այս սուրբ քարոզերս պատկերքներով՝ ամէն: Հայր մեր...:*

*Դ.* — *էջ* 281. — *Գրեցաւ գիրքս ձեռամբ Յակոբ իրիցէս, ի քաղաքն* Թիֆլիս *ի դուռն* Սուրբ Գաբրիէլ Միքայէլին. *Թվկ. ՌՂԳին* (= 1644) *մայիսի* Իդումն *ամսոյս եղեւ. ամէն Հայր մեր:*

*Ե.* — *էջ* 282. — *Ով հարք իմ եւ եղբարք, թէ հարցանէք թվն. ՌՄԺԶ* (=1762). *Դ. ապրի իրար վերայ Օսմանլուն գնաց ի վերայ* Պոչոչոնխի՞. *չի Գարսայ. Կոտորեցաւ. այս ամի մաւհ ընկաւ երկիրն* Պայազիտու: *Ես մահղեսի* Խարայէլս *որդի ոչ ունէի. երկու դուստր ունէի՝ մեռան. Աստուած հոգւոցն ողորմեսցի յաւուրն դատաստանին եւ ամենայն քրիստոնէից եւ ինձ մեղաւորիս, ... ի գիւղն* Գուլայաօր. *երկիրն* Պայազիտու:

*Զ.* — *էջ* 283. — *Ծանիր՝ որ հայր եւ եղբայր թէ իմանաք, ասացի թէ գնամ* Ըստամբոլ, *գիրքս այս լաւ կազմել տամ. ասրեւ բան հանդիպեցաւ...:*

*Է.* — *էջ* 283. — *Ես* Նախջուվանցի. *գիւղն* Ցեգկցի. տէր Ղազարի *որդի* Ովանէս Էրէցս՝ *որ եկայ* Քըրտրստուն. *թվ. ՌՃԿԲ* (=1713), *գարբին* Ղազարի *գիւղը* Մէվէխզնչահի (՞) *թախտն ասա, երկիրն անկաւ տատապանք ԺԲ. ապրի. Թվ. ՌՃՀԳ* (=1721) *Օսման-*

*յուն եկաւ երկիրն առաւ, չատ գերի տարաւ. ԺԱ տարի Աջամու երկիրն գողթեց։ Թվ. ՌՃՁԴ (= 1735) Թորոսանայ* Թահմազ խան *եկաւ՝ երկիր Աջամու առաւ Օսմանցուոցն. եկաւ Շամախի, չատ աւերեց եր-կիրն Պարսից. ԺԱ տարի տատապանք ան-կաւ երկիրն։ Թվ. ՌՃՂԴ* (= 1745) *սպա-նումն եղաւ քիմ քիմոյ. կլ ո՛չ հայր, և ոչ որդին՝ հօրն, այսպէս աւերեցաւ ...»*։

Մարսէյլ, 24 Յունուար 1947

---

# 34.— ԳԻՐ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Թիւ՝ չունի

ՌՃԻԱ=1672

*ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ չորս մետր 30 սնտմ.— ԳՐՈՒԹԻՒՆ՝ մեսրոպեան.— ՆԻՒԹ՝ մագաղաթի նման լաւ յղկուած թուղթ.— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած.— ՄԿԶԲՆԱՏԱՌՔ՝ բոլորն ալ ծաղկուած թռչնագիր ու զարդագիր.— ԳԻՐ՝ չատ յաջող մանրիկ նոտրագիր.— ՆԿԱՐՔ՝ բազմաթիւ, գրեթէ բոլոր գլուխներու սկիզբը. այսպէս՝* Արարչագործութիւնը, Ադամ եւ Եւա Դրախտին մէջ, Մոգերու երկրպագութիւնը, Ս. Ներսէս Շնորհալի, Հրեշտակապետ, Իսահակի Զենումը, Ս. Նիկողայոս Հայրապետ, Ս. Սարգիս եւ որդին Մարտիրոս՝ *սպիտակ ձիու վրայ*, Ս. Գէորգ Զօրավար, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Կիպրիանոս, *բոլորն ալ յաջող նկարչութիւն։*

*ԳՐԻՉ՝ Աւետիք.— ՍՏԱՑՈՂ՝ Զաքարիա, յաջորդոք Սատաթեան եւ Մարգարիտ.— ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃԻԱ (=1672).— ՏԵՂԻ՝ Կ. Պոլիս.— ՏԱՂԿՈՂ՝ Աւետիք։*

*Ձեռագրիս այժմու տէրն է՝ Տիկին Տատուրեան, Փարիզ։*

*Մատեանս է* Գիր պահպանութեան՝ *թղթեայ, նկարազարդ, որ կը բովանդակէ՝*

1.— Անունն Աստուծոյ որ է փրկութիւն հոգւոյ եւ մարմնոյ, թագաւորաց ուրախութիւն եւ ցնծութիւն, տղայոց պահպանութիւն, աղքատաց օգնականութիւն, դիւաց հալածումն եւ փարատիչ ամենայն ցաւոց եւ ազատութիւն գերեաց.— *Անսկիզբն, անեղ Աստուած, անճառելի Աստուած, անպատմելի Աստուած, ամենակալ, ամենակարող, ամենաբարի Աստուած ...։*

2.— Աղօթք՝ իւրաքանչիւր առանձին հաւատացելոց ի Քրիստոս՝ զոր արարեալ է Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի.— *Հաւատով խոստովանիմ եւ երկրպագանեմ ...։*

3.— Մաղթանք սրբոց նշանացն ի վերայ երկրի, փարատիչ ամենայն դիւական ցաւոց.— *Բարեխօսութեամբ սուրբ նշանացս՝ որ են պարիսպ եւ պահապան եւ զէն յաղթութեան ...։*

4.— Գիր վասն դատաստանի աջողելոյ՝ ի դէմ դատաւորաց որ զթագցրն եւ զքարին խօսին անուանքն Աստուծոյ. ծառայս Աստուծոյ՝ Զաքարիա.— *Ամենակալ Աստուած, բարերար, մարդասէր, բարերից ...։*

5.— Մաղթանք սրբոց թագաւորաց.— *Այլեւ բարեխօսութեամբ սրբոց թագաւորացն Եզեկիայի, Սեդեկիայի եւ Մանասէի, Աբգարու ...։*

6.— Աղօթքն Սահակայ.— *Եւ կան Աբրահամ զորդին իւր Իսահակ եւ տարաւ ի զենլիս իւր եւ ած զորդին իւր ...*

7.— Մաղթանք սրբոյն Նիկողայոսի Սքանչելագործին եւ այլ սրբոց Հայրապետացն.— *Սքանչելագործ արդարահաս Հայրապետն սուրբն Նիկողայոս խնդրեաց յԱստուծոյ եւ ասէ. սուրբք որ անկանին ի գերութիւն, ի հիւանդութիւն, ի ...։*

8.— Մաղթանք սրբոցն Սարգսի Զօրավարին եւ որդւոյն Մարտիրոսին.— *Երջանիկ մեծ զօրական եւ Քրիստոսի յաղթող վկայն, գլուխ զօրաց Կոստանդեան, քաջ սպարապետն սուրբն Սարգիս ...։*

9.— Մաղթանք սրբոյն Գէորգեա Զօրավարին եւ այլ զօրավարացն.— *Մեծ զօրավարն Քրիստոսի սուրբն Գէորգ, յետ բազում սքանչելեացն ...*

10.— Գիր հաղթութեան եւ երեսպախտութեան եւ ամենայն բանի աջողումն.— *Որպէս հայր Աստուած տարածն որդւոյ խրամ քակեցաւ, եւ որդին ի փրկութիւն*

*աշխարհիս քաղցրացաւ եւ որպէս ս. Հայրն ի կենդանարձել յազգս…:*

11. — Գիր պատերազմի որ ի թրի այլ ոչ մերձենան ի ծառայս Աստուծոյ որ վերայ գիրս. — *Բարեխօսութեամբ սրբոյն Մերկերիոսի զինուորին եւ այլ սրբոց զինուորացն եւ սրբոց հրեշտակա…:*

12. — Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ է վասն պատերազմի ընդդէմ աւազակաց եւ ամենայն ցեղ պատահարաց, զնալ ի ճանապարհի. — *Տէր Աստուած զօրութեանց հայեաց զաղաչանս ծառայիս քո եւ աղաչանօք Ս. Աստուածածնին…:*

13. — Աղօթք սրբոյն Կիպրիանոսի՝ ասացեալ է վասն ազգնական եւ պահապան եղէց ի վերայ ծառայիս Աստուծոյ Զաքարիայի. — *Կիպրիանոս ծառայ Յիսուսի Քրիստոսի սպասու Հոյենացի, տան Հեթանոսի, որդի…:*

14. — Աղաւթք Կիպրիանոսի եպիսկոպոսին. — *Եւ արդ Տէր իմ Յիսուս Քրիստոս. երդմնեցուցանեմ զամենայն կապ եւ կախարդութիւնք, ի թագն Դաւթի…:*

15. — Այս են երկոտասան հրեշտակաց անուանք՝ որ կան մեզ պահապան. — *Յիշեա՛յ զՄարտիէլ հրեշտակն եւ փրկիս ի նեղութենէ, յիշեա՛յ զՄարտափէլ հրեշտակն, եւ զոր ինչ խնդրես յԱստուծոյ, տայ…:*

16. — Աղաւթք սրբոյն Անտիոքայ բժշկին. ծառայս Աստուծոյ՝ Զաքարիային. — *Աստուած Աբրահամու, Սահակայ եւ Յակոբայ, Աստուած ամենայն մխիթարութեան, ընկա՛լ եւ կատարեա՛յ զհայցուածս…:*

17. — Գիր ջերման եւ ամենայն ցաւոց դեղ, ծառայս Աստուծոյ… — *Իջանէր Տոփիայ ի լեառնէն եւ ունէր աչք հրեղէն եւ ի ձեռինն երկաթի գաւազանաւ. ի դէմ գիպաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս…:*

18. — Գիր գլխացաւութեան. — *Տէր մեր Յիսուս Քրիստոս եկ ի Բեթանիա ի լեառն Ձիթենեաց աշակերտօքն հանդերձ. հարցին զնայ եւ ասեն. Տէ՛ր, է՛ առ ծառայ քո, սիրան փոխի եւ հանապազ գլուխն ցաւի: Ասէ…:*

19. — Աղաւթք ամենայն ցեղ ցաւոց եւ կախարդութեան, ծառայս. — *Կարդամք առ քեզ, Տէր երկնի եւ երկրի, յերեւելեաց եւ աներեւութից, սէրս…:*

20. — Գիր լեզուակապի. — *Յանուն Յիսուսի Քրիստոսի, եւ գրեմ այն սրբոց անունն որ ի վերայ լերանցն կայ, եօթր թեւ ունի, եօթր թեւն է, եօթր գոյն ունի, եօթր գոյնն է…:*

21. — Աղաւթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ. — *Ընկալ քաղցրութեամբ Տէր Աստուած հզօր…:*

22. — Աղաւթք բպդի (*ալպասէս*) որ ալ անուանի, զոր Տէր Աստուած խափանեսցէ ի դիմաց ծառայիս Աստուծոյ Զաքարիային եւ որդոցն ամէն. — *Սուրբն Պետրոս եւ սուրբն Պօղոս եւ սուրբն Ստեփանոս եւ սուրբն Տիգայ, գնացին յանապատ տեղի եւ տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ. աչքն նորա ապեկի, ատամունքն երկաթի, եւ ժանիքն պղնձի, թաթ ոտիցն յետս եւ կրունկն առաջի եւ մազ նորայ՝ որպէս ձիոյ ձար եւ տեսիլ նորա զժընդակ, այլակերպ որպէս վարազ խոզի. Հարցին զնայ սուրբքն եւ ասեն. զի՞նչ ես դու պիղծ գժնիկ կենդանի եւ կամ զի՞նչ է գործ քո բնաւոյդ, խոստովանեայ մեզ: Ասէ պիղծն: Ես եմ աչքն որ նըստիմ ի վերայ* տղացկանին, *զականջն խլացուցանեմ, զբերան խորամեմ, զպատանին քարշեմ, եւ զզանամք զզաւան ի մօրէն եւ խուլ եւ մունջ առնեմք առ թագաւորն մեր ի յանդունդս, եւ նայ յոյժ մեծարէ զմեզ, եւ մեք ոչ թողումք որ տղայն ի փեսայութիւն մըտանէ եւ զդուստրն՝ ի հարսնութիւն. մեք հազար հազարաց եմք, եւ բիւրք բիւրոց, մեր բնակութիւնս տանց է եւ ախոռս անասնոց. ո՛չ թողումք որ աճեն. զմանկս քամատ առնեմք եւ զմանուկս ճաթափ. ահայ ասացի ձեզ զամենայն գրանս իմ, ո՛վ սուրբք Աստուծոյ մի՛ տանջէք զիս: Եւ սուրբքն հանեն զհրեղէն նետն եւ կամեցան սպանանել զպիղծն դայն: Ասէ պիղծն. մի սպանանէք զիս, երդնում ձեզ, եւ երդումն տամ որոց ընդ իս իցեն, որ տեղ ձեր անուանքն յիշուի, եւ գիր անուան ձերոյ լինի՝ մեք ի հոն ոչ մերձենամք, եւ ոչ մտանեմք, այլեւ քառասուն տարով հեռի գնամք ի նմանէ: Եւ ասեն սուրբքն — Ե՛րթ, պիղծ, կապեալ եւ ան–*

ստամբն Աստուծոյ կենդանւոյ, եւ զնոսա պահեայ վերջումն քո: Եւ սուրբ հայրենեայ եղիցիս ծառայէս Աստուծոյ... (ջնջուած) տանն եւ բնտանեացս ամէն:

23. — Գիր ամձահարի. — Ես Պօղոս հալածիչ եկեղեցւոյ յանուրս բազումս եւ այժմ եղէ անօթ բնութեան...:

24. — Տէր Սարաւար ազնեա ինձ. — Երդմնեցուցանեմ զանձն ձեռնայգոյն, որ է մորթն սպիտակ. Երդմնեցուցանեմ զանձն եւ զիժն անջրդի, որ ընդ ցրտային է բնակեալ...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ՝

Ա. — Ի վերջ գրոյս (Գլխաւոր Յիշատակարան). — «Փա՛ռք համագոյ, անբաժանելի եւ միասնական, Սուրբ Երրորդութեան յաւիտեանս ամէն: Արդ կատարեցաւ սուրբ հայրապետաց և ամենայն սրբոց պահպանութեան գիրս, ի յաւ եւ ընտիր յօրինակէ, ի արքայանիստ քաղաքն Կոստանդնուպօլիս, թվն Հայոց մեծաց ՌՃԻԱ (= 1672) փետրվար ամսոյ ·ԻԹ· որ էր նաւհանջ. ի վայելումն աստուածասէր եւ բարեմիտ Զաքարիային եւ որդոցն Հա(յ)րապետին, Աբդլմսեհին, Թամրազին եւ ծնողք սոցին Սէֆլին՝ ամէն, զոր Տէր Աստուած յերկար ժամանակս վայելել տացէ ամէն: Արդ աղաչեմ զձեզ՝ որ հանդիպիք սմա՛ կարդալով կամ յօրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զստացօղ սորին՝ խոճայ Զաքարիան եւ զորդիքն եւ զկողակիցն եւ զմեղապարտ գրիչս Աւետիքն եւ զհոգեւոր վարդապետս եւ զմարմնաւոր ծնօղս, միով հայր մեղայիւ եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ որ ասէ, եկայք աւրհնեալք հօր իմոյ...»:

Բ. — Մէկ երկու աղօթք եւ մաղթանքի ի վերջ, տեղ տեղ Զաքարիա անուն ջնջուած եւ տեղը գրուած Սառա կամ Մարգարիտ: Այսպէս՝ ի վերջ Յիշատակարանիս կայ. «Ողորմեա՛ Տէր Աստուած Սառախաթունին եւ ծնողաց իմոց եւ փրկեա՛ զմեզ ի փորձութենէ գիւաց»:

Փարիզ. 3 Ապրիլ 1949

# 35 — ՇԱՐԱԿՆՈՑ

Հին թիւ՝ չունի

ՌԼԹ=1590

ԹՈՒՂԹՔ՝ ԼԲ×ԺԲ (= 768 էջք). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14×10×4 սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն. — ՏՈՂՔ՝ 21. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած բարակ թուղթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ խաւաքարտեայ, երեսներուն վրայ խաչանիշ զարդումներով. — ՊԱՀԱՐԱՆ ԹՈՒՂԹՔ՝ չկան. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած: Հոգեգալստեան կանոնի եւ մի նկարին՝ որ գծրախաղար հանուած ու կորսուած է՝ նախընթաց էջին վրայ կայ հետեւեալ ծանօթութիւնը:

Յաղագս շարականացն թէ ումէ ասացեալ: զԾննդեանն եւ զԱստուածածնին՝ Մովսէս Քերթողն. Զապաշխարութեան, զՂազարու յարութեան, զԽաչին զարթօն՝ Մեսրովբ Վրդապետն. զՀոգեգալստեան, զՀոգւոյ գալստեանն, զԱրտաշէսեան զՆիկողայոսեան, զԱյլասար անձառս, զԱրարչական, զԱստուած անեղ, զԱրշինեմք զջեղ, զՉարչարանացն, զնոյեան սրբոյն՝ Հա(յ)րապետն Ներսէս Շնորհալին: զՄարգարութեան, զՀամբարձմանն, զՊենտակոստէին՝ Անանիայ Շիրակացին: զՎարդավառին, զՄարգարէիցն, զԱռաքելոցն, զՄեռելոց ամենայնի՝ Յովհաննէս Մանդակունեցի: զԱստուածատուր երգերն եւ զձայնիցն բանաձեւութիւնն Սուրբն Սահակ Պարթեւն: զՀռիփսիմեանցն՝ Տէր Կոմիտաս. զՄարտիրոսացն, եւ զվասն սոյն արժանութեանցն՝ Տէր Պետրոս: զՅարութեան ·Է· ձայնի արհնութիւններն՝ Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն: Այսուր զուարճ՝ Կարապետ վարդապետն: զԱրեւելքն՝ Կիրակոս վրդպ. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ խորաններուն տակ. առաջին տողը՝ զարդագիր, յաջորդ տողը ոսկեղեղ երկաթագիր. — ԳԻՐ՝ ծայրէ ծայր շատ յաջող մանրագիր բոլորգիր, նոյն գրչէն. Համարները ոսկեղեղ երկաթագիր. — ՈՍԿԵՆԿԱՐԱԶԱՐԴՔ՝ գլխաւոր կանոններուն սկիզբը՝ բոլորն ալ ոսկեղէն թռչնագրեր, իրենց կից լուսանցազարդ եւ մանրանկարներու թուով, բոլորն ալ յաջող եւ նուրբ վրձինի արդիւնք Տէր Վահան քհյ.ի. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ թիւով 115 հատ, ոսկիով, լաջուարդով ու կարմիրով խառն շատ յաջող ծաղկումով եւ տափարական մասերով. — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, գլխաւոր չորս կանոններու վերեւ. չորսն ալ հարուստ ոսկիով ու լաջուարդով եւ նուրբ ու շատ յաջող ծաղկումով. — ԿԻՍԱԽՈՐԱՆՔ՝ վեց հատ, խորաններու ձեւով ու երանգով. — ՆԿԱՐ՝ հատ մը միայն Յարութեան կանոնի հանդիպակաց էջին վրայ. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս»: Ծիրանազգեստ հրեշտակը Յիսուսի գերեզմանին մուտքին, իւղաբեր երեք կիներու ցոյց կուտայ թափուր գերեզմանը, որուն

*ստորոտը կը տեսնուին ընկղմանած եւ ոսկեճար գծերով չորս զինուորներ, չորսն ալ համաչափ կանոնաւոր որմնայր գլխարկով — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ թիւով 31 հատ, բոլորն ալ Աւետարանիչներ, Թագաւորաց, սուրբեր եւ հայրապետներու՝ շատ յաջող նկարչութեամբ: Յաջող են Անտոն Անապատականի, Ս. Թէոդոսի, Գասթի, Գր. Լուսաւորչի, Ս. Քառասուն Մանկանց եւն մանրանկարները: Դժբախտաբար անոնց մէկ քանին մասամբ մնացած են նոր կազմի ատեն գործածուած զանակին տակ:*

*ԳՐԻՉ՝ Վահան գրիչ Չէյթունցի — ՍՏԱՑՈՂ՝ Մերուն Արքեպիսկ. Չէյթունի. — ԾԱՂԿՈՂ՝ գրիչը. ԺԱՄԱՆԱԿ՝ ԹԼԹ (=1590). — ՏԵՂԻ՝ Չէյթուն:*

*Մատեանս է* Նարեկեան, *թղթեայ, փոքրադիր, ամբողջ եւ համաձայն ամէն տպագիր Նարեկացիներու եւ յաջողագոյն գրչութիւններէն մին Հալէպի մէջ վարժուած համբաւաւոր տէր Վահան քհյ. Չէյթունցիի:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

*Ա.* — էջ 766 (Գլխաւոր Յիշատակարան). — *« Փառք համագոյ անբաժանելի եւ մի աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ յաւիտեանս ամէն:*

*Ի ծագմանէ բանին Աստուծոյ լուսաւորեալք եւ ի շնորհաբաշխ Հոգւոյն Սրբոյ մաքրապարգեւեալք ի մերոյ պետաց ի հոգեկիր սրբոց, ի հայկական սեռից յուղղափառ հայրապետաց եւ աստուածաբան վարդապետաց, վերծանեցեալ կրթական վերծանութեամբ, քաջոլորակ բաժանմամբ ձայնից, երաժշտականաց վիպասան չափաբանութեամբ բոլոր տարւոյն, հին եւ նոր շարականաւք լի, ըստ հոլովման մեծ արուեստին: Ցաղագս տէրունական տօնից, եւ ամենայն սրբոց, ի պահս ապաշխարութեան, եւ ի հանգիստ ննջեցելոցն ի Քրիստոս, եղանակեալն երգ ուրախութեան, ի պայծառութիւն տօնից, եւ ի պատիւ փառացն Աստուծոյ, ի համաձայնութիւն հրեշտակաց, եւ ի մաննկացութիւն սրբոց, եւ ի հրճուանս եկեղեցական դասուց, եւ ի խրախութիւնս մանկացունից եւ ի ցնծութեանս ծերոց ամէն:*

*Շնորհիւն Աստուծոյ սկսեալ եւ ողորմութեամբ Տեառն աւարտեցաւ սայ, այսմ մեծահանդէս եւ հոգեւոր տաղից, ի լաւ եւ ընտիր աւրինակէ Սրբոյ, ատենի վարդապետին եւ քաջ քերթողին Գրիգորի, մականուն Խուլ որջորջելոյ: Ձեռամբ յոգնամեղ եւ անարժան եւ փծուն գրչի, Վա*հան *տկարի: Ի շրջագայութեան հայկական տոմարիս ԹԼԹ* (=1590) *ի չար եւ յանբարի եւ վշտաշատ ժամանակի, որ երբեմն եւ տառապեալ կա(յ) ազգս քրիստոնէից, ի ձեռն յայլազգաց եւ յանիրաւ պահանջողաց: Ի գաւառս Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքս ի* Զէյթուն, *ընդ հովանեաւ* սուրբ Սարգսի *եւ այլ ամենայն սրբոցն Աստուծոյ՝ որ աստ կան ի յուղղութիւն քրիստոնէիցս: Ի յաթոռակալութեան Տեառն* Ազարիայի կաթողիկոսի *եւ քաջ բարունակեալ* Կիլիկեցւոց: *Ի հայրապետութեան Տէր* Մերուն արքեպիսկոպոսի, *ստացողի սուրբ տառիս. ի վայելումն եւ յիշատակ իւր եւ յիւրոց:*

*Արդ յուսերամ մանկունք Սիոնի վասն որոյ երեսս անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որք յուսաուրիք սովաւ ուսմամբ, կամ աւսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, զստացող Նարեկացիս,* զպարոնտէր Մերուն արքեպիսկոպոսն *զաւտեխ մերոյ, որ ստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց. յի սրտի Աստուած ողորմի ասասջիք իւր հոգւոյն հանդերձ ծնաւղաւքն ամէն. եւ դարձեալ յիշեսջիք զանարժան գրչակս Վա*հան *եւ զծնաւղս իմ* զԱւետիքն *եւ* Զմրութն *եւ զեղբարսն իմ եւ զքուերս, եւ զորդիքս իմ որ առ Քրիստոս փոխեցան, եւ զամենայն ազգատոհմս մեր, զքահանայս եւ զսարկաւագունս հանդերձ նախնաւք եւ վերջնաւք ամէն: Եւ զլուսուցիչն մեր* զՂուկաս րաբունապետ Կեղիցի *եւ զեղբայրն Նարին՝* տէր Մարկոս *վարդապետն, եւ զայսմ արուեստիս ուսուցիչքն,* զՍարգիս երէցն Հնգանցին, *եւ զայլ ուսուցիչքն մեր՝ զորս յիշատակեցաք: Աղաչեմ զձեզ ով եղբարք, ստասջիք ի խորոց սրտէ, թէ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ողորմեա նոցա, եւ ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա, եւ գրեա զանուանս նոցա ի դպրութեան կենաց: Եւ որք զողորմիս ասեն ողորմութիւն ընկալցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն »: Ասոր կը յաջորդէ, տարբեր գրչէ՝*

*Բ. — Զվերջի ստացող Նարեկացիս*

*զմահտեսի* Վարդանի *որ ստացաւ զսայ իւր հալալ արդեանց իւրոց. յիշատակ իւր հոգւոյն եւ կողակցին իւրոյ* Մարգրտային *եւ իւրոց որդւոցն եւ ամուսնոյն ամենեցուն եւ այլ ամենայն արեան մերձաւորացն՝ ամէն: Ի վայելումն որդւոյն իւրոյ* Աւետիք Սարկաւագին, *զի Աստուած բարով վայելել տացէ եւ որ զողորմին ասեն յի՛ սրտի Տէր Յիսուս ողորմի ձերացն եւ մեռոցն իւր միանգամ զալստեանն ամէն՝ Հայր մեր:*

*Գ. — Յարութեան նկարի եւ կանոնի նախընթաց էջին վրայ, մանրատառ ոսկեան գիրով՝ Վահան գրել.*

*Վերջ եղեւ այս մեծ տօներիս, ուրախութիւն տրտում սրտիս եւ երանեմ զիս զեղկելիս, յորժամ հասից յաւարտ գրիս: Արդ աղաչեմ զուեալդ տասիս, որք հանդիպիք զայս մատենիս, անմեղադիր լերուք ոո իս, խոշորութեան եւ սղալիս: Հայրապետոյս մեր զատոտիս է բասայող Շարակնոցիս, որ է զարդ մեր յանապատիս,* պարոնակր Ռեբունի *պանծայիս: Արդ անկեալ աղերսեմ եւ ես ի տեառնէ ամենայնիս, որ յիշման անձէք արժանիս,* փոխան *զրծոց զործմելիս: Նա յոյսն մեր Տէրն ամենիս, թողութիւն շնորհէ ձեզ եւ յիս, որ սատան է ի տուրս բարիս, Քրիստոս Աստուած տա՛ մեզ զկարիս:*

Մանչեսթր, 7 Նոյեմբեր 1949.

# 36 — ԱՒԵՏԱՐԱՆ *

Հին թիւ՝ 9

*ԹՈՒՂԹ՝* 12×24 (=576 էջը). — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 18×16×6 *սնդմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. — Տող՝* 21. — *ՆԻՒԹ՝ լաւ յղկուած սպիտակ մագաղաթ. — ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակեայ. — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ չորս թերթ սկիզբը եւ թերթ մըն ալ ի վերջ, մագաղաթեայ. — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած, միայն Գլխաւոր Յիշատակարանին առաջին մասը ինկած ու կորսուած: Եւսեբի առ Կարպիանոս գրած նամակն ու Համաձայնութեան տախտակները կ'երեւան սկիզբի տասը խորաններու տակ: Չորս Աւետարաններն ալ ունին իրենց Նախագրութիւնն ու բովանդակութեան ցանկը ու էջերու վարի լուսանցքներուն վրայ կ'երեւին համաբարբառի համարանիշերը. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս խորաններու տակ՝ թռչնագիր, միջակ ծաղկումով. — ԳԻՐ՝ շատ յաջող մանրիկ բոլորագիր. Համարները ունին կարմրագեղ եւ լագուարտ խառն երկաթագիր. — ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, մարդագիր, թռչնագիր ու զարդագիր. — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, բոլորն ալ կարմիրով եւ կապոյտով խառն բուսական սիրուն ծաղկումով. — ԽՈՐԱՆՔ՝ չորս հատ, չորս Աւետարաններու սկիզբը վայելուչ ծաղկումով. — ՆԿԱՐՔ՝ չորս աւետարանիչներու, թերագիծ, թեթեւ՝ բայց յաջող վրձինով:*

*ԳՐԻՉ՝ անծանօթ. — ՍՏԱՑՈՂՔ՝ Պօղոս եւ Պետրոս. — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ, ԺԷ դա՞ր. — ՏԵՂԻ՝ անծանօթ.*

ԺԷ դա՞ր

*Մատեանս է* Աւետարան, *մագաղաթեայ, ամբողջ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանին, սկիզբը պակասաւոր* (Գլխաւոր Յիշատակարան). — *«...հանդիպեալ պատահիք սմա ուսանելով կամ զաղափարելով. յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զվերոյ ասացեալ ստացող սուրբ Աւետարանիս* զՊետրոսն *եւ* զՊաւղոսն *հանդերձ ծնողիւք եւ ամենայն ազգատոհմիւք եւ ասասջիք Աստուած ողորմի. զի թերեւս մնացեալ անցանս որ ընդ մեզ Յիսուսի սուրբ աղօթիւք ձեր. եւ ողորմութեան ցօղն անձրեւեսցի ի չորացեալ սակերս մեր, առ ի բուսուցանել յուրն աներեկի եւ վերանալ ընդ յառաջ Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն»:*

Մանչեսթր, 7 Նոյեմբեր 1949.

*Ձեռագիրս թիւ R. 56 101 ի տակ մաս կը կազմէ Մանչեսթրի Ryland's Library ին:

# 37. — ԱՒԵՏԱՐԱՆ

Հին թիւ՝ չունի

ՌԼԶ=1587

ԹՈՒՂԹ՝ 16×24 (=500 էջ). — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22×16×6 սնթմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. — ՏՈՂՔ՝ 21. — ՆԻՒԹ՝ լաւ յղկուած բարակ թուղթ. — ԿԱԶՄ՝ չափանակազմին կաշեպատ տախտակեայ. — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան. — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չորս թերթ՝ երկաթագիր գրչանկար Աւետարանի մը մասերով. « ...գործան ընդ ոչս գուրգ գործանայք... ». — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած. Սկիզբի քառասուն նկարներուն կը յաջորդեն Եւսեբի համաձայնութեան նամակ ու տախտակներ, յաջողագոյն տասը խորաններու տակ. Կողքերուն ներսի երեսները՝ պատած են կարմիր ատլասով, նոր և սկզբնական. — ԳԻՐ՝ շատ յաջող բոլորագիր. — ՎԵՐՆԱԳԻՐՔ՝ չորս Աւետարաններու սկիզբը, միայն մէկ տող, վարդ զարգագիր. — ԱՆՁՐՆԱՏԱՌՔ՝ մարդագիր, թռչնագիր, զարդագիր ու կենդանագիր. — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴՔ՝ բազմաթիւ՝ հին ու ինքնատիպ մոտիվներու յաջող ծաղկումով. — ԽՈՐԱՆՔ՝ չորս Աւետարաններուն ճակատը, բոլորն ալ չուրջի զարդանկարներուն հետ նրբաշնակ ծաղկումով. — ՆԿԱՐՔ՝ բազմաթիւ, բոլորն ալ Ցուցակիս թիւ 11 Աւետարանը (էջ 16) ծաղկող Յակոբ սարկաւագի ճարտար վրձինի գործերը եւ նոյն մեծութեամբ ու նոյն երանգապնակէն եւ նկարներու ցանկով եւ կատարեալ նմանութեամբ: Այսպէս, բացի չորս աւետարանիչներու յաջող նկարներէն, կը գտնենք. 1. Միաշաբաթի յաւուրն ի սկիզբն աշխարհի յոմանն, երկինք եւ երկիր, ջուր, հուր՝ ի յերկինքն. 2. Բ. աւուրն հաստատեցաւ զերկրին... 3. Ե. աւուրն՝ հանգիստ ամենայն գործոց. 7. Այս է դուռն արքայութեան... 4. Դրախտն է... 5. Զպտուղն կերան, մերկացան... 6. Գաբրիէլ հրեշտակն է..., եւ այսպէս բատ կարգի:

ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈՂ՝ Յակոբ սարկաւագ Ջուղեցի. — ՍՏԱՑՈՂ՝ խոջա Աւետիքն. — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԼԶ (=1587). — ՏԵՂԻ՝ Հին Ջուղայ: Աւետարանս R. 56.629 (№ 20) ի տակ մաս կը կազմէ Մանչեսթրի Ryland's Library ի:

**Մատեանս է Աւետարան՝ թղթեայ, մեծադիր, բազմաթիւ նկարներով հարուստ և յիշատակագրութեամբ ճոխ:**

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

Ա. — Ի վերջ Յովհաննու Աւետարանի (Գլխաւոր Յիշատակարան). — « Փա՛ռք... Արդ՝ եւ նմանեցուցիչ պայծառագոյն աստուածահրաշ հոգիագարդ եւ զարթուցանող մարմնոց եւ քաւարան մեղաց լուսայարմար սուրբ Աւետարանս: Արդ եղեւ աւարտ, գրաւ գրչութեան յայսմ աստուածաշունչ սուրբ Աւետարանիս, որոյ եմք ծառայիցդ ձեր անպիտանս, եթէ յիշեմ ոչ եմ արժան, այլ հոգ եւ փոյթ, ոչ թէ ի փառս Աստուծոյ, այլեւ կանխելիք սակս անպատճէ: Հեղինակ ամենամեղ փցուն եւ անարժէտ գրչի Յակոբ սարկաւագի, որ միայն գանուն ունիմ եւ զործս ոչ: Աւարտեցաւ երկնահանգոյց ի տեղիս, մեծակերտ մայրաքաղաքիս որ կոչի Ջուղայ, ի դուռն Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Հրեշտակապետին եւ Սուրբ Ամենափրկչին եւ Սուրբ Յակոբին եւ այլ բազում սրբոց որ աստ կան հաւաքեալ: Ի յառաջնորդութեան մերոյ քաջ եւ յրաբունապետ Ազարիա արհեպիսկոպոսն, որ անուանի է առաջի Աստուծոյ. նոյնեւ բարեպաշտ սրբասնեալ քահանայիցն: Զտէր Բարդողոմէոսն, եւ զմիւս զտէր Մանուէլն, զտէր Ղազարն, զտէր Ներսէսն, զտէր Թադէոսն եւ զմիւս նորաբողբոջ երիցանցն որ են մանկտիք նորատունկ եւ սրբակաց: Ի հայրապետութեան տեառն Դաւթի (Վաղարշապատցի), ի յաթոռ Սուրբ Էջմիածնի Վաղարշապատու, Արարադեան նահանգի: Ի թվականիս Հայոց ՌԼԶ (= 1587): Արդ ով աստուածասէր յորժամ նայելով տեսանէք զտեսանելիս սուրբ գիրս, եթէ արժանի համարէք զանպիտանս, Յակոբ (սարկաւագ) գրչիս եւ ցուցողին իմ քաջ եւ բաբունապետ Զաքարիայ եպիսկոպոսն, որ է Լմեցի, ի քաղաքն որ կոչի Վան. եւ էր շնորհալի, քաջ եւ էր նորա գրիչն մարգարտաշար եւ յայտնի առաջի Աստուծոյ: Որ բաժանեաց ի շնորհս նորա աշակերտացն եւ ետ այսչափ շնորհս. Աստուած գիր հոգին արժանի առնէ ի տեսլեանն Յիսուսի ամէն:

Արդ ով աստուածասէր սիրելի եւ առափացող ցանկալի բաղձեալ ի բանից, ի ձեռն մարգարէին որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ Սիովնի եւ ընդանեակս յԵրուսաղէմ. որոց ցանկացող եղեալ բարեսէր եւ քան զակնս պատուական խնդրոյ ի յերեսանն

ատարտի սուրբ աւետարանս բատ կարգի, եթէ եկեղեցոյ, եթէ քահանայակարգի, եթէ խաչաւրհնի. այլեւ ամենայն քահանայակարգութիւն կատարի, որ կատարեալ է ի կամս Աստուծոյ: Արդ, ով սիրելի եղբարք, եթէ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով եւ կամ յիշատակելով զմեղաւորս. յիշման արժանի արարէք նաեւ հայ(ր)ն իմ Խաչքավալի եւ ծնաւղացն իմոց Աւղլանխաշէն եւ եղբարցն իմոց, հանգուցեալ ի Քրիստոս Նորարոզու Միրզաբէկի եւ Միրզաջանն, եւ կենդանիք՝ Նուրիջանն: Եւ քվերացն իմոց առ հասարակ ամենեցուն, կարդացողաց եւ լսողաց ամէն:

Ով եղբայր գիտնայարմար դրոցս. անմեղադիր լերուք խորշակիրս եւ ձանձրաքաշ ծաղկիս. ի դառն եւ ի դժնեայ յանբարի եւ ի վշտաշատ ժամանակի, որում նեղեալք ի ձեռն յանաւրինաց և անիրաւ պահանջողաց: Որոյ եմք անպիտանացեալ մի բատ միոյ, վասն դժնդակ ժամանակիս: Այլ բարերարն Աստուած խնդրէ զիւր արժանաւորս, վասն քաղցրութեան արարածոց: Եւ մեք փառաւորելով զՀայրն մեր որ յերկինսն է:

Այլ յիշեցէք զրագրում աշխատեալք ոսկոյ, զանուեան մեր հարսն. որ բազում աշխատեալք կրեցի ի վերայ ոսկոյ: Եր զոսկին զատոյ լուանայր եւ արկէր զմարմարն ազալով մինչեւ որ կատարեալ եղէ. Աստուած զինքն արհնէ ամէն: Այլ յիշեցէք զաւագ տէրն սարկաւագն՝ որ կիսոյ մի թուխթ կոկեց եւ աշխատաւոր զինքն: Աստուած զիւր հոգին լուսաւորէ, եւ այլ բազմաց որ աշխատ աբար ընդ դրոյս սուրբ Աւետարանիս: Այլ կարդացողաց եւ լսողաց առ հասարակ կենդանեաց եւ ննջեցելոց ամենեցուն, ամէն: Հայր մեր որ յե: Յիշեցէք Ըռէսն եւ իւր որդիքն Յակոբն եւ իւր ծնողն Թրվանդին Աստուած ողորմի ասացէք »:

Բ. — Յովհաննու Աւետարանի ի վերջ զոյգ սիւնակներու վրայ.— Յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Ատրբէկն որ ստացաւ սուրբ Աւետարանս, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց պարոն Ջաֆարին, Արէխաթունին (այսպէս, Արիւխաթուն), եւ պապուն՝ պարոն Վէշկիյին եւ Խանըմին, Շիրազխաթունին եւ Հայբարուերն՝ Շիրազին, Աղուրխաթունին եւ կողակցին իմոյ Սառայխաթունին և զաւակրն իմոյ Նարէխաթունին. եւ աներին իմոյ տէր Միքայէլին եւ զոքանչին իմոյ Նաէֆսուլթանին եւ որդոյն Սարգսին եւ Փիրասլանին եւ զաւակացն իւրոց՝ Թարդումաշին, Դաւարսուլթանին և Աերառամին. յիշեցէք Ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՆազբէխաթունն եւ զկեսուրն իմ Աղայտէրտէրն եւ զՇահումխաթուն, եւ Ջափխաշէն եւ զորդիքն՝ պարոն Միրզային եւ զկողակիցն (անունը քերուած) եւ զորդին՝ Սարգիսն: Եւ միւս կեսուրն իմ Դայլանխան եւ զորդին Յակոբջանն: Եւ քեռոյն իմ Խօջայբէկուն, տէր Յովհանէսին, Մարգարին, Շահրիարին, Միրբումանին եւ որդոյն տէր Բարսեղին եւ ամենայն արեան մերձաւորաց ամէն: Կրկին անկամ յիշեցէք ի Քրիստոս զԱտրբէկն՝ որ ստացաւ զսուրբ Աւետարանս ի յառաջի գրել տուողէն. նորոգեաց եւ զարդարեաց, եդ ի դուռն սուրբ եկեղեցւոյ. յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ամենայն ննջեցելոցն: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ամէն: Հայր մեր որ*:

Գ. — Ի վերջ գլխաւոր Յիշատակարանին, միեւ նոյն գրչէն.— Կրկին յիշեցէք զԽօջա Մատուրն, որ ետ սուրբ Աւետարանիս չափով մի ասլաս: Աստուած զիւրեանց հոգին լուսաւորէ: Դարձեալ յիշեցէք զԱլիխրն եւ որդին իւր Խոջաջանն որ եսուր սուրբ Աւետարանիս կողշորքի մետաղ եւ թուղթ. Աստուած զիւր...: Կրկին ողորմի ասացէք զՎարդաբուրն իմ Խանաղէկն՝ որ եսուր սուրբ Աւետարանիս կոճակ մի: Ամէն...: Այլ տուողաց զինչս սուրբ գրիս...:

Դ. — Ով աստուածասէր քահանայք եւ աշխարհականք, շնորհալիք Աստուծոյ: Որոյ ցանկացող եղեալ սուրբ Աւետարանիս, փափաքի եւ սիրատարփ տենչմամբ, եռափափաք բաղձմամբ սրտի ցանկացաւ ամենայնիւ եւ պատուական սրբասէր եւ երջանիկ ընդ մեծափառ Ըռայիս Ախանէկն (այսպէս) որ բատ

*Յայտնի է որ Աւետարանիս առաջին ստացողը եղած է այլ գրողն ու ծաղկողը՝ Յակոբ սարկաւագ՝ որմէ յետոյ ստացած է խօջա Ատրբէկ, գնելով: Աւետարանիս երրորդ ստացողն է Ըռայիս Ախանէկ։

*արժանացն ստացաւ զսա ի հալալ արդեան իւրոյ։ Էր բարեպաշտ եւ արժանի, հեշտալրող ամենեւին եւ կատարեալ անպատմելի, մտաւք ճարտար իմանալի, սրտով ուրախ և զուարճալի, արդ. իմաստուն եւ զովելի, քաղցրաբարբառ անոխալի, սիրտն ծարաւ ընդ Քրիստոսի, եւ փափակող Աստուածածնի, անչափ բարի անհասելի, բարի գործաւք անպատմելի, արժանաւոր նա ի դրախտի, տալով աննեյ ողորմելի, վաճառ աննել ընդ աղքատի... (եւ տակաւին երկար շարք մը նոյն ոճով գովասանքի)։ ...Որ* Ալսաճէս *անուն կոչի, լի բերանով քաղցր լեզուով...։ Եւս առաւել ընթերցողի* Յակոբ *(սարկաւագ) զծողս ողորմելի։*

*Ով սիրելի եւ պատուական շնորհալի Աստուծոյ... լի բերանով Աստուած ողորմի ասացէք զստացող սորա* Ըռայիս Ալսաճէսն, *որ խնդրեաց փափակաւք... նայեւ զհայրն իւր* Յովհաննէսն *եւ մայրն իւր* Ղարիպխաթունն *եւ եղբայրն իւր հանգուցեալ ի Քրիստոս* Ամիրջանն *եւ որդիքն իւր հանգուցեալ ի Քրիստոս* Յովանէսն *որ փափաք մնաց աշխարհիս։* Ամիրջանն *եւ զուստր իւր* Գոհարն, Շահզատէն, Շահբէկի, Շնահաւրն, Եթարն *եւ կողակիցն իւր* Թիրուանդէն, *ամէն։*

*Եւ հարեղբայրքն իւր՝* Ջաճիկն, Պետրոսն, Պաւղոսն, Սերոբն, *եւ որդիքն իւր Պետրոսին՝* Փաւնոսն, *զ*Ղազարն, *զ*Մուրատն, *արդ եղեալք հողոյ որդի ընդ* Ալսաճէսն, *որ կոչի հարեղբայր որդի, եւ այլ ընդանեացն նորա։ Ով պատուական... կրկին յիշման արժանի աղէք զստացող սորա* Ըռայիս Ալսաճէսն, *որ երրորդ գրեցաւ սմա, որ եղ յիշատակ ի դուռն* Սուրբ Ստեփանոսի, *ի գաւառն* Աղբակոյ, *ի գեաւղն որ կոչի* Առակ, *անուանեալն տեղի աստուածապահ, նաեւ զորբասնեալ* Քահանայն, *զ*տէր Աբրահամն *ի դուռն* Սուրբ Ստեփանոս*ին. ամէն։ Կրկին յիշման արժանի աղէք* զտէր Եսայի աբեղայն, *որ եղեւ միջնորդ եւ հաշտեցուցանել ընդ ստացողս. եղեւ յիշելի զիւր հոգին. ամէն։ Դարձեալ ով ոք յանդգնի ի կամել ի հակառակ լինել կամ ծախել, կամ գրաւ դնել ի դուռն* Սուրբ Ստեփանոսէ, *ի գեաւղս* Առակոյ *հակառակէ ընդ այլ տեղ, մասն Յուդայի առցէ...։ Ի թվականիս Հայոց ՌԼԷ* (= 1588)՝ *որ կատարեցաւ գենդլերն ստացողիս. եւ ինքն արհնեալ եղիցի ամէն։*

*Յիշեցէք զգուրն* Մուրատին՝ Մամայն։

Մանչեսթր. 7 Նոյեմբեր 1949.

---

# 38 — ՇԱՐԱԿՆՈՑ

Հին թիւ՝ չունի

ՌՂԹ=1650

*ԹՈՒՂԹ՝* 316 (=632 *էջ*). — *ՄԵԾՈՒԹԻՒՆ՝* 18×16×6 *սնդմ.* — *ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին.* — *ՏՈՂՔ՝* 25. — *ՆԻՒԹ՝ լաւ յղկուած թուղթ.* — *ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշեպատ տախտակեայ.* — *ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՔ՝ չկան.* — *ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած.* — *ՎԵՐՆԱԳԻՐՔ՝* 2-3 *տող բոլորգիր եւ երկաթագիր.* — *ԳԻՐ՝ յաջող բոլորագիր.* — *ՍԿԶԲՆԱՏԱՌՔ՝ բոլորն ալ գունաւոր զարդագրեր.* — *ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ, բոլորն ալ պարզ գծագրութիւններ, քանի մը հատը ծաղկուած.* — *ԽՈՐԱՆՔ՝ երեք հատ, գլխաւոր կանոններուն սկիզբը, շատ պարզ ծաղկումով։*

*ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈՂ՝ Յովհաննէս ջահրնկալ.* — *ՍՏԱՑՈՂ՝ գրիչը.* — *ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՂԹ* (=1650). — *ՏԵՂԻ՝ անյայտ, Կիլիկիա՞։ Շարակնոց* R. 19.572 *թիւի տակ մաս կը կազմէ Մանչեսթրի* Ryland's Library *ի եւ նախորդ երկու ձեռագիր Աւետարաններու հետ դուրս կը մնայ Հայր Սուքիաս վարդապետ Պարոնեանի եւ Կոնիբերի կազմած Ցուցակներէն։*

*Մատեանս է* Շարակնոց, *թղթեայ՝ որ կը բովանդակէ առձեռն Շարակնոցներու բոլոր կանոնները, «Կանովն ծննդեան Մարիամու Աստուածածնինն»էն մինչեւ «Աւրհնութիւններ Յարութեան»։*

## ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝

*Ա. — Էջ* 588 *(Գլխաւոր Յիշատակարան).* — *«Փա՛ռք համագոյ անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։*

*Ի ծագմանէ բանին Աստուծոյ լուսաւորեալք և ի շնորհարաշխ Հոգւոյն Սրբոյ մաքրագործեալք...: Արդ եղեւ աւարտ գրչութեանս առ մեծահանդէս հոգելից տառիս, ի շրջագայութեան հայկազանս տումարիս, թվին ՌՂԹ* (= 1650) *կալ ի գաւառն եւ յանբարի ժամանակիս: Գրեալ ձեռամբ յոգնամեղ եւ անհարեստ եւ փծուն գրչի* Յովհաննէս ջահրընկալի, *որ զանունս միայն ունիմ գրչի եւ ոչ գործս ի բարի: Ի լաւ եւ ընտիր աւրինակէ Սըսոյ առաջին վարժապետի եւ քաջ քարտուղարին Գրիգորի, մականուն Խուլ կոչեցելոյ, ի դուռն* Ս. Նիկողայոս *եկեղեցւոյ: Ով լուսերամ մանկունք Սիոննի, երեսս անկեալ աղաչեմ զամենեսեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի Քրիստոս զանարժան գծողս եւ զծնաւղսն իմ եւ զուսուցիչն իմ* զտէր Ներսէս Քահանայն *որ սկիզբն եդեալ կարդացոյց եւ ուսոյց զգիրս եւ զծաղիկս ինքն. Միածինն զինքն անփորձ պահեսցէ: Եւ արդ յիշեսջիք զկողակիցն իմ եւ զամենայն արեան մերձաւորքս իմ ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալստեանն ամէն: Եւ արդ ես մեղաւք ի լի, որ ձեւ ունիմ ջահրնկալի եւ ոչ ունիմ մասն բարի, այլ ծոյլ եւ վատթար ամենայնի, եւ յանձնաւոր Տեառն աւրինի, որ ջահրնկալ անուն կոչիմ եւ քան զամէնն եմ զարշելի, բղձանքս անձինս ես ինձ գրի, եւ զտուրր գիրքս ի յանդ հանի, ձեռքրս փտի եւ հող դառնայ, մոխիր փոշի գոլալ դառնայ, գիրս յիշատակ առ ձեզ մնայ, թէպէտ խոշոր է գիր տողայ, այլ գիրընթով գիտենայ, երբ սովորի հրմոռնայ, որք ընթեռնուք աւգտիք ի սմա: Եւ ինքն որ աստն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս հանդերձ զանազան ուրախութիւնս, և այնուքիկ որ ի վերայ մեր երախտիք եւ աշխատանք ունի(ն) թէ հոգեւոր եւ թէ մարմնաւոր, տացէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զյերկնից պարգեւութիւն ամէն»:*

*Բ. — Էջ* 570. — *Զվերջի բառացող սուրբ գրոյս եղանակաւոր տառիս որ բառացեալ ըղձաւ ի հալոյ ընչիւք եւ Աստուած բարով վայելել տացէ զՇարակնոցս* Սարգիս տիրացուին *եւ հայրն իւրոյ* խոճայ Մառուկին *եւ մայրն իւրոյ* Մուղալին *եւ գեղբայրն* Աւետին *եւ մեծ պապուն* Գասպարին *եւ մեծ մայրն... (յաջորդ հինգ տողերը բոլորովին սրբուած):*

*Գ. — Էջ* 360՝ *ստորին լուսանցքին վրայ՝ Ո՛վ քաղցր եղանակաւորք յիշեցէք ի Քրիստոս զմեղաւոր* Մուրատն *որ զսուրս խաղն փուշն գիրն քաշեցի. ծնաւղսն իմ յիշեցէք ի Տէր:*

Մանչեսթր, 7 Նոյեմբեր 1949.

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ *


Ա

Աբրահամ քահանայ 3
Աբրահամ կրօնաւոր 22
Աբրահամ արք. Գամաղիէլ վանքի 24
Ադրիանուպոլիս 72·76
Ազարիա Դպիր 3
Ազարիա արք. Ջուղայի 83
Ազարիա կթղկ. Ջուղայեցի 7·81
Ազգտիկին 7
Ալեքսանդրապօլ 15·69
Ալեանաք Երուանդ 6·19·20
Այտընեան Յարութիւն 18
Անանիա եպսկ. 13
Աշճեան Ալպեր 4·11
Անտոնեան Միաբանութիւն 33
Աստուածատուր Երէց Կեղեցի 18
Աստուածատուր քհյ. Քարտուղար 22
Աստուածատուր եպսկ. 70·71
Արքակաղին վանք 36
Աւագ սարկաւագ 83
Աւետիք գրիչ 78·80·82

Բ

Բաքում 18
Բաղդասար քհյ. գրիչ 25·26·27
Բարդողոմէոս քհյ. Ջուղացի 83
Բարթողիմէոս կրօնաւոր 49
Բասիլ կրօնաւոր 49
Բարսեղ քահանայ 7
Բարսեղ արք. Տիգրանակերտի 21
Բոլենց գիւղ 25·26·27

Գ

Գալըպճեան Յակոբ 33
Գամաղիէլի անապատ 9·10·23·24
Գասպար նահատակ 70
Գասբար կրօնաւոր գրիչ 70·71·72
Գարագոչ 45
Գէորգ ա. սարկաւագ 4
Գէորգեան Գառնիկ 12·16·19·25·37
Գիշնիգան գիւղ Նոր Ջուղայի 30
Գուլայսոր գիւղ Պայազիտու 77
Գրիգոր կրօնաւոր 49
Գրիգորէս երէց 6·7
Գրիգոր աբեղայ Երուսաղէմի 44
Գրիգոր վրդ. Սկեւռացի 36
Գրիգոր եպիսկոպոս 3
Գրիգոր կթղկ. Վաղարշապատցի 2·3
Գրիգոր կթղկ. Էջմիածնի 9
Գրիգոր կթղկ. Աղթամարայ 26·27
Գրիգոր Պահլաւունի կթղկ. 48

Դ

Դարբին Ղազարի գիւղ 77
Դաւիթ՝ որդի Ալաւկայ 36
Դաւիթ արք. Նոր Ջուղայի 30
Դաւիթ Կթղկ. Էջմիածնի 83
Դաւնդեղ տիկին 3
Դէյփորի գիւղ Զարմահալի 30

Ե

Եղեսիա 32
Եզեկիէլ վրդ. Արշակունի 24·25
Եօզղատ 8
Եսայի վրդ. ստացող 24·25
Երեւան 32
Երուսաղէմ 4·5·42
Եւդոկիա 28

Զ

Զապէլ թագուհի 37-41
Զաքարիա քհյ. գրիչ 2
Զաքարիա վրդ. 1·2·3
Զաքարիա եպսկ. Լմնցի 18
Զաքարիա կթղկ. Աղթամարի 9
Զէյթուն 33·34·81

Է

Էմինըգովլէ 30

Ը

Ըռօհեջան եւ իր զարմը 1

Թ

Թադէոս քհյ. Ջուղայեցի 83
Թահմազ Խան 77
Թամար տիկին 7
Թանկեր տիկին 7
Թիֆլիս 15·69·77
Թորոս դպիր 69
Թորոս աբեղայ 4·5
Թումայ աբեղայ 8·9

Ժ

Ժան Բոզզի 6·19·20·45


* Յատուկ անուններու ուղղագրութիւնը նոյնութեամբ պահուած են։

Ի

Իգնատիոս կրօնաւոր գրիչ 2·3
Իգնատիոս աբեղայ 36
Ինճիճեան Յակոբ 8
Իսահակ վրդ· Ամրայ 72

Լ

Լամբրոնի Դզեակ 48
Լեւոն Բ· թագաւոր 37·41·48
Լեւոն Գ· թագաւոր 37·41

Խ

Խաղ արքեպիսկոպոս 11
Խան Բաթալեան 30
Խան Մահմուտ 30
Խաչատուր Դպիր գրիչ 33·34
Խաչատուր քահանայ 3
Խաչատուր կրօնաւոր 36
Խաչատուր կազմող 15
Խաչիկ ագա եւ իր զարմը՝ ստացող 33
Խաչատուր եպսկ· Զէյթունցի 45·49·50·51
Խառաբաստայ վանք 2·3
Խլղար ստացող 25·26
Խոջայ Ազնաւոր ստացող 12·13
Խոճայ Ատիբէկ 83·84
Խոճայ Բարսեղ 28·29
Խոճայ Զաքարիա ստացող 80
Խոջա Նասուր 84
Խոճայ Եաղուպշա ստացող 20·22
Խոճայ Մարտիրոս 22
Խոջայ Սանոս եւ իր զարմը 3
Խոճայ Քասպար 22

Ծ

Ծերուն արք· Զէյթունցի 81
Ծովինար տիկին 27

Կ

Կարապետ երէց Համշէնցի 68
Կարապետ աբեղայ Վանեցի 13
Կարապետ աբեղայ 70
Կարապետ վրդ· Զէյթունցի 34
Կարապետ վրդ· Քաջբերունեաց 8
Կարապետ եպսկ· Սեբաստիայ եւ Եոզղատու 7
Կարապետ արք· Վարագայ 13
Կարին 18
Կարս 15·69
Կեղի խորձենեաց 18
Կիրակոս Գոմքցի ստացող 54·69
Կիրակոս Տիգրանակերտցի գրիչ 76
Կիրակոս աբեղայ ստացող 35·36
Կիրակոս քահանայ 7
Կիւլպէնկեան Վարդ 5
Կիւլնազար գրիչ 72
Կիւրին 19
Կոստանդին իշխան 37·41
Կ· Պոլիս 25·54·78 80
Կարապետ Խաչատրեան Յոլհանջանեանց 15·69
Կարապետ քահանայ 8·9
Կարապետ Դրան քհյ· 13
Կարապետ քհյ· Եւդոկիացի 29
Կարապետ երէց գրիչ 54

Հ

Հազարեան Յարութիւն 2·9·34·70
Հալէպ 45·50
Համշէն 54·68
Հանի Բ· Փափազեան 8
Հանի Մամղա խան Զարմահալի 30
Հասանմանսուր 4
Հեթում թագաւոր 37·41·48
Հերապետ եպիսկոպոս 3
Հիզան 8·10
Հռիփսիմէ ստացող եւ իր զարմը 15
Հռոմկլայ 48

Ղ

Ղազար դպիր 7
Ղազար քհյ· Ջուղայեցի 83
Ղազար քհյ· Խնոզցի 45·49
Ղալաքիա 51
Ղանիփար կազմող 15
Ղողիկ ստացող 12
Ղուկաս րաբունապետ Կեղեցի 81

Մ

Մահմուտ խան 30
Մաղաքիա քահանայ 18
Մամոտան գիւղ Նոր Ջուղայի 31
Մանուկ սարկաւագ 13
Մանուէլ քահանայ Ջուղայեցի 83
Մատթէոս կրդկ· Իսմիրլեան 25
Մատթէոս քհյ· Նորընծայ 19
Մարգար դպիր 14·33
Մաթէոս քհյ· Նորընծայ 10
Մարկոսեան Ռափայէլ 28
Մարկոս աբեղայ Երուսաղէմի 44
Մարկոս վրդ· Կեղեցի 81
Մարտիրոս քհյ· Երեւանցի 32
Մարտիրոս քհյ· ստացող 23
Մարտիրոս քահանայ 23·24
Մարտոս քահանայ 27
Մեսրոպ քհյ· Կեղեցի 18
Մելիտոն քհյ· Կիւրինցի 19
Մելքոն դպիր գրիչ 20·22
Մելիքաղէ եւ իր զարմը 14·33
Մզրա գիւղ Դամաղիէլի 23·24
Միհրան Յովհաննէսեան 45

Միրզախանց ընտանիք 72·77
Միքայէլ կրդկ· Կիլիկիոյ 34
Մինաս նկարիչ 2·3
Մինաս ծաղկող 15
Մկրտիչ սարկաւագ 1·3
Մկրտիչ ջահընկալ գրիչ 28
Մկրտիչ կրդկ· Խրիմեան 25
Մոկաց գաւառ 25·27
Մուստաֆա Սոլթան Վանայ բերդի 13
Մատր Բրուս անգղիացի երէց 31

Յ

Յակոբ սրկ· Ջուղեցի 83
Յակոբ երէց գրիչ 77
Յակոբ երէց 7
Յակոբ սրկ· գրիչ եւ նկարիչ Ջուղեցի 16·18
Յակոբ քահանայ 33
Յակոբ վրդ· Սեբաստացի 45
Յակոբ Դ· կաթողիկոս 30
Յարութիւն պտրք· Վեհապետեան 25
Յովհաննէս Եվէրէկցի Նեվրուզեան 7·8
Յովհաննէս գրիչ 20·22·23
Յովհաննէս Եւդոկիացի ստացող 28·29
Յովհաննէս սարկաւագ գրիչ 29·30
Յովհաննէս երէց-փոխ Մամուտանի 31
Յովհաննէս կրօնաւոր ստացող 36
Յովհաննէս արեղայ Սանահինցի 42·44·45
Յովհաննէս կրօնաւոր 49
Յովհաննէս քհյ· Մզրացի 24
Յովհաննէս երէց Ոսկցի 77
Յովհաննէս քհյ· Կիւրինցի 19
Յովհաննէս վրդ· Տիգրանակերտի 77
Յովհաննէս վրդ· Գառնեցի 1
Յովհաննէս վրդ· գրիչ 8·9·10
Յովհաննէս վրդ· Գամաղիէլի 9
Յովհաննէս Դիոսդապետ (Հերում) Երուսաղէմի 44
Յովհաննէս կրդկ· Թլկուրանցի 76
Յովհաննէս կթղկ· Այնթապցի 45·49·51

Ն

Նախիջեւան 77
Նահապետ կաթողիկոս 72·76
Ներսէս քհյ· Ջուղայեցի 83
Ներսէս քահանայ 7
Ներսէս քահանայ 49
Ներսէս ծաղկող 25·26
Ներսէս քահանայ 70
Ներսէս արքեպսկ· Վարագայ 13
Ներսէս Լամբրոնացի 35·45·48
Ներսէս Շնորհալի 35·37
Նիկողոս երէց Ղալաթիոյ 51·54
Նոր Ջուղայ (Սպահան) 29·30

Շ

Շահ Աբաս 21
Շահ Թահմազ 11 4
Շահ Իսմայիլ 13
Շահ Նասրադին 31
Շահ Սիլէման 30
Շահ Յաքալի 30
Շէնքուշ 70·71

Ո

Ովանէս քահանայ 7
Ովսեդեկ 6

Չ

Չափողանց եկեղեցի 7

Պ

Պաշաչուխ 77
Պայազիտ 77
Պարոն Աղիպէկ 12
Պարոն Ալխան 12
Պարոն Ազախաչիկ եւ իր զարմը 33
Պարոնտէր Մելքիսեթ արք· 11
Պարոն Մելիք Միրզաեան 11
Պարոն Պօղոս Վասակենայ 29·30
Պետրոս եպիսկոպոս 7
Պտղոմիդիս 48
Պօղոս եւ Պետրոս ստացողներ 82
Պոսթանեան Յովհաննէս 32

Ջ

Ջահան գաւառ 48
Ջհանշահ խան 2·3
Ջուղա (Հին) 14·83
Ջուղա գիւղ 33

Ս

Սահակ Բ· Կթղկ· Կիլիկիոյ 39
Սարգիս արեղայ ստացող 42·44
Սարգիս վրդ· Մաքինեաց 11·12
Սարգիս արք· Վարագայ 13
Սարգիս Կթղկ· Էջմիածնի 13
Սարգիս վրդ· Շնորհալի 35
Սարկաւագ վրդ· Հաղբատեցի 36
Սապլիխան տիկին 33
Սարգիս երէց Հիզանցի 81
Սիս 36·37
Սիմոն քահանայ 13
Սկեւռա 48·49
Սկիւտար Կ· Պոլիս 54
Սուլթան Ահմատ 21
Սուլթան Համիտ 25
Սուլթան Մուստաֆա 72·76
Սուրբ Վարդան Զօրավարի եկ· Վանայ 13

Սունկուրլայ 32
Սուրբ Կիրակոս եկեղեցի 11
Սուրբ Նշան եկեղեցի 11
Սուքիաս քհյ. Վասականայ 30
Սուքիաս քհյ. Տէր Մարտիրոսեան 31
Ստեփան Ռումէլիցի գրիչ 72-76
Ստեփաննոս արեգայ կազմող 4-5
Ստեփաննոս քահանայ 13
Ստեփաննոս քահանայ գրիչ 23-24
Ստեփան սրկ. Ճատախցի 27
Ստեփան քհյ. Ճատախցի 27
Ստեփաննոս վրդ. Վահկացի 36-41-42

Վ

Վահան քհյ. Զէյթունցի 82
Վան 12-13-18
Վարդան քհյ. Բալւեցի գրիչ 32
Վարդանոյշ Թադէոսեան Ռովհանիջանեանց 15
Վարդան քահանայ 38
Վարդան կրօնաւոր 48
Վարդեր գրիչ 6-7

Տ

Տաքար ամիրապետ 7
Տիգրանակերտ (Ամիդ) 20-21-23-25-72
Տիրացու Սրապիոն ստացող 33-34
Տիրացու Յակոբ Տիգրանակերտցի 77
Տումարգայ գիւղ 7

Փ

Փիլիպպոս կրօնաւոր գրիչ 11

Ք

Քաջբերունեաց երկիր 2-3
Քալաշիքօ 35
Քէշիշեան Պետրոս 23
Քէհեաեան ընտանիք 51
Քիշնեւ 15-60
Քորբուլօղլի Թահմազ 32

Օ

Օրէնկեան Նուբիան 70-76

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Տպ. Տպ. Ս. Մաթիկեան – Փարիզ.
Imp «Artistique»- 42, rue de la Jonquière, Paris 17e

016:091(=91.99)
Ս-63

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՅԱՋՈՐԴԱԲԱՐ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

## ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

**1.— *Պատմութիւն Հայոց Հայկայի***

Բ. հատոր (քննական)

**2.— *Համայնագիտական եւ Հայագիտական***

***ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ***

(Պատկերազարդ)

Ա. ՀԱՏՈՐ

Ստանալու համար դիմել հեղինակին
**15, Rue Jean Goujon, PARIS (8e)**

***Գին՝ 1 տոլար***

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0048145